

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ուսումնասիրության եւ
ուսուցման արդի խնդիրներ

Հրատարակւոյթիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի
Լոս Անջելէս - Երեւան
2025

— № 1 —

PERSPECTIVES OF ARMENIAN PHILOLOGY

Current Issues of Research
and Instruction

Western Diocese of the
Armenian Church of America

Los Angeles - Yerevan
2025

ՀՏԴ 80(082)

ԳՄԴ 80g43

Հ 240

Հրատարակութեան երաշխատրած

կազմակերպութիւններ՝

- Հայաստանի Ազգային գրադարանի գիտական խորհուրդ
- Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գիտխորհուրդ
- Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի հայ հին եւ միջնադարեան գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոն
- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի լեզուաբանութեան ամբիոն

Խմբագրական Խորհուրդ՝

Տ. Յովնան Արք. Տէրտէրեան

Տ. Վազգէն Քչնյ. Բոյաջեան

Տ. Զաքարիա Քչնյ. Սարիբէկեան

Հրաչ Զիլինկիրեան

Աշոտ Գալստեան

Նորայր Պօղոսեան

Նուարդ Վարդանեան

Պատ. խմբագիր եւ կազմող՝

Նորայր Պօղոսեան

Հայ բանասիրութեան հեռանկարներ: Ուսումնասիրութեան եւ

Հ 240 ուսուցման արդի խնդիրներ / Պատ. խմբագիր եւ կազմող՝

Ն. Պօղոսեան.- Երեւան: Լոս Անջելէս.: «Գիրք» հրատ.: ԱՄՆ

Արեւմտեան թեմի Առաջնորդարան, 2025.- 247 էջ:

ՀՏԴ 80(082)

ԳՄԴ 80g43

ISBN 978-9939-801-34-6

<https://doi.org/10.52027/801346>

© «Գիրք» հրատարակչություն (Հայաստանի ազգային գրադարան), 2025

© ԱՄՆ Արեւմտեան թեմի Առաջնորդարան, 2025

ԽՕՍՔ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Հայագիտութեան եւ ի մասնաւորի հայ բանասիրութեան զարգացման ուղիները եւ անոր առջեւ ծառացած մարտահրաւէրները լուսարձակի տակ առնելու, գիտական քննարկումներով այդ ուղղութեամբ գործնական քայլեր առնելու նախանձախնդրութենէն մղուած, ԱՄՆ Արեւմտեան թեմը կազմակերպեց «Հայ բանասիրութեան հեռանկարներ» միջազգային գիտաժողովը Երեւանի մէջ, համագործակցաբար Հայաստանի Ազգային գրադարանին:

Մեր խորին երախտքն ու շնորհակալիքը կու գանք ընծայելու «Հայ բանասիրութեան հեռանկարներ» գիտաժողովի կազմակերպիչ յանձնախումբին ու մասնակից բոլոր գիտնականներուն, որ յանձնառու եղան ի կատար ածելու առաքելութիւն մը, որուն զլիսաւոր նպատակն էր քննարկել ու հնարաւոր լուծումներ որոնել հայագիտութեան խնդիրներու վերաբերեալ:

Մեր գոհունակութիւնը կը յայտնենք սպասուած արդիւնաւէտ գիտաժողովի եւ այս ժողովածուի հրատարակութեան առիթով: Վստահ ենք, որ ժողովածուի արդիական յօդուածները եւ գիտաժողովներու ճամբով առնուած քայլերը դրական յառաջխաղացք կ'արձանագրեն՝ հայ ժողովուրդին ինքնութիւնը պահող ազգային արժէքներուն պահպանման եւ զարգացման տեսակէտէն:

Մեր սպասումն է, որ ի Հայաստան եւ ի սփիւռս ապրող մեր հաւատաւոր նորահաս սերունդները տէրն ու պաշտպանը դառնան դարերու հոլովոյթով մեզի հասած հոգեւոր այն ժառանգին, որուն մէջ մեզ բոլորս իրար կապող խորհուրդ մը կը տեսնենք:

Մեր հայրական օրհնութիւնները փոխանցելով՝ յետագայ յաջողութիւններ կը մաղթենք բոլոր հեղինակներուն եւ գիտաշխատողներուն:



Յովնան Արք. Տէրադեան

Առաջնորդ ԱՄՆ Արեւմտեան Թեմի

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ընթերցողի ուշադրությունն ենք յանձնում «Հայ բանասիրություն հեռանկարներ. ուսումնասիրություն հեռուցման արդի խնդիրներ» ժողովածուն, որ արդիւնք է 2024 թ. յուլիսին Երեւանում կազմակերպուած միջազգային գիտաժողովի: Իր բովանդակային ամբողջութեամբ, գիտական խնդիրների ընդհանրութեամբ ժողովածուն արտացոլում է գիտաժողովի ուղղուածութիւնը, որով եւ թեմատիկ մենագրութեան արժէք ունի:

Հայագիտութեան ու նաեւ հայ բանասիրութեան ծրագրերը, անելիքները, հայեցակարգերը շարունակաբար վերանայելու, գիտական նոր պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտութիւն ունեն: Մանաւանդ՝ արագահոս ու բարդ ներկայ ժամանակներում:

Այս նպատակադրումով ծրագրուեց եւ կազմակերպուեց «Հայ բանասիրութեան հեռանկարներ» միջազգային առաջին գիտաժողովը, Հայաստանի Ազգային գրադարանի հետ համագործակցութեամբ: Գիտաժողովի ծրագրերից մէկն էր «ուրուագծել այն անելիքները եւ ուղղութիւնները, որոնք կարելոր են հայ բանասիրութեան տուեալ ոլորտի առաջիկայ 5-10 տարիների զարգացման համար»: Մասնակիցների շարքում էին Հայաստանի եւ արտերկրի (ԱՄՆ, Ռուսաստան, Թուրքիա, Գերմանիա) անուանի եւ երիտասարդ շատ բանասէրներ: Չորս նիստերում, որոնք անցկացուեցին Աստղիկ Բեքմէջեանի, Արմէն Սարգսեանի, Նուարդ Վարդանեանի, Նորայր Պօղոսեանի նախագահութեամբ, ներկայացուեցին լեզուաբանութեան, գրականագիտութեան, բարբառագիտութեան, բանահիւսութեան, դասականի եւ այլ ճիւղերի՝ ապագային միտուած օգտակար շատ զեկուցումներ, ծաւալուեցին նաեւ շահագրգիռ քննարկումներ՝ ապահովելով գիտական պատշաճ միջնորդութիւն:

Գիտաժողովին իր առջեւ դրուած՝ հայ բանասիրութեան ներկայիս անելիքները եւ հնարաւոր քայլերը մատնանշելու խնդիրը, կարծում ենք, կարողացաւ որոշակիօրէն լուծել: Այն ի գորու եղաւ վեր հանելու եւ ներկայացնելու հայագիտութեան ու մասնաւորապէս հայ բանասիրութեան յետագայ անելիքների շուրջ որոշակի ծրագրեր, առաջնահերթութիւններ: Այն նախ եւ առաջ հաստատեց, որ գիտական ջանքերը պիտի միտուած լինեն ապագային, եւ ցանկանում ենք յուսալ, որ ժողովածուն արտացոլում է գիտական այդ նշաձողը:

Գիտաժողովի կազմակերպիչ՝ Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւմտեան թեմը, Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի առաջնորդութեամբ, մշտապէս սատար է կանգնել գիտական բազմազան ձեռնարկների՝ գիտաժողովներ կազմակերպելով, հրատարակութիւններով, ուսա-

նողների աջակցութեան բազմաբնոյթ ծրագրերով: Արեւմտեան թեմի ծրագրերի այդ հանրագումարը կարող է մի պատկառելի ցանկ կազմել: «Հայ բանասիրութեան հեռանկարներ»-ը մէկն է այդ ծրագրերից:

Յանկանում ենք շնորհակալութիւն յայտնել Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, որի օրհնութիւնը, հովանաւորութիւնը եւ օգտակար ուղղորդումը անվերապահօրէն նպաստեցին, որպէսզի գիտաժողովը կայանայ եւ սոյն ժողովածուն հրատարակուի, նաեւ ԱՄՆ Սիւթըլ քաղաքի Հայց. եկեղեցու հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Բոյաջեանին, որ թեմի ներկայացուցչի իր կարգավիճակով ու անմիջական ներկայութեամբ պատուեց գիտաժողովը երեւանում:

Անշափ սպասուած էր համագործակցութիւնը Հայաստանի Ազգային գրադարանի հետ, անձամբ տնօրէն Տկն. Զուլեանի, փոխտնօրէն Հրանուշ Ղազարեանի, հասարակութեան հետ կապերի պատասխանատու պրն. Ներսէս Հայրապետեանի հետ, որ հարցերը արդիւնաւէտ լուծելու ունակ պաշտօնեաներ են: Մեր շնորհակալիքի խօսքն ենք ուղղում կազմակերպական յանձնախմբի բոլոր անդամներին, նաեւ իրենց աջակցութիւնը բերած բոլոր անձանց ու կամաւորներին:

Գիտաժողովի կազմակերպական յանձնաժողովի անունից վերստին ցանկանում ենք շնորհակալութիւն յայտնել ժողովածուի հեղինակներին՝ իրենց օգտակար գեկուցումների, շահագրգիռ քննարկումների եւ հրապարկումները բարեխղճօրէն տպագրութեան պատրաստելու համար: Նշելի է յատկապէս երիտասարդ գիտաշխատողների մասնակցութիւնը, որոնք լինելու են նախանշուած ծրագրերի շարունակողները:

«Հայ բանասիրութեան հեռանկարներ. ուսումնասիրութեան եւ ուսուցման արդի խնդիրներ» ժողովածի իւրաքանչիւր թեմայ արժանի է «բացելու», շարունակելու, քանզի դրանք գիտական զարգացման ուղի են մատնանշում: Հայ բանասիրութեան առջեւ դրուած խնդիրները է՛լ աւելի հրատապ եւ ուշադրութեան կարօտ են ներկայ օրերում: Եւ անընկրկելի հետեւողականութեամբ ու նաեւ ջանքերի համատեղմամբ կարելի է միայն արդի պահանջներին համապատասխան եւ մրցունակ հայ բանասիրական գիտական նշաձող ունենալ, ինչպիսին որ ունեցել ենք բազում դարեր շարունակ:

Նորայր Պօղոսեան

Գիտաժողովի կազմակերպական

Յանձնախմբի քարտուղար

<https://doi.org/10.52027/801346-php-11>
gyurjidav@mail.ru

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱՆՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ

*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Ներածություն

V դարի հայերեն ինֆնուրոյն և թարգմանական գրականության մեջ գործածվել են բառակապակցական և բառային մի շարք լեզվանուններ, որոնք անվանում են հայերի մայրենի լեզուն և հարևան ու հեռավոր մի շարք ժողովուրդների լեզուներ (Գյուրջինյան, 2023, 102-139): Հայերեն լեզվանուններ կազմելու գործընթացը շարունակվել է հետագա դարերում, ծավալվել XIX դարում և առավել ընդարձակվել XX դարում: Հայերենում գործածվում են ինչպես հայակազմ, այնպես էլ փոխառյալ մեծաթիվ լեզվանուններ:

Աշխարհի լեզուների թիվը հստակ չէ. այդ մասին տարբեր կարծիքներ կան: Ըստ դրանցից մեկի՝ կենդանի լեզուները մոտ երկու հազար են (Աղայան, 1967, 561): Ըստ մեկ այլ կարծիքի՝ աշխարհի լեզուների թիվը տատանվում է 2500-ից 5000-ի միջև, քանի որ տարբեր լեզուների և նրանց բարբառների տարբերությունների սահմանները հաճախ պայմանական են (Лингвистический энциклопедический словарь, 1990, 609):

Հիմնաբառեր - լեզվանուն, հայերեն լեզվանուն, բառային լեզվանուն, լեզվանվանակերտ ածանց, բառակապակցական լեզվանուն, փոխառյալ լեզվանուն, լեզվանվան տարբերակ:

Աշխարհի կենդանի և մեռած լեզուների հայերեն անունների գործածության շրջանակը բավական մեծ է: Նշենք կարևորները՝

ա) հանրագիտարաններ, լեզվաբանական տարբեր բառարաններ (բացատրական, ուղղագրական, բառակազմական, թարգմանական և այլն), որոնցում լեզվանունները գլխաբառ են դարձել,

բ) պաշտոնական տեղեկատուներ, որտեղ նշվում են պետությունների պետական-պաշտոնական և կամ ազգային փոքրամասնությունների լեզուների անունները,

գ) գիտական, մասնավորապես լեզվաբանական խոսք, որտեղ անընդհատ առիթ է լինում գործածելու այս կամ այն մեռած կամ կենդանի լեզվի անունը,

դ) զանգվածային լրատվության միջոցներ, որոնցում մշտապես գործածվում են հին և նոր լեզվանուններ,

ե) լեզվաբանության համալսարանական դասագրքեր, որոնցում հանգամանորեն ներկայացվում են աշխարհի լեզուների ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումները,

զ) պատմագիտական և լեզվաբանական (համեմատական) աշխատություններ, որոնք հաճախ անդրադառնում են տարբեր ցեղերի, ժողովուրդների, ազգերի լեզուների, նրանց տարատեսակ իրողություններին, լեզվական առնչություններին:

է) ավագ դպրոցի հայոց լեզվի դասագրքեր, որոնցում խոսվում է աշխարհի լեզուներից, մասնավորապես տրվում է հնդեվրոպական լեզուների ծառը, աշխարհագրության դպրոցական և համալսարանական դասագրքեր, որոնցում ներկայացվում են աշխարհի բնակչությունը, առանձին երկրների ազգային կազմը, նրանց լեզուները, կրոնը և այլն,

ը) գիտահանրամատչելի, գիտաերևակայական և գեղարվեստական գրականություն, ֆիլմեր, որտեղ գործածվում են իրական և մտացածին լեզուների անուններ:

Նշված աղբյուրներում շատ լեզվանուններ գործածվել են անմիօրինակ, տարատեսակ տարբերակներով՝ բառային, բառակազմական, ուղղագրական, մի իրողություն, որ դժվարություն է ստեղծում գործածողների, բառարանագիրների համար, կրթական համակարգում, խոչընդոտներ առաջացնում որոնողական համակարգերում: Այս փաստը բերում է այն եզրահանգման, որ անհրաժեշտ է կանոնարկել հայերենի լեզվանունները: Կանոնարկման մի շարք խնդիրներ կան, որոնք ենթակա են լուծման:

Դրանցից են՝

ա) տառադարձման հարցեր,

բ) զուգաձևություններ հայերենի գրական մեկ տարբերակում (արևելահայերեն կամ արևմտահայերեն) և երկու գրականների միջև,

գ) անաձանց և աձանցավոր տարբերակների միջև կողմնորոշվելու կամ հայակազմ և փոխառյալ տարբերակների խնդիրը,

դ) լեզվանվան հին և նոր տարբերակների կիրառման և ընդունելության խնդիրը,

ե) բառային և բառակապակցական լեզվանունների տարբերակայնություն խնդիրը,

զ) աձանցի կիրառման խնդիր:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ժամանակակից հայերենում գործածվող լեզվանունների տարբերակայնությունը (գործածության մեջ են մեծաթիվ տարբերակներ), զուգաձևությունները և նպաստել հատկապես գիտական և պաշտոնական խոսքում լեզվանունների միասնականացմանն ու կանոնարկմանը:

Հայերենագիտության մեջ լեզվանունների հարցն առանձին և հանգամանակից ուսումնասիրության նյութ է դարձել միայն վերջին տարիներին. ակադեմիական և համալսարանական տարբեր պարբերականներում և ժողովածուներում հրապարակվել են հայերենի լեզվանուններին նվիրված մեր տասնյակից ավելի հոդվածները, գիտաժողովներում կարդացվել են գեկուցումներ: Կարող ենք ասել, որ դրանց շնորհիվ սկիզբ է դրվել բառագիտական նոր գիտաճյուղի՝ հայ լեզվանվանագիտության, այդ թվում՝ պատմական լեզվանվանագիտության:

Հայերեն լեզվանունների ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Լեզվանունների ուսումնասիրությունը կատարվել է համաժամանակյա և տարժամանակյա մոտեցումներով, վերլուծական, պատմահամեմատական և զուգադրական մեթոդներով:

Կանոնարկման խնդիրները վերաբերում են հայակազմ մի քանի տասնյակ լեզվանունների: Դիտարկենք բալթիական լեզուներից մեկի՝ հայերեն անունների հարցը (Գյուրջինյան, 2021, 217-239):

Լատվիայի պետական լեզուն անվանելու համար հայերեն մի քանի տարբերակներ են գործածվել (և գործածվում): Նախ՝ եղել է **լեթթերեն**-ը (հմմտ. գերմ. Lettische Sprache), որն ունեցել է ուղղագրական տարբերակ **լետտերեն** (հմմտ. ֆրանս. letton, langue lettone):

Խորհրդային շրջանում կազմվել է **լատիշերեն** լեզվանունը (հմմտ. ռուս. латышский язык): Բառակազմական հիմքը՝ **լատիշ**, անմիջակա-

նորեն կապվում է մերձբալթյան ժողովրդի ինքնանվանման (լատվիեշ) հետ:

Լատվերեն տարբերակի բառակազմական հիմքը **լատվիա** երկրանունն է, որի տեղանիշ **—իա** մասնիկն ընկել է, ավելացել է «լեզու» նշանակող **—երեն** ածանցը:

Հայկական բազմահատորյա հանրագիտարանը մերձբալթյան հանրապետության հիմնական բնակչության լեզվի անունը ներկայացրել է երեք տարբերակով՝ **լատվերեն, լատիշերեն, լեթթերեն** (Հայկական սովետական հանրագիտարան, 1978, 498): Ըստ տրվածի՝ նախընտրելի է դիտվել առաջինը՝ **լատվերեն**-ը, որը շարքի առաջին միավորն է: Տասնամյակներ անց «Հանրագիտական բառարանում» նշված հերթականությունը փոխվել է այսպես՝ **լատիշերեն (լատվերեն, լեթթերեն)** (Հանրագիտական բառարան, 2016, 902):

Լատվիերեն լեզվանվան բառակազմական հիմքը **լատվիացի**-ն է, որի **—ացի** ածանցն ընկել է: Այլ մոտեցմամբ կարող ենք ասել, որ երկրանվան **—իա** մասնիկի **ա**-ն է ընկնում (հմմտ. **դանիերեն** (սկզբնապես եղել է **դաներեն**), հնացած **գաղղիերեն**, նախանցյալ դարից սկսած շրջանառվում էր **անգլիերեն** լեզվանունը (Ստ. Մալխասյանի բառարանում կա **անգլիերեն** գլխաբառ, որի բառահոգվածում բառարանագիրը փակագծերում գրել է. «Ներկայումս յաճախ գործ է ածվում անգլերէն» (Մալխասյանց, 1944, 101)):

Ակադեմիական բացատրական բառարանում արձանագրված է լեզվի անվան **ի**-ով տարբերակը՝ **լատվիերեն**, որից հղում է արվել **լատիշերեն**-ին, այդ բառահոգվածում էլ բացատրվել է բառը (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, 386): Նշանակում է՝ նախընտրելի է դիտվել **լատիշերեն**-ը: **Լատվիերեն** տարբերակը սխալ է համարվել էդ. Աղայանի բառարանում (դրանից հղում է արվում **լատիշերեն**-ին (Աղայան, 1976, 518). այս մոտեցումն անփոփոխ է մնացել բառարանի վերախմբագրման ժամանակ (խմբագիր՝ Լ. Հովսեփյան) (Աղայան, 2014, 474): Իսկ Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-տերմինաբանական բառարանում գետեղվել են **լատիշերեն, լեթթերեն** և **լատվիերեն** տարբերակները (Բարսեղյան, 1973, 387) (բացակայում է **լատվերեն**-ը), և դրանից որևէ մեկը սխալ կամ անհանձնարարելի չի համարվել: Դպրոցական ուղղագրական բառարանում մնացել են **լատիշերեն**-ը՝ «լատվիերեն» բացատրությամբ, առանձին տրվել է **լատվիերեն**-ը (Նազարյան, Գյոգակյան, 2004, 172): Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում հաջորդաբար գետեղվել են լեզվանվան զույգ տարբերակ-

ները՝ **լատիշերեն** (латышский язык, по-латышски, на латышском языке) և **լատվիերեն** (латвийский язык, по-латвийски, на латвийском языке) (Հայ-ռուսերեն բառարան, 271): 2000-ական թվականներին համանման մոտեցում է ցուցաբերվել հայերեն-անգլերեն բառարաններում՝ **լատիշերեն** (Lettish, the Lettish language) և **լատվիերեն** (Latvian, the Latvian language) (Բարաթյան, 2002, 229), իսկ մի բառարանում **լատիշերեն**-ը թարգմանվել է այսպես՝ the Lettish (Latvian) language (Սեֆերյան, 2009, 492):

Արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարանում մեզ հետաքրքրող լեզվանունը տեսնում ենք **լատվիական** բառահոգվածում՝ «Լատվիոյ՝ Լատվիացիներու՝ **լատվիերէն** լեզուին յատուկ՝ վերաբերեալ» (Ճէրէճեան, Տօնիկեան, 1992, 757): Ի դեպ, հայերեն-գերմաներեն սփյուռքյան նոր բառարանում **լատիշ** և **լատիշուհի** բառերը հատուկ նշումով գիտվել են արևելահայերեն (**լատիշերեն**-ը բացակայում է), իսկ **լատվիերէն**-ը (Lettisch), քանի որ լրացուցիչ ծանուցումով օժտված չէ, ըմբռնվում է ընդհանուր հայերեն (կամ էլ պարզապես արևմտահայերեն) (Թորոսեան, 2019, 269): Ըստ այդմ կարող ենք եզրակացնել, որ արևմտահայերենում նախընտրելի է **լատվիերէն**-ը:

Լատվիերեն-ը վերջին շրջանում աշխուժացել է հայաստանյան լրատվամիջոցների լեզվում: Այս ճանապարհով ընդհանրություն է հաստատվում երկու գրականների միջև:

Այսպիսով՝ **լատվիերեն**, **լատիշերեն**, **լատվերեն** տարբերակները արձանագրված են ժամանակակից հայերենի մի շարք բառարաններում: **Լատվիերեն**-ը մինչև վերջերս սահմանափակ գործածություն ուներ արևելահայերենում, բայց սա է նախընտրում արևմտահայերենը: Հայախոս հանրությունը հասկանալի է, քանի որ ակնհայտ է լեզվանվան կապը երկրանվան և ժողովրդանվան հետ:

Ուշագրավ է արամեացիների լեզվի հայերեն անվան հարցը (Գյուրջինյան, 2021, 3-17): Սեմական այդ լեզուն անվանելու համար հայերենում կազմվել են բառային երեք միավորներ՝ **արամերեն**, **արամեերեն** և **արամայերեն** (սա գործածությունից գրեթե դուրս է մղվել): Հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններն արձանագրել են հիմնականում **արամերեն** / **արամերէն** տարբերակը, հանրագիտական բառարանները՝ **արամեերեն**-ը, ընդամենը մեկ բառարան՝ **արամայերէն**-ը (**արամերէն**-ի հետ) (Լուսինեան, 1900, 149):

Արևելահայերեն գիտական խոսքում հիշատակված երեք տարբերակներից գերիշխում է **արամերէն**-ը, այնինչ բառարանները չեն արտացոլում բառի գործածության փաստական վիճակը: Արևմտահայերենում ընդունված է **արամերեն**-ը: Այս իրավիճակը հանգուցալուծում է պահան-

ջում. նախ՝ արևելահայերենում, որտեղ իրական գործածություն և բառարանագրային արձանագրումների միջև հակասություն կա, ապա մտածել հայերենի երկու տարբերակներում լեզվանվան միասնականացման մասին (եթե դա հնարավոր է):

Հակասություն է առաջացել արևելահայերենում բառի գործածական իրական արժեքի և բառարանային գրանցումների միջև՝ դժվարություն ստեղծելով լեզվանունը գործածողների համար: Այստեղ նույնպես կանոնակարգման անհրաժեշտություն կա:

Կանոնարկման ծավալուն աշխատանք կա անելու ըստ լեզվաընտանիքների և լեզվաճյուղերի: Օրինակ՝ հնդկական բազմաթիվ լեզուների անունները (Գյուրջինյան, 2021, 17-37): Խնդիրը դիտարկենք փենջաբցիների լեզվի անվան օրինակով: Այս լեզվով խոսում է 100 միլիոնից ավելի մարդ Հնդկաստանի հյուսիսային Փենջաբ նահանգում (այստեղ պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի), Պակիստանում: Հայ լեզվաբանները դասագրքերում նախընտրել են **փենջաբի** փոխառյալ տարբերակը (Աճառյան, 1955, 473, Աղայան, 1967, 572, 605, Աղայան, 1987, 673, Խաչատրյան, 2008, 261, Գյուրջինյան, Հեքեքյան, 2010, 5) (հմմտ. անգլ. Punjabi, ֆրանս. Pendjab, գերմ. Pandschabi, ռուս. пенджаб и пенджабский язык):

Հայկական սովետական հանրագիտարանում գլխաբառ է դարձել **փենջաբի լեզու** բաղադրյալ անվանումը (առանց բառահոդվածի, «Հնդկական լեզուներ»-ին հղելով) (Հայկական սովետական հանրագիտարան, 1986, 330): Հանրագիտարանի տարբեր հատորներում գրեթե հավասարապես գործածվել են ինչպես մենաբառ փոխառյալ **փենջաբի**-ն, այնպես էլ հայակազմ **փենջաբերեն**-ը:

Փոխառյալ **փենջաբի** տարբերակը նպատակահարմար չէ գործածել ոչ միայն այն բանի համար, որ այն լեզվի իմաստ է ձեռք բերում **լեզու** բառի հետ գործածվելիս, այլև որ համանունություն է առաջանում լեզվանվան և **Փենջաբ** հատուկ անվան սեռականի հետ:

Տեղանունը և լեզվանունը ունեն տառադարձման տարբերակ՝ **Փանջաբ** և **փանջաբի**, ըստ այդմ էլ՝ տարբերակ ունի **փենջաբերեն**-ը ևս՝ **փանջաբերեն** (Հարությունյան, 2016, 405): XX դարի կեսի արևմտահայերենի թարգմանական բառարաններից մեկում զետեղված լեզուների անունների ցանկում զետեղվել հայակազմ **փունճապերէն** տարբերակը (Գույումճեան, 1950, 1130) :

Հայերենի բառարաններում տեղ է գտել **փենջաբի** փոխառյալ տարբերակը (Հարությունյան, 1963, 157, Բարսեղյան, 1973, 932, Պետ-

րոսյան, Գալստյան, Ղարապուլյան, 1975, 304, Հանրագիտական բառարան, 2018, 317), այնինչ **փենջաբերեն**-ը բառարանային գրանցում չունի: Մեր կարծիքով հենց **փենջաբերեն**-ի լիարժեք ընդունումը կվերացնի բազմաձևությունը:

Առհասարակ նկատելի զանազանություն կա արևելահայերեն և արևմտահայերեն լեզվանունների միջև, որ տառադարձման տարբեր մոտեցումներ կիրառելու հետևանք է: Այսպես, արևել. **նորվեգերեն, շվեդերեն** - արևմտ. **նորվեկերէն, շուետերէն** և այլն (Գյուրջինյան, 2022, 26-37): Ուշագրավ է, որ XX դարի սկզբին Գաբրիել վրդ. Մենսվիշյանը գործածել է **նորվեգերէն, շուեդերէն / շվեդերէն** (Մէնսվիշեան, 1903, 197) լեզվանունները, որոնք ձայնեղ բաղաձայնների հարցում տարբերություն չունեն արևելահայերենի համեմատ: Այս մոտեցումը, սակայն, հետագայում շարունակություն չունեցավ:

Լեզվանունների կանոնարկման հարցում կարևոր դեր է խաղում նաև լեզվի ինքնակարգավորիչ հատկությունը: Օրինակ՝ աշխարհի գործառնապես ամենատարածված լեզվի՝ անգլերենի հայերեն անունն այժմյան հանգրվանին է հասել տեղական ժամանակի ընթացքում: Լեզվանվան պատմական զարգացման ընթացքում՝ XVIII դարի վերջերից սկսած, գործածվել են բառակապակցական և բառային հետևյալ միավորները՝ **անգղիացւոց բարբառ** (ժամանակագրորեն առաջինը), **անգղիացւոց լեզու, անգղիական բարբառ / լեզու, անգղիարէն, անգլիարէն, անգլիերէն, անգլիերէն** (Գյուրջինյան, 2022, 169-187), նաև **ինկիլիզերէն**, և, վերջապես, **անգլերեն**: Նշենք, որ **անգլերեն** տարբերակի հաստատումը վարչական միջամտությամբ կամ որևէ որոշումով չի եղել: Տերմինաբանական կոմիտեն և Հայերենի բարձրագույն խորհուրդը, ի դեպ, որևէ լեզվանվան վերաբերյալ երբևէ որոշում չեն կայացրել: Սա նշանակում է, որ ամեն ինչ վարչական եղանակով չպիտի լուծել:

Բավական խայտաբղետ է ֆրանսերենն անվանող միավորների պատկերը: «Ֆրանսերեն» նշանակող հայակազմ առաջին լեզվանունը միջին հայերենի շրջանից է (**ֆռանկերէն / ֆռանգերէն**) (Ղազարյան, Ավետիսյան, 2009, 833): XIX դարում գործածվել են **փռանկ լեզու / բարբառ, փռանկաց լեզու, փռանկական լեզու, գաղղիական / գալլիական լեզու / բարբառ, գաղղիացի լեզու / բարբառ** բաղադրյալ անվանումները և բառային մի շարք լեզվանուններ՝ **փռանկերէն, գաղղիարէն / գալլիարէն, գաղղիերէն / գալլիերէն**, նաև **ֆրանցուգերէն / փրանցուգերէն, ֆռանսըգերէն, ֆրանսիարէն**, որոնց հաջորդեց **ֆրանսերեն**-ը (Գյուրջինյան, 2022, 137-167): Այժմ թե՛ **անգլերեն**-ը և թե՛

Ֆրանսերեն-ը համահայերենյան են. համագործածական այդ լեզվանունները այդպիսիք են դարձել տեղական ժամանակի ընթացքում՝ բնական զարգացման շնորհիվ:

Կանոնարկման շրջանակում հարկ է լինում ընտրություն կատարելու լեզվանվան հին և նոր տարբերակների (բառակազմական, ուղղագրական) միջև: V դարից, օրինակ, վկայվել է **եբրայեցերեն** բառը, որը հայերեն գիտական խոսքում կենսունակ էր մինչև XX դարի կեսերը. վերջին շրջանում գործածվում է առավելաբար **եբրայերեն** կարճ տարբերակը (Գյուրջինյան, 2021, 3-17, Գյուրջինյան, 2021, 216-231):

Նկատում ենք, որ արևմտահայերեն նոր Կտակարանում հիմնականում պահպանվել է գրաբարից ավանդված **եբրայեցերէն**-ը (Նոր Կտակարան, 1981, 255, Նոր Կտակարան, 1982, 320, Սուրբ Աւետարան Յիսուս Քրիստոսի, 1989, 455, 602) (եբբեմն գործածվել է **եբրայերէն** տարբերակը) (Աստուածաշունչ, 1993, 294, 377, Աստուածաշունչ, 2001, 129, 167): Արևելահայերեն նոր Կտակարանում պատկերն այսպիսին է. ա) պահպանվել է **եբրայեցերէն**-ը (Նոր Կտակարան, 1975, 242, 309), բ) գործածվել է **եբրայերեն** / **եբրայերէն** տարբերակը (գասական և նոր ուղղագրությամբ) (Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների, 1994, 116, 147, Աստվածաշունչ, 2001, 234, 299, վերջինս՝ ավանդական ուղղագրությամբ՝ Աստուածաշունչ, 2001, 300, 383), գ) միևնույն հրատարակության մեջ գործածվել են հին և նոր տարբերակներ՝ **եբրայեցերեն** և **եբրայերեն** (Նոր Կտակարան, 2003, 174, 22), որը գոյություն ունեցող զուգաձևության ակնհերև վկայություն է:

Կան բազմաթիվ լեզվանուններ, որոնք տառադարձման (ուղղագրական) տարբերակներ ունեն: Միայն մեկ օրինակ. **տահիտի** հիմքից կազմվել է **տահիտիերեն** (Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան, 2012, 136), **թաիթի** հիմքից՝ **թաիթերեն** (Ստեփանյան, 2015, 13, 14), առանց հ-ի և բառավերջի ի-ի անկմամբ: Կարևոր է հաշվի առնել, թե ո՞ր լեզվից է կատարվել տառադարձությունը, տվյալ դեպքում՝ անգլերենից, թե՞ Ֆրանսերենից, կամ գուցե ռուսերենի ազդեցություն էլ կա: Տակավին լուծելի է մնում խնդիրը՝ **թաիթիերեն**, **տահիտիերեն**, թե՞ մեկ այլ տարբերակ (Գյուրջինյան, 2023, 125-147):

Լեզվանունների կանոնարկումը պետք է վերաբերի հայերենի բոլոր լեզվանուններին (հայակազմ և փոխառյալ), անկախ տվյալ լեզվով խոսողների թվից, լեզվի «կռից» և լեզվանունների գործածության հաճախականությունից: Այսպես, օրինակ. Դադստանի ապրող կարատա

ժողովրդի լեզուն (խոսողների թիվը՝ շուրջ 10 հազար) հայերեն կոչել են տարբեր կերպ. նախ՝ **կարատա** փոխառությամբ (Աճառյան, 1955, 539), այնուհետև կազմվել է **կարատիներեն** բառը (Աղայան, 1967, 578, Պետրոսյան, Գալստյան, Ղարազուլյան, 1975, 149): Լեզվանվան **—ին** բաղադրիչը ուսներեն համարժեքի ազդեցությամբ է գոյացել (հմմտ. каратаинский язык): Իրավացիորեն զեղչելով **—ին** բաղադրիչը՝ Գ. Ջահուկյանը գործածել է **կարատերեն** տարբերակը (Ջահուկյան, 1987, 604): Սակայն պետք է նկատի ունենանք, որ **կարատա** ժողովրդանունը **ա** վերջնահնչյուն ունի, ուստի օրինաչափորեն պիտի կազմվեր **կարատայերեն** լեզվանունը (Գյուրջինյան, 2023, 65-98):

Եվ, վերջապես, ամենաթարմ օրինակը՝ Բելառուսի պաշտոնական լեզվի անունը (այս երկրում պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի նաև ռուսերենը):

Խորհրդային տարիներին գործածվում էր **բելոռուսերեն** լեզվանունը (կազմվել է **բելոռուս** ժողովրդանունից): Տասնամյակներ շարունակ համատարած **բելոռուսերեն** է գրվել (Աղայան, 1967, 573, Հայկական սովետական հանրագիտարան, 1976, 377), իսկ բանավոր խոսքում հնչող **բելառուսերեն**-ն ուղղախոսական սխալ էր ըմբռնվում: Այդպես էր մինչև XX դարի վերջերը: Բելոռուսիայի անկախության հռչակումից հետո 1991 թ. սեպտեմբերի 19-ին ընդունված օրենքով Բելոռուսական Խորհրդային Հանրապետությունը պաշտոնապես անվանվեց **Բելառուսի** Հանրապետություն, կրճատ՝ **Բելառուս**: Որպես դրա արձագանք՝ Հայաստանի Հանրապետության նախագահի և արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքերում (www.president.am, www.mfa.am) միայն **Բելառուս** տարբերակն է գործածվում: Ռուսական մամուլում և գիտական գրականության մեջ երկրանվան և մասնավորապես լեզվանվան հարցը քննարկվում է, և հակվածություն կա պահպանելու ավանդական белорусский язык տարբերակը:

Երկրանվան փոփոխությունը հանգեցրեց լեզվանվան մասնակի փոփոխության, և շրջանառության մեջ դրվեց **բելառուսերեն** տարբերակը (**ա**-ով): Հայոց լեզվի դպրոցական, աշխարհագրության համալսարանական նոր դասագրքերում և այլուր գործածվել է **բելառուսերեն** լեզվանունը (Գյուրջինյան, Հեքեքյան, 2010, 5, Մանասյան, 2011, 130), վերջին տարիներին հրատարակված բառարաններում և տեղեկատուներում նույնպես արձանագրվել է **ա**-ով տարբերակը (Բարաթյան, 2002, 107, Հանրագիտական բառարան, 2016, 319, Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան, 2012, 17, Դպրոցա-

կանի հանրագիտարան, 2021, 16): Բայց միաժամանակ նկատելի է, որ լեզվանվան նոր տարբերակը դյուրին չի հարթում իր ճանապարհը, և ավանդույթի ուժով ուժով գրվող տարբերակը հանդիպում է ոչ միայն մամուլում, այլև լեզվաբանական աշխատանքներում (Խաչատրյան, 2021, 404): Մեր կարծիքով երկրանունը և լեզվանունը նույնահիմք պետք է լինեն, ուստի վստահաբար կարող ենք ասել, որ ապագան **բելառուսերեն** տարբերակինն է:

Կան լուծման կարոտ ուրիշ՝ մասնավոր խնդիրներ ևս: Օրինակ՝ վերջին երկու-երեք տասնամյակում շրջանառության մեջ է գրվել **եզդիերեն** լեզվանունը (եզդիների լեզուն քրդերենի կուրմանջի բարբառի մի խոսվածքն է), որը մինչ այդ չի հանդիպում հայերեն գիտական խոսքում, այնինչ հիմա Հայաստանում արդեն հրատարակվել են եզդիերենի դպրոցական դասագրքեր (Գյուրջինյան, 2024, 99-100):

Բոլոր հանգամանքները հաշվի առնելով (այդ թվում՝ գործածության ավանդույթը, երկու գրականներում դրսևորվող իրողությունները)՝ հարկ է մեկ առ մեկ մանրակրկիտ ուսումնասիրել արդի հայերենում գործածվող (նաև երբեք գործածված և գործածելի) բոլոր լեզվանունները, կանոնարկման ցուցումներ և հանձնարարականներ մշակել ու ձեռնարկել աշխարհի լեզուների հայերեն համընդհանուր ցանկի ստեղծումը: Աշխարհի հնագույն և զարգացած լեզուներից մեկով՝ հայերենով, որ պետական լեզվի կարգավիճակ ունի, գիտության և համալսարանական կրթության լեզու է, պետք է ունենանք անմիօրինակությունից հիմնականում զերծ, որոշակիորեն ընդունելի լեզվանուններ:

Եզրակացություններ

Աշխարհի լեզուների անունների հայերեն ամբողջական ցանկը կազմելու համար հարկավոր է լեզվանունների և նրանց այլազան տարբերակների հանգամանալից ուսումնասիրություն կատարել, մշակել հանձնարարականներ՝ այս կամ այն լեզվանունը կամ նրա տարբերակը գործածելու առումով, ձգտելով լեզվանունների միասնականացման և կանոնակարգման: Դա անհրաժեշտ է պետական-պաշտոնական գրագրության մեջ և գիտական խոսքում միօրինակություն ու ճշտություն ապահովելու համար:

Լեզվանունների կանոնակարգումը կարևոր է լեզվանունների բառարանային մշակման առումով: Այն մեծապես կօգնի նաև որոնողական համակարգերում որոշակի խոչընդոտներ հաղթահարելու տեսանկյունից:

Հարկավոր է կանոնակարգել և միասնականացում հաստատել ոչ միայն հայերենի գրական յուրաքանչյուր տարբերակում, այլև նկատի

առնելով ընդհանուր հայերենի շահը՝ հասնել համահայերենյան հնարավորինս ընդունելի լեզվանունների հաստատման:

Կանոնակարգման հարցում կարևոր դերակատարություն ունեն նաև լեզվի ինքնակարգավորիչ մեխանիզմները:

Քիտական և գործնական բազմաթիվ խնդիրներ կարող են լուծել աշխարհի լեզուների հայերեն անվանումների ամբողջական ցանկի կազմումը և հրապարակումը:

DAVIT GYURJINYAN

REGULARIZATION ISSUES OF MODERN ARMENIAN LINGUONYMS

Summary

To compile a comprehensive list of world linguonyms in Armenian, a meticulous study of linguonyms and their variants is essential. This effort aims to formulate recommendations for the use of specific linguonyms or their variants, with a focus on achieving uniformity and accuracy in state-official documents and scholarly discourse.

Establishing regulations and promoting uniformity is crucial not only within each literary form of Armenian but also in the interest of Armenian language as a whole, aiming towards the adoption of universally accepted pan-Armenian linguonyms.

Self-regulatory mechanisms within the language community play a pivotal role in standardization efforts. Therefore, the compilation and publication of a unified list of world linguonyms in Armenian will address numerous scientific and practical inquiries.

Keywords - linguonyms, Armenian linguonyms, lexical linguonyms, linguonym forming suffix, phrasal linguonyms, borrowed linguonyms, variants of linguonyms.

Գրականություն

Աղայան, Էդ. (1976). Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան»:

Աղայան, Էդ. (2014). Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, «Մանմար»:

Աղայան, Էդ. (1987). Լեզվաբանության հիմունքներ, չորրորդ վերամշակված հրատ., Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Աղայան, Է. Բ. (1967). Լեզվաբանության ներածություն, Երևան, «Միտք»:

Աճառյան, Հ. (1955). Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, Ներածություն, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ.:

Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան. (2012). Երևան, «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ:

Աստվածաշունչ. Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի. (2001). աշխարհաբար նոր թարգմանություն (պատ. խմբագիր՝ Դ. Գյուրջինյան), Երևան, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն:

Աստուածաշունչ. Գիրք Հին և Նոր Կտակարաններու. (2001). Բեյրութ, Լիբանանի Աստուածաշունչի ընկերություն:

Աստուածաշունչ. Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի. (1994). նոր աշխարհաբար թարգմանություն (աշխատասիրող՝ Զարեհ արք. Ազնաուրեան), Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսություն, 1993:

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների, արեւելահայերէն նոր թարգմանություն, Ս. Էջմիածին, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն:

Աստուածաշունչ. Նոր Կտակարան Յիսուսի Քրիստոսի. (2001). Թեհրան, ԹՀԹ քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունք:

Բարաթյան, Ն. (2002). Հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Մակմիլան-Արմենիա»:

Բարսեղյան, Հ. Խ. (1973). Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս»:

Գյուրջինյան, Դ. (2022). Անգլերեն լեզվանվան պատմական զարգացումը հայերենում, «Պատմաբանասիրական հանդես», N 2, էջ 169-187:

Գյուրջինյան, Դ. (2023). Ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան) լեզուների հայերեն անվանումները. գործածության և կանոնարկման հարցեր, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, էջ 125-147:

Գյուրջինյան, Դ. (2021). Արամեացիների լեզվի հայերեն անունը, «Հայագիտական հանդես», N 3, էջ 3-17:

Գյուրջինյան, Դ. (2021). Բալթիական լեզուների հայերեն անունների տարբերակայնության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, էջ 217-239:

Գյուրջինյան, Դ. (2023). Դադստանյան լեզուների հայերեն անունները. գործածությունը և բառարանային մշակումը. Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, N 1(64), Երևան, «Լինգվա», էջ 65-98:

Գյուրջինյան, Դ. (2024). Իրանական լեզուների հայերեն անունները. ժամանակագրությունը, գործածությունը, բառարանային մշակումը և կանոնարկման խնդիրները. Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, N 1(68), Երևան, «Լինգվա», էջ 64-121:

Գյուրջինյան, Դ. (2022). Լեզվանունների արևելահայերեն / արևմտահայերեն տարբերակայնությունը, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին, Հանրապետական գիտաժողովի նյութեր, պրակ Գ, Երևան, «Քոփի Պրինտ» հրատ., էջ 26-37:

Գյուրջինյան, Դ. (2023). Հինգերորդ դարի հայերեն լեզվանունները, «Վէմ», N 3, էջ 102-139:

Գյուրջինյան, Դ. (2021). Հնդկական լեզուների անունները հայերենում. գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր, Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Քոփի Պրինտ», էջ 17-37:

Գյուրջինյան, Դ. (2021). Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները, «Հայագիտական հանդես», N 4, էջ 3-17:

Գյուրջինյան, Դ. (2021). Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման պատմությունը, «Բանբեր հայագիտության», N 3, էջ 216-231:

Գյուրջինյան, Դ. (2022), Ֆրանսերենի հայերեն անվանումների պատմական հոլովույթը, «Վէմ», N 3, էջ 137-167:

Գյուրջինյան, Դ., Հեքեքյան Ն. (2010). Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար (հումանիտար հոսք), Երևան, «Էդիթ Պրինտ»:

Գույումճեան, Մ. Կ. (1950). Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Կահիրե, «Սահակ-Մեսրոպ» տպ.:

Դպրոցականի հանրագիտարան: Երկրներ և դրոշներ. (2021). Կազմող՝ Վ. Աբրահամյան, Երևան, «Հաշ ընդ հաշ փրինթ»:

Թորոսեան, Լ. (2019). Ընդարձակ բառարան Հայերէնէ-Գերմաներէն, Վիեննա, հեղ. հրատ.:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. (1972). հ. 2, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:

Լուսինեան, Գ. (1900). Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. 1, Փարիզ, տպ. Մարիսի:

Խաչատրյան, Լ. Մ. (2021). Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:

Խաչատրյան, Լ. (2008). Լեզվաբանության ներածություն, Երևան, «Զանգակ»:

Հայ-ռուսերեն բառարան. (1987). Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:

Հայկական սովետական հանրագիտարան. (1976). հ. 2, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն:

Հայկական սովետական հանրագիտարան. (1978). հ. 4, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն:

Հայկական սովետական հանրագիտարան. (1986). հ. 12, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն:

Հանրագիտական բառարան. (2016). հ. 1, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ.:

Հանրագիտական բառարան. (2018). հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ.:

Հարությունյան, Հ. (2016). Աշխարհի բնակչության էթնոլեզվադավանական հակիրճ բնութագրերը: Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես (գիտական հոգվածների ժողովածու), Երևան:

Հարությունյանց, Մ. (1963). Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, Գիտատեխնիկական ընկերությունների հայկական ռեսպուբլիկական խորհուրդ:

Ղազարյան, Ռ. Ս., Ավետիսյան, Հ. Մ. (2009). Միջին հայերենի բառարան, 2-րդ հրատ., Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ.:

Ճլերէճեան, Գնէլ Արք., Տօնիկեան, Փ. Կ. (1992) Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք» Հրատարակչատուն:

Մալխասյանց, Ստ. (1944), Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ.:

Մանասյան, Մ. (2011). Բնակչության աշխարհագրություն, Երևան, ԵՊՀ հրատ.:

Մէնէվիշեան, Գաբրիէլ վ. (1903). Արդի լեզուագիտությունը, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան:

Նազարյան, Ռ., Գյոզալյան, Ա. (2004). Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Երևան, «Զանգակ»:

Նոր Կտակարան. (1982). աշխարհաբար թարգմանություն, Մեսրոպ վրդ. Ճուրեան, Բեյրութ, Հայ Կաթողիկէ պատրիարքարան:

Նոր Կտակարան. (1975). արեւելահայերէն նոր թարգմանություն համեմատութեամբ յունարէն բնագրերի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նոր Կտակարան. (1981). արեւմտահայերէն նոր թարգմանություն համեմատութեամբ յունարէն բնագրերու, Երուսաղեմ, Սրբոց Յակոբեանց տպարան:

Նոր Կտակարան. (2003). «Նոր Արարատ» արեւելահայերեն թարգմանություն, Երևան, Հայաստանի ավետարանական եկեղեցիների միություն և Հայաստանի աստվածաշնչային ընկերություն:

Պետրոսյան, Հ. Զ., Գալստյան, Ս. Ա., Ղարազյուլյան, Թ. Ա. (1975). Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:

Ջահուկյան, Գ. Բ. (1987). Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:

Սեֆերյան, Ս. և ուրիշներ (2009). Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Արեգ»:

Ստեփանյան, Լ. Գ. (2015). Հայ-պոլինեզիական լեզվամշակութային ընդհանրություններ, Երևան, «Յասոն»:

Սուրբ Աւետարան Յիսուս Քրիստոսի. (1989). աշխարհաբար թարգմանութիւն, աշխատասիրեց Հ. Սրապիոն արք. Ուլուհոճեան, Գ տպ., Վենետիկ, Ս. Ղազար:

Лингвистический энциклопедический словарь. (1990). Москва, «Советская энциклопедия».

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՔՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏՆՔՍՏՈՒՄ**

ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱԶԳԵՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բաժնի վարիչ, Խ. Աբովյանի անվան
ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ*

Ներածություն

Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի համեմատական-տիպաբանական նոր ուսումնասիրությունները բառապաշարի ստուգաբանական վերլուծության վերաբերյալ երևան են բերում բոլորովին նոր խնդիրներ, որոնց առարկայական լուծումները կարող են նպաստել լեզվի պատմության ավելի ամբողջական և ըստ ամենայնի պատկերացման համար:

Հետազոտության առարկան: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հայերենի բառապաշարի ոլորտում մեր աշխատանքների արդյունքում կուտակվել է բառաֆննական և ստուգաբանական զգալի թվով նյութ, որ ամբողջովին նորություն է, նախկինում դրանք համարվել են «անստույգ» (անհայտ ծագման) բառեր:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Նախկինում արված համապատասխան աշխատանքները կարևոր են ոչ միայն ինքնին, այլև նոր ձեռնարկումների համար՝ լրացումների և ճշգրտումների, նոր ստուգաբանությունների նպատակով:

Հետազոտության նորությունը: Ներկայումս հայերենի ընդհանուր բառերի (այս դեպքում՝ արմատների) ծագման բացատրությունը՝ հիմնված ներքին վերականգնման և արտաքին համեմատությունների վրա, հնչյունական և արմատականության նոր հիմունքներով

(«օրենքներով») ըստ կարելիւոյն մեծացնում է բնիկ, այլ եկամուտ միավորների կշիռը ընդհանուր բալանսում :

Մեթոդաբանությունը: Նյութի ֆննդւթյուն կատարել ոչ միայն ավանդական, այլ նաև ձևաիմաստային և գործառական բաշխվածության սկզբունքների կիրառումամբ:

Նպատակը և խնդիրները: Նման ֆննդւթյունը թե՛ իմաստաբանորեն, թե՛ ֆանակապես ընդարձակում է գիտական պատկերացումը հայերենի բառապաշարի ծագումնաբանության և ցեղակցային կապերի սերտության վերաբերյալ :

Սույն հոդվածում անդրադառնում ենք այդ խնդիրներից մի ֆանիսին:

Հիմնաբառեր - Հայերենի արմատի կառուցվածք, ստուգաբանություն, ծագում, ճշգրտում, լրացում, ստուգաբանական նոր բառաբան:

Թեմայի արդիականությունը և հարցադրման կարևորությունը

Հայոց լեզվի բառապաշարը գիտական ուսումնասիրության տարածամանակյա հարցադրումներում գրեթե միշտ եղել է բուն ուշադրության կենտրոնում՝ ոչ միայն ինքնին, այլև համեմատական-տիպաբանական կտրվածքում, ինչպես հայ, այնպես և այլ լեզվաբանների աշխատանքներում: Առաջնակարգ տեղ են զբաղեցրել լեզվի հնչյունական համակարգը, բառապաշարը և քերականական կառուցվածքը, իսկ բառապաշարի դեպքում՝ արմատի բաղադրությունը և ստուգաբանությունը, առավել ևս ցեղակից և ոչ ցեղակից լեզուների համապատասխան տվյալների ստուգման ու ճշգրտման տեսանկյունից:

Հայերենի վերաբերյալ բառաքննական և ստուգաբանական աշխատանքները հայտնի են առանձին գրքերի, հոդվածների, այլև բառարանների տեսքով (նկատի ունենք հատկապես Պ. դր Լազարդի, Հ. Հյուբշմանի, Հ. Աճառյանի, է. Աղայանի, Գ. Ջահուկյանի աշխատանքները), որոնք ստեղծվել են նախանցյալ դարի կեսերից մինչև անցյալ դարի 70-

80-ական թթ. ընթացքում (Lagarde, 1866, Hübschman, 1897, Աճառյան, 1-4, 1971-1979, Աղայան, 1974, Զահուկյան, 1987, 2010) ¹:

Հայտնի է, որ լեզվաբանության բնագավառում հարաձուռ զարգացում ունեցող բնագավառ է համեմատական-ստուգաբանական ուսումնասիրության բնագավառը, ընդ որում գրեթե բոլոր խմբերի («ընտանիքների») լեզուների առնչությամբ:

Հայտնի է նաև, որ դասական համեմատաբանությունը մշակել էր հնդեվրոպական ցեղակից լեզուների առանձնացման տարամետ (դիվերգենտ) տեսությունը՝ ծագում մեկ ընդհանուր աղբյուրից, որ մինչև օրս ընդունվում է որպես այդպիսին (Ա. Շլայխեր և ուրիշներ), թեև հետագայում, ավելի ուշ ի հայտ է գալիս հակառակը՝ զուգամետ (կոնվերգենտ) մոտեցումը (Վ. Պիզանի և ուրիշներ) (Schleicher, 1861-1862, Meillet, 1908, Meïe, 1938, Pisani, 2, 1953 / Пизани, 1956): Այս առնչությամբ եղել են նաև այլ մոտեցումներ, որոնցից մեկն էլ, հատկապես հայերենի բնույթի հետ կապված, համարվել է, այսպես կոչված, «երկբնույթ» («ասիանիկ») լեզուների վերաբերյալ մոտեցումը (հայերենի դեպքում՝ Գ. Ղափանցյան), որ հանդիպել է կտրուկ առարկությունների (Ա. Ասմանզուլյան, Բ. Վ. Գորնունգ, Գ. Զահուկյան և ուրիշներ) (Асмангулян, 1953, 6, 21-36, Горнунг, 1954, 6, Джаукян, 1953, 7-8): Ղափանցյանի նման մոտեցումը պայմանավորված էր նախ՝ ժամանակին Ն. Մառի «լեզվի նոր ուսմունքին» անքննադատ հետևելու հանգամանքով, երկրորդ՝ հայ-կովկասյան (քարթվելական) լեզուների ավելի մեծ առնչություններ տեսնելու միտումով, որ, ի դեպ շարունակվում է նաև հետագայում, հատկապես Գ. Զահուկյանի աշխատություններից մի քանիսում, ինչպես նաև Ա. Մեյերի և հետագա ուսումնասիրողների հետևողությամբ՝ հայերենի տիպաբանությունը որակել իբրև «ալլաժին» (ալոգենետիկ) բնույթի (Джаукян, 1967, Զահուկյան, 1970, 127-128, Церетели, 1968, 3, 15): Դա բացատրվում է հայերենի տվյալների ոչ ամբողջական, նույնիսկ ակնարկային քննությամբ, որ վերջին տասնամյակներում կորցրել է իր նշանակությունը. հայերենի տվյալներին, ընդհակառակը, տալիս են մեծ նշանակություն ցեղակից լեզուների, օրինակ, բաղաձայնական համակարգի վերանայման հարցերում (Шураков, 1980, 5, 1984, 123-135, Гамкрелидзе, Иванов, 1984 և ուրիշներ):

¹ Լագարդը հիշյալ իր երկրորդ աշխատության մեջ՝ մեր հաշվումներով անդրադառնում է հայերեն 491 բառի ստուգաբանական քննությանը (տե՛ս Lagarde, 1866, XXXV-XXXIX):

Հետաքրքիր է այն, որ, շեշտենք, նման տեսականորեն խախտա-
առարկությունները համեմատաբար ավելի ուշ դառնում են միջոց՝ հայե-
րենի ծագումնային բնույթի ոչ ճիշտ պատկերացման արդյունքում նրան
վերագրելու լեզուների առանձնացվող ծագումնաբանական տեսակներից
մեկի՝ այսպես կոչված, «տարածագում» («ալլոգենետիկ») տեսակի ա-
ռանձնացում, որն, անշուշտ, արդյունք է հայերենի ցեղակցային բնույթի
վերաբերյալ շարունակվող ոչ ճիշտ ըմբռնման, ինչպես ցույց են տալիս
վերջին տասնամյակներին հնդեվրոպական լեզուներին նվիրված համե-
մատական-տիպաբանական ուսումնասիրությունները (Haudricourt. 1975,
p. 267-272, Hopper, 1975, 7/2, 141-166):

Հայերենը հնդեվրոպական լեզուների շրջանում զբաղեցնում է միջա-
կա դիրք, ունի հնչյունական, արմատային և քերականական հնագույն
(«արխաիկ») գծեր, որոնք գիտության ներկայիս պայմաններում հիմք են
հանդիսանում նոր տեսություններ մշակելու ցեղակից լեզուների և նրանց
առնչությունների վերաբերյալ, հնդեվրոպական լեզուների տեղաշարժի և
սփռվածության առնչությամբ: Այս նոր մոտեցումը հայերենի համեմա-
տական-տիպաբանական հետազա ուսումնասիրությունների համար ունի
ոչ միայն առանցքային և սկզբունքային, այլև հեռանկարային նշանա-
կություն:

Բառաքնական և ստուգաբանական աշխատանքը լեզվի պատմության նախորդ փուլերում

Լեզուների համեմատական ուսումնասիրությունը ամենից առաջ
բախվում է նրանց բառաքնական և ստուգաբանական խնդիրներին:
Վերջիններս իրենց լուծումներն ունեն ոչ վերջնական ձևով, քանի որ
գիտության զարգացման ընթացքում փոխվում են ոչ միայն մոտեցում-
ներն ու պատկերացումները, այլև առաջ են քաշվում բոլորովին նոր
մեթոդներ և հայեցակարգեր: Այդուհանդերձ, հայերենի և ցեղակից մյուս
լեզուների բառաքնական-ստուգաբանական ուսումնասիրությունն ունի
զգալի ձեռքբերումներ, մանավանդ ընդհանուր օրինաչափությունների
հաստատման, և ըստ այդմ նոր լուծումների և պարզաբանումների առա-
ջադրման տեսանկյունից:

Սակայն միշտ չէ, ոչ ճիշտ է այն, թե հայերեն այս կամ այն արմատը,
որ գրականում կամ բարբառներում պահպանվել է կամ հանդես է գալիս
տարբերակներով (հմմտ. ոտն, հետք, յետոյ, հաց, հատ(իկ) [բրբռ. հոց] և
այլն), լեզվի ներքին զարգացման արդյունք են, մանավանդ բարբառային
ձևերը հին գրականից առաջ եկած ձևեր են: Դա այնքան էլ այդպես չէ,

քանի որ նման արմատ-բառերի նախաձևերը տարբերակային են նաև հիմք-լեզվում՝ իբրև հնդեվրոպական ձայնդարձի մի դրսևորում (հմմտ. ոտն < հե.*pos- < pod-is, հետք, յետոյ < հե.*pes < ped-is, հաց < հե.*pek^է-, հօց [Ազլ. բրբռ.] < *pok^է-, հեղ-ում < *pel-, ող-ող-եմ < *pol-, հալ-եմ < *pō- և այլն. բերված օրինակներից վերջինը՝ դ /լ, հայերենի ներքին զարգացման արդյունք է) (Ջահուկյան, 1959, 162, Бенвенист, 1955, 27. Макаев, 1970, 9-11): Ըստ այսմ, ենթադրելի է բարբառային ձևի բխեցում հիմք-լեզվի տարբերակային արմատից, ոչ թե համարել գրաբարից հետո և նրա համեմատությամբ բարբառային տարբերակում: Սա նոր, կարելի է ասել, համեմատական այլ քննության դրույթ է, որ ունի տեսական մշակման և հիմնավորման իր խնդիրները՝ ի տարբերություն ավանդական մոտեցումների (Համբարձումյան, 2003, 125-127, 2003, 39-43, Hambardzumyan, 2001-2002, p. 131-134, Амбарцумян, 2012, 13-15):

Հնդեվրոպական այլ լեզուների թվում նաև հայերենի նկատմամբ վերջին տասնամյակներին կատարված աշխատանքները, որքան հնարավորություն է տալիս հեղինակների՝ հայերենի նյութի իմացությունը, այսպես թե այնպես կարևոր են հայերենի դեռևս անհայտ ծագման բառերի քննությանը ձեռնամուխ լինելու համար:

Տեսական նոր մոտեցումների կիրառմամբ, կուտակված փորձի օգտագործմամբ, լեզվական նյութի ներքին համեմատությունների և արտաքին զուգահեռների, ըստ այդմ՝ նոր վերականգնումների (ստուգաբանության) և ճշգրտումների (լրացումների) խնդիրը հայերենի համեմատական-ստուգաբանական քննությունը արդիական՝ ոչ միայն հայերենի պատմության, այլև հնդեվրոպական (նաև այլ տիպի) լեզուների առավել ամբողջական պատկերացման համար խնդիր է: Վերջինս մնում է հեռանկարային՝ հանգամանքների և դիտվածքների (ասպեկտների) համատեքստում:

Առաջադրվող խնդիրները և հնարավոր լուծումները

Ոչ միայն դասական համեմատաբանության տեսությունների վերանայման, նոր՝ հայտնի դարձած լեզուների տվյալներ նկատի ունենալու, այլև նոր տեսությունների ու մոտեցումների երևան հանելու պարագայում հայերենի տվյալների վերաբերյալ հայտնվում են ավելի հիմնավոր տեսակետներ, կատարվում են ավելի իրական վերլուծություններ, և ցեղակից լեզուների հետ այդ տվյալներին մեծ տեղ են տրվում, մասնա-

վանդ հայերենի հնատիպության (ավելի արխաիկ գծեր ունենալու) առումով:

Ըստ այսմ, բառաքնական-ստուգաբանական տարբեր ուսումնասիրություններում նկատում ենք բոլորովին նոր մոտեցումներով հայերեն հին, այլև անհայտ ծագման բառերի ստուգաբանության փորձեր, որոնք յուրովի առաջ են մղում բառապաշարի ծագումնային քննության ոլորտը: Նման աշխատանքները, բնականաբար, նպաստում են նրա բառապաշարի պատմության ըստ ամենայնի վերհանմանը, թեև որոշ դեպքերում նկատելի են գրականի (նաև վերջինիս բարբառների) նյութի ոչ ամբողջական վերհանման դեպքեր²:

Լեզուների ցեղակցության համեմատական վերլուծությունը և լեզվական նյութի ծագումնային-ստուգաբանական քննությունը հնդեվրոպական լեզվաբանության մեջ հարաճուն բնագավառ է: Այդ ընթացքում հայերենի ընդգրկումը նման աշխատանքում նախկինում եղել է տարբեր ծավալով և տեսական ոչ միակերպ մոտեցումներով:

Ներկայումս նման աշխատանքներում հայերենին տրվում է անհամեմատ մեծ տեղ, նույնիսկ վճռական նշանակություն՝ ցեղակից լեզուների շատ հարցերի ճիշտ և առարկայական (օբյեկտի) ձևով գնահատելու համար: Ուստի և այն ենթադրում է ավելի ամբողջական, այսպես կոչված, լրացումային և ճշգրտումային մոտեցում հայերենի նյութին, ընդ որում և՛ գրական, և՛ ոչ գրական (բարբառային) շերտերի ընդգրկմամբ³:

Վերջին տարիներին հայերենի բառապաշարի շտուգաբանված (անհայտ ծագման), նաև ոչ հավաստի ձևով ստուգաբանված համարվող բառերի (բառարմատների) վերաբերյալ գրվել են բառաքնական և ստուգաբանական աշխատանքներ՝ տարբեր մասնագետների, այլև տողերիս հեղինակի կողմից, որոնք լույս են տեսել առանձին հոդվածներով, տեղ գտել մեր առանձին մենագրություններում (նշենք միայն հետևյալները. Համբարձումյան, 1-2, 1998-2007, 2012, 2014, 2022):

Այդ աշխատանքներում փորձել ենք նկատի ունենալ վերջին տարիներին կատարվածը՝ թե՛ տեսության և թե՛ փաստական նյութի առումով:

² Օրինակներն բավականին մասնավոր են, ուստի չենք տալիս կոնկրետ գրականության հղումներ:

³ Հատկապես հայ բարբառների նյութը վերջին տարիներին եղել է առանձին, կարելի է ասել, մանրամասն քննության առարկա, թեև կարող են լինել նոր լրացումներ, որ բացատրվում են բարբառների՝ լեզվի այդ տարբերակի յուրահատկություններով (տե՛ս **Ջահուկյան**, 1972, 277-330: **Միմոնյան**, 1979, 188-248):

Տեսության հարցերում կան անհրաժեշտ լրացումների և ճշգրտումների տեղեր, իսկ փաստական նյութի (գրավոր աղբյուրների, նաև բարբառների) ընդգրկման առումով նոր քննությունները պարզում են մի շարք բացթողումներ, որոնք ի համեմատություն ցեղակից մյուս լեզուների համապատասխան տվյալների՝ հետագա ուսումնասիրությունների ամուր բազա են առաջ բերում: Ի միջի այլոց, դա գրեթե նույն չափով՝ վերաբերում է թե՛ բառապաշարի և թե՛ քերականական կառուցվածքի իրողություններին⁴:

Ըստ այսմ՝ հայերենի ստուգաբանության և բառաքննության շատ խնդիրներ են առաջ գալիս: Խնդիրներից առաջինը վերաբերում է այն ստուգաբանություններին, որոնք կատարվում են տեսական նոր մոտեցումների հիման վրա՝ արմատի բաղադրության բնույթի, արմատի և ածանցական բաղադրիչների առնչության բանաձևման, հանդիպադրման հավաստիության, իմաստային համարժեքության նկատառումներով: Երկրորդը՝ իմաստային (բովանդակության պլանի) համընկման հավաստիությունն է. վերականգնվող կամ ստուգաբանվող արմատի (բառի, բառաձևի, ածանցի և այլն) հիմնավորվածությունը լեզվի և այն կրող հանրության մշակույթի մեջ: Այս դեպքում իմաստաբանությունը բացվում է ոչ միայն գրավոր շրջանի, այլև նախագրային ժամանակների լեզվական-իմաստային դրսևորումների հետ. հմտ. առեւծ / առիւծ «մոնչացող, մոնչյուն», աւ- (աւետիք, առաւօտ, յաւիտեան) «լույս», տիւ «լույս լույսի աստվածություն՝ աստված», առակ / առած «խոսք» և այլն, ցեղակից (հնդեվրոպական) լեզուների նոր համեմատությունների իմաստաբանության մեջ:

Հնարավոր կամ ակնկալվող արդյունքները

Այս ոլորտում ունենք մի քանի հարյուրից ավելի նոր ստուգաբանություններ և գրեթե նույնքան բառաքննական ճշգրտումներ և լրացումներ: Այդ նյութն այսօր ձեռագիր վիճակում է՝ իբրև հայերենի բառաքնական և ստուգաբանական բառարան:

Առաջիկայում, հոգածության արժանի պայմաններում այն կառուվի մասնակի մշակման, վերջնականապես պարտրաստված կլինի հրատարակման՝ երկու ծավալուն պրակներով (չասենք՝ հատորներով), յուրովի կլրացնի մեր անվանի համեմատաբանների ստուգաբանական ժառան-

⁴ Հայերենի քերականական կառուցվածքի նոր ստուգաբանական-տիպաբանական քննությունը առանձին ուշադրության առարկա է:

գությունը՝ ներկայումս հայտնի ցանկերի և հատորների տեսքով, արդեն իրենց դերն ունեցած հայոց լեզվի պատմության մեջ:

Նգրականություններ

1. Հայերենի բառապաշարի ստուգաբանական քննությունը միշտ եղել է արդիական, նրա մի զգալի մասը մինչև օրս մնում է անհայտ ծագման:

2. Նախկինում այս բնագավառում կատարվել է հսկայական աշխատանք, որն այդպես էլ չի սպառել հայոց լեզվի բառագանձի ծագման և իմաստաբանության հետ կապված նյութը՝ ոչ միայն գրական հուշարձանների, այլև բարբառների ձևով ավանդված:

3. Առաջ են քաշվում տեսական ձեռքբերումների նկատառումով նոր խնդիրներ, որոնց հնարավոր լուծումները յուրովի նպաստ են հայերեն բառապաշարի պատմության համար:

4. Հնարավոր կամ ակնկալվող արդյունքները լիովին վերաբերում են ձեռքբերումներին՝ բառաքննական և ստուգաբանական նոր տվյալների ի հայտ բերմանը:

VAZGEN HAMBARDZUMYAN

THE PROBLEMS OF ETYMOLOGICAL AND ETYMOLOGICAL STUDIES OF ARMENIAN IN THE CONTEXT OF THE HISTORY OF THE LANGUAGE

Summary

In the article, we address the lexicological and etymological questions of Armenian, based on the newly acquired material, in the general context of the history of the language. Over the years, the works we have done in that direction are the basis for saying that the lexicologica-typological examination of the Armenian vocabulary is entering a new direction, especially with the application of new principles and semantic approaches, which gives a certain result. At present, the origin of more than a few hundred words (words-roots) has been revealed or corrected, so that the whole of the well-known etymological dictionaries is compiled. For now, our work is a manuscript,

there are many published scientific articles and monographic works on the subject.

Keywords - Structure of roots of Armenian words, etymology, more precises and additions in etymology, new etymological dictionary.

Գրականություն

Աղայան է. Բ, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աճառեան Հ. Հ., Հայերէն արմատական բառարան (2-րդ հրատ.), հհ. 1-4, Ե., 1971-1979:

Համբարձումյան Վ. Գ., Հնդեվրոպական տարբերակայնությունը և հայոց լեզվի տարբերակային ուսումնասիրության խնդիրները//«Հայագիտության արգի վիճակը և նրա զարգացման հեռանկարները (Ձեկուցումների գրույթներ, 15-20-ը սեպտեմբեր, 2003 թ.)», Ե., 2003, էջ 125-127:

Համբարձումյան Վ. Գ., Հնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնման և տիպաբանական վերլուծության խնդիրները // «Լեզու և լեզվաբանություն», 2003, 1, էջ 39-43:

Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, 1-2, Ե., 1998-2007 :

Համբարձումյան Վ. Գ., Հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., 2012:

Համբարձումյան Վ. Գ., Հայերենի բառաքնություն և ստուգաբանություն, 1, Ե., 2022:

Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե., 1970, էջ 127-128:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտություն (վիճակագրական բարբառագիտություն), Ե., 1972, էջ 277-330:

Սիմոնյան Ն. Մ., Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1979, էջ 188-248:

Амбарцумян В. Г., Лексикологические и этимологические уточнения, дополнения и новая постановка вопросов //“IX Международная

конференция по армянскому языкознанию: Сборник тезисов", Санкт-Петербург. Нестор-История, 2012, с. 13-15.

Асмангулян А. А., Против гипотезы о "двуприродности" армянского языка // "Вопросы языкознания", 1953, 6, с. 21-36.

Бенвженист Э., Индоевропейское именное словообразование, М., 1955, с. 27.

Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I—II, Тбилиси, Изд-во Тбилисского университета, 1984.

Горнунг Б. В., О так называемых "азианических" языках // "Известия АН Армянской ССР", 1954, 6.

Джаукян Г. Б., Урартский и индоевропейские языки, Ереван, 1963, с. 7-8.

Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.

Макаев Э. А., Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, § 9-11.

Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М., 1938.

Пизани В., Общее и индоевропейское языкознание // "Общее и индоевропейское языкознание", М., 1956, с. 83-199.

Церетели Г. В., О языковом родстве и языковых союзах // "Вопросы языкознания", 1968, 3, с. 15.

Широков О. С., Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины // "Вестник общественных наук", 1980, 5, с. 89-96.

Широков О. С., Общеиндоевропейский и армянский консонантизм // Международный симпозиум по армянскому языкознанию (Доклады)", Ереван, 1984, с. 123-135.

Hambardzumyan V. G., Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yerevan, 2014.

Haudricourt A. G., Les mutations consonantiques (occlusives) en indo-européen // "Melanges linguistique offerts à E. Benveniste. Société de Linguistique de Paris", LXX, Louvain, 1975, p. 267-272.

Hopper P. J., Glottalized and murmured occlusives in Indo-European // "Glossa", vol. 7, no. 2, 1973, p. 141-166.

Hübschman H., Armenische Grammatik, I Teil: Etymologie, Leipzig, 1897.

Lagarde P. de, Gesammelte Abhandlungen, Leipzig, 1866.

Lagarde P. de, Armenische Studien, Gottingen, 1877.

Meillet A., Les dialects indoeuropéens., Paris, 1908.

Pisani V., Allgemeine und vergleichende Sprachwissenschaft-Indo-germanistik // "Wissenschaftliche Forschungsberichtes", Band 2, 1953.

Schleicher A., Compendium der vergleichendes Grammatik der indogermanischen Sprachen, Weimar, 1861-1862.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԱՇԽԵՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտ. թեկնածու*

Ներածություն

Մեր հետազոտության մեջ անդրադարձել ենք հայոց լեզվի պատմության զարգացման հիմնական երեք խնդիրներին, որոնց ուսումնասիրությունները համարում ենք կարևոր: Նորագույն շրջանում մեծ տեղ պետք է հատկացնել բնագրային տեքստերի հանաչողական լեզվաբանության սկզբունքներով ուսումնասիրություններին, որոնք հնարավորություն են ընձեռում վերականգնելու ոչ միայն բառաշարեր, այլև տեքստերի միջոցով տալ տվյալ ժողովրդի մշակութային, ազգային, գիտական, տնտեսական արժեքային համակարգը. այսինքն հայոց լեզվի պատմությունն՝ իբրև գիտակարգ, նպաստելու է ազգային արժեքափոխանակման համակարգի ձևավորմանը: Առաջարկում ենք մեծ տեղ հատկացնել տիպաբանական-համեմատական խնդիրներին, որոնք ավելի կնշգրտեն, նոր խոսք կասեն արդեն իսկ հայտնի դասական հնդեվրոպաբանության տվյալներին: Մեծ տեղ ենք հատկացնում պատմական շարահյուսության ուսումնասիրություններին, քանի որ նախ այդ ուսումնասիրությունները կարիք ունեն ամբողջացնելու, ինչպես նաև նշենք, որ շարահյուսությունը բացահայտում է տվյալ լեզվի լեզվամտածողության առանձնահատկությունները: Շարահյուսական որոշ իրողություններ (համաձայնություն, շարադասություն, եղանակավորություն և այլն) հայերենի գրավոր շրջանում ունեցել են տարբեր դրսևորումներ,

գործածությունների դաշտ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանի լեզվամտածողությամբ: Այս իրողությունների հնարավորինս մանրամասն ուսումնասիրությունները անհրաժեշտ են նաև բնագրային նյութերը արժևորելու համար: Լեզվաբանների, առհասարակ գիտական տարբեր բնագավառներ այժմ մեծ ուշադրություն են դարձնում միջնադարագիտությանը: Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներից են նաև միջին հայերենի նորովի ուսումնասիրությունները, նույնիսկ ընդունված շրջանաբաժանումը շատ ընդհանրական է: Միջին հայերենը ընդգրկում է 12-16-րդ դարերը՝ իր ամբողջ դրսևորումներով՝ բարբառներով, գրաբարով, վաղ աշխարհաբարի տարաբնույթ տարրերով: Առաջարկում ենք նաև հայոց լեզվի պատմության դասավանդման գործընթացում նաև որոշ փոփոխություններ, ինչպիսիք են տարբեր նախագծերի իրագործում, գործնական դասերին մեծ տեղ հատկացնել որոնողական-վերլուծական աշխատանքներին և այլն:

Հիմնաբառեր - հնդեվրոպաբանություն, պատմական շարահյուսություն, տեխտաբանություն, համաշոդական լեզվաբանություն, տեխտային ռեաբանություն, նախագծային ուսուցում, միջին հայերեն, շրջանաբաժանում:

Հայոց լեզվի պատմությունը անցել է որոշակի ուղի, սակայն այժմ էլ դեռևս կան զգալի թվով խնդիրներ, որոնց լուծումը խիստ արդիական է, և հայերենագիտության կարևորագույն խնդիրներից են: Հայոց լեզվի պատմության գիտակարգի զարգացման միտումները մասնավորապես անկախության շրջանում ընթացել են, կարելի է ասել, երկու ուղղությամբ. առաջին՝ շարունակելով խորհրդահայ լեզվաբանության դպրոցը՝ կատարվել են ուսումնասիրություններ թե՛ պատմական քերականության, թե՛ հայոց լեզվի պատմության տեսական հարցերի շուրջ: Երկրորդ՝ փորձել են վեր հանել հայոց լեզվի պատմության վերաբերյալ նորանոր խնդիրներ, ստեղծվել են մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր: Մեր հետազոտության մեջ, արժևորելով հայոց լեզվի պատմության գիտակարգին վերաբերող աշխատությունները, անդրադառնում ենք որոշ հարցերի, որոնց ուսումնասիրությունները կնպաստեն մի շարք հարցերի լուսաբանմանը: Հայոց լեզվի պատմութ-

յունն իբրև գիտակարգ ունեցել է զարգացման որոշակի պատմությունը, որը ներկայացվում է շրջափուլերով:

Հետազոտությունը կատարված է **համեմատական-գուգադրական** (Խաչատրյան, 2017, 262), ինչպես նաև **նկարագրական** (դեսկրիպտիվ) մեթոդներով (Աղայան, 1987, 171):

Մեր հիմնական **նպատակն է՝** ուսումնասիրելով և արժևորելով կատարվածը՝ փորձել անդրադառնալ մի քանի **խնդիրների**, որոնցից են՝

1. Անկախության շրջանում ուշադրություն դարձնել տիպաբանական-համեմատական խնդիրներին:

2. Մեծ ուշադրություն դարձնել տեքստային առանձնահատկություններին:

3. Հիմք ընդունելով եղած ուսումնասիրությունները՝ ամբողջական ուսումնասիրել Աստվածաշնչի բառապաշարը և դրա հիման վրա կատարել բառապաշարային ուսումնասիրություն՝ այդ բառապաշարը գրաբարի համար համարելով գրական հայերեն:

4. Կատարել միջին հայերենի իրողությունների ամբողջական քննություն:

5. Անդրադառնալ պատմական շարահյուսության հարցերին, որոնցով բացահայտվում է տվյալ ժամանակահատվածի լեզվամտածողության առանձնահատկությունները:

6. Անդրադարձ կատարել նաև հայոց լեզվի պատմության դասավանդման մեկ-երկու առանձնահատկություններին:

Հայերենը, 19-րդ դարից սկսած, նույնիսկ ավելի վաղ ժամանակներից, եղել է լեզվաբանների, ավելի ուշ հնդեվրոպաբանների ուսումնասիրությունների կենտրոնում: Վերջիններս մեծ ներդրումներ են ունեցել հայոց լեզվի պատմության՝ որպես լեզվաբանական գիտակարգի ձևավորման մեջ:

Եթե փորձենք ամփոփենք հայոց լեզվի պատմության անցած ուղին, կարող ենք այն բաժանել հիմնական երեք շրջանների՝ առաջինը՝ մինչ խորհրդահայ լեզվաբանության շրջան, որտեղ անդրադարձ կատարվել է լեզվի պատմության այս կամ այն հարցին, բայց լեզվի պատմությունը իբրև լեզվաբանական գիտակարգ, դեռևս ձևավորված չի եղել: Երկրորդ շրջանը սկսվում է 20-րդ դարի սկզբից՝ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» մենագրությամբ: Նա իր ժամանակի հնդեվրոպաբանության և ընդհանուր լեզվաբանության դիրքերից տալիս է հայոց լեզվի

սկզբնավորման ընթացքը, կատարում է հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը, առանձնացնում է հայերենի բնիկ հնդեվրոպական բառաշերտը, անդրադառնում է փոխառություններին՝ ըստ իմաստային դաշտերի: Հ. Աճառյանը բնութագրում է հայոց բարբառների և գրաբարի հարաբերությունները, հունաբան հայերենը, միջին հայերենը և աշխարհաբարը (Աճառյան, 1951, IX):

Իհարկե, պետք է նշել մեծ լեզվաբանի կոթողային ևս երկու աշխատություններ՝ «Հայերենի արմատական բառարանը» և «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր ուսումնասիրությունները: Այս շրջանը համարենք հայոց լեզվի պատմության գիտակարգի **սկզբնավորման** շրջան:

Հայոց լեզվի պատմության զարգացման երկրորդ շրջանը, որը պայմանականորեն անվանենք **նոր շրջան**, ընդգրկում է 20-րդ դարի 50-ականներից մինչև 20-րդ դարի 90-ական թվականները:

Հայոց լեզվի պատմության հին շրջանին և հատկապես նրա բնույթին ու կազմավորման ընթացքին է անդրադարձել նաև նշանավոր լեզվաբան Գ. Ղափանցյանը, որն իր «Հայոց լեզվի պատմություն. հին շրջան» աշխատության մեջ քննել է հայերենի և խեթերենի, ինչպես նաև Հայաստայի լեզվի փոխազդեցությունները (Ղափանցյանը, 1961, 62):

Հայոց լեզվի պատմության և պատմական բարբառագիտության մեջ մեծ ներդրում ունի Ա. Ղարիբյանը: Հայոց լեզվի պատմության հարցերով հետևողականորեն զբաղվել է Սերոբ Ղազարյանը, որի աշխատություններից հատկապես նշենք «Հայոց լեզվի համառոտ պատմությունը», ինչպես նաև «Հայոց գրական լեզվի պատմությունը»: Այս ժամանակներում ստեղծվեցին բավական արժեքավոր աշխատություններ: Այս շրջանի նշանավոր լեզվաբաններից նշենք՝ Գ. Զահուկյանը, է. Աղայանը, Ռ. Իշխանյանը, Վ. Առաքելյանը, Ռ. Ղազարյանը, Հ. Բարսեղյանը, Լ. Հովսեփյանը, Լ. Հովհաննիսյանը և այլք: Արժեքեղիվ նրանց աշխատությունները՝ նշենք, որ հայոց լեզվի պատմությունը 20-րդ դարի 80-ականների վերջում (1987թ.) զարգացման որակական մի նոր մակարդակի է բարձրացնում մեծավաստակ գիտնական Գևորգ Զահուկյանը՝ իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» սովորաբանաբան աշխատությամբ: Նա արդի լեզվաբանական մեթոդների կիրառմամբ վերականգնում և բնութագրում է հայերենի նախագրային շրջանը, կատարում է հայերենի պատմության ամբողջական շրջանաբաժանում և՛ նախագրային, և՛ գրային ժամանակաշրջանների (Զահուկյան, 1987, 20):

Քանի որ լեզվի պատմությունը տարածամասնակյա գիտակարգ է, այն ստեղծվում է մի շարք միջգիտական և ներգիտական աղերսների հիման վրա: Կատարվում էին և՛ հայոց լեզվի պատմության տեսական հարցերին վերաբերող հետազոտություններ, և՛ պատմական քերականության հարցերին էին քննվում: Պատմական քերականության հարցերին անդրադարձել են Գ. Ջահուկյանը, է. Աղայանը, Հ. Բարսեղյանը, Վ. Առաքելյանը, Հ. Մուրադյանը և այլք: Այսպիսով՝ ամփոփելով այս երկու շրջանները հայոց լեզվի պատմությունն իբրև գիտակարգ, ձևավորվել և զարգացել է խորհրդային շրջանի հիանալի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից:

Ցարդ այդ դպրոցի վաստակը մեծ է, սակայն այժմ կան նոր մոտեցումներ, տեսակետների վերանայում՝ աստիճանաբար ձևավորելով գիտնականների նոր սերունդ: Անկախության շրջանում հայոց լեզվի պատմությունը իբրև գիտակարգ, եղել է ուշագրության կենտրոնում: Հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունները հատկապես 21-րդ դարում բավական արգասաբեր են: Կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ Վ. Համբարձումյանի, Թ. Շահվերդյանի, Գ. Խաչատրյանի, Լ. Խաչատրյանի, է. Մկրտչյանի և շատ ուրիշների կողմից: Գրվել են բազում ուսումնամեթոդական ձեռնարկներ, ինչպես նաև հայոց լեզվի պատմության դասագրքեր, միջին հայերենի քրեստոմատիա-ուղեցույց, հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկ և այլն: Մեր պրպտումների արդյունքում անդրադառնանք մի քանի հիմնահարցերի:

1. Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեթոդներից մեկը՝ վերականգնումը պահանջում է նոր մոտեցումներ, որտեղ մեծ տեղ պետք է հատկացնել **տիպաբանական-համեմատական** խնդիրներին (Համբարձումյան, 2020, էջ 7): Այսպես՝ Հ. Աճառյանը եղել է Ա. Մեյերի և Հ. Հյուբշմանի աշակերտը, շարունակել և զարգացրել է իր ուսուցիչների ավանդույթները: Գ. Ղափանցյանը հաճախ շեղվել է այդ ավանդույթներից, ուսումնասիրել է նաև հայերենի ոչ հնդեվրոպական տարրերը: Հետաքրքիր են նաև Ն. Մառի լեզվագիտական հայացքները, բայց քանի որ վերջինս բացասական վերաբերմունք ուներ հնդեվրոպաբանությանը, այդ հայացքները մի տեսակ խորությամբ չուսումնասիրվեցին, այլ քննադատվեցին առհասարակ: Լեզվաբանների երկրորդ սերունդը՝ է. Աղայան, Գ. Ջահուկյան, Ա. Ղարիբջան և ուրիշներ, փորձեցին հայերենում առանձնացնել կողմնակի հնդեվրոպական մի շերտ, ապացուցել Հայաստանի լեզվի հնդեվրոպական-հինանատոլիական բնույթը, որոշել հայոց լեզվի առանձնացման ժամանակը: Վ. Համբարձումյանը ճշմարտացիորեն նշում է, որ դասական հնդեվրոպաբանությունը, առաջնորդվելով Հ.

Հյուբըմանի և Ա. Մեյեի տեսական հիմնադրույթներով, համոզված է եղել, որ հայերենը այնքան էլ նպատակային չէ հնդեվրոպական վերականգնման համար, քանի որ երկար ժամանակ եղել է կովկասյան լեզուների հարևանության մեջ, հեռացել է հնդեվրոպական լեզվական տիպից: Նա առաջարկում է հաշվի առնել հայ բարբառների նյութը: Ձէ՞ որ հայերեն համեմատությունները կատարվել են գրավոր շրջանի հիման վրա, այն էլ, ցավոք, մեզ հասել են ոչ թե 5-րդ դարից, այլ 9-րդ դարից սկսած:(Համբարձումյան, 2020, 8) Նախագրային շրջանը մի տեսակ մնացել է առկախ: Մինչդեռ այս տեսանկյունից կատարված ուսումնասիրությունները, այսինքն՝ հայերենի տվյալները քննության են ենթարկվում ընդարձակ ընդգրկումով, հայերենը հնդեվրոպական նախատիպի վերականգնման առումով ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այդպիսի ուսումնասիրություններ կան արդեն, դրանցից է Վ. Համբարձումյանի «Հայերենը և կելտական լեզուները (Համեմատական-տիպաբանական տարբերակայնություն)»(2020թ.), ինչպես նաև հոգվածներ, որոնք նույնպես մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

2. Մեծ ուշադրություն պետք է դարձնել **տեքստային առանձնահատկություններին**: Մենք արդեն նշել ենք, որ դասական հնդեվրոպաբանությունը հայերենը ուսումնասիրել է գրավոր շրջանի տեքստերի հիման վրա, այն էլ ընդհանուր գծերով, քանի որ այստեղ նույնպես անհրաժեշտ էր տարբերակումներ կատարել: Հին հայերենը, որն ընդգրկում է 5-11-րդ դարերը, ենթաշրջանները՝ դասական, հետդասական, նախամիջին, կարիք ունեն հստակեցվելու: Մենք չենք խոսում ժամանակաշրջանների ընդգրկման մասին, այլ տեքստերի առանձնահատկությունների, մասնավորապես կառուցվածքային, ժանրային, հեղինակային, որոնցով էլ պայմանավորված են լեզվական, բառապաշարային առանձնահատկությունները: Հին հայերենի համար մենք առանձնացնում ենք հունաբան հայերենը, դասական հայերենը, թարգմանական հայերենը: Դեռևս Գ. Ջահուկյանն է նշում, որ համեմատությունների, վերականգնման ժամանակ բառաշարքերի թվարկումը քիչ բան կարող է տալ: Այդ ուսումնասիրությունները պետք է ծառայեն մշակութային, կենցաղային, տնտեսական, զբաղմունքային և այլն նրբությունները վերականգնելու համար, որոնք էլ հնարավորություն կտան պարզելու տվյալ լեզվակիրների ազգային առանձնահատկությունները, վերականգնելու բազմաթիվ նրբություններ՝ ազգային սովորությունների, խոհանոցի, ընտանիքի, մասնագիտությունների և այլնի մասին: Տեքստային ուսումնասիրությունները կատարելիս պետք է ուշադրություն դարձնել

Ճանաչողական լեզվաբանության հիմքում ընկած լեզվի ճանաչողական գործառույթը (Խաչատրյան, 2017, 290): Ճանաչողական լեզվաբանության հիմքում ընկած է բառ-հասկացույթի բացահայտումը, օրինակ՝ սիրո հասկացույթը Ավետարաններում, Գ. Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմում, Ե. Չարենցի բանաստեղծություններում: **Տեքստային ոճաբանությունը** մեր ուսումնասիրություններում անտեսված է: Մյուս կողմից էլ պետք է ուշադրություն դարձնել նաև տեքստերի **տիպաբանական** առանձնահատկություններին:

3. Հիմք ընդունելով եղած ուսումնասիրությունները՝ ամբողջական ուսումնասիրել Աստվածաշնչի բառապաշարը և դրա հիման վրա կատարել բառապաշարային ուսումնասիրություն: Մենք խոսեցինք թարգմանական գրականության մասին: Աստվածաշնչի բառապաշարային իրողությունները ամբողջական ուսումնասիրված է Վ. Առաքելյանի կողմից: Նա ճիշտ է նկատում, որ «Աստվածաշունչը իր պատմական և արդիական արժեքը ամրապնդում է առաջին հերթին շքեղ բառապաշարի այն շերտերով, որոնք մեր նոր գրական լեզվի երկու ճյուղերի հիմունքն են կազմում՝ նոր իմաստավորմամբ ու ոճավորմամբ, որ արդեն հին ու դասական է, իսկ այդ հին ոճավորումը քիչ դեր ու նշանակություն չունի մեր այսօրվա գրական ու բանավոր խոսքի մեջ» (Առաքելյան, 1984, 19): Նախ՝ մենք պետք է ունենանք գիտական համահավաք քննական բնագիր «Աստվածաշունչ» մատյանի, ապա պետք է հանգամանալից ուսումնասիրություններ կատարել լեզվական տարբեր մակարդակների, քանի որ մեր առաջին բնագիրը, որը կանոնակարգված գրական-գիտական լեզվով է կատարված, Աստվածաշնչի որոշակի գրքերից է, ապա այդ նյութը համարել հենք, որով էլ կատարել լեզվական իրողությունների ուսումնասիրություններ: Նույնիսկ թարգմանական գրականությունն ունի բովանդակային, ոճական, բառապաշարային առանձնահատկություններ: Հետաքրքիր է այն իրողությունը, որ, առհասարակ, տեքստերը, մասնավորապես աղոթական, մասնագիտական, հոգևոր բնույթի ստեղծագործությունները բավական կարևոր են և ներազդում են մարդու մտածողության վրա: Հայերենն ունի բավական հոգևոր գրականություն, որը մինչ օրս էլ, եթե ուսումնասիրվում է, ապա կառուցվածքային-ձևային վերլուծություններ են: Մինչդեռ պետք է վերհանել, եթե հնարավոր է, տեքստի իմաստային առանձնահատկությունները: Դեռևս Ումբերտո Էկոն է անդրադարձել տեքստերի հեղինակային «կողերին», որը բացահայտում է ընթերցողը (Умберто Эко, 2005, 11): Այս դեպքում այդ թաքուցյալ «կողերը» գիտական նշանակություն ունեն: Բերենք մեկ

օրինակ Մաշտոցի շարականներից. **Որ հայիս քաղցրութեամբ յարարածս Քո, ՀԱՅՐ Ամենակալ, Օրհնեալ ես, Աստուած հարցըն մերոց: Որ իջեր ի փրկել զարարածըս Քո, ՈՐԳԻԴ Միածին, Օրհնեալ ես, Աստուած հարցըն մերոց: Որ խնամես տեսչութեամբ զարարածըս Քո, ՀՈԳԻԴ ճշմարիտ, Օրհնեալ ես, Աստուած հարցըն մերոց:** (Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Օրհներգեր, Գրաբար և աշխարհաբար, աշխ-մբ Հ. Բախ-չինյանի, Երևան, 2010) Այս օրհներգում պահպանված է Հոր-Որդու-Հոգու միջոցով Մեկ բնություն ունեցող անձերից Յուրաքանչյուրի գործունեության ոլորտը, ինչպես նաև բացահայտում է եռամիասնության առանձնահատկությունները՝ Անծին-Ծնված-Բխած (Քյոսեյան, 2021, 213-215): Ընդամենը 33 բառից կազմված օրհներգում սուրբ Մեսրոպը բացահայտում է Աստված-իրողություն և Մարդ-կարողություն հակադրությունը, որը մեծ ազդեցություն է ունենում քրիստոնյայի ներքին մարդու և մտածողության ձևավորմանը: Ակնհայտ է, որ հոգևոր երգերում հեղինակը գործածել է կրոնափիլիսոփայական տերմինաբանական բառեր, որոնք մի կողմից հարստացնում և հայացնում են հայ տերմինաբանությունը, մյուս կողմից՝ ստեղծում են ազգային լեզվամտածողություն: Նշենք այդպիսի հասկացություններ. Երեքսրբեան Տէրութիւն(34), սերովբէ (34), հրեշտակապետ(32), երկնային զինուորութիւնք(32), քերովբէս(32), Երրորդութիւն անբաժանելի(32), քերովբէական աթոռ(30), հրեշտակաց(30), վեցթեան սերովբէքն (22): Այս բառերը աստվածաբանական տերմիններ են, որոնք ստուգված են համապատասխանաբար՝ ըստ Բառարան Սուրբ Գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:

4. Դեռևս է. Աղայանն է այս հիմնահարցին անդրադարձել, այն է՝ **պատմական շարահյուսության** (Աղայան, 2003, 131) հիմնարար ուսումնասիրության, եթե այն հնարավոր է: Թ. Շահվերդյանը անդրադարձել է և՛ պատմական ձևաբանության, և՛ պատմական շարահյուսության ռճագիտական հարցերին, սակայն մենք բուն շարահյուսության խնդիրների ուսումնասիրությունն եք կարևորում, մասնավորապես գրավոր շրջանի բոլոր ենթաշրջանների համար: Նախագրային շրջանից, ցավոք, շատ քիչ տեքստեր ունենք ժառանգված, բայց նույնիսկ դրանք առ այսօր ուշադրության կենտրոնում են: Բավական հանգամանակից պետք է ուսումնասիրել միջին հայերենը, համեմատել արևելահայերեն և արևմտահայերեն տեքստերին: Մի օրինակ՝ շարադասությունը. որոշիչ-որոշյալ կապակցության շարադասությանը գրաբարում անդրադարձել և կատարել է ամբողջական ուսումնասիրություն Հ. Ավետիսյանը, այս խնդրին անդրադարձել են մի շարք լեզվաբաններ: Թարգմանական գրականու-

յան մեջ բացառապես գործածված են որոշիչ հետադաս կիրառությունները, մինչդեռ վիպասանական հայերենում արդեն ունենք նախադասի կիրառություններ՝ հուր հեր, գկարմրիկն եղեգնիկ և այլն: Եթե անդրադարձանք շարադասությանը, ապա կարելի է խոսել նաև ենթակայի և ստորոգյալի շարադասությունից, ինչպես նաև գոյականական այնպիսի բառակապակցություններից, ինչպիսիք են հատկացուցիչ, որոշիչ-որոշյալ կապակցություններից և այլն: Մեր խնդիրն է վերհանել այն հիմնական հարցերը, որոնք, ըստ մեզ, կարիք ունեն ուսումնասիրության և կբացահայտեն հայերեն մտածողության առանձնահատկությունները: Այդ իրողություններից պետք է նշել նաև եղանակավորությունը, որը կարելի է նույնիսկ խոսքային մակարդակի իրողություն համարել: Գրավոր շրջանի համար նրա տարբեր միավորներ, ինչպիսիք են բայի եղանակաժամանակաձևերի իմաստային կիրառությունները, եղանակավորող բառերը, կոչականը և այլն, ունեն հետաքրքիր առանձնահատկություններ:

5. Միջին հայերենը կարիք ունի հանգամանալից ուսումնասիրության: Միջին հայերենի ուսումնասիրությունները բավական քիչ են, քննարկվում է միջին գրական հայերենի հարցը, որը բավական վիճելի է: Լեզվաբանները տարակարծիք են, և դա բնական է: Միջին հայերենով ավանդված տեքստերը բազմաբովանդակ են և՛ իմաստային, և՛ լեզվական առումներով: Նույնիսկ մի հեղինակը կարող է ունենալ տարբեր գրսևորումներ, ինչպես Ն. Շնորհալին, Մ. Գոշը, Հ. Երզնկացին և այլք: Մեր որոշ ուսումնասիրությունների արդյունքում մենք հանգել ենք մի հետաքրքիր եզրակացության. այն է՝ եթե միջին շրջանում հեղինակը ստեղծագործել է գրաբար՝ կապված նյութի բովանդակությամբ, ապա այդ գրաբարը աչքի է ընկնում կառուցվածքային պարզությամբ: Նրան բնորոշ չեն հինհայերենյան շարադասական հետաքրքիր առանձնահատկությունները: Իհարկե, այս հետազոտությունները ընթացքի մեջ են, և մենք չենք կարող վերջնական եզրահանգումներ հրապարակել: Բաց այն, որ միջինհայերենյան բազմաբովանդակ տեքստերը կարիք ունեն ուսումնասիրությունների, դա փաստ է: Բացի այդ, պետք է հանգամանալից ուսումնասիրվեն արևելահայերենի կազմավորման նախադրյալները, այսինքն՝ վաղ աշխարհաբարի ուսումնասիրությունները կատարվեն երկու հիմնական ուղղվածությամբ՝ արևելահայերենի և արևմտահայերենի:

Իհարկե, խնդիրները բավական բազմաբովանդակ են, մենք ուզում ենք անդրադառնալ ևս մեկ խնդրի: Հայոց լեզվի պատմության դասավանդման մեկ առանձնահատկության: Արդեն նկատելի է այն իրողությ-

յունը, որ 21-րդ դարում փոխվել է մարդու մտածողությունը, ընկալունակությունը: Մենք չենք քննարկում լավ թե վատ: Կարծում ենք, դա, առհասարակ, ավելորդ է, բայց պետք է փաստը արձանագրել և ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր կազմելիս այդ փաստը հաշվի առնել:

Հայոց լեզվի պատմությունը այնպիսի գիտություն է, որը սերտ առնչություններ ունի գրականության, պատմության, աշխարհագրության, հնագիտության, ազգագրության և այլն գիտությունների հետ, ինչպես նաև ներառարկայական կապերը՝ գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայերեն, արևմտահայերեն: Մենք կարծում ենք, կարելի է մեծ ուղադրություն դարձնել ուսուցման գործընթացում նախագծային ուսուցմանը: Ուսանողները, հետազոտողները մեծ հետաքրքրությամբ կարող են իրականացնել նախագծեր, որոնք վերաբերում են բառապաշարային, հնչյունական, բառակազմական, բովանդակային պլանում՝ կենցաղ, մշակույթ, ուտելիք, խմիչքներ, հոգեբանության բնագավառում մեծ նյութ կարող են տրամադրել ճառերը և այլն:

Նախագծերի իրագործումները նպաստում են ինքնուրույն հետազոտություններ կատարելու հմտությունների ձևավորմանը, ապա նաև՝ զարգացմանը: Լեզվական տարրերի պատմական քննությունների միջոցով ամբողջացնել այս կամ այն իրողությունը և՛ հետաքրքիր է, և՛ նորարարական:

Մեծ տեղ պետք է հատկացնել ինքնուրույն աշխատանքներին, փոքր ծավալի հետազոտություններին, որոնք պետք է ներկայացվեն քննարկումներով:

Ժամանակակից հայերենը, պայմանավորված մի շարք գործոններով, բավական բազմաշերտ է: Քանի որ մեր սփյուռքն էլ այժմ բազմաշերտ է՝ տրոհված արևմտահայերենի, ռուսահայերենի, պարսկահայերենի, արևելահայերենի տարբեր շրջանների, խիստ կարիք կա ուսումնասիրությունների, ինչու չէ, նաև որոշ կանոնակարգումների: Մի տեսակ գրապաշար է սկսվել: Գրական հայերենը կարիք ունի բավական տեղաշարժերի:

Եզրակացություն

Իհարկե, հայոց լեզվի պատմության զարգացման հիմնախնդիրները բավական ծավալուն են, մեկ հոգվածի շրջանակներում հնարավոր չէ ի մի բերել բոլորը: Մենք ներկայացրինք մեր տեսակետները որոշ հարցերի շուրջ, որոնցից յուրաքանչյուրն էլ այնքան ծավալուն են, որ պահանջում են բավական լուրջ, համապարփակ, նորովի ուսումնասիրություններ: 1.

Հայոց լեզվի պատմության ամենահրատապ մարտահրավերներից մեկը միջին հայերենի նորացված ուսումնասիրությունն է: 2. Մեծ ուշադրություն պետք է դարձնել տիպաբանական-համեմատական ուսումնասիրություններին: 3. Տեքստային ուսումնասիրությունները կատարելիս ցանկալի է առաջնորդվել ճանաչողական լեզվաբանության սկզբունքներով: Բոլոր ուսումնասիրությունները պետք է ամբողջացնեն գիտական, ազգային արժեքանական համակարգը, որը ձևավորում է հայոց լեզվի պատմությունը՝ իբրև գիտակարգ:

YUZBASHYAN ASHKHEN

THE TRENDS IN THE DEVELOPMENT OF THE DISCIPLINE OF ARMENIAN LANGUAGE HISTORY DURING THE INDEPENDENCE PERIOD.

Summary

In our research, we have identified three key areas critical to the development of the history of the Armenian language, which we deem essential for further study. In the contemporary era, particular emphasis should be placed on the analysis of textual materials through the lens of cognitive linguistics. This approach not only facilitates the restoration of vocabulary but also provides insights into the cultural, national, scientific, and economic value systems inherent in the texts of a given people.

Therefore, the study of the Armenian language, as an academic discipline, is instrumental in shaping a national value system.

We advocate for an increased focus on typological-comparative issues, which will yield a more accurate understanding and introduce novel perspectives to the well-established data of classical Indo-European studies. Furthermore, we prioritize the exploration of historical syntax, as there is a critical need for completion in this area. Historical syntax reveals the linguistic thinking characteristic of the language, especially in written Armenian, where syntactic phenomena such as agreement, word order, and modality have manifested in diverse forms. These variations are conditioned by the linguistic thought of the respective periods and are crucial for the assessment of textual materials.

Linguists and scholars from various disciplines are increasingly turning their attention to medieval studies. One of the most pressing challenges in the history of the Armenian language is the renewed study of Middle Armenian. The accepted periodization, though generally acknowledged, remains broad. Middle Armenian spans the 12th to 16th centuries, encompassing all its facets, including dialects, classical Armenian, and early vernacular elements.

In addition, we propose certain revisions to the pedagogical approach to teaching the history of the Armenian language. This includes the implementation of diverse projects and a greater emphasis on search-analytical tasks within practical classes.

Keywords - Indo-European studies, historical syntax, textology, cognitive linguistics, textual stylistics, project-based learning, Middle Armenian, periodization.

Գրականություն

1. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
2. Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003:
3. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, Հայպետհրատ, 1951:
4. Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1984:
5. Խաչատրյան Լ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, Զանգակ, 2017:
6. Համբարձումյան Վ., Հայերենը և կելտական լեզուները (Համեմատական-տիպաբանական տարբերակայնություն), Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, 2020:
7. Ղափանցյանը Գ., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961:
8. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Օրհներգեր, Երևան, Սարգիս Խաչենց – Փրինթինգո, 2010:
9. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987:
10. Հ. Քյոսեյան, Հայ միջնադարյան աստվածաբանություն, Երևան, Մատենադարան, 2021:
11. Умберто Эко, Роль читателя, Москва, РГГУ, 2005.

ԳՐԱԲԱՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐ

ՊՕՂՈՍԵԱՆ ՆՈՐԱՅՐ

*Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ,
ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդարանի աշխատակից*

Գրաբարի ուսումնասիրության ոլորտում հսկայական ժառանգություն ունի հայագիտությունը: Թույլ է՝ չկայ որեւէ մանրահամակարգ, որով ֆննուած չլինի գրաբարը՝ հնչյունաբանական, բառային, իմաստային, ձեւաբանական, շարահիստական եւ այլ առումներով: Գրաբարի ֆննութեամբ զբաղուել են միջնադարից մինչեւ մեր ժամանակների մեծանուն հայերէնագէտները: Սակայն միւս կողմից նոր ժամանակները նոր մօտեցումներ են առաջադրում, եւ գրաբարի ֆննութեան ու դասաւանդման հարցերը պահանջում են նոր մեկնակէտեր, արդի գիտական եւ կրթական համակարգերի ներգրաւում: Գրաբարագիտութեան նոր խնդիրներին է նուիրուած ներկայ հրապարակումը, որ հենուած է դասաւանդման եւ ֆննութեան մեր փորձառութեան վրայ:

Բանալի բառեր - գրաբարի ուսումնասիրութիւն, նոր աշխատութիւններ, արտերկրի գրաբարագիտութիւն, դասաւանդում, թուային միջավայր, նոր մօտեցումներ:

19-րդ դարի գրաբարագիր երկերի քննութիւն

Առիթներ ունեցել ենք խօսելու 19-րդ դարի գրաբարագիր հայ հեղինակների ստեղծագործութիւնների լեզուն քննելու կարեւորութեան եւ անհրաժեշտութեան մասին: Հայ բանասիրութիւնը գրական ստեղծա-

գործութիւնները մեթոդական առումով գերազանցապէս գիտարկել է նոր թեմաների, նոր լեզուի արծարծման տեսանկիւնից՝ հիմնականում հակադրելով գրաբարով ու աշխարհաբարով գրուած երկերը կամ դասական հայերէնը պաշտպանող ու նոր լեզուով ստեղծագործող հեղինակներին: Չնայած որ գրաբար երկերը մեր գրաւոր մշակոյթի հաւասարապէս կարեւոր ու անտրոհելի բաղադրիչն են եւ նոյնքան կարիք ունեն քննութիւնների մէջ ներառելու, նրանց ոճական եւ բառապաշարային հնարաւորութիւնները շրջանառութեան մէջ դնելու համար: Այդպիսիք են, օրինակ, Յարութիւն Ալամդարեանի երկերը՝ «Սուգ», «Պարերգութիւն», «Դաւ երեւակայութեան», «Ամենեփնս ես գեղեցիկ», «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» «Թշուառութիւն սոխակի», «Վարդակոյտ» և այլ ոտանաւորներ: Յ. Ալամդարեանի «Հռադամիզդ եւ Զենոբիա» ողբերգութեան հիման վրայ գերմանացի երգահան Հենդելը ստեղծել է օպերա երեք գործողութեամբ: Հետեւեալ նմուշը բաւարար կլինի Ալամդարեանի՝ գրաբարի խորը իմացութիւնը տեսնելու համար, ու նաեւ փաստելու համար, թէ գրաբարի ոճական հնարանքների ինչ շտեմարան կարող են լինել այդ երկերը.

Յար վառ է կայծ սիրոյ սիրոյդ

Ի վիրալից սրտի գերւոյդ,

Ո՛հ, ի յանձին գերւոյդ:

Յորմէ յաւէտ խիստ տոշորի,

Հալի մաշի հոգի ալրւոյդ,

Ափսո՛ս կենաց գերւոյդ:

Արսէն Բագրատունին հայ մշակոյթ բերեց 20 դուիս և 22.210 տող պարունակող «Հայկ դիւցազն» պոեմ-դիւցազներգութիւնը: Մեծ ազդեցութիւն չունեցաւ պոեմն իր ժամանակի հայ գրականութեան վրայ, սակայն դրանով հանդերձ մեր մշակոյթը հարստացրեց նշանակալի մի երկով: Ա. Բագրատունին ունի նաև կրօնապատմական բովանդակութեամբ թատերգութիւններ՝ «Ի ծնունդ Տեառն», «Ի յայտնութիւն Տեառն», «Երուանդ»:

Գրաբարով գրուած երկեր ունի ևս. Աբովեանը, որ նաեւ մշտապէս բարձր է գնահատել գրաբարը: «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանից բերուող հատուածը մէկ վկայութիւն է ասուածի. «Մեր գրաբառ լեզուն անգին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մեկն էլ ա՛ն էն համը, էն քաղցրութիւնը, էն ճոխութիւնը չունի. բայց մեր վատ բախտիցը՝ հազարիցը մեկը չի հասկանում, ի՞նչ պետք է արած: Երանի էն

սհաթին, որ մեր ազգը քիչ քիչ կարողանա էս կորած գանձը գտնիլ, ու իր լեզուն սովորիլ, իմանալ»:

Խաչատուր Աբովեանի գրաբարով գրած գործերից գողտրիկ մի քառատող ենք ներկայացնում «Նրեակայություն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» (1829 թ.) բանաստեղծությունից:

Լե՛ր ինձ առաջնորդ՝ որ եսդ ես միշտ տէր անհուն եւ անճառ,

Լե՛ր ինձ ուղեկից մոլար տարագրիս առ դարձս իմ ի վայր,

Ա՛ռ, տա՛ր զիս աստի, ուր մերձ են սահիլ ջախջախուն իմ ոտք,

Ա՛ռ, տա՛ր զիս աստի, զի մի՛ հասցէ ինձ գիշեր կամ խաւար:

Գրաբարագիր հարուստ ժառանգությունից թուարկումով յիշենք մի շարք այլ երկեր.

Ղուկաս Ինճիճեան - «Ամարանոց Բիւզանդեան» չափածոյ, գիտական գանազան երկեր,

Գաբրիէլ Աւետիքեան - գիտական գործերի շարքում՝ «Նարեկլուծ»,

Մանուկ Զախչախեան - Վահրամ Ռուբինեան ստորագրութեամբ գրած բանաստեղծություններ,

Եղիա Թովմաճանը յունարենից չափածոյ գրաբար է թարգմանել Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը»,

Պետրոս Մինասեան - «Խոսարով Մեծ», «Սմբատ Առաջին», «Արշակ Բ» և այլ ողբերգություններ,

Յովհաննէս Վանանդեցի - «Արփիական Հայաստանի» վերնագրով 10 հազար տողանոց դիւցազնեղբայրութիւն, նաեւ՝ «Ոսկի դար Հայաստանի», «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի», «Առ Հայաստան» (առաւելապէս իր առաջին տողով՝ «Հայաստան, երկիր դրախտավայր» յայտնի երգն է) եւ շատ ուրիշներ:

Էդուարդ Հիւրմուգեան - «Առձեռն բանաստեղծություն» (1839) գրուածքը, ուր համակարգել է հայկական կլասիցիզմի գեղագիտական սկզբունքները, քննել գեղարուեստական լեզուի ու ոճի հարցերը:

Բոլոր այս ստեղծագործությունները, նաեւ գրաբարով գրուած պարբերականների լեզուն քննելու եւ նրանցում բառային, իմաստային, ոճական նոր փաստերը դուրս բերելու կարիք ունեն, որպէս գրաբարի եւ առհասարակ հայերէնի լեզուական անտրոհելի հարստութիւն:

Այս կապակցութեամբ առիթ ունեցել ենք խօսելու «հայկաբանություն» եզրի մասին՝ փորձելով ձեւակերպել նրա սահմանները: Որպէս գիտական եւ կրթական ոլորտներ մտած տերմին՝ հայկաբանություն իր

մէջ ամփոփում է մի քանի շերտեր: Նախ, այս եզրույթով դասագրքերում հիմնականում բնութագրում է գրաբարագիր մտայնությունը եւ գրականությունը: Այն լեզուի եւ դրա ուսուցման մասին պատկերացումների ամբողջությունն է, որ ներառում է դասական հայերէնի առանձնայատկությունները գիտականօրէն վերհանելու եւ մշակելու, դրանց հիման վրայ նոր բնագրեր ստեղծելու, հայերէնը եւ յատկապէս գրաբարը կանոնակարգելու, հայերէնի ներքին յատկանիշների հիման վրայ քերականություն մշակելու (ի հակադրություն լատինատիպ քերականութեան), հայկաբան (օտար ու խօսակցական շերտերից զերծ) հայերէն դասականի հարցադրումների ամբողջությունը:

Հայկաբանությունն այս մեկնակէտով փաստօրէն, լեզուագիտական եւ ուսումնական հոսանք է՝ լեզուի (յատկապէս՝ գրաբարի) գործածման ու զարգացման պատկերացումների ամբողջություն, որը մեծ չափով մատնանշեց, պայմանաւորեց հայերէնի մաքրման, մշակման, կանոնակարգման, զարգացման հունը եւ ուրեմն երբէք չի կարող ոչ-դրական երանգով ներկայացուած լինել, ինչպէս որ երբեմն տեսնում ենք յատկապէս խորհրդային շրջանի գիտական որոշ աշխատություններում⁵:

Ամփոփելով պէտք է ասել, որ գրաբարագիր կամ հայկաբան դպրոցը պիտի դուրս բերել ոչ-դրական ներկայացնելու՝ թերեւս հնացած մերժողական փորձերից եւ լայն շրջանառութեան մէջ դնել նրա բերած լեզուական նպաստը, այդ թւում՝ բուհերի դասընթացներում:

Գրաբարի դասաւանդման փորձի ամփոփում

Հայաստանի եւ արտերկրի հայկական զանազան հաստատություններում ուսուցանւում է «գրաբար» առարկան: Արտերկրի կրթական միաւորներում դրա տարողությունը չի կարող համեմատուել բուն Հայաստանի դասաւանդման հետ, սակայն դասաւանդման փորձը կարիք ունի դիտարկման եւ համադրման:

Հայաստանի բուհերից, էջմիածնի Գեւորգեան հոգեւոր ճեմարանից ու հանրակրթական դպրոցներից զատ, գրաբարի համակարգուած դասաւանդում ունեն Անթիլիասի Դպրեմանքը, Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը, Նիւ Եորքի Ս. Ներսէս վարժարանը: Նշուած երեք հաստատությունները հոգեւոր դպրոցներ են: Այլ դպրոցներ-

⁵ Այս մասին տե՛ս **Նորայր Պօղոսեան**, Հայկաբանութեան դրսևորումները հայ գիտական և ուսումնական ոլորտներում (ԺԷ.-ԺԹ. դարեր, Հայկագեան հայագիտական հանդէս, Բեյրութ, 2016, հատոր IԶ, էջ 95-110):

րում գրաբարի դասաւանդումն ունի մասնակի կամ դիպուածային բնոյթ:

Նշեալ երեք հաստատութիւններում գրաբարի դասաւանդման մասին տուեալների համառօտ ամփոփումը հետեւեալ պատկերն է ներկայացնում:

ա) Անթիլիասի Դպրեվանքում գրաբար անցնում են ժառանգաւորաց բաժնի 1-ից 4-րդ, Ընծայարանի 1-ից 4-րդ դասարաններում, ընդ որում՝ ժառանգաւորացի սաներն ունեն շաբաթական 1.5 ժամ, Ընծայարանինը՝ 45 րոպէ տեւողութեամբ դասեր: Հիմնական դասագրքերն են Զարեհեայս. Ազնաւորեանի «Դիւրին գրաբարի» Ա, Բ, Գ հատորները, Ա. Աբրահամեանի «Գրաբարի ձեռնարկը»:

բ) Նրուսաղէմի ժառանգաւորաց վարժարանում եւ ընծայարանում գրաբարի դասաւանդումը եւ ժամաքանակը մեզ ծանօթ ժամանակահատուածում փոփոխական է եղել՝ կախուած դասաւանդողի նախընտրած մեթոդից: Սակայն վարժարանում հաստատուն կերպով գրաբարը դասաւանդում է 4 տարուայ դասընթացով, որ, ամէնօրեայ ծիսակատարութեանը սաների մասնակցութեանը զուգահեռ, լիովին բաւարար է գրաբարի հմտութիւններին տիրապետելու համար:

գ) Նիւ Նորքի Ս.Ներսէս վարժարանն առաւել անհատական ուսուցման սկզբունք է որդեգրել՝ հաշուի առնելով սաների՝ հայերէնի պատրաստուածութեան աստիճանը: Այստեղ ուշադրութեան կենտրոնում գործնական դասերը եւ բնագրերի թարգմանութիւններն են:

Արտերկրի հայկական աւագ դպրոցներում, ինչպէս նշուեց, գրաբարի դասաւանդումն ունի դիպուածային բնոյթ: Ոչ հայկական բուհերում (UCLA, Ֆրեզնոյի, Օքսֆորդի համալսարաններ եւ այլն) գրաբարի դասաւանդումը կատարւում է հիմնականում կրեդիտային համակարգի բերումով, կամ այնքանով, որքանով որ յանձնարարուած է տուեալ թեմայի ուսումնասիրութիւնը յաղթահարելու համար, այս փորձը յաւելեալ քննութեան կարիք ունի:

Քննարկելի է գրաբարի դասաւանդումը արդի կրթական միջավայրին համապատասխանեցնելու հարցը: Սա վերաբերում է նոր մեթոդների կիրառմանը, նոր դասագրքերի պատրաստմանը, այդ թւում՝ միջին եւ աւագ դպրոցների աշակերտների գիտելիքներին համապատասխան: Դասաւանդումը ներառում է նաեւ խառը լեզվական իմացութեամբ խմբերում տարամէտ ուսուցման հարցերը, յատկապէս ոչ հայախօս միջա-

վայրում: Օրինակ, միեւնոյն խմբում դասընթացին մասնակցում են ա) հայերէնը իբրեւ մայրենի ունեցող, բ) հայերէնին ընդհանուր առմամբ՝ հիմնականում խօսակցական աստիճանի տիրապետող եւ գ) հայերէնին գրեթէ չտիրապետող ուսանողներ, որոնք հաւասարապէս պիտի ներգրաւուած լինեն դասի ընթացքի մէջ: Այս բարդութիւնը յաղթահարելու լաւագոյն մեթոդական լուծումը կարող է լինել «մշակութային համատեքստը»՝ գրաբարի դասաւանդումը մշակոյթի տարրերով մատուցելը, որ օգտակար ու հետաքրքիր կարող է լինել բոլոր ունկնդիրների համար, նաեւ գործնական արդիւնք ստանալու նպատակադրումով:

Դասաւանդման հրամայականներից է Հայաստանի հանրակրթական դպրոցներում գրաբարի ուսուցման շրջանակի լայնացումը: 2010 թ. ՀՀ Կրթութեան նախարարութեան որոշումով «գրաբար» առարկան ներառուել է Հայաստանի հանրակրթական դպրոցների յանձնարարելի առարկաների ցանկում: «Գրաբարը» պարտադիր առարկաների ցանկում ընդգրկելը վաղաժամ համարելով, որի մասին առաջարկներ երբեմն լսելի են լինում մամուլում, հնարաւոր է քայլեր անել թէ՛ դպրոցական ծրագրում եւ թէ՛ հայոց լեզուի դասագրքերում գրաբարի մատուցման քանակը աւելացնելու ուղղութեամբ, որպէսզի աւագ դպրոցի շրջանաւարտը կարողանայ կարգաւ, հասկանալ եւ թարգմանել գրաբար պարզ տեքստեր, օրինակ՝ Աւետարանների կամ ս. պատարագի տեքստերը: Ընդ որում դա կարելի է անել՝ առանց ներկայիս ժամաքանակը փոփոխելու:

Արդի կրթական համակարգերում թերեւս չկայ մի լեզու, որի դասաւանդումն ու ստուգման համակարգը համօրինակութեան (ստանդարտացման) բերուած չլինի: Համընդհանուր ճանաչում ունեն, օրինակ՝ անգլերէնը որպէս երկրորդ լեզու դասաւանդելիս A1, A2, B1... եւ այլ աստիճանները, որոնք տասնամեակներով մշակուած համակարգեր են, եւ որեւէ աստիճանի տիրապետողը կամ հաւաստագիր ունեցողը վստահաբար տիրապետում է տուեալ աստիճանի անհրաժեշտ գիտելիքների քանակութեանը: Մեզ ծանօթ չէ գրաբարի նման գործող աստիճանաւորման եւ համօրինակութեան համակարգ, նախնական քայլեր կատարուած են Արեւմտեան թեմի առաջնորդարանին կից գործող գրաբարի դասընթացներին զուգահեռ: Այս դասերի մասնակիցներն ունեն հայերէնի լեզուական իմացութեան տարբեր աստիճաններ, եւ նման աստիճանաւորումը դառնում է անհրաժեշտ նախ՝ սաներին մատուցուող նիւթի բարդութեան աստիճանը որոշելու համար, ապա՝ հաշուի առնելով, որ կիսամեակների աւարտին տրոււմ են հաւաստագրեր, որոնցում պիտի ներառուած լինի տիրապետման աստիճանի մասին նշում:

Գրաբարը թուային աշխարհում

Հայերէնը թուային աշխարհում ունի պատշաճ ներկայացուածութիւն: Քիչ լեզուներով ստեղծագործութիւնների ու մամուլի այնպիսի հսկայական գրականութիւն, շտեմարաններ, բառարաններ կարելի է գտնել, ինչպիսին որ ունի հայերէնը: Դրան զուգահեռ, իր բաւարար ընդգրկումը պիտի ունենայ նաեւ առանձին վերցրած գրաբարը, քանզի եթէ որեւէ տեղ կայ գրաբարի գիտական ու կրթական պաշարի հետ առնչուել ցանկացող միատր, ապա պիտի լինի նաեւ բաւարար թուային բազա: Հայ հին եւ միջնադարեան գրականութեան մեծաքանակ բնագրեր կան զետեղուած զանազան կայքերում: Դրան էր միտուած նաեւ մեր նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ www.eGrabar.com կայքի ստեղծումը: Տեղեկատու նիւթերի եւ դասընթացների մասին որոշ տուեալների հետ մէկտեղ կայքի գլխաւոր նպատակն է՝ մատուցել նաեւ գրաբարի բազմաթիւ ձեռնարկներ թուային ձեւաչափով, որոնցից շատերը ստեղծուած են կայքի միջոցներով եւ թուային միջավայրում ներկայացուած են առաջին անգամ: Կայքը պարունակում է նաեւ Power-Point ծրագրով ներկայացումներ, «Գրաբար զրոյցներ» տեսանիւթերի շարքը, որոնք ստեղծուել են ԱՄՆ Արեւմտեան թեմի մամուլի բաժնի հետ համագործակցութեամբ:

Գրաբարի վերաբերեալ այլ մասնակի կայքեր եւս գործում են, ինչպէս՝ <https://krapar.org/>, որ ուղղուած է հայ գրաւոր մշակոյթի մասին որոշակի պատկերացում ունեցող անգլիախօս միջավայրին:

Թուային միջավայրում ստեղծուել են եւ գործում են արտերկրի զանազան գիտական եւ ուսումնական հաստատութիւններին կից գրաբար առցանց դասընթացներ: Դրանցից մէկն է The University of Texas at Austin լեզուաբանական ուսումնասիրութիւնների կենտրոնի դասական հայերէնի առցանց դասընթացը (Classical Armenian Online) Թող Քրաուսի եւ Զոնաթան Սլոուքըմի հեղինակութեամբ: Այն Տեքսասի համալսարանի լեզուաբանական կենտրոնի ցանցում ընդգրկուած 20 հին լեզուների դասընթացներից մէկն է սանսկրիտի, գոթերէնի, դասական յունարէնի, հին սկանդինաւերէնի եւ այլ լեզուների շարքում: Նման առցանց դասընթացներ կան նաեւ Եւրոպայի եւ ԱՄՆ-ի այլ բուհերին կից:

Թուային աշխարհում գրաբարի ընդգրկուածութիւնը առնչում է թարգմանական փոխարկիչ ծրագիր ստեղծելու հարցին: Այս ուղղութեամբ յայտնի են որոշ նախնական փորձեր, որոնք դեռեւս հեռու են կատարեալ լինելուց: Որոշակի քայլեր է կատարում ծրագրաւորող

Վարդան Արզումանեանը, որի հեղինակութեամբ ստեղծուած թուային թարգմանական ծրագիրը ներկայումս փորձարկման շրջան է անցնում լայն հրապարակելուց առաջ:

Գրաբարի ուսումնասիրութիւնների համակարգում

Հայաստանի եւ արտերկրի զանազան հաստատութիւններում եւ անհատ անձանց կողմից յաճախակի ի յայտ են գալիս գրաբարից աշխարհաբար կամ այլ լեզուների թարգմանութիւններ: Դրանք նախ եւ առաջ պատմական, հոգեւոր գրուածքներ են: Ըստ ժամանակագրութեան՝ վերջինը կարելի է համարել Ներսէս Շնորհալու տաղերի անգլերէն թարգմանութիւնը, գրաբարից աշխարհաբար փոխադրողներ՝ Մեթյու Սարգսեան եւ Ջեսիկ Աւլեն, տպագրուել է Նիւ Եորք, 2024: Յատկապէս շատ են հանդիպում հոգեւոր-ծիսական բնագրերի գրաբարից աշխարհաբար կամ անգլերէն փոխադրութիւններ: Հայ եկեղեցու ծիսական մատեանների մեծ մասը, այդ թւում՝ Մաշտոց, Ճաշոց, Յայսմաւուրք, Պատարագամատոց եւ այլն, ցայժմ ծէսի ժամանակ գործածւում են միայն գրաբարով, եւ ունկնդրին հասկանալի աշխարհաբար թարգմանութիւն ունենալու համար ծնւում են անհատական կամ թեմական նախաձեռնութիւններ: Տպաւորութիւն է, սակայն, որ այս թարգմանութիւնները շրջանցում են գիտական երաշխաւորութիւնները: Բացի այդ, հրատարակուող աշխատանքների արդիւնքը ի մի չի հաւաքւում որեւէ կենտրոնում, առնուազն այն նպատակադրումով, որ նախաձեռնութիւնը չկրկնուի կամ եղած արդիւնքի վրայ նորը յաւելուի:

Բուհական, ակադեմիական հաստատութիւններում գործում են ամբիոններ ու բաժիններ, որոնց խնդիրներից մէկը՝ հայերէնի պատմութեան գրաբարեան փուլի համակողմանի ուսումնասիրութիւնն ու տուեալների կուտակումը, անշուշտ արւում է: Սակայն մեր ներկայացրած տարբերակը ենթադրում է տուեալների կուտակման շտեմարան, որը համակողմանիօրէն կտիրապետի գրաբարի վերաբերեալ նոր օրերի թարգմանական քայլերին, այդ թւում՝ արտերկրի գիտական արտադրանքին (այդ մասին քիչ անց կխօսենք):

Գրաբարի թարգմանական արդի քայլերի մէկտեղման հաւանական տարբերակն է՝ ունենալ խորհրդակցական որեւէ մարմին, միաւոր, որը կհաւաքի հին ու նոր ուսումնասիրութիւնների հիմնական ուղղուածութիւնները, թարգմանական աշխատանքների մասին տուեալները: Նման

միաւորի ստեղծման ամենից հաւանական ատեանը Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կարող է լինել:

Օտարազգի գրաբարագէտների ուսումնասիրութիւնների վերաբաղ

Գրաբարի ուսումնասիրութեան հարցերով մշտապէս զբաղուել են օտարազգի լեզուաբաններ թէ՛ 19-20-րդ դարերում, թէ՛ մեր օրերում: Այս առումով հայերէնագիտութիւնը, ի մասնաւորի գրաբարագիտութիւնը Հայաստանում, մեր տպաւորութեամբ, զանազան պատճառներով որոշակիօրէն անհաղորդ է մնում արտերկրում ստեղծուող գիտական արտագրանքին, կարիք ունենք գրաբարի քննութիւնների ճանաչելիութեան, որպէսզի դրանք լիարժէք ներառնուեն ուսումնասիրութիւնների ծիրի մէջ:

Մեր քարտարանում ի մի ենք հաւաքել արտերկրի լեզուաբանների աշխատութիւնների պատկառելի ցանկ, որ վերաբերում է զուտ գրաբարի քննութիւններին:

Զանազան աշխատանքներ ունեն Զեորջիայի համալսարանի պրոֆեսոր Զարեգ Քլեյնը (Jared Klein), Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Զեյմա Քլեքսոնը (James Clackson): Զոն Գրեպպինը (John Greppin, 1937-2016, 1975-2010 թուականներին եղել է Քլիվլենդի պետական համալսարանի պրոֆեսոր), հեղինակել է 16 գիրք և աւելի քան 500 յօդուածներ ու գրախօսութիւններ, իր ակադեմիական մասնագիտութիւնը դասական հայերէնն էր: Հիմնել է «Հայ լեզուաբանութեան տարեգրութիւն» հանդէսը եւ 25 տարի խմբագրել այն:

Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր և «Եւրոպայի արմատներ» հետազոտական կենտրոնի ղեկավար դանիացի լեզուաբան Բիրգիթ Անետ Օլսենը (Birgit Anette Olsen, ծնուել է 1952 թ. Դանիայում), որ հնդեվրոպական լեզուների, յատկապէս ածանցեալ ձևաբանութեան և հայերէնի պատմութեան մասնագէտ է, տպագրել է կարևոր յօդուածներ լեզուական վերակառուցման և լատիներեն, հունարեն, անատոլիական և գերմանական լեզուների պատմութեան վերաբերեալ, որոնք ներառում են նաեւ գրաբարի մասին տուեալներ:

Ռոբին Մայերը (Robin Meyer) Օքսֆորդի համալսարանի համեմատական քերականութեան ուսումնասիրողներից է: Նա իր յօդուածում ուսուցման նոր մեթոդները առնչակցում է գրաբարի դասաւանդմանը՝ աւագ դպրոցների եւ բուհերի ուսուցման համար կիրառելով «համատեքստաւորումը» (contextualisation): Երկու բառով՝ դա ենթադրում է

լեզուի նախնական ուսուցումը գրականութեան, մշակոյթի և պատմութեան միջոցով (R.Meyer, 2024): Այդ սկզբունքը հեղինակը մանրամասն կիրառում է հին հայերէնի վերաբերեալ, որ մեզ համար յատկապէս կարեւոր է, քանզի մեր դասականուման փորձառութեան ընթացքում մշտապէս օգտուել ենք այդ բազմիցս իրեն արդարացրած մեթոդից: Լոս Անջելէսի Ս. Ղեւոնդեանց եկեղեցուն կից գրաբարի դասընթացը վարելիս մշտապէս առնչուել ենք այդ հարցին, քանզի լեզուական ու նաեւ հայ գրականութեան, պատմութեան, մշակոյթի տարբեր աստիճանի իմացութիւն եւ գիտելիքներ ունեցող ունկնդիրներին անհնար է գրաբարի տարրեր ուսուցանել շրջանցելով բոլոր այդ ճիւղերը: Լեզուի ուսուցման պատմամշակութային համատեքստը շատ կարեւոր է հաշուի առնել ոչ-հայկական բուհական ու դպրոցական միջավայրում, որ առանձին քննութեան թեմա է եւ այլ առիթով կմանրամասնենք:

Տրոմսոյի համալսարանի գիտաշխատող Պաւել Քէհան (Pavel Caha) “Nordlyd” ամսագրում (հրատարակում է Տրոմսոյի համալսարանի լեզուաբանութեան ամբիոնը) տպագրած «Classical Armenian Declension» ընդարձակ յօդուածում գրաբարի ձեւաբանական համակարգը նկարագրում է նանոշարահիւսութեան դիրքից (Pavel Caha, 2009): Շարահիւսական այս մեթոդը լեզուն նկարագրում է որպէս մոդուլեար համակարգ՝ տրոհելով մինչև նուրբ մանրամասներ, ինչպիսիք են ածանցումը լեզուների անկանոն օրինաչափութիւններում և դրա առնչութիւնը շարահիւսական կառուցուածքների հետ:

Արտերկրի գրաբարագէտ հեղինակների ու նրանց աշխատասիրութիւնների շարքը երկար է, որոնց մասին տողերիս հեղինակը պատրաստում է առաւել ամփոփ զեկուցում, որ կներկայացուի առաջիկայում:

Առանձին եւ կարեւոր անելիքներից է մեր արեւելեան «հարեւանների» «գիտական» աշխատութիւններին ու կեղծիքներին հրատապ կերպով անդրադառնալը, որոնք խաշուած են հայերէնի պատմութեան տուեալների հետ, այդ թւում՝ հին աղբիւրների տեքստերը սխալ մեկնաբանելու, տեղանուանական կեղծումների հետ: Ադրբեջանի ակադեմիայի հաստատութիւնների ամսագրերում տպագրուող նոր յօդուածներում լեզուն կեղծ ու յաճախ հնարածին դրոյթներին անդրադառնալու եւ գիտական ճշմարտութիւնները վերահաստատելու համար միջոցներ, անհետաձգելի ու չդադարող աշխատանք է անհրաժեշտ, որ առաջնահերթութիւն է առհասարակ հայերէնագիտութեան համար:

Գրաբարի արտասանութեան կանոնաւորումներ

Գրաբարի գործնական արտասանութիւնն այսօր դրսեւորուած է եկեղեցիներում. գրաբարը կենդանի ձեւով գործածուած է Հայց. եկեղեցու ծէսի, պատարագի արարողութիւնների ժամանակ: Կախուած նրանից, թէ ինչ լեզուակիր է ծէսը կատարողը (արեւմտահայ-արեւելահայ, անգլիախօս-արաբախօս եւ այլն) շատ յաճախ ի յայտ են գալիս արտասանութեան տարբերութիւններ, որոնք կարիք ունեն միօրինականացնելու, որպէսզի գրաբարը վերարտադրուի իր բնիկ հնչումով:

Կանոնաւորման եւ միօրինականացման կարիք ունեն, օրինակ, աւանդական արտասանութեան մի քանի կանոններ, որոնք փոխանցուած են ուսումնական ճանապարհով, եւ տարբեր ուսուցիչներ կամ վարդապետներ առաջադրում են իրենց նախընտրելի արտասանութիւնը եւ մերժում են իրենց կարծիքով ոչ ճիշտ արտասանութիւնը: Նման ցայտուն դէպքերից են՝ բանիւք (բանյուք թէ բանիւք), զՍեփանոս (ըզՍտեփանոս թէ զըՍտեփանոս), այսուիկ (այսուիկ թէ այսվիկ) եւ տասնեակ այլ օրինակներ: Այնքանով, որքանով գրաբարն ընթերցում ենք աւանդական կանոններով, պէտք է մշակուեն եւ ներկայացուեն համընդհանուր կանոններ, որոնք յանձնարարելի կը լինեն մեր եկեղեցու ծէսը մատուցող հոգեւոր սպասաւորների համար:

Հանրութեանը գրաբարի արդիականութեան մատուցում

Մեր հրապարակման վերջում կցանկանանք ամփոփել ոչ երկրորդական կարեւորութեան մէկ հարց: Նոր օրերում յստակ, ամփոփ ու վերջնական պարզաբանութեան կարիք ունի հարցը, թէ ժամանակակից հայ անհատն ինչու է պէտք գրաբար սովորի եւ իմանայ: Նման հարցի առնչուել ենք դասախօսական մեր գործունէութեան ընթացքում մշտապէս՝ թէ՛ համալսարանական, թէ՛ այլ միջավայրերում: Մեր փորձառութիւնից բխող պատասխանները ներկայացնում ենք մի քանի սեղմ կէտերում, որոնք պարզ մատուցելիս կարող են հնարաւոր կասկածները փարատել:

Այսօրուայ հայ (նաեւ այլազգի) անհատը պէտք է գրաբարն իմանայ, քանզի այն կարեւոր է մի շարք առումներով.

ա) գրաբարը ուղղակիօրէն օգնում է արդի հայերէնն աւելի խորութեամբ հասկանալու եւ բացատրելու համար, թե՛ ձեւաբանական, թէ՛ իմաստային առումներով,

բ) հնարաւորութիւն է տալիս մեր հսկայ գրաւոր ժառանգութեան հետ առնչուելու համար,

գ) հայութեան բոլոր հատուածներին է փոխանցում գրաբարի միաւորիչ ուժը, որ եզակի գործոններից է,

դ) գրաբարի ուսուցման միջոցով ունակ ենք լինում հայ հին մշակույթը եւ նրանում ամբարտաճ հոգեւոր արժէքները վերարծարծելու, այդ արժէքների մէջ լինելու համար,

ե) լեզուական եւ գրական բարձրագոյն ճաշակի նշաձողը առաջնորդ ունենալու համար,

զ) լատիներենի, հին հունարենի եւ դասական այլ լեզուներին համարժէք լինելու համար,

է) եկեղեցու ծէսը, առհասարակ հոգեւոր պատգամները հասկանալու համար,

ը) դասական հայերէնից բառաձեւեր ու իմաստներ արդի հայերէնի մէջ փոխանցելու համար,

թ) դասական ու յետագայ շրջանների հեղինակների հետ իրենց լեզուով հաղորդակցուել կարողանալու համար եւ այլն:

Այս կէտերի, ինչպէս նաեւ գրաբարագիտութեան խնդիրների թուարկումն անշուշտ վերը նշուած դրոյթներով չի սահմանափակում: Սակայն նկարագրածը, կարծում ենք, բաւարար է՝ նոր օրերի անհատին գրաբարի կարեւորութիւնը անմերժելի դարձնելու համար:

Ամփոփենք. գրաբարագիտութիւնը լայն առումով նոր ժամանակների առաջադրած պահանջներին հնարաւորինս համապատասխանեցնելու կարիք ունի: Գրաբարի քննութեան եւ յատկապէս դասաւանդման հարցերը պէտք է բերուեն միջազգային կրթական ոլորտներում ընդունուած մեթոդներին ու շափանիշներին, ինչպէս որ մշտապէս արել են նախորդ դարերի հայ դպրոցներն ու ուսուցիչները: Քանզի որքան հին ու դասական է գրաբարը, նույնքան էլ արդիական՝ մեր լեզուն ու մշակույթը շարունակապէս սնուցելու համար, որպէս յաւերժական արժէք:

NORAYR POGHOSYAN

CONTEMPORARY APPROACHES TO THE STUDY AND TEACHING OF GRABAR

Resume

Research and teaching of Grabar (Old Armenian classical language) in a broad sense should be maximally adapted to the requirements of the new times. The issues of research and, especially, teaching should be aligned with the accepted methods and standards in international educational spheres. Because no matter how old and classical Grabar is, it is also modern to keep our language and culture rich and long-lasting. The study of Grabar has been carried out by renowned Armenian scholars from the Middle Ages to the present day. However, new times suggest new approaches for new research and teaching methods. This publication, based on our experience, is devoted to these issues. The topic is presented in several conditional sections: educational, translation, digital, etc.

Keywords - Grabar research, new works, teaching, digital environment, foreign researchers, new approaches.

Գրականություն

Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., եր., 1976:

Աղայեան Էդ., Գրաբարի քերականություն, հ. Ա, եր., 1964:

Պողոսեան Նորայր, Հայկաբանության դրսևորումները հայ գիտական և ուսումնական ոլորտներում (ԺԷ.-ԺԹ. դարեր, Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ, 2016, հատոր ԼԶ, էջ 95-110:

Robin Meyer, Contextualising Ancient Language Teaching. The Case of Classical Armenian, Cahiers du Centre de Linguistique et des Sciences du Langage, 2024, N 68, pp. 91-113:

Pavel Caha, Classical Armenian Declension, Nordlyd, #36, 2009, pp. 77-112:

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԻՆԱՍՅԱՆ ՇՈՂԵՐ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի
ավագ գիտաշխատող*

Ներածություն

Ղարաբաղի բարբառը հայերենի կենդանի բարբառներից ամենատարածվածն ու կենսունակն է, որով, ըստ տարբեր լեզվաբանների կարծիքների, հաղորդակցվում են 500.000-1.000.000 հայեր, որոնք ապրում են Արցախի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում: Այն առանձնանում է իր հնչյունաբանական և յուրահատկություններով և հարուստ բառապաշարով: Սակայն դարերի ընթացքում և հատկապես վերջին տասնամյակներում, շնորհիվ միասնականացնող հանգամանքների, բարբառն աստիճանաբար ենթարկվել է գրական արևելահայերենի և ժողովրդախոսակցական լեզվի խիստ ազդեցությանը՝ կորցնելով մի շարք առանձնահատկություններ: 2020թ. 44-օրյա պատերազմից և հատկապես Արցախի ողջ բնակչության՝ 2023թ. բռնի տեղահանումից հետո այդ գործընթացը դարձել է լուրջ մարտահրավեր: Սույն հոդվածում վեր են հանվում բարբառի հնչյունական, բառական-կան և բառապաշարային մակարդակներում կատարված փոփո-

խությունները, ինչը վկայում է այն մասին, որ հայերենի մյուս բարբառների նման արցախահայերի հաղորդակցման հիմնական միջոցը զարգացման հեռանկարներ չունի և ի վերջո դատապարտված է վերացման: Միաժամանակ ներկայացվում են բարբառի՝ որպես Արցախի ոչ նյութական մշակույթի պահպանման հեռանկարները, կարևորվում նրա ուսումնասիրումը, բարբառով բանահյուսական և ազգագրական նյութերի հավաքումը, Արցախի ժողովրդագրությունը նվիրված գիտաժողովների, գիտական ֆինանսավորումների, մշակութային և տարաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումը, գիտական ու գիտահանրամատչելի աշխատությունների և ժողովածուների հրատարակումը:

Հիմնաքառեր - Ղարաբաղի բարբառ, գրական հայերեն, խոսակցական հայերեն, հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն, բառապաշար, բռնի տեղահանում, ազդեցություն, մատահրավեր:

Հետազոտության առարկան: Սույն հետազոտության առարկան Ղարաբաղի բարբառն է, որը հայերենի կենդանի բարբառներից ամենատարածվածն ու կենսունակն է: Նրանով, ըստ տարբեր լեզվաբանների կարծիքների, հաղորդակցվում են 500000-1000000 հայեր: Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման համաձայն՝ այն ընդգրկվում է -ում ճյուղի (Աճառյան, 1911, 54), հնչյունական դասակարգման համաձայն՝ առաջին տեղաշարժի ենթարկված (Ղարիբյան, 1947, 30), իսկ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիս-արևելյան միջբարբառախմբի մեջ (Ջահուկյան, 1972, 136):

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Բարբառի մասին առաջին վկայությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին՝ հայերենի տարածական մի քանի տարբերակների շարքում նշելով նաև զԱրցախայինն (Αδοου, 1915, 187): Առ այսօր արժեքավոր ուսումնասիրություններով հանդես են եկել Քերովբե Պատկանյանը (Патканов К., 1869, 55-73), Մանուկ Աբեղյանը (Աբեղեան, 1890), Ղազարոս Աղայանը (Աղայան, 1898, 1889), Հրաչյա Աճառյանը (Աճառեան, 1901), Արմենակ Պողոսյանը (Պողոսյան, 1965), Կարո Դավթյանը (Դավթյան,

1966), Գեորգ Ջահուկյանը (Ջահուկյան, 1991), Սերգեյ Աբրահամյանը (Աբրահամյան, 1955), Բագրատ Ուլուբաբյանը (1968), Ալեքսանդր Մարգարյանը (Մարգարյան, 1975, 2015), Հրանտ Պետրոսյանը (1986), Լավրենտի Հովհաննիսյանը (Հովհաննիսյան, 2024), Մելադա Աղաբեկյանը (Աղաբեկյան, 2010), Արմեն Սարգսյանը (Սարգսյան, 2009, 2013, 2), Շողեր Մինասյանը (2007) և ուրիշներ (Սարգսյան, 2019ա, 46-147), իսկ որոշ աշխատանքներ դեռևս գտնվում են ձեռագիր վիճակում (Սարգսյան, 2019ա, 148-152): Բարբառին մեծապես առնչվում են նաև հայերենի բարբառների տարբեր օրինաչափությունների նվիրված ընդհանուր ուսումնասիրություններ, բառարաններ, Արցախի բանահյուսական և բարբառագիր ժողովածուներ, այլ աշխատանքներ (Սարգսյան, 2019ա, 46-147, 2019բ, 51-118):

Հետազոտության նորույթը: Հետազոտությամբ առաջին անգամ ներկայացվում է բարբառի արդի վիճակը, որը նախկին վիճակի համեմատությամբ ներկայանում է որոշակի փոփոխություններով:

Մեթոդաբանությունը: Հետազոտությունը կատարվել է նկարագրական մեթոդով՝ անհրաժեշտության դեպքում պատմահամեմատական մեթոդի համադրությամբ:

Նպատակը և խնդիրները: Ղարաբաղի բարբառն առանձնանում է իր հնչյունաքերականական յուրահատկություններով և հարուստ բառապաշարով: Սակայն դարերի ընթացքում և հատկապես վերջին տասնամյակներում, շնորհիվ միասնականացնող հանգամանքների, բարբառն աստիճանաբար ենթարկվել է գրական արևելահայերենի և ժողովրդախոսակցական լեզվի խիստ ազդեցությանը՝ կորցնելով մի շարք առանձնահատկություններ: Ներկայումս Արցախի ողջ բնակչության բուն տեղահանման արդյունքում այդ գործընթացը դարձել է լուրջ մարտահրավեր: Հետազոտության նպատակն է վեր հանել այդ փոփոխությունները: Հիմնական խնդիրներն են բարբառի հնչյունական, քերականական և բառապաշարային մակարդակներում գրական ու խոսակցական հայերենի, որոշ դեպքերում նաև ռուսերենի ազդեցության աստիճանների որոշումը, բարբառի պահպանման հեռանկարին ուղղված միջոցների ու միջոցառումների սահմանումը:

Հնչյունական փոփոխություններ

Ղարաբաղի բարբառը հարուստ է ձայնավորներով և բաղաձայններով (Դավթյան, 1966, 15-22): Բացի գրական հայերենի հնչյուններից, լայն գործածություն ունեն նաև քմային *ւն* (*անգւն*, *հւն*), *իւ* (*իւրիւր*, *հիւր*), *օ*

(ծղիլ, ծօր), գ՛ (գ՛օլ, խագ՛), կ՛ (կիհնի, պուք կիալ), ք՛ (քիհնիլ, սօք՛), լ՛ (լիալ, լուգիլ) քմային հնչյունները, ինչպես նաև ը և է ձայնավորների միջին աստիճանը ներկայացնող ը՛ (մը՛ծ, ծըմը՛ռնը) երկբարբառակերպը, որոնք ունեն նաև հնչույթային արժեք: Բոլոր ուսումնասիրողները որպես բարբառի հնչյունական առանձնահատկություն են նշում ֆ խուլ շփականի բացակայությունը, որի փոխարեն գործածվում է փ բաղաձայնը, ինչը վկայում է բարբառի հնույթյան մասին: Սակայն հարկ է նշել, որ ժամանակի ընթացքում գրական և խոսակցական հայերենի ազդեցությամբ որոշ բառերում փ-ին զուգահեռ գործածություն է ստացել նաև ֆ-ն, և ներկայումս, հատկապես նոր և միջին սերնդի ներկայացուցիչների խոսվածքում փ-ֆ զուգաձևությունների գործածումը դարձել է սովորական՝ ափէրիստ-աֆէրիստ (խարդախ), ափտօմատ-աֆտօմատ (ինքնաձիգ), ափցէր-աֆիցէր (սպա), տըրափէյ-տըրաֆէյ (թալանից բերված իր), փանտան-ֆանտան (շատրվան), փաշիստ-ֆաշիստ (դաժան մարդ), փէլշէր-ֆէլշէր (բուժակ), փուրգօն-ֆուրգօն (ֆուրգոն), փըրօնտ-ֆըրօնտ (ռազմաճակատ), փուտբօլ-ֆուտբօլ (ֆուտբոլ) ևն: Մյուս կողմից, եթե գ՛, կ՛, ք՛, լ՛ քմայինները շարունակում են համատարած գործածություն ունենալ, ապա որոշ խոսվածքներում հազվադեպ գործածվող դ՛, թ՛, փ՛, ձ՛, չ՛, ց՛ և այլ քմային բաղաձայններն աստիճանաբար փոխարինվել են ոչ քմայիններով, իսկ ը-ի և ի-ի միջին աստիճանը ներկայացնող ը՛ երկբարբառակերպը՝ ը-ով կամ ի-ով, ինչպես՝ փադ՛-փադ, մարթ՛-մարթ, խէժնը-խէժնը, ճիւղը-ճիւղը, ջիւլ-ջիւլ, օց՛-օց, ը՛ծըմաժանք՛-ը՛ծըմաժանք՛, ը՛ծժան-իծժան ևն: Նույն ձևով հիմ-նականում Մարտունու շրջանի խոսվածքներում գործածվող անորոշ դերբայի վերջին ը-ն հաճախ հանդես է գալիս ոչ քմային ձևով՝ ասէլ՛-ասէլ, խօսէլ՛-խօսէլ, մընալ՛-մընալ, շինիլ՛-շինիլ ևն: Սակայն մեր կարծիքով այս փոփոխություններն ամենից առաջ արդյունք են այդ խոսվածքների վրա բուն Ղարաբաղի բարբառի ազդեցություն:

Շարունակում է պահպանվել շեշտի վերջնթերային դիրքը: Ընդհանուր առմամբ նույնն են մնացել նաև համաժամանակյա, տարածամանակյա, դիրքային ու փոխազդեցական հնչյունափոխությունները:

Ձևաբանական փոփոխություններ

Գրական և խոսակցական հայերենի ազդեցությունն ակնառու է նաև բարբառի հոգնակիականության վրա: Եթե նախկինում -էր, -նէ, -ք/ք՛, -օտ հոգնակերտներից բացի լայնորեն գործածվում էին նաև -էն/ը՛ն, -ըթկընէ, -լար, -վասկ, -օտէնք՛ թեքույթները, ապա վերջին տասնամյակ-

ներում ավելի հաճախակի են դարձել զուգահեռ՝ հիմնականում – էր-ով և նէ-ով կազմությունները՝ ծուվէն/ծուվըն-ծուվէր, շինըթկընէ-շէնէր(ք), բալալար-բըլէնէ, փաղվասկ-փաղէր, հընգըրօտէնք՝-հընգէրնէ/հընգէրունք ևն:

Հոլովման համակարգում կատարված փոփոխություններն էական չեն: Թերևս հարկ է նշել, որ աստիճանաբար անձ ցույց տվող գոյականների բացառականի, գործիականի և ներգոյականի վերլուծական կառուցվածքը իր տեղը զիջում է համադրականին, ինչպես՝ ըխճըկանը անա/նը՝ստա-ըխճըկանան, ըխճըկանը անավ/նը՝ստավ-ըխճըկանավը, ըխճըկանը անըմ-ըխճըկանըմը ևն: Գրեթե անգործածական են դարձել գրաբարի հոգնակի գործիականի -ք վերջավորությունամբ ձևերը, որ հագվադեպ գործածում էին հին սերնդի բարբառախոսները եզակի գործիականի իմաստով՝ ծէռուք-ծըրքավ, կօրուք-կօթավ, վըրէնուք-վըրէնավ:

Գրական հայերենի ազդեցությամբ բարբառում համատարած գործածվող չօրք՝ թվականը դարձել է չօրս: Հատկապես նոր և միջին սերունդների խոսվածքում լայն տարածում են ստացել նաև դասական թվականների՝ -րօրթ ածանցով գրական հայերենի կազմությունները՝ փոխարինելով թուրքերենից փոխառյալ -ինջի մասնիկով կազմություններին՝ էրկունջի-յէրգըրօրթ, իրըրքինջի-յօրրօրթ, հէնգինջի-հիգէրօրթ ևն:

Որոշ փոփոխություններ են կատարվել բայական համակարգում: Չ ածանցով բայերի վաղակատարը և հարակատարը կազմվում էին և՛ անորոշի, և՛ անցյալի հիմքերով՝ սառչնլ/սառալ, սառչնծ/սառած, սակայն աստիճանաբար առավել գերիշխող են դարձել անցյալի հիմքով ձևերը, ինչը նույնպես գրական հայերենի հետ սերտ շփման արդյունք է: Ապառնի դերբայը, որից կազմվում են սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերը, ունի -ան, -ական վերջավորությունները՝ ասալ-ըսըլան/ըսըլական, աղալ-ըղըլան/ըղըլական, սակայն Ստեփանակերտի և հարակից որոշ բնակավայրերի խոսվածքներում հատկապես վերջին տասնամյակներում դրան զուգահեռ գրա-կան հայերենի ազդեցությամբ ավելի հաճախակի են դարձել -էլու, -ալու, -իլու վերջավորություններով կազմությունները՝ ըսէլու, ըղալու: Ընդհանուր առմամբ հարկադրական եղանակի պիտի եղանակիչի բարբառային բիդի/բէդի/բէդը/բէդմա զուգաձևություններից գրեթե բոլոր խոսվածքներում հաստատուն է դարձել բիդին, իսկ որոշ խոսվածքներում համատարած է գրական հայերենի պիտի, որոշներում նույնիսկ պէտք ա ձևի գործածումը: Հայտնի է, որ Ղարաբաղի բարբառի բոլոր խոսվածքները հարուստ են երկրորդական բաղադրյալ ժամանակ-

ներով, որոնք հիմնականում կազմվում են անկատար դերբայի երկրորդ ձևից (ըսելիս/ըսելիս, մընալիս/մընայիս, թըռչիլիս/թըռչիլիս), շարունակական, ապառնի և հարակատար դերբայներից՝ օժանդակ բայի ներկայի և անցյալի ու լինել բայի՝ ըստ եղանակների և ժամանակների խոնարհվող ձևերի հարադրություն (Դավթյան, 1966, 194-198): Պետք է նշել սակայն, որ վերջին տասնամյակներում ըսելիս ըմ ինում, ըսելիս ի ինում, ըսելիս ըմ ինան, ըսելիս ի ինան, ըսելիս ըմ իլալ, ըսելիս ի իլալ, ըսելիս ըմ իլաժ, ըսելիս ի իլաժ, ըսելիս իլի, ըսելիս ինիմ, ըսելիս ինի և այլ ձևերի կիրառությունը դարձել է ոչ հաճախակի, ինչը նույնպես գրական և խոսակցական հայերենի ազդեցության արդյունք է:

Մյուս խոսքի մասերը հիմնականում մնացել են անփոփոխ, եղած փոփոխություններն էլ սահմանափակվում են բառապաշարային մակարդակով:

Շարահյուսական փոփոխություններ

Շարահյուսական կառուցվածքով Ղարաբաղի բարբառն ընդհանուր առմամբ համընկնում է արդի հայերենին՝ հանդես բերելով արևելահայերենին բնորոշ հատկանիշներ: Մյուս կողմից՝ «Շարահյուսության ու շարադասության տեսակետից տեղիս խոսվածքները համարյա տարբերություններ չունեն. թե՛ արդի գրականից եղած շեղումները և թե՛ այլ առանձնահատկությունները շարահյուսական տեսակետից չնչին բացառությամբ միատեսակ են բոլոր տեղերում...» (Դավթյան, 1966, 217-218): Այնուամենայնիվ, կան մի շարք առանձնահատկություններ, որոնցից որոշները, սակայն, ժամանակի ընթացքում և հատկապես վերջին տասնամյակներում էապես ենթարկվել են գրական հայերենի խիստ ազդեցությանը՝ նմանվելով նրան կամ զուգահեռ գործածելով վերջինիս շարահյուսական ձևերը: Այսպես.

Եթե մինչև 20-րդ դարի վերջերը բարդ համադասական նախադասություններում համադաս նախադասությունները հաճախ կապակցվում էին շարահարություն, ապա ներկայումս շաղկապներով կապակցումը դարձել է սովորական՝ Յըս ասալ ըմ՝ տու ըսկացալ չըս-Յըս ասալ ըմ, ամհա տու ըսկացալ չըս: Նույնը վերաբերում է նաև բարդ ստորադասական նախադասություններում գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցման եղանակին՝ Քըէցալ ընք բաղը՝ թօթ թափինք-Քըէցալ ընք բաղը, վէր թօթ թափինք:

Հետզհետե ավելի մեծ տարածում է ստանում ուրիշի ուղղակի խոսք ստորադաս նախադասության կապակցումը գերադասին առանց թա

շաղկապի՝ Ասալ ա, թա. –էքուց կըկհաս մէր տօն- Ասալ ա. –էքուց կըկհաս մէր տօն:

Գրեթէ անգործածական է դարձել տրական հոլովով գործիականի իմաստի արտահայտումը՝ Տօնըտ քանէ մընէթու վը՞ս ծախում-Տօնըտ քանէ մընէթավ վը՞ս ծախում:

Հազվադեպ են դարձել անկատար դերբայի գործածությունները անորոշ դերբայի տրական հոլովի և ենթակայական դերբայի փոխարեն՝ խըմում վախտը շատ ա խօսում-խըմէլի վախտը շատ ա խօսում, Լշտը՞ղ տանջվում մարթ ա տը՞սնում, քօմագ՛ ա անում-Լշտը՞ղ տանջվօղ մարթ ա տը՞սնում, քօմագ՛ ա անում:

Սահմանափակվել են սահմանական ներկայի իմաստով պայմանական ապառնու գործածությունները՝ Կասին՝ խընաբագ փիս կարկուտ ա չը՛կալ-Ասում ըն՝ խընաբագ փիս կարկուտ ա չը՛կալ:

Այլևս ոչ հաճախակի են արտահայտվում բաղառությունները՝ Ծառէրը ծաղկալ ա- Ծառէրը ծաղկալ ըն, Սաղ շէնը հըվաքվալ ըն-Սաղ շէնը հըվաքվալ ա, Ժըղըվուրթէն կէսը քօշալ ըն-Ժըղըվուրթէն կէսը քօշալ ա, ինչը, սակայն, չի ընդգրկում այն նախադասությունները, որոնց ենթական մարմնի զույգ անդամն է՝ Աշկէրը քուռացալ ա, վը՛նէրը չուխացալ ա, Լնգուճնէն քըռացալ ա, Պուլըժկընէն ծափ ա տամ են:

Բառապաշարային փոփոխություններ

Ղարաբաղի բարբառն ունի հարուստ բառապաշար, որն ընդգրկում է գրաբարից ավանդված, բարբառային, փոխառչալ, գրական արևելահայերենից ու խոսակցական լեզվից անցած բազմաթիվ բառեր, բառաձևեր ու դարձվածքներ, ինչպես նաև հնդեվրոպական արմատներ (Սարգսյան, 2013, Սարգսյան, Մինասյան, 2017): Թերևս բարբառի՝ ժամանակի ընթացքում կրած փոփոխություններից առավել մեծ թիվ են կազմում բառապաշարային փոփոխությունները, որոնք կարելի է բաժանել մի քանի խմբի:

Առաջին խմբի մեջ են ընդգրկվում այն բառերը, որոնք գործածությունից դուրս են եկել համապատասխան առարկաների, գործիքների, երևույթների՝ ժամանակի ընթացքում արցախցու կենցաղից դուրս մղվելու պատճառով, ինչպես՝ ազափիտլի (հարկատեսակ, որ մուծում էին ամուրի տղամարդիկ), աղդուշ (պղնձե թաս), աշխօր/ուրական (կոտնտեսականի մեկ օրվա աշխատանքի համար սահմանված չափի միավոր), բարգ՛ահ (Ծաղկազարդին կատարվող նշանադրության տեսակ), բըղ(ի)յա (սովորաբար 3-5, երբեմն 8-10 տարողություն պղնձե

խորունկ աման), գանշ/կանշ (հատկապես մինչև 20-րդ դարի կեսերը հարսանիքի վերջում կամ հաջորդող օրը փեսայի տանը կազմակերպված հրավերքի ժամանակ փեսայի օգտին հարսանքավորների կողմից արվող նվիրատվությունների հայտարարություն), գոլլըքաշի (կեռ ծայրով և 50-60սմ երկարությամբ երկաթե բարակ ձող, որի միջոցով հնատիպ հրացանների փողից քաշում ու հանում էին գնդակը և լաթը), գօդի (անձրևախափան, իսկ որոշ պատումների համաձայն՝ անձրևաբեր ծես, ինչպես նաև այդ ծեսի ժամանակ գործածվող կանացի կերպարանքով խրտվիլակ), դամլա (գույնզգույն շորի կտորներով ծածկված քառանկյունի փայտե շրջանակ, որի հետևում թաքնվում էին որսորդները թռչուններ որսալիս), դօնգըզլը (ջրաղացի այն մասը, որտեղից ջուրը թափվում էր թափանիվի վրա և պտտեցնում), իլիգատօն (ճախարակի այն մասը, որտեղ իլիկն է պտտվում), իստիլ (ծանրության հին չափ, որ հավասար էր մոտավորապես 300 գրամի), կանդ(ը)րէվ (արորի և գութանի լծափոկի կամ շղթայի ծայրին ամրացված օղակ, որով միացվում էր լծին), կըղաղէ/ճըղաղըրի (ընկույզի կանաչ կեղևից ստացած գույն, որով հատկապես ներկում էին գորգ գործելու թլերը), հօխա/օխա (նախկինում գործածվող ծանրության չափ, որ հավասար էր 1282 գրամի), ճըղէնակ (մետաքսաթելից գործած զարդանախշ հագուստի վրա), մըչըհանուկ/մըչանուց (կանացի՝ ճակատը ծածկող գլխազարդի դրամաշարի կենտրոնում տեղադրված արծաթե կամ ոսկե մեծ դրամ), մըչավար (կենտրոնական հողամաս՝ վարելահող), մումուրղան (սպեղանի, որ պատրաստում էին մեղրամոմից և հալած յուղից), յաստըղ (փոքրիկ բարձիկ ասեղները մեջը խրելու ու պահելու համար), չափարփուլի (գյուղացու հարկի տեսակ), չիքիլա (կանացի մետաքսե սպիտակ նուրբ գլխաշոր՝ եզրերը ասեղնագործ ժանյակով), պուղուսիգ/հուլըկըրան (ձիթահանքի փայտե հաստ պտուտակը, որը պտտեցնելով՝ բարձրացնում կամ իջեցնում էին հորիզոնական դիրքով դրված գերանների ծայրերը), պօմբի (հաճարի ալյուրից թխված թթվաշ բոբոն հաց), սաբաթ (եղեգից հյուսած զամբյուղ կամ կողով), սըրտըմնա փըռնէլ (սնտոհապաշտական ձև, որ կատարում էին որևէ բանից զզված անձին բուժելու համար), վաղզալի (հարսանեկան պարի տեսակ և նրա պարեզանակը), տէնակ քըցիլ (դանակի միջոցով կատարվող գուշակության ձև), օթուց (1. չորս գույզ լծկան լծած արոր, գութան, սայլ, 2. լծված չորրորդ լուծը) ևն: Այդպիսի տառնյակ բառեր, որ ներկայացնում էին ձիթահանքի (սըրանուց), ջրաղացի (ճըղաց), գորգագործական հաստոցի (տօրք), արորի (ալաթ), գութանի (կութան), սայլի (ըրբա), ոստայնի (վըտտան) տարբեր մասեր, երկրագործական,

տնայնագործական, արհեստագործական զանազան գործիքներ, խաղատեսակներ, պարեր, ծեսեր, սնոտիապաշտական ձևեր, դրանց հետ կապված հատկանիշներ, գործողություններ ևն, այսօր գրեթե չեն գործածվում հատկապես նոր սերնդի ներկայացուցիչների կողմից:

Կան նաև այնպիսի բառեր, որոնք, կորցնելով բուն իմաստը, կիրառվում են միայն երկրորդական կամ փոխաբերական նշանակություններով: Այսպես, բարբառում բիստի նշանակում էր 1. պղնձե փոքր դրամ, 2. փոքրիկ հաց՝ բոբոն: 3. սրածայր, որոնցից պահպանվել է միայն երրորդը, այսօրի (ասորացի, ասորի) բառը փոխաբերաբար նշանակում էր փնթի, թափթփված, թափառական, ինչն էլ ներկայումս գիտակցվում է որպես միակ իմաստ: Նույն ձևով զօկ (18-րդ դարի կեսերին Գողթան գավառից Շուշի քաղաք գաղթած ազուլիսցիների մականունը) բառը պահպանել է միայն փոխաբերական բարձրահասակ մարդ և ժլատ՝ կծծի մարդ իմաստները (գործածվում է նաև զօկերեն խօսել (անհասկանալի լեզվով խոսել) դարձվածքը), դրխաբըռ (սուրբ հոգու աստվածությունը չընդունող անձ՝ հոգեմարտության հետևորդ) բառը՝ հաղթանդամ, առույգ փոխաբերական իմաստը:

Այս խմբի բազմաթիվ բառեր էլ, կորցնելով ինքնուրույն կիրառությունը, պահպանվել են միայն բարդություններում, դարձվածքներում, այլ արտահայտություններում, ինչպես ըրամակ (երամակ) բառը ըրըմակէն (կարգին, ինչպես հարկն է) բառում և ըրամակ ըղնէլ (մադամեջ ընկնել, հեղինակություն ձեռք բերել), ըրամակ քըցիլ (մարդամեջ գցել, հեղինակությունը բարձրացնել) դարձվածքներում, բըլըբանդի (արագ շարժումներով հին պարատեսակ) բառը բըլըբանդի պար ածել (չարչարել, տանջել), ճատտի (պարատեսակ, որ պարում էին այլակերպված, դիմակավորված, ցնցոտիներով՝ նմանակելով ուրիշներին) բառը ճատտի տալ (չարչարվել, տանջվել), շուշտարի (արագ շարժումներով հին պարատեսակ) բառը շուշտարի տալ (արագորեն շարժվել, պտտվել) դարձվածքներում, շէր (ոստ) բառը խալխէն աշկէն շէրանը տը՛սնում ա, Ուրան աշկէն կէրանը տը՛սնում չի առածում, ուք՛կուն (առասպելական կենդանի, որ իբր գողանում է մարդկանց) բառը ուք՛կուն ինիլ (անհետանալ, վերանալ) դարձվածքում և Ուք՛կունը տանէ/ճըմփէ քը՛գ անեծքում ևն:

Երկրորդ խմբին են պատկանում հիմնականում արևելյան լեզուներից՝ թուրքական լեզուներից, պարսկերենից, արաբերենից, տարբեր դարաշրջաններում կատարված տասնյակ փոխառություններ, որոնք ազդեցության արդյունքում փոխարինվել են գրական և խոսակցական հայերենի համարժեքներով՝ հնչյունափոխություններով հանդերձ, ինչպես՝

ասման – յէրգիինք (երկինք) ավ – վըհրս (որս), օվչի – վըհրսկան (որսորդ), բայդաղ – դըրօշակ (դրոշ), բավթա – ծօպ (ծոպ), գարդան – մաշկ (մեջք), դննի – օղտ (ուղտ), գարար – վընաս (վնաս), թաքառ – ակնը (անիվ), աղարա-կըռհաքի (կարիճ), յարաղ – գէնք (գենք), դաթըր – ճօրէ (ջորի), դննդ – շնքնը (շաքար), դօթուր – քօս (մարդ-կանց ու կենդանիների մաշկի վարակիչ հիվանդութիւն՝ քոս), սօնգսըգ – չըպէրք (ստերք, չբեր), սաշ – ծամ (մազերի երկար հյուսք), փալանգ-վագըռ (վագր), փուլ/փարա – փօղ (դրամ, փող), քԵւ/քԴգ- մօխէր (մոխիր), քօրփի¹ – կարմունջ (կամուրջ), օլքա – յէրգի (երկիր, աշխարհ) ևն: Ինչ խոսք, գրական ու խոսակցական լեզվի այդ փոխարժեքները նախկինում նույնպէս գործածվում էին փոխառյալ բառերին զուգահեռ, սակայն ներկայումս դարձել են համատարած՝ դուրս մղելով դրանց:

Երրորդ խմբի մեջ ներառվում են արեւելյան լեզուներից փոխառյալ այն բառերը, որոնք փոխարինվել են ռուսերենից փոխառյալ բառերով, որի ազդեցութիւնը Ղարաբաղի բարբառի վրա նույնպէս մեծ էր, հատկապէս խորհրդային և հետխորհրդային տարիներին: Դրանցից են՝ բըթարաթ – աբօրտ (վիժելը, վիժում), ադդըմ – շագ (ոտքի մեկ շարժում՝ քայլ), ննզոնկ – սօսկա (ծծակ), աշըրմա – պատ(ը)րօն (փամփուշտ), աշպազ – պօլուր (խոհարար), դննք – պարիկմախէր (վարսավիր, սափորիչ), դննդի – պարտնօյ (դերձակ), խըզըլալա – իկրա (ձկնկիթ, խավիար), բօյախ(չ)ի – մալար (ներկարար), մըթմահի – պաղնօս (սկուտեղ, մատուցարան), շաքմաշի – սապօժնիգ (կոշկակար), փալթախար – մանդարին (նարնջի տեսակ), օբա/ալաշուխ – պալաթկա (վրան) ևն:

Չորրորդ խմբի փոփոխութիւնները կազմում են վերջին տասնամյակներում գրական հայերենից, ինչպէս նաև ռուսերենից ու եվրոպական լեզուներից բարբառին անցած բառերը, որոնք սովորաբար սահմանափակվում են նոր հասարակարգի, պատերազմի, արդի տեխնոլոգիաների, նոր կենցաղի հետ կապված եզրույթներով, ինչպէս՝ բէսպիլօտնիկ, բէտէն, բիզնէս, գյուղապետ, դիվէրսյա, դէմակըրատյա, իստրիբիտէլ, կամպյուտըր, կապալ, հիպօտէկ, սօտըվի, վարկ, վարչապէտ, վիդյօ ևն:

Միաժամանակ բարբառային ու փոխառյալ մի շարք բառերին զուգահեռ աստիճանաբար լայն գործածութիւն են ստանում գրական հայերենի փոխարժեքները, ինչպէս՝ ամհա-բայց, թննդ-մաքուր, թննդան-նօրից, ճէլի-շուտ, յա-կամ, նա-յէվ, քասիբ-ախկատ ևն:

Ղարաբաղի բարբառի պահպանման հեռանկարները

Ընդհանուր առմամբ հայերենի բարբառների վերացման գլխավոր պատճառներից մեկը գրական լեզվի ազդեցությունն է, որի արդյունքում արդեն իսկ մի շարք բարբառներ աստիճանաբար ձուլվել են նրան՝ կորցնելով դարերի ընթացքում ձևավորած առանձնահատկությունները: Մյուս կողմից՝ բարբառի ձուլումը մայր լեզվին կարճ գործընթաց չէ, հատկապես եթե գործ ունենք կենսունակ և մեծ տարածում ունեցող այնպիսի բարբառի հետ, ինչպիսին Ղարաբաղի բարբառն է, որով հաղորդակցվում են ոչ միայն Արցախի բնակիչները, այլև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ապրող հարյուրհազարավոր արցախցիներ ու նրանց հետնորդները:

Սակայն այդ իրավիճակն էապես փոխվեց 2020թ. 44-օրյա պատերազմից և հատկապես Արցախի ողջ բնակչության՝ 2023թ. բռնի տեղահանումից հետո, երբ շուրջ 150000 արցախցիներ, որոնց գերակշիռ մասը Ղարաբաղի բարբառի կրողներն էին, ճարահատյալ ժամանակավոր բնակություն հաստատեցին ՀՀ մայրաքաղաքում և տարբեր մարզերի տասնյակ բնակավայրերում, իսկ մի մասը՝ արտերկրում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում: Փաստորեն այսօր չկա որևէ բնակավայր, որը բնակեցված լինի միայն արցախցիներով, ինչը բարբառի պահպանման հիմնական երաշխիքն է: Ծիշտ է, Ղարաբաղի բարբառը նաև ՀՀ Սյունիքի մարզի, հատկապես Գորիսի (Մարգարյան, 1975) և Ղափանի շրջանների ու Վրաստանի Բուլնիս խաչեն գյուղի (հիմնադրվել է 19-րդ դարի կեսերին Արցախի խաչեն (Սեյդի շեն) գյուղից գաղթածների կողմից) բնակիչների հաղորդակցման հիմնական միջոցն է, սակայն վերջիններս ունեն էական տարբերություններ: Առավել անխուսափելի է Արցախի Հանրապետության Մարաղա, Չալու, Մեհտիշեն գյուղերի (հիմնադրվել են 1928-1930 թվականներին համապատասխանաբար Պարսկաստանի Մարաղա գյուղաքաղաքից, Ուրմիայի և Խոյի գավառներից գաղթած հայերի կողմից) բարբառների (Դավթյան, 1966) վերացումը, որոնք հատկապես վերջին տասնամյակներում մեծապես ենթարկվել են ոչ միայն գրական ու խոսակցական հայերենի, այլև Ղարաբաղի բարբառի ազդեցությանը: Նույնը վերաբերում է նաև Հաղրութի և Շաղախի ենթաբարբառներին (Պողոսյան, 1965; Դավթյան, 1966; Սարգսյան, 2009):

Այս ամենը վկայում է, որ Ղարաբաղի բարբառը լեզվական նոր միջավայրում աստիճանաբար ավելի շատ կենթարկվի գրական ու խոսակցական հայերենի ազդեցությանը, ինչը խոսում է այն մասին, որ հայերենի մյուս բարբառների նման արցախահայերի հաղորդակցման հիմնա-

կան միջոցը զարգացման հեռանկարներ չունի և ի վերջո դատապարտված է վերացման:

Անկախ նրանից, թե ինչպիսի քաղաքական իրավիճակ է սպասվում առաջիկայում, և կլուծվի արդյոք արցախահայերի վերադարձը հայերենի երկրամաս, այսօր Ղարաբաղի բարբառի, որպես Արցախի ոչ նյութական մշակույթի պահպանումը լուրջ մարտահրավեր է, ինչը հրատապ է դարձնում նրա ուսումնասիրումը, բարբառով բանահյուսական և ազգագրական նյութերի հավաքումը, Արցախի ժողովրդագրիտուլթյանը նվիրված գիտաժողովների, գիտական քննարկումների, մշակութային և տարաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումը, գիտական ու գիտահանրամատչելի աշխատությունների և ժողովածուների հրատարակումը: Ոչ պակաս կարևորություն ունեն նաև համացանցում բացված «Արցախի բարբառը», «Արցախյան խոսք», «Արցախի շեները» և այլ սոցցանցային խմբերը:

Եզրակացություններ

Ղարաբաղի բարբառը հայերենի կենդանի բարբառներից ամենակենսունակն ու տարածվածն է, որը, սակայն, հատկապես վերջին տասնամյակներում ենթարկվել է գրական և խոսակցական հայերենի, ինչպես նաև ռուսերենի խիստ ազդեցությանը՝ կորցնելով որոշ առանձնահատկություններ:

Փոփոխություններ են կատարվել հնչյունական, ձևաբանական, շարահյուսական, բառապաշարային համակարգերում, որոնք, ունենալով շարունակական բնույթ, ի վերջո կհանգեցնեն բարբառի ձուլմանը գրական հայերենին:

Գործընթացը լուրջ մարտահրավեր է դարձել հատկապես 2023թ. սեպտեմբերին ողջ արցախահայության բռնի տեղահանման հետևանքով, ինչը Ղարաբաղի բարբառի ուսումնասիրումը, նրանով ժողովրդագրիտական նյութերի հավաքումը, գիտաժողովների, գիտական քննարկումների, մշակութային և տարաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումը, գիտական ու գիտահանրամատչելի աշխատությունների և ժողովածուների հրատարակումը դարձնում է հրատապ:

ARMEN SARGSYAN
SHOGER MINASYAN

DIALECT OF KARABAKH. CURRENT STATE AND DEVELOPMENT PROSPECTS

Summary

The Karabakh dialect is the most popular and active of the living dialects of Armenian, which, according to the opinions of many linguists, is used by 500,000-1,000,000 Armenians who lived in the Republic of Artsakh, the Republic of Armenia and abroad. It is distinguished by its phonetic peculiarities and rich vocabulary. However, over the centuries and especially in recent decades, due to unifying circumstances, the dialect has been gradually influenced by the literary Eastern Armenian language and the colloquial language and losing a number of features. After the 44-day war in 2020 and especially the forced displacement of the entire population of Artsakh in 2023, that process has become a serious challenge. This article examines the changes made at the phonetic, grammatical and lexical levels of the dialect, which proves that, like other dialects of Armenian, the main means of communication of Artsakh Armenians has no prospects for development and will eventually be subject to elimination. Parallel to that, are presented the prospects of preserving the dialect as an intangible culture of Artsakh, its study is emphasized, the collection of folklore and ethnographic materials in the dialect, the organization of conferences, scientific discussions, cultural and various other events dedicated to the demography of Artsakh and the collection and publication of scientific works.

Keywords - Karabakh dialect, literary Armenian, colloquial Armenian, phonology, morphology, syntax, vocabulary, forced displacement, influence, challenge.

Հապավումներ

ԱրՊՀ	- Արցախի պետական համալսարան
«ԲԵՀ»	- «Բանբեր Երևանի համալսարանի»
ԳԱ	- Գիտությունների ակադեմիա
Ե.	- Երևան
ԵՊՀ	- Երևանի պետական համալսարան
«ԷԱԺ»	- «Էմինեան ազգագրական ժողովածու»
«ԼՀԳ»	- «Լրաբեր հասարակական գիտությունների»
«ՀԲԱ»	- «Հայերենի բարբառագիտական ատլաս»
հ.	- հատոր
ՀՄԻ	- Հեռակա մանկավարժական ինստիտուտ
ՀՍՍՀ	- Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն
ՀՍՍՌ	- Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա
հրատ.	- հրատարակչություն
Մ-ն.	- Մոսկվա-նոր Նախիջևան
պր.	- պրակ
Ս.	- Սուրբ
Ստ.	- Ստեփանակերտ
Վ.	- Վաղարշապատ
տպ.	- տպարան
ИАН	- Императорская академия наук
П.	- Петроград
СП.	- Санкт-Петербург
стр.	- страниц
тип.	- типография

Գրականություն

Աբեղեան Մ., 1890, Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը արեւելեան ճիւղի բարբառների մէջ, «նոր դար», №141, էջ 1-2, №141, №142, էջ 1-2, №143, էջ 1-2, №144, էջ 1-2, №145, էջ 1-2:

Աբրահամյան Ս., 1955, Դիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ», №7, էջ 65-73:

Աղաբեկյան Մ., Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, «ՀԲԱ», պր. 3, Ե., «Նաիրի», էջ 54-165:

Աղայան Ղ. 1898, Ո տառի հնչյունը Ղարաբաղի բարբառում, «Տարազ», № 48, էջ 1090:

Աղայան Ղ. 1899, Տէր, տար եւ դէր բառերը Ղարաբաղի բարբառում, «Տարազ», № 6, էջ 152:

Աճառեան Հր., 1901, Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան. Գ. Քննութիւն Ղարաբաղի բարբառին, Վ., տպ. Մայր ամոռոյ Ս. էջմիածին, 199 էջ:

Աճառեան Հր., 1911, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), «Էմփ», Մ-ն., հ. Ը, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ., 328 էջ:

Դավթյան Կ., 1966, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 508 էջ:

Ղարիբջան Ա., 1947, Հայ բարբառագիտություն, Ե., ՀՄԻ հրատ., 296 էջ:

Մարգարյան Ա., 1975, Գորիսի բարբառը, Ե., ԵՊՀ հրատ., 568 էջ:

Մարգարյան Ա., 2015, Ստուգաբանություններ, Ե., ԵՊՀ հրատ., 210 էջ:

Մինասյան Շ., 2007, Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստ., «Գիգակ պլյուս», 128 էջ:

Պետրոսյան Հ., 1986, Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմը, «ԲՆՀ», №2, էջ 45-55:

Պողոսյան Ա., 1965, Հազրութի բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 372 էջ:

Ջահուկյան Գ., 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ:

Ջահուկյան Գ., 1991, Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին, «ԼՀԳ», № 5, էջ 52-58:

Սարգսյան Ա., 2009, Շաղախի ենթաբարբառը Հազրութի ենթաբարբառի միջավայրում, Ստ., ԱրՊՀ հրատ., 104 էջ:

Սարգսյան Ա., 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., «Էդիթ Պրինտ», 846 էջ:

Սարգսյան Ա., 2019ա, Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության, Ե., «Էդիթ Պրինտ», 156 էջ:

Սարգսյան Ա., 2019բ, Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության, Ե., «Էդիթ Պրինտ», 120 էջ:

Սարգսյան, Ա., Մինասյան Շ., 2017, Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Ե., 2017, «Էդիթ Պրինտ», 568 էջ:

Ուլուբաբյան Բ., 1968, Հայոց լեզվի հյուսիս-արևելյան եզրի և հարակից հարցերի մասին, «ԼՀԳ», №1, էջ 51-77:

Адоныч Н., 1915, Дионисий Фракийский и армянские толкователи, П., туп. ИАН, СХСIII, 307 стр.

Патканов К., 1869, Исследование о диалектах армянского языка, СП., туп. ИАН, 114 стр.

**ԹՎԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ.
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐԻ

*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական քարտուղար,
ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
բանաստիճական գիտ. թեկնածու, դոցենտ*

Թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց լեզվաբանության մեջ ի հայտ եկան նոր գիտակարգեր, որոնք մի կողմից ասպարեզից դուրս են մղում նախկինում գործառող գիտակարգերը, մյուս կողմից էլ՝ սկսում են կենտրոնական դեր զբաղեցնել լեզվաբանական հետազոտությունների բնագավառում: Այժմ մենք ապրում ենք թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, և անվերապահորեն կարող ենք ասել, որ թվային այս դարաշրջանում գործ ունենք թվային լեզվաբանության հետ, որն ունի միջգիտակարգային բնույթ, և որի ուսումնասիրության մեջ գերիշխող է դառնում ֆանկական մոտեցումը:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել լեզվաբանական գիտական հարացույցի փոփոխությունները թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, անդրադառնալ այս փոփոխությունների դրական և բացասական կողմերին, վեր հանել թվային լեզվաբանության առանձնահատկությունները և դրա հիման վրա թվային հայագիտության զարգացման միտումները և խնդիրները: Մեր խնդիրն է նաև ցույց տալ հայագիտական գիտակարգերի համակարգի տեղաշարժերը, փոխակերպումները և զարգացման հեռանկարները:

Հիմնաբառեր - թվային լեզվաբանություն, թվային հայագիտություն, հայագիտական գիտակարգեր, լեզվաբանական գիտական հարացույց

Ներածություն

Գիտություն զարգացման յուրաքանչյուր փուլում գոյություն ունեն լեզվի տարբեր ըմբռնումներ, որոնք հանդես են գալիս լեզվաբանական հոսանքների ու հայեցակարգերի ձևով: Լեզվաբանները լեզվի բնույթի, ծագման, զարգացման ու գործառնական հարցերը քննելիս ելնում են գոյություն ունեցող ընդհանուր ըմբռնումներից կամ առաջ են քաշում սեփական ըմբռնումներ, որոնք, սակայն, լեզվաբանության զարգացման տարբեր փուլերում տարբեր կերպ են դրսևորվում:

20-րդ դարի երկրորդ կեսին թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնների ազդեցությամբ սկսվեց, և 21-րդ դարում արդեն հաղթահարվեց լեզվի ուսումնասիրության միակողմանի ուսումնասիրությունը: Լեզվաբանները սկսում են գիտակցել, որ լեզվաբանությունը մեծ հաջողությունների կարող է հասնել այն դեպքում, եթե մի ուղղության ձեռքբերումները կիրառվեն մյուս ուղղության ներկայացուցիչների կողմից: Երկու ուղղությունների մերձեցման արտաքին ազդակ եղավ գիտությունների մերձեցման ընդհանուր միտումը՝ գիտական իմացությունների բնագավառների միավորման ուժեղացումը: Հատկապես կարևոր դեր ունեցավ այնպիսի բնագավառների և գիտակարգերի առաջացումը, որոնք կապ են ստեղծում տարբեր գիտությունների միջև:

Լեզվաբանության պատմության նորագույն շրջանում մի կողմից ի հայտ եկան հիմնական և հարակից գիտակարգեր, մյուս կողմից՝ սկսեցին սահմանազատվել տեսական և կիրառական լեզվաբանության ուսումնասիրության բնագավառները, մեծացավ անդրտեսության և անդրլեզվաբանության դերը, որը նաև մի բնագավառի կարևոր ձեռքբերումները դարձրեց մյուսների ձեռքբերումները: Եվ այսպես, լեզվաբանության մեջ ի հայտ եկան նոր միտումներ, իսկ դրան զուգընթաց՝ արվեցին լեզվաբանական գիտակարգերի դասակարգման առաջին փորձերը:

Եթե 21-րդ դարասկզբին լեզվաբանությունը ներփակ, իմանենա վիճակից աստիճանաբար անցում է կատարում դեպի արտաքին գործոնների նկատմամբ քիչ թե շատ ազատ վիճակի, ապա ներկայումս լեզվաբանությունը ազատ փոխգործակցում է այլ գիտությունների հետ: Հետևաբար կարելի է ենթադրել, որ ներփակ լեզվաբանությունը աստիճանաբար վերածվում է միջգիտակարգային, մարդաբանական լեզվաբանության:

Էվոլյուցիոն լեզվաբանության խնդիրներով զբաղվող հետազոտողները, ինչպես օրինակ Լայպցիգի Մաքս Պլանկի անվան Էվոլյուցիոն մարդաբանության ինստիտուտի պրոֆեսոր Մարտին Հասփելմատը, անդրադառնալով լեզվաբանության զարգացմանը, ընդգծում են, որ ներկայումս

լեզվաբանությունը ավելի քանակական է դառնում (Haspelmath, 2010): Շարահյուսության, ձևաբանության և հնչյունաբանության ուսումնասիրության մեջ ավելի ու ավելի գերիշխող է դառնում քանակական մոտեցումը: Կորպուսային լեզվաբանությունը սկսում է կենտրոնական դեր գրավել լեզվաբանական հետազոտությունների բնագավառում, ինչպես նաև աճում է փորձարարական հետազոտությունների դերը թե՛ քերականության բոլոր բնագավառներում, թե՛ հնչյունաբանությունից մինչև պրագմատիկա (Dziubalska-Kotaczyk, 2014): Լեզվի տիպաբանությունը նույնպես ավելի քանակական է դառնում, կարևորվում է բարդ վիճակագրության կիրառումը (Balthasar, 2015): Դա նկատելի է հատկապես լեզվաբանական հանդեսները թերթելիս: Եթե նախքան 21-րդ դարը հոդվածների մի փոքր մասն էր միայն զանազան աղյուսակներ պարունակում, ապա այժմ դժվար չէ նկատել, որ աղյուսակների, վիճակագրական գրաֆիկների առկայությունը ուսումնասիրություններում դարձել է անհրաժեշտություն: Մեկ այլ միտում էլ կա. Պատմական լեզվաբանությունը ևս սկսում է քանակական դառնալ: Որքան աճում է քանակական մոդելավորման բարդությունը, այնքան ավելի է մեծանում հետաքրքրությունը այս բնագավառի նկատմամբ (“Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Family,” 2012): Քանակական մեթոդների կիրառման այս միտումը նաև դրական կողմ ունի: Հետազոտողները այսուհետ իրենց ենթադրությունները և եզրահանգումները կարող են հիմնավորել թվային կոնկրետ փաստերով:

Ինչպես նկատել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում, վերջին տասնամյակում ի հայտ եկած և հստակ ձևավորված ուղղությունները գիտական հարացույցների փոփոխություն են նախապատրաստում (Sargsyan, 2017), Թ. Կունի բնորոշմամբ գիտական հեղափոխություն է նախապատրաստվում (Kuhn, 2009): Իհարկե, սա պետք է դիտարկել որպես դրական տեղաշարժ, քանի որ այս ամենը լեզուն համակողմանիորեն ներկայացնելու միտում ունի: Օրինակ՝ լեզվի գործառնական բնագավառի նկատմամբ հետաքրքրությունը ի հայտ է բերել այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են քաղաքական և իրավական լեզվաբանությունները, լեզվի և մշակույթի, լեզվի և սեռի փոխհարաբերության ուսումնասիրությունները ի հայտ են բերել լեզվամշակութաբանությունը, էթնոլեզվաբանությունը, գենդերային լեզվաբանությունը: Իսկ օրինակ էլեկտրոնային հաղորդակցումը հիմք է դարձել համացանցային լեզվաբանության առաջացման համար:

Հետևաբար՝ ժամանակակից լեզվաբանությունը կարելի է բնորոշել որպես բազմաֆունկցիոնալ, ինչպես և Կուբրյակովան է բնորոշում, բազմահարացույցային (Kubryakova, 1995): Թվում է, թե լեզվաբանությունը բազմահարացույցային է, որովհետև նրա ուսումնասիրության օբյեկտն է ինքնին բարդ և բազմատարր, բայց ոչ: Նկատի ունենալով այն, որ ժամանակակից լեզվաբանության գիտական հարացույցը մարդակենտրոն է, և հետևաբար այդ հարացույցի բոլոր բաղադրիչները ուղղված են մեկ նպատակի՝ բացահայտել մարդու էական հատկանիշները, ապա կարող ենք փաստել, որ այժմ լեզվաբանությունը բազմահարացույցային է, որովհետև նախևառաջ այդպիսին է հենց լեզուն կրողը՝ մարդը: Այսինքն՝ լեզվաբանական այս հարացույցի փոփոխությունամբ առաջացած նոր և նորագույն ուղղությունները նպատակ ունեն բացահայտելու լեզվի գործառնական առանձնահատկությունները ժամանակակից գլոբալիզացիայի, թվային նորագույն տեխնոլոգիաների ժամանակաշրջանում գործառույթ մարդու էվոլյուցիայի համատեքստում:

Թվային լեզվաբանությունը որպես նոր ուղղություն

Այժմ մենք ապրում ենք թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, և այսօր առավել քան երբեք ժամանակակից հաղորդակցման տեխնոլոգիաների շնորհիվ հեռավորությունը գրեթե մեծ դեր չունի, ինչպես նախորդ դարում: Այժմ հասանելի են ոչ միայն աշխարհի տարբեր ծայրերի լեզվաբանական հետազոտական կենտրոնների աշխատակիցների հետ կապը, այլև տարբեր գիտական հանդեսները և գիտական գրականությունը: Ներկայիս լեզվական խոշոր կորպուսները, էվոլյուցիոն կենսաբանության բնագավառի վերլուծական մեթոդները, գրաֆիկական վերլուծությունները, վիճակագրական մեթոդները հնարավորություն են տալիս լեզուն ուսումնասիրել և լեզվական երևույթները ներկայացնել բազմակողմանիորեն (Langendoen, 2002): Անվերապահորեն կարող ենք ասել, որ թվային այս դարաշրջանում գործ ունենք թվային լեզվաբանության հետ, որն ունի միջգիտակարգային բնույթ, և որի ուսումնասիրության մեջ գերիշխող է դառնում քանակական մոտեցումը:

Թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց լեզվաբանության մեջ ի հայտ եկան նոր գիտակարգեր, որոնք մի կողմից ասպարեզից դուրս են մղում նախկինում գործառույթ գիտակարգերը, մյուս կողմից էլ սկսում են կենտրոնական դեր զբաղեցնել լեզվաբանական հետազոտությունների բնագավառում: Այսպես, օրինակ՝ 20-րդ դարի 60-70-ական թթ.-ից կառուցվածքային լեզվաբանության մեջ սկսեցին ակտի-

վորեն կիրառվել մաթեմատիկական և կիրեռնետիկայի մեթոդները՝ պայմանավորված մաթեմատիկական լեզվաբանության առաջացմամբ: Մաթեմատիկական լեզվաբանության առաջամարտիկներ կային ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ ԱՊՀ երկրներում: Բավական է նշել միայն մաթեմատիկական լեզվաբանության մեջ ելակետային համարվող սերող քերականության սկզբունքներն ու մեքենական թարգմանության վերաբերյալ տեսական եզրակացություններ ներկայացրած, կադապարման մեթոդը մշակող և կիրառող հետազոտողներին (Յու. Ապրեսյան, Գ. Ջահուկյան) (Apresyan, 1966):

Այժմ, շնորհիվ թվային նորագույն տեխնոլոգիաների զարգացման, մաթեմատիկական լեզվաբանությունը ոչ միայն ամրապնդել է իր դիրքերը որպես լեզվաբանական նոր ուղղություն, այլև արդեն իսկ ունի զարգացման իր նոր ճյուղերը, ինչպիսիք են համակարգչային լեզվաբանությունը, կորպուսային լեզվաբանությունը, համացանցային լեզվաբանությունը:

Լեզվաբանությունը կարծես փոխում է իր բնույթը՝ տեսական դաշտից փոխադրվելով գեպի փորձարարական դաշտ: Գրեթե բոլոր գիտակարգերում (քերականություն, հնչյունաբանություն, պրագմատիկա) մեծացել է փորձարարական հետազոտությունների դերը: Հետևաբար՝ բոլորովին զարմանալի չէ, որ լեզվամշակութաբանությունը, լեզվաշխարհագրությունը, էթնոլեզվաբանությունը, որոնք ձևավորվել էին գեռես նախորդ դարում, այժմ ավելի փորձարարական բնույթ ունեն, հետազոտության տեսական և նկարագրական բնույթը փոխարինվել է գործնական, դաշտային աշխատանքներով: Մյուս կողմից՝ սրանց զուգահեռ ասպարեզ են եկել փորձարարական բնույթով այլ գիտակարգեր, ինչպես, օրինակ՝ ռեֆլեքսային լեզվաբանությունը, սուզգեստիվ լեզվաբանությունը, իրավական լեզվաբանությունը, քաղաքական լեզվաբանությունը, գենդերային լեզվաբանությունը:

Ակտիվ փոփոխություններ են նկատվել նաև լեզվաբանական գիտակարգերի ուսումնասիրության մեթոդաբանության մեջ: Այսպես, օրինակ՝ քանակական մեթոդների կիրառումը դարձել է անխուսափելի, սկսել է կարևորվել վիճակագրական մեթոդի կիրառումը: Պատմական լեզվաբանությունը, որը դարեր շարունակ հիմնականում հեռու է եղել այս ամենից, այժմ աստիճանաբար դառնում է քանակական:

Բավական նշանակալի փոփոխություններ եղան թվային լեզվաբանության զարգացման մեջ, երբ 20-րդ դարավերջին եվրոպայում սկսեց ձևավորվել Թվային հումանիտար գիտությունների եվրոպական ասո-

ցիաքիան (ի սկզբանե որպես Text Encoding Инициатива (TEI), 2013-ից որպես European Digital Humanities Association (EADH)) (Text Encoding Initiative, n.d.): 2016 թ. արդեն նման ասոցիացիա ձևավորվեց ԱՊՀ երկրներից Ռուսաստանում, որը 2018-ից ընդգրկված է Թվային հումանիտար գիտությունների եվրոպական ասոցիացիայի կազմում, ընդ որում՝ ԱՊՀ երկրների կազմում դեռևս միակն է (The Russian Association of Digital Humanities Has Joined the EADH, n.d.): Այսպիսով՝ տարածաշրջանում 2018 թվականից պաշտոնապես սկսվեց համագործակցությունը Թվային հումանիտար գիտությունների և նաև Թվային լեզվաբանության զարգացման ուղղությամբ: Պետք է նշել, որ աշխատանքները բազմատարր են, հիմնականում ենթադրվում է տեքստերի վերլուծություն և շտեմարանների հետ աշխատանք:

Թվային լեզվաբանությունը աստիճանաբար մուտք է գործում նաև կրթական ոլորտ: Թե՛ ԱՊՀ երկրներում, թե՛ ամբողջ աշխարհում այժմ բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ աստիճանում առաջարկվում են նոր մասնագիտացումներ՝ հաշվի առնելով ձևավորված ակտուալ նոր գիտակարգերը: Բավական մեծ հեղինակություն են ձեռք բերել հետևյալ մասնագիտացումները՝ «Համակարգչային լեզվաբանություն», «Հաշվողական լեզվաբանություն», «Թվային բանասիրություն», «Բանական համակարգերը հումանիտար ոլորտում», «Թվային լեզվաբանություն» և այլն:

Թվային հայագիտությունը որպես նոր գիտակարգ

Թվային հայագիտությունը ի հայտ է գալիս որպես առաջամարտիկ ոլորտ, որը հեղափոխում է հայոց լեզվի, մշակույթի և պատմության ուսումնասիրությունը Թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Այս միջգիտակարգային տիրույթն իր մեջ միավորում է մի շարք գիտակարգերի մեթոդաբանություններ և գործիքակազմ, ինչպես օրինակ՝ հաշվողական կամ համակարգչային լեզվաբանությունից, կորպուսային լեզվաբանությունից և առհասարակ Թվային հումանիտար գիտություններից: Կիրառելով այդ նոր մոտեցումները՝ Թվային հայագիտությունը ոչ միայն բերում է նոր և թարմ պատկերացումներ հայ լեզվաբանության մեջ, այլև միջազգային համագործակցային և հետազոտական նոր հնարավորություններ է ստեղծում:

Առավելություններ

Թվային հայագիտությունը հնարավորություն է տալիս ստեղծելու թվային տվյալների հսկայական շտեմարաններ՝ հետազոտողներին օգնելով իրականացնել այնպիսի լայնածավալ վերլուծություններ, որոնք նախկինում անիրագործելի էին կամ անհնարին: Հաշվողական լեզվաբանության միջոցով հետազոտողները կարող են թվային տիրույթում ներկայացնել լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները, հետևել լեզվի էվոլյուցիոն զարգացմանը և բացահայտել հայերեն տեքստերի օրինաչափությունները՝ ըստ տարբեր ժամանակաշրջանների: Այժմ հաշվողական լեզվաբանությունը վճռորոշ դեր է խաղում թվային հայագիտության մեջ՝ հայոց լեզվի տվյալների մեծածավալ վերլուծության համար: Բնական լեզվի մշակման (NLP), մեքենայական ուսուցման և կորպուսային լեզվաբանության միջոցով հետազոտողները կարող են խորությամբ և ճշգրտությամբ քննել լեզվական այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են լեզվի էվոլյուցիան, տարածական տարբերակները, իմաստային անցումները և այլն: Այդ հաշվողական մեթոդները թույլ են տալիս իրականացնելու լեզվաբանական վերլուծություններ, որոնք լրացնում են բանասիրական ավանդական մոտեցումները՝ նոր պատկերացումներ տալով հայոց լեզվի կառուցվածքային հատկությունների և պատմական զարգացման վերաբերյալ:

Այդ մոտեցումները ոչ միայն ամրապնդում են հայոց լեզվի պատմական զարգացման մեր ըմբռնումը, այլև այն հարստացնում են մշակութային և հասարակական նոր նրբերանգներով:

Ինչպես թվային լեզվաբանությունն առհասարակ, այնպես էլ թվային հայագիտությունը կիրառում է թվային հումանիտար գիտությունների հարուստ և միջգիտակարգային մեթոդական գործիքակազմը՝ թվայնացնելու, պահպանելու և տարածելու հայկական մշակութային ժառանգությունը, ինչպիսիք են ձեռագրերը, վիմագիր արձանագրությունները և արվեստի ու մշակույթի այլ գործերը՝ ապահովելով դրանց բաց հասանելիությունը աշխարհի ցանկացած ծայրի հետազոտողի համար, ինչպես նաև պահպանումը ապագա սերունդների համար: Այժմ թվային շտեմարանների և առցանց ցուցադրությունների միջոցով հայկական մշակութային ժառանգությունն այլևս չունի աշխարհագրական սահմաններ:

Այս ուղղության կամ գիտակարգի ձևավորման դրական կողմերից մեկն էլ այն է, որ լեզվաբանության, պատմության, հնագիտության, ազգագրության, մարդաբանության և համակարգչային գիտությունների փոխգործակցության միջոցով լուծվում են հետազոտական բարդ խնդիրներ, որոնք անհնար է լուծել միայն տվյալ նեղ գիտակարգի շրջանակում՝

առանց համադրելու որակական և քանակական մեթոդները: Այս համագործակցային մոտեցումը ոչ միայն ընդլայնում է հետաքննության շրջանակը, այլև մեծացնում է հայոց լեզվի և մշակույթի վերաբերյալ գիտական հետազոտությունների ճշգրտությունը:

Թվային հայագիտությունը որդեգրել է նորարարական մեթոդներ և մոտեցումներ, որոնք կապ են ստեղծում ավանդական հայագիտական ուսումնասիրությունների և ժամանակակից հաշվողական և թվային հումանիտար գիտությունների միջև: Օրինակ՝ բնական լեզվի մշակման (NLP) տեխնիկան թույլ է տալիս ավտոմատացված եղանակով վերլուծել հայերեն տեքստերը՝ դրանով իսկ ոչ միայն հեշտացնելով հետազոտական գործընթացը, որը նախկինում տարիներ էր պահանջում, այլև մեծացնելով հայերենի դերը, նշանակությունը և կիրառությունը թվային տիրույթում:

Մարտահրավերները

Թեև թվային հայագիտությունը հսկայական հնարավորություններ է ստեղծում հայոց լեզվի, հայկական մշակույթի և հայոց պատմության ուսումնասիրությունները զարգացնելու համար, այնուամենայնիվ թվային հայագիտության առջև ծառացած են նաև որոշ մարտահրավերներ: Քննենք դրանցից մի քանիսը:

Տվյալների անմատչելիություն

Թվային հայագիտության առաջնային մարտահրավերներից մեկը թվային տվյալների անհասանելիությունն ու անմատչելիությունն է: Հայկական մշակութային ժառանգության նմուշները, ձեռագրերը և պատմական փաստաթղթերը հաճախ ցրված են աշխարհի տարբեր հաստատություններում՝ ստեղծելով խնդիրներ թվայնացման և կենտրոնացված հասանելիություն ապահովելու համար: Շատ արժեքավոր ռեսուրսներ հաճախ մնում են անհասանելի սահմանափակ ֆինանսավորման, տեխնոլոգիական խնդիրների կամ իրավական սահմանափակումների պատճառով: Տվյալների մատչելիության ապահովումը, կարծում ենք, պահանջում է ակադեմիական հաստատությունների, գրադարանների, արխիվների և մշակութային կազմակերպությունների համատեղ ջանքեր՝ իրենց հավաքածուները թվայնացնելու և բաց մատչելիությամբ ներկայացնելու համար: Դրան մեծապես կարող են նպաստել թվային շտեմարանների և առցանց գրադարանների համալրման աշխատանքները:

Լեզվական կորպուսների ստանդարտացում

Լեզվական կորպուսների ստանդարտացումը թվային հայագիտության էական և առաջնային մարտահրավերներից է: Կորպուսային և թվային լեզվաբանության հիմքում մշակված տեքստերի լայնածավալ շտեմարաններն են: Որքան լիարժեք են այդ շտեմարանները, այնքան ավելի մեծ են թվային տիրույթում տվյալ լեզվի գործառնման հնարավորությունները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հայերենի ներկայացվածությունը դեռևս շատ փոքր է: Որոշակի աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք մասնավոր նախագծեր են, ստեղծված են տարբեր սկզբունքներով և միասնական դարձնելու հնարավորություն չունեն: Դա խոչընդոտում է տարբեր լեզուներով համեմատական ուսումնասիրություններին և տվյալների փոխգործակցությանը: Այսպիսով՝ առաջնահերթ անհրաժեշտություն կա մեկ միասնական և միջազգային սկզբունքներին համահունչ հայերենի ազգային կորպուսի ստեղծումը:

Միջգիտակարգային մեթոդաբանության ինտեգրում

Թվային հայագիտությունը ընդլայնում է լեզվաբանների, պատմաբանների, հնագետների, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների և մշակութային ժառանգության փորձագետների միջգիտակարգային համագործակցությունը: Այնուամենայնիվ, տարբեր ոլորտների մեթոդաբանության ինտեգրումը մարտահրավեր է ներկայացնում հետազոտական առումով: Միջգիտակարգային հետազոտությունների համար նախևառաջ անհրաժեշտ են վերապատրաստման ծրագրեր, որոնք կնպաստեն միջոլորտային գիտելիքի սահուն փոխանակմանը և մեթոդական գործիքակազմի փոխանակմանը:

Հեռանկարները

Պատմական վերակառուցումներ: Թվային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս առցանց վերակառուցել հնագիտական վայրերը, արտեֆակտները և պատմական իրադրությունը: Հետևաբար՝ մեծ հեռանկարներ են բացվում հայոց պատմության և քաղաքակրթության ներկայացման համար: Համադրելով հնագիտական տվյալները լեզվաբանական և պատմական վերլուծությունների հետ՝ հետազոտողները կարող են վերականգնել անցյալը, ներկայացնել զարգացման օրինաչափությունները:

Միջմշակութային ուսումնասիրություններ: Թվային հայագիտությունը նպաստում է միջմշակութային ուսումնասիրություններին՝ զուգահեռ ներկայացնելով հայոց և այլ լեզուների լեզվական և մշակութային

երևույթները: Միջմշակութային ուսումնասիրությունները կարող են խթանել գլոբալիզացիայի մեր օրերում հայերենի դերի մեծացմանը և ներկայացվածությունը:

Ազգագրական և հանրալեզվաբանական ուսումնասիրություններ: Թվային հայագիտությունը կարող է խթանել հայ համայնքներում լեզվի կիրառման, ինչպես նաև լեզվի և ինքնության փոխազդեցությունների ուսումնասիրությանը:

Եզրակացություն

Անդրադառնալով էվոլյուցիոն լեզվաբանության բնագավառում կատարված վերջին հետազոտությունների արդյունքներին, ինչպես նաև համեմատելով լեզվի զարգացման տարբեր փուլերում գործառուղ լեզվաբանական գիտակարգերը՝ կարող ենք փաստել, որ այժմ՝ թվային տեխնոլոգիաների մեծ հնարավորությունների դարաշրջանում լեզվաբանական գիտակարգերը բավական հետաքրքիր փոխակերպումների են ենթարկվել, դրանց գերխնդիրն է լեզվի համակողմանի ներկայացումը, լեզվի գործառման կողմի բացահայտումը, լեզվի և այլ երևույթների միջև կապերի բացահայտումը և այլն: Լեզվաբանությունը մի կողմից ասպարեզից կորցրել է դասական գիտակարգերը, բայց մյուս կողմից ձեռք է բերել նոր գիտակարգեր, որոնք շատ ավելի գործնական բնույթ ունեն, և որոնց ուսումնասիրության արդյունքները հիմնավորված են թվային կոնկրետ փաստերով: Թվային նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ոչ միայն զբաղվել առանձին կոնկրետ լեզուների նկարագրությամբ, այլև լուծել տեսական և լեզվափիլիսոփայական խնդիրներ, հավասարապես զբաղվել թե՛ ներլեզվաբանական, թե՛ արտալեզվաբանական խնդիրներով:

«RBC Trends»-ն ուսումնասիրել է ռուս և արտասահմանյան ֆուտուրոլոգների կանխատեսումները և կազմել առաջիկա 30 տարիների ամենապահանջված մասնագիտությունների ցանկը (Education Trends, n.d.): Ապագայի մասնագիտությունների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում նաև թվային լեզվաբանի մասնագիտությունը, մինչդեռ լեզվաբանությունն իր դասական և «մաքուր» ձևով նույնիսկ չի ուրվագծվում այնտեղ: Այս փաստն արդեն իսկ ընդգծում է, որ դեռևս 20-րդ դարավերջից սկսված քանակական փոփոխությունները, որ տեղի են ունեցել լեզվաբանության զարգացման մեջ, այժմ դարձել են որակական փոփոխություն, և այսօր մենք տեսնում ենք լեզվաբանության զարգաց-

ման բոլորովին նոր որակ՝ թվային լեզվաբանության տեսքով, որն էլ հանդես է գալիս արդեն նորացված և բոլորովին նոր գիտակարգերով:

Թվային հայագիտության ապագան թվային արխիվների ընդլայնման, հաշվողական մեթոդաբանության կատարելագործման և միջգիտակարգային համագործակցության մեջ է: Հետևաբար՝ թվային հայագիտությունը դինամիկ և զարգացող ոլորտ է, որը, կիրառելով թվային տեխնոլոգիաների հնարավորությունները, առաջ է մղում հայագիտական հետազոտությունները՝ նպաստելով մշակութային պահպանմանն ու համաշխարհային ներգրավվածությանը: Համատեղելով հաշվողական լեզվաբանությունը, թվային հումանիտար գիտությունները և միջգիտակարգային համագործակցությունները՝ թվային հայագիտությունը ոչ միայն կարող է ներկայացնել հայոց լեզվի և մշակույթի բազմազանությունը, այլև նպաստել դրա պահպանմանն ու ներկայացմանը: Այսպիսով՝ թվային հայագիտությունը հանդես է գալիս որպես հայոց լեզվի և մշակույթի ուսումնասիրության փոխակերպման մի նոր փուլ՝ ընդլայնելով հայագիտական հետազոտությունների հորիզոնները: Անվերապահորեն կարող ենք ասել, որ թվային հայագիտության ապագան խոստումնալից է՝ չնայած իր առջև ծառացած մարտահրավերներին: Կիրառելով թվային տեխնոլոգիաների ողջ ներուժը՝ այս նոր ուղղությունը մեծ հեռանկարներ է ստեղծում հայ լեզվաբանության և մշակութային ժառանգության զարգացման համար՝ ապահովելով նաև պահպանումն ու տարածումը եկող սերունդների համար:

MERY SARGSYAN

DIGITAL ARMENIAN STUDIES AS A NEW DIRECTION: PROBLEMS AND CHALLENGES

Summary

Along with the development of digital technologies, new scientific disciplines appeared in linguistics, which, on the one hand, pushed the previously functioning scientific disciplines out of the arena and, on the other hand, began to occupy a central role in the field of linguistic research. Now, we live in the age of digital technologies, and we can unconditionally say that in this digital age, we are dealing with digital linguistics, which is interdisciplinary and is a study in which the quantitative approach is becoming dominant.

The purpose of this article is to present the changes in the linguistic and scientific paradigm in the era of digital technologies, reflect on the positive and negative aspects of these changes, highlight the features of digital linguistics, and, based on them, the trends and problems of the development of digital Armenology. Our task is also to show the Armenian studies system's shifts, transformations, and development perspectives.

Keywords - digital linguistics, digital Armenology, Armenological disciplines, linguistic scientific paradigm

Գրականություն

Aikhenval'd, A. I., & Dixon, R. M. W. (2006). *Grammars in Contact: A Cross-Linguistic Typology Volume 4 of Explorations in Linguistic Typology Oxford Linguistics (illustrated ed.)*. OUP Oxford.

Apresyan, U. D. (1966). *Ideas and methods of modern structural linguistics*. Education.

Associate & Partner organizations | EADH - The European Association for Digital Humanities. (n.d.). <https://eadh.org/associate-partner-organizations>

Balthasar, B. (2015). *Distributional Typology: Statistical inquiries into the dynamics of linguistic diversity*. In B. Heine & H. Narrog (Eds.), *The Oxford handbook of linguistic analysis (2nd edition, pp. 901–923)*. Oxford University Press. <https://doi.org/10.5167/uzh-109110>

Dziubalska-Kołaczyk, K. (2014, December). *Quo Vadis linguistics in the 21st century*. Diversity Linguistics comment. Hypotheses. Retrieved September 10, 2023, from <https://doi.org/10.58079/nst7>

Education Trends. (n.d.). RBC Trends. Retrieved August 5, 2023, from <https://trends.rbc.ru/trends/education/5d6e48529a794777002717b>

Hamp, E. (1964). *Dictionary of American Linguistic Terminology* (V. A. Zvegintsev, Ed.). Progress.

Haspelmath, M. (2010). *Comparative concepts and descriptive categories in crosslinguistic studies*. *Language*, 86(3), 663–687.

Jahukyan, G. (1999). *Universal Theory of Language: Prolegomena to Substantial Linguistics*. Institute of Linguistics RAS.

Kubryakova, E. S. (1995). *Evolution of linguistic ideas in the second half of the twentieth century*. *Language and Science of the Late 20th Century*, 144–234.

Kuhn, T. S. (2009). *The Structure of Scientific Revolutions*. In *Actual Problems of Modern Linguistics*, 17–41.

Langendoen, D. T. (2002). Review of Linguistics at the Beginning of the 21st Century. *Journal of Linguistics*, 38(3), 627–643.

<https://doi.org/10.1017/S0022226702001694>

Mapping the Origins and Expansion of the Indo-European Language Family. (2012). In *Science* (Vol 337, Issue 6097).

<https://doi.org/10.1126/science.1219669>

Sargsyan, M. (2017). Trends in the development of the theory of linguistics in recent decades. In *Proceedings of the Republican Conference dedicated to the 90th anniversary of V. A. Kosyan*. ASPU.

Stepanov, U. S. (1975). *Methods and Principles of Modern Linguistics*. Nauka.

Text Encoding Initiative. (n.d.). The European Association for Digital Humanities (EADH). Retrieved July 11, 2023, from <https://eadh.org/linguistics>

The Russian Association of Digital Humanities has joined the EADH. (n.d.). The Russian Association of Digital Humanities. Retrieved August 6, 2023, from <https://news.sfu-kras.ru/node/19885>

<https://doi.org/10.52027/801346-php-90>

a.bekmezian@ysu.am

**ԲԱՌԻՄԱՍՏԻ ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԿԵՐՏՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ)**

ԲԵՔՄԵԶՅԱՆ ԱՍՏՂԻԿ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, երևանի պետական
համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվ.
հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ*

Ներածություն

Գեղարվեստական պատկերը պատկերավոր մտածողության հիմնական միջոցն է և դրսևորման հնարավորությունը, և դարեր շարունակ գրականության գեղագիտական արժեքը իմաստավորվել է հատկապես պատկերի առանձնահատկությունների հիման վրա, բառային, բառակապակցային՝ ձևաբանական, շարահյուսական կառույցների ինչ-ինչ համադրումների, ֆերականական որոշակի կանոնների այլակերպություններով, թվացյալ «խախտումներով», որոնք հնարավորություն են ընձեռել ռեաբանական նորովի շեշտադրումներով առանձնացնել և կարևորել այս կամ այն բառիմաստը, միաբը, գաղափարը (դիցուք՝ բառակրկնությունների, շրջադասության, բացթողումի, աստիճանավորման, բաղաձայնության և առձայնության և այլ լեզվական պատկերավորման միջոցների կիրառությունը): Արդի հայ գրականության պատկերակերտման տիրույթում արդեն ժառանգաբար կիրառվող նմանակերպ միջոցներից զատ զուգահեռաբար շրջանառության մեջ են նաև պատկերի գեղարվեստականացման «նորաձև» հնարավորություններ՝ որպես բառի

հնչյունական, իմաստային այլաձև ընթերցումների տարբերակների առկայություն, իմաստարկ (заум), բացթողում (элипсис), երբ պատկերը ոչ միայն զգայական ընկալման գեղագիտական վայելք է ենթադրում, այլև մեկնաբանական, հետազոտական-տրամաբանական մոտեցում է պահանջում:

Հոդվածում կառուցվածաբանական և համեմատական փնտրյալն է ենթարկվում ժամանակակից հայ գեղարվեստական գրականության մեջ դրսևորվող գեղարվեստական պատկերի կառուցման վերոնշյալ սկզբունքը բանաստեղծ էդուարդ Հարենցի ստեղծագործությունների հիման վրա: Ուսումնասիրության առարկա են համդիսացել հեղինակի՝ բանաստեղծական տասնյակին մոտ ժողովածուները, վերլուծվել են վերնագրային նոր իմաստաբանության, մտքի գեղարվեստականացման բառային իմաստի երկակիացման, հնչյունի և տառի «նոր նակատագրի» և բառընկալման հնչյունաբանական տարընթերցումների համակարգերը հետազոտվող տիրույթում:

Հիմնաբառեր - գեղարվեստական պատկեր, լեզու, մտածողություն, բառիմաստ, շրջված պատկեր, բանաստեղծական տեմատ, բառիմաստի տարընթերցում, արդի պոեզիա, ընթերցման նոր տեսանկյուն, է. Հարենց:

Հետազոտության առարկան: Դեռևս անտիկ դարաշրջանից սկսած գեղարվեստական մտածողության նպատակն է եղել վերաիմաստավորել իրականությունը, կարևորել մարդկային հարաբերությունների առաջնահերթությունները, շեշտել հույզերի, ապրումների նախընտրելիությունները, հնարավոր խիտ տարածաժամանակային ընդգրկմամբ ներկայացնել մարդկային և համամարդկային խնդիրները, կատարսիսի միջոցով կատարելագործման հնարավորություն տալ մարդուն: Ինչպես արվեստի մյուս տեսակներում, գրականության մեջ նույնպես խնդրի լուծման ընդունելի և «կասկածելի» տարբերակներ են ներկայացվել: Ուստի գեղարվեստական գրականության ցանկացած դրսևորում դարավոր պատմության բոլոր ժամանակներում էլ ընկալման, վերլուծման, մեկնաբանման անհրաժեշտություն է ունեցել:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Յուրաքանչյուր դարաշրջանի հասարակական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական առանձնահատկություններից, բնականաբար, բխում է՝ ինչպես, ինչու, ինչ տեսանկյամբ և ինչ շեշտադրումներով անդրադառնալ գրական

տեքստին, կարևորել գաղափարական, դասակարգային, սոցիալական, հոգեբանական: Այս հարցադրումները որքան էլ փոխկապակցված, այնուամենայնիվ որոշակի տարաբնույթ շեշտադրումներ են ենթադրում գրական նյութի ընկալման և ընկալելի դարձնելու ոլորտում: Պատահական չէ, որ դարեր շարունակ կարևորվել են մեկնաբանության թեմատիկ, իմաստաբանական տեսանկյունները, արծարծված խնդիրների գեղարվեստականացման մեջ առանձնացվել են գաղափարաբանական հարցադրումները:

Հետազոտության նորույթը: Հատկապես 19-րդ դարից սկսած դիտարկման արդեն եղած սկզբունքներին զուգահեռ գրականության հետազոտման ոլորտ է դառնում նաև գրական երկի ձևակառուցվածքային շերտերի վերլուծության խնդիրը, քանի որ, ինչպես Հեգելն է նշում իր «Գեղագիտություն» աշխատության առաջաբանում, արվեստների դասական ընկալումը փոխարինվում է ստեղծագործության վերլուծմամբ, բացատրությունների անհրաժեշտությամբ, որով ըստ էության սկսվում է արվեստների դասականության ավարտը (Гегель, 1938, 1-74): Այս դիտարկումը խիստ կարևորվում է նրանով, որ ուղղորդում է ոչ միայն արվեստների ընկալման փոփոխության գիտակցումը, այլև մեկնաբանման դաշտի մի նոր, մինչ այդ չփորձարկված հնարավորությունների առկայությունը: Եվ իսկապես, արդեն 19-րդ դարում ձևավորված բազմաթիվ գրական-գեղարվեստական ուղղությունները, մեթոդաբանական փնտրտուքները, նոր ոճերի և ձևերի ընդգծված ու բուռն կիրառությունը անհրաժեշտություն են առաջացնում նոր մոտեցումների նաև գրականագիտության, բանասիրության ասպարեզում, և այս փոխադարձությունը արդեն շուրջ երկու դար անընդելի է, որքան էլ «դասական» ընկալվող գրականագիտությունը շարունակում է իր ավանդական վերլուծությունների սկզբունքը կիրառել նաև գրական ստեղծագործությունների վերլուծությունների տիրույթում:

Մեթոդաբանությունը: Հոգվածում փորձ է արվում կառուցվածքաբանական, տեքստաբանական վերլուծությունների միջոցով ներկայացնել և արժեքներ գրական տեքստում պատկերակերտման նոր ձևերն ու հնարավորությունները:

Նպատակն ու խնդիրները: Ժամանակակից գրականության և գրականագիտության հիմնական խնդիրը յուրաքանչյուր նոր, մինչ այդ գրական ասպարեզում չհիմնավորված երևույթի նկատմամբ «հանդուրժողականություն» անհրաժեշտությունն է, երևույթի ընկալման և վերլուծման թեկուզ փորձի անհրաժեշտությունն է, այն դիտարկելն է գրական

ընդհանուր դաշտի համապատկերում: Այս ուսումնասիրությունը նման մի փորձ է: Խոսքը արդի հայ պոեզիայում պատկերակերտման նոր սկզբունքների, հնչյունի, բառի նորովի իմաստավորման դրսևորումներին է վերաբերում. դրսևորումներ, որոնք առկա են թե՛ արձակում, թե՛ բանաստեղծության մեջ, և մասնավորապես էդուարդ Հարենցի ստեղծագործության գեղարվեստական պատկերաստեղծման հիմնական համակարգն են:

Բուն նյութ

Գեղարվեստական գրականության պատկերային համակարգը նրա կայացման հիմնական նախապայմանն է և կայացման միջոցը: Ընդ որում «պատկեր» հասկացությունը բազմիմաստ ընկալում և ձևակերպում կարող է ունենալ. պատկերային մտածողական հատկանիշների արտահայտություն՝ պատկեր-կերպարի, պատկեր-ապրումի, պատկեր-գործողության և նմանատիպ կառույցների ձևով, կարող է ընկալվել նաև լեզվական-խոսքային կառույցների ձևով՝ լեզվի բառապաշարային հատկանիշներ, բառի ձևաբանական և շարահյուսական համակարգեր, ընդհանուր կառուցվածքաբանական և տեքստի մեթոդաբանական իմաստավորման տեսքով: «Գեղարվեստական պատկերը աշխարհի ճանաչողության և վերափոխման միջոցներից մեկն է» (Տոցաթ, 1974, 241): Գեղարվեստական պատկերի խնդիրը հատկապես սկզբունքային նշանակություն է ձեռք բերել 19-րդ դարում, երբ ընդհանրապես արվեստի, մասնավորապես գրականության ուսումնասիրության ոլորտում վերլուծության և ընդհանրացման խնդիրը սկսում է դառնալ մեկնաբանության անհրաժեշտության ոլորտ: Այս խնդիրը ընդգծվածորեն կարևորված է ժամանակակից գրականության ընկալման առումով⁶: Օրինաչափ է, որ 20-րդ դարի գրականագիտությունը բազում տեսանկյուններից քննել և փորձել է համակարգել գեղարվեստական պատկերի այլաձևությունները նոր ժամանակների գրականության մեջ: «XIX դարում բառախաղը համարվում էր «սրամտության ցածր ձև»... Սակայն բառախաղից լայնորեն ու լրջորեն օգտվել են Բարոկկոյի և

⁶ Այս կապակցությամբ տե՛ս Ալվարդ Սեմիրյան-Քեքմեզյան, Վավերագրումի գեղարվեստական նշանակությունը արդի հայ գրականության մեջ. վավերագրումը՝ որպես գեղարվեստական հնարք, «Հայագիտական հանդես», 2022թ., նո.1/55/, էջ 67-82, և «Վավերագրումի գեղարվեստական նշանակությունը արդի հայ գրականության մեջ. դոկումենտը՝ որպես կոմպոզիցիոն ձև, «Հայագիտական հանդես», 2022թ., նո.2/56/, էջ 62-77:

ժամանակակից բանաստեղծները, որպես գաղափարների կրկնապատկում, «համաձայնությ» կամ «համանունություն», որպես մտածված «երկիմաստություն» (Ուելլեք, Ուորեն, 2008, 282-283):

Մեր օրերում հնչյունի, բառի, բառակապակցության գեղագիտությունը ձեռք է բերել նոր մակարդակ և մեկնաբանական-հետազոտական ընկալման անհրաժեշտություն, որ գեղարվեստական տեքստի ձևավորման մեջ դրսևորվում է որպես.

ա. վերնագրային նոր իմաստաբանություն,

բ. մտքի գեղարվեստականացման բառային երկակիություն և տարրնթերցում,

գ. հնչյունի և տառի «նոր ճակատագիր» բառընկալման դաշտում:

Գեղարվեստական լեզվամտածողության նմանատիպ ինքնատիպությունը դրսևորվում է մասնավորապես էդ. Հարենցի բանաստեղծություններում: Հեղինակի բոլոր ժողովածուներն էլ («Երազ կորուսյալ» եր., 2000թ., «Արցունքոտված անուրջներ» եր., 2002թ., «Լեթարգիական արթնություն», եր., 2012, «Ինտերմեդիա ջրերից», եր., 2014, «Խազագրումներ ըստ ծնեբեկի», եր., 2016, «Ելման կոյնե», եր., 2018, «Լույսի նախդիրներ», եր., 2019, «Մենակի ծնուշ», եր., 2020, «Րյուրեցման նյարդեր», եր., 2023) վերոնշյալ տեսանկյան դրսևորումներն են և վերլուծության ու մեկնաբանման լայն հնարավորություն են ընձեռում⁷:

Արդի գեղարվեստական բառապատկերի նոր կառույցներն ընկալելու համար հարկ է ընթերցման տեսանկյուն գտնել: Մի քանի օրինակ էդ. Հարենցի բանաստեղծություններից.

Մեկը գալիս

է, որ

մյուսը գնա:

Մյուսս անվերջ

գնում է,

բայց դեռ մեկդ

չի գալիս (Հարենց, 2016, 112):

⁷ Մի այլ հոդվածում անդրադարձել ենք հեղինակի ստեղծագործությունների վերնագրային նոր իմաստաբանության վերլուծությանը, ուստի այս հոդվածում կանդրադառնանք հաջորդ երկու առանձնահատկությունների դրսևորումներին: (Տե՛ս Աստղիկ Բեքմեջյան, «Տարընթերցումը որպես գեղարվեստական պատկերի կառուցման ձև», Գրականագիտական հանդես, ԻԸ, 2024-1, Երևան, 2024, էջ 139-154):

եվ կամ.

Վարդը

քո ձեռքում

փուշը խոսեցիր...

Աղոթքդ

ե՛ս եմ,

ձայնդ վարդ չունի... (Հարենց, 2016, 161)

Ստեղծագործությունների պատկերակերտման այս սկզբունքը տարբերվում է պատկերակերտման համընդհանուր ընկալման ձևերից, որովհետև այստեղ չկան լեզվական՝ դասագրքային արժեք ստացած գեղարվեստականացման միջոցները. ոչ թե մակդիրով, համեմատությունամբ, փոխաբերությունամբ կամ այլ նմանաձև կառույցներով են ստեղծվում արտահայտչամիջոցները, այլ միայն բառատառախաղերով, որ գեղարվեստական պատկերի դասական ձևերին հարիր չէ: Արդի համաշխարհային պոեզիան մտքի գեղարվեստական ձևակերպման այս նույն դաշտում է, մեզանում էլ այն բազմիցս կիրառվում է, և երևույթը պետք ունի գրականագիտական ուսումնասիրման և մեկնաբանության:

Հարկ է նշել, որ ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ, բնականաբար, թեմաները հիմնականում նույնն են՝ փիլիսոփայություն, հայրենիք, անձնական, սեր, անպատասխանություն, հիասթափություն, սակայն գեղարվեստական բառային ձևակերպման սկզբունքները ընդգծվածորեն այլ են: «...Բառը միևնույն չափով պատկանում է և՛ խոսողին, և՛ ունկնդրին... Ունկնդիրը խոսողից շատ ավելի լավ կարող է հասկանալ, թե ինչ է թաքնված բառի ետևում, և ընթերցողը կարող է բանաստեղծից լավ ընկալել նրա երկի գաղափարը» (Բեքմեզյան, Նավասարդյան, 1984, 171): Բառի բառիմաստային հնարավորությունների վերոնշյալ «անսպառությունը» հատկապես այսօր ունի արդիական հնչեղություն, որովհետև ժամանակակից գեղարվեստական մտածողությունը հատկանշվում է բառիմաստային ընդգծված տարրնթերցումների, այլաձև մեկնաբանությունների տարողունակությամբ: Համեմատության համար զուգահեռենք նույն ապրումի գեղարվեստականացման նպատակով տարբեր ժամանակներում գրված և քաջածանոթ մի քանի բանաստեղծություն.

Դու չքացել ես,
Դու էլ չկաս,
Սերը ցնորք է,
Բախտը՝ երազ: (Վ. Տերյան)

Գուցե հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,
Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան...
- Ի՞նչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս չանիծե՛ս
Խեղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան... (Եղ. Չարենց)

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե՛
Զինքը որքա՞ն սիրեցի...
Ո՛վ կարդալ սիրտը գիտե: (Վ. Թեքեյան)

Սերն անհնար է, սիրե՞լ եմ, չե՞մ սիրել,
Երբ ձգտել եմ հասնել հնարավորին,
Իսկ սերն անհնար է,
Իրականություն,
որից դուրս քո կյանքը առասպել է սոսկ:
Երկու ձայներ են ականջներիս մեջ,
Ես ավարտվում եմ,
Ինչը սիրել եմ՝ իմը չի եղել... (Հ. Լեյդան)

Դու միշտ գալ օր ես,
որովհետև
ոչ մի օր չես գալու: (Էդ. Հարենց)

Տերյանի, Չարենցի, Թեքեյանի պատկերահամակարգը հույզի, ապ-
րումի փոխանցման երկկողմ ներկայություն համադրությամբ է ձևավոր-
վում՝ դու, ես, իմ ապրումը՝ չքացել ես, ցնորք է, երազ, խեղճ կարոտը
թևերիս, ոչ ոք գիտցավ... Եվ օգտագործված բառերն էլ իրենց անկրկնելի
գեղարվեստականության շատ մոտ են տվյալ բառի բառարանային
իմաստ-արժեքին, մի փոքր այլ է Լեյդանի մոտ. հույզն ու ապրումը
փիլիսոփայական խոկում են դառնում՝ սե՛րը, հնարավո՞ր է, իրականի ու
անիրականի համադրությունը այստեղ ի՞նչ ձև ունի, և այս ամենը
եսակենտրոն է, բառն էլ հարցական իմաստի մեջ նաև երկակի ընկալման

դաշտ է ստեղծում՝ «Երկու ձայներ են ականջներին մեջ, //ես ավարտվում եմ, //ինչը սիրել եմ՝ իմը չի եղել...», իսկ Հարենցի մոտ նույն զգացումը գեղարվեստական է դառնում և արտահայտվում է «մերկ» բառախաղով: Մյուսների մոտ ընդհանրապես բառախաղ չկա, իսկ այստեղ միայն բառախաղ է՝ «Դու միշտ գալ օր ես, //որովհետև //ոչ մի օր չես գալու» (այստեղ կարևորվում են բառերը՝ որպես բառախաղի բաղադրիչներ՝ միշտ-ոչ մի, գալ օր-չես գալու, գալ օր-ոչ մի օր, և որպես հավասարակշռություն առանձին տողով՝ որովհետև...) Բանաստեղծի ես-ը ստվերում է, և իր ապրումն էլ տողատակում է իմաստավորվում: Հիմնականում պատկերի այս սկզբունքն է կիրառվում, և ցանկացած թեմայի արժարժման ժամանակ պոետը ստվերում է, առաջնային են ենթադրություն հնարավորություն տվող բառախաղերը:

Հուլյը, ապրումը՝ որպես պատկեր, կերտվում է բառախաղերով.

«Ես»

Գիշերները

կեսօրներին

լուսացնելիս

մայրս

արցունքի

այժմ և միշտ-ն էր

տանում ներս ու դուրս

ներս ու դուրս բերում...

հայրս

երբեք չէր

հարցնում թե

ինչու...(Հարենց, 2016, 48)

Պատկերի բառային գեղարվեստականացման որևէ միջոց այստեղ կիրառված չէ, այլ բառիմաստային պատկերավորման միջոցներ չկան. կա միայն բառախաղ: Բառախաղն էլ ձևավորվում է քերականական կառույցների իմաստային «անհեթեթ» շրջադասություն-շրջասույթամբ՝ բառիմաստի կամ մտքի սովորական ընկալմանը զուգահեռ իմաստներ «վերագրելով»՝ «Գիշերները //կեսօրներին //լուսացնելիս», կամ՝ «մայրս //արցունքի //այժմ և միշտ-ն էր //տանում ներս ու դուրս //ներս ու դուրս բերում...» :

Բանաստեղծությունը նույն բառի տարբեր ընկալումների հնարավորություններ է ընձեռում, սրա հետ զուգահեռ բառի՝ բառակապակցության դաշտում նաև այլաձև ընկալումների հեռանկար է ստեղծում, և կարելի է նույն միտքը մի քանի տարբերակով հասկանալ. գիշերնե՞րը լուսացնելիս, նաև կեսօրներին՝ լուսացնելիս (որ անքնության ավելի խորը կառույց է ենթադրում, քանի որ ցերեկն էլ պետք ունի անքնության հաղթահարման), թե՞ գիշերները կեսօրներին լուսացնելիս... և կամ՝ մայրը արցունքի **այժմ և միշտ**-ն է տանում ու բերում. սա մի հարատև տառապանքի մասին է, որ հաղթահարում չունի, չի ունեցել ու չի ունենալու... Ընդ որում՝ «այժմ և միշտը» հատկապես շեշտված ընդգծված են, այսինքն՝ ժամանակի ընկալման այս զուգահեռումը կենտրոնական խնդիրն է բանաստեղծի համար, որ չի հաղթահարվել, չի հաղթահարվում և չի հաղթահարվելու... այս անհաղթահարելիությանն էլ ավելանում է «ներս ու դուրս տանելը, ներս ու դուրս բերելը»՝ սիգիֆյան սինդրոմի ինքնատիպ մոդել՝ իր անիմաստության, անհեռանկարայնությամբ... և այս պատկերների համատեքստում՝ հոր անհարց լռությունն է, քանի որ տրվելիք հարցը պատասխան չունի...

Անշուշտ, բանաստեղծի ստեղծագործությունները հնարավորություն են ընձեռում մեջբերել բազմաթիվ օրինակներ, սակայն այսքանն էլ բավարար է՝ ներկայացնելու թե՛ լեզվամտածողական, թե՛ պատկերակերտման առումով բառիմաստի հետ «խաղի»՝ հեղինակի ինքնատիպությունը: Պատահական չէ, որ հենց ինքը՝ հեղինակն էլ է երբեմն բառամեկնման նպատակով «հուշող» վերնագրեր ստեղծում՝ խաչբառերի, գլուխկոտրուկների, գաղտնագրերի, մի քանի բառարմատների զուգադրմամբ՝ «**Հանգըթանկա**», «**Սուգոկու**», «**Սոմնամբուլատորիա**», «**Գաղտնավանկով**» և այլն:

Հաջորդ հատկանիշը, որ ինքնատիպ է Հարենցի պատկերաստեղծման համակարգում, հնչյունի՝ տառի բառախաղային կիրառությունն է: «Գեղարվեստական տեքստն առաջանում է նշանների մակարդակից բովանդակության առարկայիմաստային մակարդակին անցնելու ճանապարհով: «Կարծես լեզուն դադարում է գոյություն ունենալուց, նա կատարում է ընթերցողի և ստեղծագործության **կապի ֆունկցիա** և ստեղծագործության հոգևոր... բովանդակության **իրացման ֆունկցիա**: Ստեղծագործության մեջ ամփոփված վերաբերմունքն աշխարհի ու նրա արժեքների նկատմամբ, ասես, իրացվում է **ինքնաանհայտացող նշաններում**, արվեստի մեջ լեզվի և նշանային համակարգի ինքնալուծվող բնույթում: Այդ պատճառով էլ գեղարվեստական տեքստը մեզ ուղարկում

է ոչ թե դեպի լեզուն... այլ դեպի առարկայությունն ու հոգեկանությունն, որոնք անբաժանելիորեն միահյուսվում ու վերալցվում են մեկը մյուսի մեջ ստեղծագործության ներքին աշխարհում (Բորև, 1982, 421)»։ Տեքստի այս էական և կարևոր առանձնահատկությունը նախ և առաջ գրանորվում է հնչյունային համակարգի գեղարվեստական իմաստավորման տիրույթում։ Հնչյուն-տառ-գեղարվեստական իմաստ շարքը ամենակիրառելիներից է պատկերավորման համակարգի հարցում։ Դրանցից է նաև հնչյունի կրկնության, բացթողման (էլիպսիս) մեխանիզմի օգտագործումը։

Գեղարվեստական գրականության մեջ դարեր շարունակ հուզական դաշտը շատ հաճախ շեշտադրվել է նմանաձայնությունների՝ բաղաձայնության և առձայնության, միջոցով.

Շուշանն շողէր հովտին,

Շողշողէր դէմ արեգականն...

Շուշանն շաղով լցեալ,

Շող-շաղով և շար մարգարտով... (Գր. Նարեկացի)

Քեզ չըտեսնել՝ ուխտել էի,

Բայց, ա՛խ, նորից հանդիպա.

-Քուրիկ, վերքս լավ է հիմի,

Մի սև սպի տեղը կա։

էն սև սպին սև ամպի պես

Սևցուց դեմքը արևի,

Ու ման կուգամ ես շուքի պես

Սարե՛ր, ձորե՛ր ամպի... (Ավ. Իսահակյան)

Մառ մորմոքում է մայրամուտը,

Մահվան մոխիր է մովից մաղում,-

Մեռնում է մութը մթնշաղում,-

Մառ մորմոքում է մայրամուտը:-

Մտորումներս մահ են, մութ են,

Մարխե մտքեր են միայն մխում,-

Եվ մորմոքում է մայրամուտը,

Մահվան մրուր է մովից մաղում... (Եղ. Չարենց)

Բանաստեղծը միտումնավոր կուտակում է որևէ ձայնավոր կամ բաղաձայն՝ որոշակի տրամադրություն, զգացողություն ընդգծելու համար. առաջին դեպքում «շ» հնչյունը երաժշտականություն, տարածականություն է հաղորդում ընկալմանը, երկրորդում՝ «ս»-ն՝ ցավի, վշտի, սուգի, սղոցման, երրորդում «մ»-ն չարագուշակ, մահերգային դաշտ է ստեղծում: Նմանաձայնության կիրառման ժամանակ հնչյունը նոր իմաստավորում է ստանում և դրանով առ առավել շեշտադրում է մտքի իմաստը:

Ընդգծվածորեն այլ է հնչյունի վերաիմաստավորման համակարգը Հարենցի բանաստեղծության մեջ: Ինչպես վերնագրի, բառիմաստի նկատմամբ վերաբերմունքի ժամանակ, այստեղ էլ հնչյունն է ոչ թե նոր իմաստ ստանում, այլ ձեռք է բերում այս դեպքում արդեն «տառախաղի» արժեք, երբ որևէ հնչյունի հավելմամբ կամ սղմամբ ձևավորվում է այլ բառ, սակայն երկու բառերն էլ գեղարվեստական ընթերցման դաշտում են, և ընթերցողը ինքն էլ մասնակիցն է դառնում տառախաղի՝ ըստ իր հայեցողության կամ կարևորելով մեկ կամ մյուս բառիմաստի տարբերակը, կամ՝ զուգադրաբար ընկալելով երկու տարբերակների իմաստային «հաղորդագրությունները»:

Փորձենք ըստ այսմ «լսել», «բացել» բանաստեղծություններից որևէ մեկը.

«Ֆո(նետի)կուս».

Ինչպես և ուն-ը
(ուն-ա՞կ), որ ք-ից

ոչ միայն հետո,
այլև առաջ է
դրվում: Ինքնօրեն
քեզնովի տոնալ

երկու դիպված. մեկն՝
ուր վար բարձրանում,
կամ՝ անդհակառակն,
ուր իջնում ես վեր:

Նայած՝ ի՞նչ տոներ
ունի անունդ (Հարենց, 2020, 99):

Սկսենք վերնագրից՝ «Ֆո (նետի) կուս»՝ ֆոնետիկ (ա)՝ առաջինը, որ որպես ընկալում ձևավորվում է ընկալողի մեջ, «հնչյունաբանություն» բառի իմաստն է (գիտություն, լեզվաբանության բաժին հնչյունների հատկանիշների մասին), բայց այստեղ «ֆոնետիկուս» ձևափոխում կա, որ ալլիմաստությունների լայն տիրույթի հնարավորություն է ընձեռում՝ (ֆոն՝ երանգ, ետնագույն, նետ, կուս), հետո՝ փակագծերում ունենք «նետի»՝ փակագծերով անջատված մաս, որ նույնպես մի շարք ընկալումների տեղիք է տալիս. «նետ»-ի՝ գոյականի սեռականի հոլովն է արդյոք, թե՞ «նետել» բայի ըղձական ժամանակը՝ «որ նետի», նաև՝ եթե փակագծերի մեջ եղած իմաստը անտեսում ենք, ստացվում է «ֆոկուս»՝ ֆոնետիկա, նետ-ի, ֆոկուս, ֆոնետիկուս. տարընթերցումների բավականին մեծ դաշտ, որ մտավոր հետաքրքրության դաշտ է ստեղծում ինտրիգի մակարդակում, քանի որ ընթերցողը ցանկություն ունի հարաբերվել բանաստեղծությանը: Հաջորդում է բուն բանաստեղծությունը. առաջին երկու տողերը ընկալման համար կարևոր են իրենց հաջորդականությամբ. «ուն»-ի նախ «ունակ» իմաստն է ենթադրելի ներկայացվում, այն էլ հարցական նրբերանգով, ապա՝ «ուն-ք», հետո «քուն» ընկալման հնարավորությամբ, որ հաջորդ մտքի մեջ ձեռք է բերում ազատ տնօրինման՝ «ինքնօրինության» երկու տարբերակի առկայություն, որտեղ կարելի է կամ «վար բարձրանալ», կամ «իջնել վեր» (դարձյալ դասական օքսիմորոնի կիրառում, որ նույնպես տարընթերցման տեղիք է տալիս), և վերջում՝ ընդհանրացումը՝ «նայած՝ ինչ տոներ //ունի անունդ», որ ամփոփիչ տարընթերցման առիթներ ունի. արդյո՞ք տոնայնության մասին է խոսքը (կարելի է մտածել՝ հավանաբար, քանի որ վերևում տոնալ մոտեցման մասին խոսք կար, որն էլ իր ալլընտրանքային իմաստն ունենք), իսկ միգուցե «տոն»՝ որպես ուրախություն, հրճվանքի հնարավորությունն է կարևոր, որն էլ դիմացինի անվան գաղտնագրի մեջ է՝ անունդ, որ տոն՝ ցնծություն, ունի իր մեջ, կամ էլ՝ անունդ, որ որոշակի տոնայնության մեջ է... ահա մի ֆոկուս և ֆոնետիկական ռեբուս, որը, սակայն, հետաքրքիր բանաստեղծական հույզ և փիլիսոփայություն է պարունակում իր մեջ... Բանաստեղծական տեքստի ընկալման նմանօրինակ հնարավորություն են ընձեռում հեղինակի բոլոր ստեղծագործությունները...

Ապրումակցական ընկալումը այս դեպքում ձեռք է բերում մեկնաբանական տարբերակների բազմաշերտության առկայություն, որը

կարող է և՛ ստեղծագործաբար ոգևորել ընթերցողին, և՛ ընդդիմություն ստեղծել տեքստի նկատմամբ, և՛ պարզապես ընդհանրապես չընկալվել կամ չընդունվել:

Նգրակացություններ

Բառիմաստի տարընթերցումը՝ որպես գեղարվեստական պատկերի ստեղծման միջոց, ինքնատիպ և տարբերվող հնարավորություն է գեղարվեստական տեքստի կալացման ոլորտում:

Բառի իմաստի բառարանային հնարավորությունից դուրս բառախաղի, տառախաղի կիրառմամբ մտքի բանաստեղծականացման սկզբունքը պատկերավոր խոսքի նոր մոտեցում է, որ ուսումնասիրման անհրաժեշտություն է ենթադրում:

Արդի հայ գրականության մեջ քննության առարկա երևույթի ընդգծված ինքնատիպ դրսևորում է էդուարդ Հարենցի բանաստեղծությունը:

Անշուշտ, այսօրվա այս գրականության ընթերցման քանակն ու որակը ցույց կտան, թե այս բանաստեղծական երևույթը ինչ շարունակություն և գնահատական կունենա, սակայն այն կա, տպագրվում է, ունի իր ընթերցողը, ուրեմն ուսումնասիրման, վերլուծման և արժևորման պետք ունի:

BEKMEZYAN ASTGHIK VARIANT READING AS AN OPPORTUNITY FOR CONSTRUCTING AN ARTISTIC TEXT

(On Trends in Image Formation in Contemporary Armenian Literature)

Summary

The artistic image is the primary means and opportunity of figurative thinking, and for centuries, the aesthetic value of literature has been interpreted based on the peculiarities of the image, through certain combinations of word-based, phrase-based morphological and syntactic structures, and the modifications of specific grammatical rules, seemingly "violations," which have allowed for the distinctive emphasis and importance of this or that word meaning, thought, idea through new stylistic emphases

(for instance, the use of word repetitions, inversion, ellipsis, gradation, alliteration and assonance, and other linguistic means of visualization). Alongside the traditionally applied means in the domain of image formation in contemporary Armenian literature, there are also "fashionable" opportunities for the artistic visualization of the image, such as the presence of different phonetic and semantic readings of a word, meaning-making (zaum), ellipsis, where the image not only presupposes the aesthetic pleasure of sensory perception but also requires interpretative, research-logical approach. The article conducts a structural and comparative examination of the above-mentioned principle of constructing an artistic image as manifested in contemporary Armenian artistic literature, based on the works of the poet Eduard Harents. The study examined the author's nearly dozen poetic collections, analyzing systems of new semantic nuances in titles, the dualization of word meaning in artistic thought, the "new fate" of sound and letter, and the phonological misdirections in the investigated domain.

Keywords - artistic image, language, thinking, word meaning, inverted image, poetic text, variant reading, contemporary poetry, new perspective of reading, E. Harents.

Գրականություն

Բեքմեզյան Աստղիկ, Տարընթերցումը որպես գեղարվեստական պատկերի կառուցման ձև, Գրականագիտական հանդես, ԻԸ, 2024-1, Երևան, 2024:

Բեքմեզյան Ա.Ս., Նավասարդյան Վ.Ս., Գրականագիտության ներածություն, քրեստոմատիա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984:

Բորև Յուրի, Գեղագիտություն, Երևան, Հայաստան հրատ., 1982:

Հարենց Էդուարդ, Խաղաղություններ ըստ ծնեբեկի, Երևան, Անտարես, 2016:

Հարենց Էդուարդ, Մենակի ծնուշ, Երևան, Անտարես, 2020:

Սեմիրջյան-Բեքմեզյան Ալվարդ, Վավերագրումի գեղարվեստական նշանակությունը արդի հայ գրականության մեջ. վավերագրումը՝ որպես գեղարվեստական հնարք, «Հայագիտական հանդես», 2022թ., նո. 1/55/:

Սեմիրջյան-Բեքմեզյան Ալվարդ, «Վավերագրումի գեղարվեստական նշանակությունը արդի հայ գրականության մեջ. դոկումենտը՝ որպես կոմպոզիցիոն ձև, «Հայագիտական հանդես», 2022թ., նո. 2/56/, էջ 62-77:

Աւելիք Ռէնէ, Ուորէն Յոթին, Գրականութեան տեսութեան, Երևան, Սարգիս Խաչէնց, Փրինթինգթոն, 2008.

Гегель, Сочинения, Том XI, М., Гос.соц.издат., 1938.

Словарь литературоведческих терминов, М., изд. "Просвещение", 1974, стр. 241.

Поляков М. Я., Вопросы поэтики и художественной семантики, М., 1978.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ.

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Գավառի պետական
համալսարանի հայոց լեզվի և գրականությունից ամբիոնի վարիչ*

Առաջիկա տասնամյակները գրականության, հայագիտության համար լինելու են ինֆանանաշման ժամանակաշրջան: Ինֆագիտակցող մշակույթը տարբերվում է ինքն իրեն զգացող մշակույթից, ինչը նշանակում է անցում կատարել զգացական-էմոտալ-ինից ինտելեկտուալ-վերլուծականի, որտեղ մշակույթը չի դիտարկվում միայն իր սահմաններում: Արդյունքում ծագում է մշակույթի բնույթի հարցը: Հայ մշակույթը բնույթով սահմանագծային է, որ ենթարկվում է տարատեսակ ներգործությունների: Այն իր մեջ ներառում է ինչպես Արևելին, այնպես էլ Արևմուտին բնորոշ որակներ, որտեղ ընդհանուրի և անհատականի համադրումը գերխնդիր է: Սուրբ Տեփախի կամ Աստվածաշնչի Լեզվի և Գրի միասնությամբ հայ մշակույթը տիպիկ արևելյան է՝ ներփակ ամբողջությամբ: Արևելքում եթե եկեղեցին պահպանում է իր ինֆնությունը, ապա դա չի նշանակում, որ ձևավորում է առանձին մշակութային համակարգ, այն մտնում է ընդհանուր ֆրիստոնեական մշակութային համակարգի մեջ: Բանահյուսության, գրականության գիտական ուսումնասիրությունը ելնում է դրանց ինֆնության բացահայտման պահանջներից: Գրականությունը ինչպես միջազգային, այնպես էլ սեփական մշակույթի համատեքստում դիտարկելն անհրաժեշտ նախապայման է դրա բովանդակությունն ու բերած գրական արժեքը նիշտ ընկալելու համար:

Հիմնաքառեր - Արևելք, Արևմուտք, Սուրբ տեխստ, մշակութային համակարգ, Մաթևոսյան, Յասպետս, ինֆանանաշում, հայտնություն, ավանդույթ, դիպելկտիկա:

Գրականության ընդհանուր զարգացման ընթացքը XX դարում

21-րդ դարի գրականության մասին խոսելիս հարկ է նկատի առնել նախորդ շրջափուլերը, որովհետև եթե գրականությունը հարյուր տարվա ընթացքում ստացել է որոշակի զարգացման ընթացք, ապա հազիվ թե հաջորդ շրջափուլը նախորդից ոչինչ չվերցնի:

Եթե նկատի առնենք 20-րդ դարասկիզբը, ապա լայն առումով ավանդույթի ուժից ձեռքագատվելը դառնում է 1920-ականների գրականության հիմանական որակներից մեկը: Եղիշե Զարենցը իր վեպով ու նաև պոեմներով հակադրվում է նախորդ հարյուրամյա գրականության ներքին տրամաբանությանը, որ ուղղակիորեն հայրենասիրական, հրապարակախոսական բնույթով մնում էր ողջ 19-րդ դարի գրականության հիմնական ասելիքը: Իսկ 1934-ին առաջին համամիութենական գրողների համագումարը վերացրեց գրական տարաբնույթ կազմակերպությունները և առաջադրեց սոցիալիստական ռեալիզմի գաղափարների պարտադրանքը գրական գործի մեջ: Ովքեր չտեղակայվեցին այս սահմանների մեջ պարզապես գնդակահարվեցին կամ աքսորվեցին:

Պատերազմը սկսած գործընթացը ավելի խորացրեց, կարելի էր աչք փակել բազում անօրինությունների վրա, քանի որ խոսքը համաշխարհային խնդիրներին էր վերաբերում, երկիրը համամարդկային խնդիրների առջև էր կանգնած, հետևապես կարելի էր շատ բան շտեմնել:

Զսպված, մինչև վերջ չասված խոսք կար, կապանքները ջարդելու դերն ստանձնեց Մաթևոսյանը: 1961-ին Կոմունիզմ կառուցելու ծրագիրն էր ընդունվում, իսկ Հայաստանում դեռևս ուսանող Մաթևոսյանը տեսնում էր մեծապետական քաղաքականության ողբերգական հետևանքները տնտեսության, քաղաքականության մեջ: Նա հստակորեն ցույց տվեց, որ մասնավոր սեփականությունը հանրային սեփականության ոչ թե թշնամին է, այլ նեցուկը: Բայց քանի դեռ աշուղի տեղը, ըստ Մաթևոսյանի, մշտապես եղել և մնում է ոչ թե թագավորի կողքին, այլ նրա ոտքի մոտ, Մաթևոսյանին չսեցին: Մնում էր ապավինել ժամանակի գործունեությանը և սեփական ազնվական խոսքի գործունեամբ բացապարզել ժամանակը՝ որպես պատմություն՝ կենդանի մարդկանցով ու ոչ ժամանակավրեպ խնդիրներով:

Եթե ընդհանրացնենք, ապա կարող ենք ասել, որ Մաթևոսյանի ողջ գրականությունը շուրջ 30 տարվա ընթացքում հաղթահարեց խորհրդային, ապա նաև հետմոդեռնի գրականության մեջ ի հայտ եկած **երկու կարևորագույն ճգնաժամերը**: Դրանցից առաջինը կապված էր իրականության ռացիոնալիստական իմաստավորման ճգնաժամի հետ: Մաթևոսյանի ողջ գրականությունը սկզբից ևեթ հակադրվում է ռացիոնալիստական կարգավորումներին, որոնք ընկած էին մեծապետական քաղաքականության հիմքում (Գրիգորյան, 2013, 9): Այս խնդիրը հաղթահարվեց ժամանակակից /կամ մոդեռն/ գրականությամբ: Դրա լավագույն օրինակը Մաթևոսյանի գրականությունն է: Անվանի գրողի ողջ ստեղծագործությունը թեև փակում էր 1960-ականներից սկսված գրական ողջ փուլը՝ իր խորանիստ պատկերներով, աշխարհի եռաչափ պատկերի գործադրմամբ, բայց չէր մնում իր ստեղծած ողջ նախընթաց գրականության մեջ: Մաթևոսյանին անհանգստացնում էր և գալիք գրականության ճակատագիրը: Ուստի նախանշում էր և նորի՝ ուղիներ հայտնաբերելու անհրաժեշտությունը: Ակնհայտ էր, որ մի ողջ շրջափուլ էր ամբողջանում, նորերը պետք է այլևս իմաստավորեին արդեն փլուզված աշխարհի պատկերը:

Հետմոդեռնի գրականությունը /պոստստրուկտուալիզմ, դեկոնստրուկտիվիզմ, հերմենևտիկա/ ամեն ինչ արեց աշխարհի դասական նկարագիրը ջարդելու համար, ուր ամեն ինչ ամբողջական էր: Հետմոդեռնի գրականությունը ցույց տվեց մշակույթների հոսունությունը, դրանում եղած միակ կողի բացակայությունը, դրա բոլոր էլեմենտների միմյանց մեջ ներթափանցող բնույթը: Բայց մշակույթի մեջ տեսնել միայն մտքերի տրանսֆորմացիան, քիչ է: Անհրաժեշտ էր գտնել առավել գործնական ելք, և դա եղավ բախտինյան մեթոդը, որը կարելի է ձևակերպել որպես անցում **դիալեկտիկայից դիալոգիկային**: Մշակույթները ոչ միայն **տեսնելու, այլև լսելու** պահանջը դառնում է երևույթների իմաստավորման նոր ուղի: Այդ փորձն արդեն կար Մաթևոսյանի «Տաշքենդ» վիպակում:

Իրենից հետո եկողների մեջ Մաթևոսյանն առանձնացնում է Լևոն Խեչոյանի անունը: Հետմոդեռնի գրականության սկզբունքները մեր գրականության մեջ ի հայտ եկան այս գրողի երկերով: Աշխարհի եռաչափ պատկերը, որ նախորդ փուլի գրականության հիմնական որակներից մեկն էր, հետմոդեռնը փոխարինեց միաչափ հարթությամբ: Հետմոդեռնը մակերեսների գեղագիտություն է: Բայց սա չի միայն այդ գրականությունը բնորոշ որակը: Հետմոդեռնը, ընտրելով տարբեր ժամանակներում եղած իրողությունները, ստեղծում է հսկայական պատ-

կեր, որտեղ երևույթները նոր կապերի մեջ ձեռք են բերում նոր իմաստ: Ոչ այնքան դեպքերի, որքան երևույթների էությունը բացահայտելը դառնում է գրականության պահանջը:

Արդեն 1980-ականներին հայ ավանդական վեպին հակընդդեմ ստեղծվում են պատմական վեպի ժանրի այնպիսի գործեր, որոնք դեպքերի ծավալումը սահմանափակում են հանուն գրական հերոսի ինքնախոստովանության: Վարդան Գրիգորյանի պատմավեպերը / «Հավերժական վերադարձ», «Դար կորստյան», «Մանյա այրք» / մեր 80-ականների նվաճումներն են: Դրան հետևում են Խեչոյանի վեպերը: Այստեղ էլ գրականությունը նվաճումներ ունի, ապային ձևը գրականություն բերելու մատուցման ձևը նորվի իմաստավորվում է մաթևոսյանական գրի բերած ներքին իմաստով: Մաթևոսյանը վկայում էր, որ իր գրականության, հայ գրականության հաջողությունները մեծապես կապված են **ընդհանուրը** բացահայտելու ներքին կարողության հետ: Ոչ այնքան առանձնահատուկը, որքան ընդհանուրը բացահայտելը: «Գլխավորը, որ հոգու խորքում մենք բոլորս շատ նման ենք» (Մաթևոսյան, 2005, 164):

Այս ներքին ընկալումը հետագայում արտահայտվեց Խեչոյանի երկերի մեջ: Նրա լավագույն պատմվածքները, մասնավորապես պատերազմական թեմայով գրված, մեր գրականության նվաճումներն են: Հետաքրքիր են 2003-ին Մայկոպում տպագրված կովկասյան ժողովուրդների՝ պատերազմի մասին գրված պատմվածքները (Начебда, 2003): Թեմայի իմաստավորումները հիմնականում մնացել են ավանդական հարթության մեջ: Հակառակորդ կողմերը միմյանց մեջ բացառապես թշնամի են տեսնում:

Խեչոյանական ընկալումները մի քալ առաջ են վերոնշյալ թեմայի իմաստավորման ճանապարհին: «Հակադրությունների նույնությունը» դառնում է նրա գրականության առանցքը: Պարզունակ ընկալումները տեղի են տալիս խորը վերլուծությունների առաջ:

Խեչոյանը մեր գրականություն բերեց և երևույթների բացահայտման ուղին **հայտնության /էպիֆանիայի/** հիմքով: Մի բան, որ արձակին հաղորդում է նոր խորք, երևույթները ծավալելու, իմաստավորելու նոր ճանապարհ: Սա բնորոշ չէր նախորդներին՝ աշխարհի եռաչափ պատկերի կողքին:

Մենք չենք խոսում երկրի փուլզումից հետո գրականության մեջ ազատության հասնելու անհամբեր ձգտումների մասին, որտեղ բավա-

կանին լայն տեղ զբաղեցրեց էրոտիկան, բայց դա իրականում ոչինչ չբերող գրականություն է, եթե ասելիք չունի:

Զգալիորեն տարածուն էր և ազգային արժեհամակարգում եղած ավանդական որակների քննադատությունը: Հաճախ նաև բաց տեքստով գրողները իրենց նկարագրից, արյունից հրաժարվելու խնդիր են դնում և այլն: Այս ծայրահեղ կարծիքների շրջանառումը ավելի սեփական գրականության և ընթերցողների միջև եղած հարաբերությունները ճշտելուն, ուշադրության կենտրոնում լինելու ցանկության հետևանք է:

Թեման փոխելով չես կարող լինել նշանավոր գրող, եթե էությունմբ գրող չես: Տաղանդավոր գրողը տաղանդավոր է լինելու ցանկացած թեմայի իմաստավորման ոլորտում: Իսկ եթե ասելիք չկա, չկա սեփական լեզու, աշխարհը բացելու ձև, առավել ևս սեփական աշխարհայացք, ուրեմն անտեղի է խոսել գրականության զարգացման մասին:

Երկխոսության փիլիսոփայությունը

Առաջիկա տասնամյակները գրականության, նաև հայագիտության համար, մեր համոզմամբ, լինելու են առավելապես **ինքնաճանաչման** ժամանակաշրջան: **Ինքնագիտակցող մշակույթը տարբերվում է միայն ինքն իրեն զգացող մշակույթից:** Մենք առավելապես սեփական հայացքը կամ ուշադրությունը պահում ենք մեր ներաշխարհի, մեր պատկերացումների, նյութական աշխարհի սահմաններում, որոնք մեզ տեսանելի են: Բայց ինքնաճանաչող մշակույթը ենթադրում է սեփական տեղի, դիրքի ճշտում, որպեսզի ավելի որոշակի դառնա և այդ մշակույթի դերը:

Իհարկե, ճիշտ չէր լինի կարծել, թե հայոց մեծերը դրա մասին չեն մտածել: Գրականությունը առանձին պահերին արտահայտել է այդ մտահոգությունը՝ Չարենց, Օշական, Մաթևոսյան: Այդ ուղիով գնալ, նշանակում է **ձևավորել նոր աշխարհայացք**, որ կբացի այս կամ այն հանգամանքների պատճառով կարծրացած ինքնագոյության փականները, և աշխարհի հետ մարդը կհարաբերվի սեփական զգացողությունների, հոգեմտավոր ողջ կարողությունների չափով: Եվ այստեղ բոլորովին էլ պարտադիր չէ այս կամ այն ժողովրդի կամ գրականության հետ հավասար քայլելու անհրաժեշտությունը, քանի որ չկա ազգերի արագությունը չափելու միասնական միջոց: Արվեստի կատարյալ գործը ծնվում է մեծ ժամանակի համար, հետևապես դժվար է տարբեր ժողովուրդների գրականությունը փորձել իրար հավասարեցնել, դրա կարիքը չկա, այսօր առավել քան երբևէ անհրաժեշտ է **լսել** մշակույթը: Երկխոսության փիլիսոփայությունը ենթադրում է, որ անհատականությունը ձևավորվում և զարգանում է շփումների ուղիով: «Պատ-

մության սուբյեկտ դառնալու և ճանաչման սուբյեկտ դառնալու համար նրան անհրաժեշտ է երկխոսության մեջ մտնել ինքն իր հետ, մեկ այլ անհատի հետ, Աստծու հետ, բնության հետ: Մարդկության ճանաչողական գործունեության հիմքն այլևս ոչ թե մեկնաբանական վերացական-տրամաբանական մտածողությունն է, այլ երկխոսական բնույթ ունեցող գործնականն ու բանավորը, որն ուղղված է այլ մարդկանց հետ փոխգործակցությանը» (Волкова, 2019, 110):

Ինքնին հասկանալի է, որ երկխոսության սուբյեկտ են դառնում ոչ միայն անհատները, այլև էթնոսները, մշակույթները, քաղաքակրթությունները և այլն: Ինչպես նկատում է Բախտինը, «Կյանքում ամեն ինչ երկխոսություն է, այսինքն՝ երկխոսական հակադրություն» (Бахтин, 1979, 75):

Եթե մենք մշակույթի նոր զարգացման կողմնակիցն ենք, ապա այն պիտի ճանաչի ինքն իրեն: Հենրիկ Էդոյանը նկատում է, որ անհրաժեշտ է **զգացական-էքստազայինից անցում կատարել ինտելեկտուլ-վերլուծականի:** Մշակույթը միայն իր սահմաններում արժեքորել, նշանակում է դրանք միակողմանի դիտել, դա նույնն է, ինչ «նախադասությունը կտրես տեքստից, տեքստը կոնտեքստից» (Էդոյան, 2009, 335): Սա միանգամայն տեղին դիտարկում է, որ մեկնաբանության կարիք ունի: Անցումը զգացականից ինտելեկտուլ-վերլուծականի, չի նշանակում գնալ համաշխարհային, տվյալ դեպքում եվրոպականի համատեքստ, դա նշանակում է քո մշակույթի ինքնատիպությանը ներկայանալ այդ համընդհանուր ընթացքին: Եթե եվրոպական գրքեր ենք կարդում կամ ժամանակակից բանասիրական արձակը այստեղից թոցնում է երևույթները պատկերելու ձևեր, դա չի նշանակում, որ եվրոպական մակարդակի գրականություն է ստեղծվում: «Տեքստը կոնտեքստից չկտրել» նշանակում է առաջին հերթին գրականությունը իր հայրենիքից չկտրել: Քանի որ դրա իմաստավորումը միայն սուբյեկտիվ ցանկության հետևանք չէ, այլ երկրի ընդերքից եկող ոգի, մշակույթ, որի արմատները խորն են: Եվ ամեն տաղանդավոր գրողի աշխարհը իր մեջ ենթագիտակցորեն ներառում է իր ժողովրդի հոգևոր կենսագրությունը, հետևապես «մոռանալ» հայրենիքը հոգեբանորեն, ինքնախաբեկություն է՝ արվեստ ստեղծելու ճանապարհին: Ես նկատի ունեմ Արևմուտքը կարևորել՝ մոռանալով Արևելքը:

Հայագիտությունը իհարկե մարտահրավերների առջև է կանգնած, քանի որ մարտահրավերների առջև է կանգնած երկիրը: Եվ հիմա էլ շարունակել նախկին հանգույն, այսինքն՝ միայն սեփական ցավից խոսել

կամ ասել ինչ ենք զգում, արդեն քիչ է: Մենք իրապես պետք է լսենք նաև մյուսների մշակույթը, դիմացինին հասկանալու և սեփական տեղն ու դիրքը ճշտելու իմաստով: Ժողովուրդները հետաքրքիր են իրենց մշակույթի ինքնատիպությանը: Բոլոր նրանք, ովքեր ծնվել են, ապրելու իրավունք ունեն: Դա ասել է Դոստոևսկին, դա ասել է Մաթևոսյանը: Մարդկությունը գնում է հենց անհատական որակների կայացման ուղիով: Եվ մարդկության պատմությունն էլ ցույց է տվել, որ վերջնական արդյունքում անհատականության, ինքնության ուղիով գնալը գլխավոր նպատակ է մարդկության համար:

Արևմուտք, Արևելք հարաբերակցության հարցը

Գրականությունը գիտական լեզվով իմաստավորելու խնդիրը, քիչ է ասել, կարևոր է: Այստեղ ազգային ինքնագիտակցված մշակույթ ստեղծելու հրամայականի առջև ենք կանգնած, որ ջանքեր է պահանջում: Առաջին հերթին հարկ է ճշտել մեր տեղը, դիրքը՝ աշխարհի հետ փոխգործակցելու համար:

Այս խնդիրը շատերի համար է դարձել անլուծելի: Ոմանք փորձում են համոզել, որ Արևմուտքում ենք, մյուսները՝ Արևելքում: Ամբողջ հարցն այն է, որ Արևելքը ասոցացվում է մոլոտովմանական աշխարհի հետ, մինչդեռ Արևելքը Դովլաթովի պնդմամբ՝ առաջին հերթին ճապոնիան է, ինչպես որ Արևմուտքում քիչ չէ մոլոտովմանական տարրը: Այսինքն՝ Արևմուտք-Արևելք բաժանումը կրոնական հիմքով կատարելը ճիշտ չէ և ոչինչ չի տալիս երևույթների բովանդակությունը բացահայտելիս: Արևմուտք-Արևելք հակադրամիասնությունը ավելի աշխարհայացքային երևույթ է, քան առաջադիմության և հետադիմության պայքար:

Նախ՝ ակնհայտ է, որ մեր մշակույթը սահմանագծային բնույթ ունի: Դա հիմնավոր վերլուծության է ենթարկել էդ. Աթայանը (Աթայան, 2005, 233):

Ընդունելով անվանի լեզվաբանի դիտարկումները՝ կարող ենք ասել, որ արևմտյան և արևելյան մշակույթների հակադիր սկզբունքների համադրությունը ձևավորում է հայոց մշակույթին բնորոշ խիստ բևեռացումը՝ անհատականի և ընդհանուրի միջև: Ընդհանրության «դատողական միտումը», որ դարերով նահապետական առաքինությունների ձևով այդ մշակույթի խորքում է և բնույթով արևելյան, խստորեն ենթարկվում է արևմտյան անհատականության ներգործությանը: Ընդհանուրի և անհատականության համադրումը մեր մշակույթի կարևոր առանձնահատկությունն է: Դա արտահայտված է Թումանյանի ստեղծագործության, Զարենցի ճակատագրական կոչի մեջ՝ փրկությունը

տեսնելով «հավաքական ուժի մեջ»: Մաթևոսյանը երևույթի բացառիկ օրինակ է տալիս: Մի խոսքով՝ ընդհանուրի և անհատականի համագործումը գերխնդիր է մեր մշակույթի համար: Սա բնականաբար արտահայտված է և մեր էպոսում:

«Ծոերի» արտաքին, ակնհայտ նշանները դիպվածային համարելու պարագայում անգամ այն կայացել է Արևելքի մտածողության դաշտում:

Հպոսը ծավալվում է ոչ թե տարածական չափումների, այլ ժամանակային ընկալումների ծիրում: Ամբողջ Արևմուտքը գերազանցապես հետևում է հոմերոսյան տարածական ծավալումների օրինակին: Արևելքը հենվում է ժամանակի վրա: «Ծոեր»-ում ժամանակը հավերժական է, քանի որ Արևելքը հետևում է առակի պոետիկային, ասելիքը դուրս է գալիս բովանդակության սահմաններից: Աստվածաշնչյան աշխարհը հենց առակի պոետիկա է, որ ծավալվում է Հիսուսի, մարգարեների բերանով: «Ծոերի» իմաստը ևս դուրս է գալիս նրա սահմաններից: Մհերն անցում է կատարել դեպի խորհրդանիշ-կերպարի:

Երկրորդ՝ եթե եվրոպական էպիկական երկերում ժամանակը բնույթով **պատմական** է, իսկ հերոսները որոշակի պատմական անձնավորություններ են, ապա Արևելքի բանահյուսության մեջ ժամանակը **քաղաքակրթական** է, որ շատ ավելի մեծ շրջափուլ է: Խոսքը վերաբերում է «Գիլգամեշին», «Ավեստային», «Ծոերին», ինչպես նաև Աստվածաշնչին:

Երրորդ՝ Փոքր Մհերը ոչ թե գնում է հասարակական կարգը վերափոխելու ճանապարհով, որը բնորոշ է Արևմուտքին, այլ հույսը դնում է մարդու կատարելագործման վրա, այստեղ գլխավոր գործոնը մնում է ժամանակը: Սա բնորոշ է Արևելքի մշակույթին:

Չորրորդ՝ Արևելքը, որ կայացնում է ծիծաղի սեփական փրկիստիպությունը, արտահայտվում է **հիմարության սխրանքի** մեջ: Սա ծուռ մարդկանց մասին պատմություն է՝ անկախ այն հանգամանքից, որ ծուռից ընկալում ենք խնդիրները լուծելու ինքնահատուկ ճանապարհ:

Այս ամենը վկայում է, որ մեր էպոսի շերտերում հիմնավոր նստած է Արևելքը, որ ներառում է և Արևմուտքը, որ գերազանցապես արտահայտվում է էպոսի չորրորդ ճյուղում, որտեղ առաջ է մղում հերոսի անհատականության, նրա ողբերգականության թեման:

Տեքստը, Լեզուն և Գիրք

Բայց, իհարկե, միայն էպոսը չի վկայում մեր մշակույթի արևելյան բնույթը: Հարցի քննարկման առումով բացառիկ է Գրիգորի Պոմերանցի

մեթոդաբանությունը: Չափանիշները հստակ են: «Առաջին՝ միասնական սուրբ գրություն: Դա կարող է լինել և՛ Կոնֆուցիուսի ասույթների կառույցը, և՛ Աստվածաշունչը: Նրկրորդ՝ ամեն մշակութային աշխարհ ծածկված է միասնական լեզվով և գրով» (Գրիգորյան, 2023, 17): Հեռավոր արևելքում լեզուն և գիրը համընկնում են: Հիերոգլիֆային մշակույթների սահմանները հեռավորարևելյան մշակույթների սահմաններն են:

Իսլամի աշխարհը Դուրանն է, արաբերենը, արաբական գիրը, որ պահպանվել է պարսկական, թուրքական և ցանկացած լեզուներում, որով խոսում են իսլամական մշակույթի կրողները: Արդյունքում Տեքստի, Լեզվի և Բառի (գրի) միասնությունը ստեղծում է տեղեկատվության միասնական դաշտ... ընդհանուր հոգևոր բովանդակությամբ:

Սուրբ Տեքստը, Լեզուն և Գիրը մեր մշակույթում սերտ փոխկապվածության մեջ են, և ոչ պատահականորեն հայերենը դիտվել է որպես Սուրբ լեզու կամ Աստվածաշնչի լեզու: Ինչ վերաբերում է Գրին, ապա այն տարբերվում է շրջապատի ժողովուրդների գրից, էլ չենք խոսում եվրոպականի մասին: Սրանք ինքնության վստահելի ցուցիչներ են: Սուրբ Տեքստի կամ Աստվածաշնչի Լեզվի և Գրի միասնությամբ հայ մշակույթը տիպիկ արևելյան է՝ իր ավանդական, ինքնահատուկ, ներփակ ամբողջությամբ: Այս խնդիրը լուրջ քննության թերևս առնվել է Օշականի «Մնացորդաց»-ում:

Կյանքը լիարժեքորեն ապրող սուբյեկտը

Քանի դեռ կար խորհրդային Միությունը, մարդիկ արևմուտքում ասում էին, որ ճշմարտությունն Արևելքում է, իսկ Արևելքում համոզված էին, որ այն Արևմուտքում է: Նրբ քանդվեց ԽՍՀՄ-ը, մարդիկ տեսան, որ ճշմարտությունը ո՛չ Արևելքում է, ո՛չ էլ Արևմուտքում: Հայդեգերն ասում է, որ ճշմարտությունը Աստծու մոտ է: Նա գիտեր՝ ինչ է ասում: Իսկ էքզիստենցիալ փիլիսոփայության մյուս կարևոր ներկայացուցիչ Յասպերսը միակ ճանապարհը համարում է հավերժական ու բացարձակ աշխարհի՝ Աստծու հետ մարդու կապի մեջ (Толмачев, 2003, 22): **Ամեն ժողովուրդ ինքը պիտի գտնի իր ճշմարտության ճանապարհը՝ սեփական ոգորումների արդյունքում:** Սեփական մշակույթը կայացնելու, աշխարհի հետ խոսելու, աշխարհի ընդհանուր սեղանին սեփական հոգևոր գանձերը բերելու ուղիով մենք մասնակից ենք դառնալու մարդկության հզոր երթին, հակառակ դեպքում մնալու ենք խաբված տանտերեր:

Արևելքում, եթե քրիստոնեական եկեղեցին պահպանում է ինքնությունը, ապա դա չի նշանակում, որ այն ձևավորում է առանձին

մշակութային համակարգ, այն մտնում է ընդհանուր՝ քրիստոնեական մշակութային համակարգի մեջ: Այն ժամանակ, երբ Հայաստանը ընդունեց քրիստոնեությունը, նպատակը քրիստոնեական արժեքներով առաջնորդվող ժողովուրդներին միանալն էր, բայց դա ամենևին էլ չի նշանակում, որ քրիստոնեությունը չի կարող լինել Արևելքում, մանավանդ, որ այն հենց Արևելքում է առաջացել:

Իհարկե, այս ճանապարհին մեծ է հայագիտության դերը: Դարավոր ավանդների վրա ձևված խոսքը, նաև տեքստերը մեզ համար մշտապես մնալու են որպես մեր ինքնությունը մեկնող չափառվող ավագան, բայց դրանք անհրաժեշտ են ճանապարհ գնալու, սեփական եսը, ինքնությունը աշխարհի ընթացքին ներկայացնելու իմաստով: Դրա ուղին քո եղածը այլոց հոգևոր հարստության հետ բաղդատելն է: Բայց մեր ասելիքը չի կապվում համեմատական լեզվաբանության ավանդների հետ: Դա արդեն քիչ է, ազգային արժեհամակարգը, աշխարհայացքային երևույթները, ազգային բնավորությունը խորքով բացելու հրամայականը, այս ամենի նորովի իմաստավորումը արդեն հրատապ խնդիր է: «Դրսում որոնելին, ասում է Վարուժան Այվազյանը,- միջոցներն ու մեթոդներն են լինելու, ոչ թե ճշմարտությունը» (Այվազյան, 1998, 5):

Այսօրվա ստեղծվող բանասիրական գրականությունը՝ դրսից վերցված պատկերներով, նույնիսկ մատուցման ձևերի բազմազանությամբ, անսպասելի սլուժներով ոչինչ չի բերում գրականություն, այլ ավելի շատ դառնում է ժամանացի յուրատեսակ ձև: Դա ոչինչ չասող գրականություն է, որ չի յուրացրել նախորդ, ընդամենը երեկվա շրջափուլում եղած հայրենի գրականության ձեռքբերումները՝ նկատի ունեմ Հրանտ Մաթևոսյանին, Աղասի Այվազյանին, Լևոն Խեչոյանին, Վարուժան Այվազյանին, բանաստեղծներից Հենրիկ Էդոյանին, Հրաչյա Սարուխանին և այլոց: Այս ջղուտ, ցեղային պինդ որակներով անհայտությունից դուրս կորզված գիրը մեր գրականության նվաճած բարձունքն է, որ գրել փորձելուց առաջ պիտի նկատի ունենան նորօրյա գրագետները: Մաթևոսյանի գրականությունը չէր լինի այն, ինչ կա, եթե դրա մեջ չտրոփեր անցյալում արարված հայ մշակույթը: Այլ կերպ չի լինում: Գրողն ի վերջո կարող է զոհվել, բայց նրան ծնող ժողովուրդը՝ ոչ: Ցանկացած արվեստ անխուսափելիորեն ծնվում է իր ժողովրդի ընդերքից: Հետևապես պետք է կառչել արմատներով հայրենի հողին: Դա անհրաժեշտ է ոչ միայն մեզ, այլև մեր սերունդների համար:

Իհարկե, համաշխարհային գրականությունը կարգալով, ներառյալ գրականագիտական ուսումնասիրությունները, գրող չես դառնա, քանի որ ստեղծագործության սուբյեկտը ոչ թե տրամաբանական, վերլուծա-

կան կարողություններով առաջնորդվողն է, այլ կյանքը լիարժեքորեն ապրող սուբյեկտը, որ ստեղծելու է աշխարհի հետ հարաբերվելու սեփական լեզուն: Հետևապես՝ առանց հաղորդակցվելու քո երկրի կենդանի մարմինն, առանց զգալու դրանից եկող ազդակները, որ թեև դարերի կենսագրություն ունեն, բայց ներկա են մեր գոյության բժիշներում, անհնար է ստեղծել գրականություն, որ կապի ժամանակի մեջ: Դրան հասնելու համար միայն աշխատելը քիչ է, կարևոր նախապայման է անհատական տաղանդն ու պատասխանատվությունը: Առանց այս որակների գործադրման, դժվար կլինի մնայուն գործեր արարելը:

Ինչ վերաբերում է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից հայտարարվող մրցույթներին, ապա դրանք ավելի շատ ուղղված են արտաքին կապերի հայտնաբերման, փոխշփումներին:

Սա կարևոր է, բայց ամբողջը չէ: Հայագիտությունը հարկ է, որ պետական բյուջեում ներկայացված լինի առանձին տողով: Միայն հույսը դնել նվիրյալ մարդկանց վրա, շատ քիչ է: Երիտասարդները պետք է իմանան, որ հայագիտությամբ զբաղվելը ոչ միայն անհրաժեշտ է, այլև շահավետ: Հիմա մարդկանց գիտություն բերելու արքայական ճանապարհներ գոյություն չունեն, դրանք քարքարոտ են ու հաճախ՝ անհաղթահարելի: Կլինեն զգալի ներդրումներ այս ոլորտում, կլինեն և ձեռքբերումներ, հակառակ դեպքում ներուճակ ուժն արթնացնելու ջանքերը միայն բարի ցանկություններ կմնան: Պետք է թոթափվել այն պատրանքներից, թե հայագիտությունը արտասահմանում մեծ ձեռքբերումների է հասել: Հայագիտության կենտրոնը եղել և մնալու է Հայաստանը:

Հայաստանը պետք է ներգրավի Սփյուռքի ուժերը ու նաև օգնի Սփյուռքին՝ աշխատանքները կանոնակարգելու, ռազմավարական հարցերը միասնաբար առաջ տանելու համար:

Մաթևոսյանը ոչ պատահականորեն գրապաշար, գրամրցակցություն էր փափագում հանուն հանրապետության գեղարվեստական մտքի: Քանի որ գեղարվեստական միտք՝ նշանակում է միտք առհասարակ, գեղարվեստական մտքի բացակայություն՝ նշանակում է մտքի բացակայություն առհասարակ... «Եվ ավելորդ է շեշտել, որ այս հանրապետության գեղարվեստական միտքը ետ է մնում... Մեծ փրկիսոփաները, զորավարները, գործիչները լավ գրողներ են. ոչ թե նաև լավ գրողներ են, այլ մեծ փրկիսոփա-գործիչ-զորավար են շնորհիվ այն բանի, որ լավ գրողներ են» (Մաթևոսյան, 2004, 209):

Ավելորդ է ասել, որ բարձրարժեք գրականություն ունենալ, նշանակում է նման կարգի հասարակություն ունենալ: Անշուշտ, դրա համար ևս միջոցներ են անհրաժեշտ:

Որևէ կերպ չանտեսելով Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող գիտական հանդեսները, դրանց կատարած դերը, մենք համոզված ենք, որ բարձրակարգ գրականագիտական հանդեսի տպագրությունը խիստ կարևոր է:

Նույնը վերաբերում է արտասահմանյան բարձրակարգ գրականության հրապարակումներին: Այս ամենի միասնական ջանքերի արդյունքում կստեղծվի գրականություն ու դրա վերաբերյալ գիտական ուսումնասիրություններ, որոնք կդիմակայեն ժամանակի փորձությունը:

Ամփոփում

Հոգվածում խոսվում է 20-րդ դարի հայ գրականության առանձին շրջափուլերի և 21-րդ դարասկզբի գրական զարգացման միտումների մասին: Լայն առումով նախորդ դարի գրականությունը առանձնանում էր ավանդույթի ուժից ձեռքագատվելու հետևողական ջանքով: Այստեղ մեծ էր Հրանտ Մաթևոսյանի ավանդը, որի գրականությունը հաղթահարեց խորհրդային, ապա նաև հետմոդեռնի գրականության մեջ ի հայտ եկած երկու կարևորագույն ճգնաժամերը՝ իրականության ռացիոնալիստական իմաստավորման ճգնաժամը և հետմոդեռնի գրականության մեջ ի հայտ եկած մշակույթների հոստունության, միակ կողի բացակայության պայմաններում բախտինյան մեթոդի կիրառումը՝ որպես ելք:

Հետանկախական շրջանում նկատելի է Լևոն Խեչոյանի գրական վաստակը, որ գրականություն բերեց երևույթների բացահայտման ուղին հայտնության (էպիֆանիայի) հիմքով:

Հայ գրականությունը 20-րդ դարի երկրորդ կեսին ունի նկատելի ձեռքբերումներ՝ Հրանտ Մաթևոսյան, Աղասի Այվազյան, Լևոն Խեչոյան, Վարուժան Այվազյան, Հենրիկ Էդոյան, Հրաչյա Սարուխան և ուրիշներ: Այս ամենը ամուր հիմք է լավ գրականություն ստեղծելու համար: Քանի դեռ գոյություն ունեն խորհրդային Միությունը մարդիկ Արևմուտքում համոզված էին, որ ճշմարտությունն Արևելքում է, իսկ Արևելքում համոզված էին, որ այն Արևմուտքում է: Երկրի փլուզումից հետո մարդիկ տեսան, որ այն ոչ արևելքում է, ոչ էլ արևմուտքում: Ամեն ժողովուրդ ինքը պիտի գտնի իր ճշմարտության ճանապարհը՝ սեփական մաքառումների արդյունքում:

Միայն համաշխարհային գրականության՝ ներառյալ գրականագիտական ուսումնասիրությունների փորձը կիրառելով հնարավոր չէ

ստեղծել արժեքավոր գրականություն, քանի որ ստեղծագործության սուբյեկտը ոչ թե տրամաբանական, վերլուծական կարողություններով առաջնորդվողն է, այլ կյանքը լիարժեքորեն ապրող սուբյեկտը, որ ստեղծելու է աշխարհի հետ հարաբերվելու սեփական լեզուն:

Գրականության գիտական արժևորումը լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ է, որ հայագիտությունը պետական բյուջեում ներկայացվի առանձին տողով: Խիստ կարևոր է գրականագիտական բարձրակարգ հանդեսի տպագրությունը, նույնը վերաբերում է արտասահմանյան գրականության հրապարակումներին:

GRIGORYAN VACHAGAN

DEVELOPMENT TRENDS OF ARMENIAN LITERATURE AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY, PROBLEMS OF ARMENIAN STUDIES

Summary

The article discusses different periods of Armenian literature of the 20th century and the trends of literary development at the beginning of the 21st century. In general, the literature of the previous century was distinguished by a consistent effort to break away from traditional constraints. Hrant Matevosyan's contribution was significant here because he overcame the two most important crises that appeared in Soviet and post-modern literature: the crisis of rationalist interpretation of reality and the use of the Bakhtinian method as a way out in the absence of cultural fluidity and a unified code in post-modern literature.

In the post-independence period, the literary contributions of Levon Khechoyan are notable, for he introduced the method of revealing phenomena through epiphany.

Armenian literature gained notable achievements in the second half of the 20th century: Hrant Matevosyan, Aghasi Ayyvazyan, Levon Khechoyan, Varuzhan Ayyvazyan, Henrik Edoyan, Hrachya Sarukha, and others. These authors provided a solid foundation for creating good literature. During the Soviet era, people in the West believed that the truth was in the East, while those in the East believed that the truth was in the West. After the collapse of the Soviet Union, it became clear that the truth was neither in the East nor in the West. Every nation must find its own path to truth through its own efforts.

It is not possible to create valuable literature only by applying the experience of world literature, including literary studies, because the subject

of the work is not the individual guided by logical and analytical abilities, but rather the individual who lives life to the fullest and will create his own language to relate to the world.

In order to fully realize the scientific evaluation of literature, it is necessary to allocate specific funding for Armenian studies in the state budget. The publication of a high-quality literary journal is crucial, the same applies to the publications of works on foreign literature.

Keywords – East, West, Holy Text, cultural system, Matevosyan, Jaspers, self-awareness, epiphany, tradition, dialectics.

Գրականություն

Աթայան Էդվարդ, Հոգի և ազատություն, Եր., «Սարգիս Խաչենց», 2005, էջ 233:

Այվազյան Վարուժան, Հակոբյան Գ., Միայն այսօր ու միայն մի անգամ, <https://granish.org/miayn-aysor-uu-miayn-mek-angam/>

Գրիգորյան Վաչագան և ուրիշներ, Բանահյուսություն և գրականություն, Գավառ, «Հովսեփյան», 2023, էջ 17:

Գրիգորյան Վաչագան, Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործությունը, Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 9:

Էդոյան Հենրիկ, Շարժում դեպի հավասարակշռություն, Ե., «Սարգիս Խաչենց», «Փրինթինֆո», 2009, էջ 335:

Մաթևոսյան Հրանտ, Ես ես եմ, Ե., Ոսկան Երևանցի, 2005, 164:

Մաթևոսյան Հրանտ, Սպիտակ թղթի առջև, Հայագիրտակ, Ե., 2004, էջ 209:

Бахтин М. М., Проблемы поэтики Достоевского. М.: Сов. Россия, 1979, с. 75.

Волкова А. А., Философское понимание диалога культур в концепциях М.М. Бахтина и В.С. Библиера: сравнительный анализ, Журнал: Logos et Praxis, Статья в выпуске: 4 т. 18, 2019, с. 110.

Составители и редакторы Д. Начкебия и Г. Одишариа. Время жить, Майкоп 2003.

Толмачёв В.М., и др., Зарубежная литература 20-го века, Москва, «Академия», 2003, էջ 22:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԴՈՒՈՒԽԱՆՅԱՆ ԱՆԼԻՏԱ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նիկողայոս Մառը (1864-1934) թողել է մեծարժեք ու բազմաճյուղ գիտական ժառանգություն: Նա հայագետ էր, արևելագետ, վրացագետ, կովկասագետ, հնագետ, պատմաբան, լեզվաբան, մանկավարժ, թարգմանիչ, ձեռագրագետ: Կարելի է նրա գիտական հետաfrրությունների մասին առավել նոր բնագավառներ մատնացույց անել:

Մառը համարձակ ու եռանդուն բնավորության տեր անձնավորություն էր. նա բնությունից օժտված էր գիտական մեծ հնարավորություններով: Ն.Մառի կյանքի ու գործի մասին գրված են բազմաթիվ գրքեր, հոդվածներ: Սակայն առանձնակի չի նշված, թե ինչ արդիական արժեք ունեն Մառի աշխատությունները:

Մառի հայ աշակերտների մեջ ամենանշանավորներն են համաշխարհային հռչակ ունեցող Նիկողայոս Ադոնցը և Հովսեփ Օրբելին: Բարեբախտաբար պահպանված են նրանց հետ ունեցած Մառի նամակագրության օրինակները: Հատկապես կարևոր են Ն.Ադոնցի հուշերը, ուսուցչապետ Նիկողայոս Մառի մասին: Հետազոտության նորույթը Մառի գիտական ժառանգության արդիական արժեքն է:

Հիմնաբառեր - հայագիտություն, արդիականություն, փաստ, միջազգային արժեք, թարգմանություն, Աստվածաշունչ, Մովսես Խորենացի, Մեսրոպ Մաշտոց, գիտականություն, փոխադրեցություն:

Արդիական ու հայագիտության համար կենսական արժեք ունի հետևյալ դիտարկումը Մառի հայագիտական ժառանգության մեջ. «Վիմագրերի դիվանների հրատարակությունը Ն.Մառը համարում էր հայագիտության առաջնահերթ խնդիրը, քանզի յուրաքանչյուր արձանագրության ավերմամբ գիտությունը կորցնում է ոչնչով չփոխարինվող սկզբնաղբյուր»:[Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, 2005, 11]

Ադոնցը Մառի գիտության նկատմամբ ունեցած նվիրման մասին գրում է. «Դժվար է երևակայել մի ուրիշ օրինակ, որ գիտության սերը, ինքնամոռաց նվիրումը հասցրած լիներ այնպիսի սաստկության, այն աստիճան, որ կարող էր օրերով պարապել, կառչած իր գրասեղանին՝ մոռանալով կերակուրն ու քունը: Չափազանցություն չէ, եթե ասեմ, որ օրական ոչ պակաս քան 15 ժամ աշխատում էր, չհաշված այն օրերը, երբ վարչական կամ ուսումնական զանազան նիստեր հարկադրում էին դադարեցնել առժամ իր զբաղմունքները»:[Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, 2005, 148]

Ադոնցը հիշում է նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերին, որն իրեն զգուշացրել է շատ էլ չհավատալ օտարազգի հայագետներին, որոնք իրենց հայրենիքի չնչին շահը վեր են դասում հայագիտությունից ու դադարում են «հայասեր» լինելուց: Մինչդեռ Մառի հայագիտությունը անշահ է, և ինքնաբերական նրա հայասիրությունը, և որքան խորն է նրա հայագիտությունը, այնքան և զորեղ է նրա համակրությունը հայ ժողովրդի հանդեպ»:[Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, 2005, 148]

Հոգվածի մեթոդաբանությունը հիմնված է Մառի ողջ հայագիտական ժառանգության իմացության վրա:

Հոգվածի նպատակն է արդիական հայագիտության տեսանկյունից արժեևորել Մառի թողած գիտական ժառանգությունը և ներկայացնել նրանում եղած խնդիրները:

Հայագիտության համամարդկային կարևորությունը Ն.Մառի աշխատություններում

1892-ին Վիեննայում թարգմանաբար լույս է տեսնում Ն.Մառի բազմաթիվ հայագիտական նորություններ բերող «Ամառնային ուղևորությունից դէպ ի Հայս» աշխատությունը:

Այս ոչ ծավալուն գրքում առկա են հայագիտության տարբեր խնդիրներին վերաբերող հետազոտություններ, որոնք նորովի են բացատրում հայ հնագարի ու միջնադարի կարևոր երևույթներ: Մառն աշխատել է էջմիածնի մատենադարանում եղած հայկական ձեռագրերի վրա, նաև այցելել հայ Բագրատունիների հռչակավոր Անի մայրաքաղաքի ավերակ-

ները: Գնացել է նաև Սևանի վանք՝ նույնպես ձեռագրեր ուսումնասիրելու նպատակով:

Մառը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված թվեյաց երգերի սեփական բացատրությունն է տալիս, միաժամանակ հին վիպապոի Արտավազի՝ Մասիս լեռան մեջ փակվելու հատվածի համար բերում է 1628-ին գրված ձեռագրից մեջբերում՝ Արտավազի մասին եղած ժողովրդական ավանդությունից, ըստ որի Արտավազը բանտարկված է Մասիսի մեջ և մի գեղեցիկ օր պիտի ազատվի աքսորից ու գերի ողջ տիեզերքը: [Մառ, 1898, 1]

Նա հիանալի ձևով ծանոթ լինելով V դարի հայ մատենագրության հարուստ լեզվամտածողությանը՝ խորապես համոզված է, թե հեթանոսական շրջանում հայերն ունեցել են սեփական նշանագրերը: [Մառ, 1892, 15]

Այս միտքը նա կրկնում է 1903-ին Պետերբուրգում լույս տեսած “Грамматика древнеармянского языка” դասագրքում: [Մառ, 1903, XXVIII, 15] Զափազանց ուշագրավ է հայ ձեռագրերում այնքան տարածված «Ոսկեփորիկ» գրքերի անվանը տրված բացատրությունը: Դրանք աստվածաբանական առումով ազնիվ գրքեր են, ինչպես ազնիվ մետաղ է ոսկին: [Մառ, 1892, 19]

Մառը գիտնականների ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ հայոց միջնադարյան ձեռագրերի ընդօրինակողներ են եղել նաև միանձնուհիները: [Մառ, 1892, 20]

Ուշագիր քննելով էջմիածնի ձեռագրական հարստությունը՝ գիտնականը մանրամասնորեն խոսում է հայ եկեղեցուց մերժված բնագրերի մասին, որոնց թվում ԺԲ դարում հայտնվում է «Քրիստոսի մանկությունը» գիրքը: [Մառ, 1892, 41]

Գրքում հանգամանալի անդրադարձ կա Աստվածաշնչի տեսիլներին՝ ըստ ձեռագրական նյութերի: Շատ կարևոր է Գրիգոր Լուսավորչի տեսիլի մեկնաբանությունը, որն իր բովանդակությամբ համապատասխանում է համաքրիստոնեական այլալեզու տեսիլներին, և այդ համընդհանուր կապը մատնացույց է անում Ն.Մառը: Գրիգոր Լուսավորչի տեսիլում վիճաբանում են հոգին ու մարմինը: Այդ վեճը, ինչպես նաև հոգու ու մարմնի հակադրվելը միմյանց, միջնադարյան հայ գրականության մեջ դառնում է առաջատար, թե հոգևոր քնարերգության և թե աշխարհիկ աշուղական գրականության մեջ: Ահա այս կարևոր դրսևորումների վրա առաջին փաստացի օրինակներով մեկնաբանությունները Մառը քաղում է հայկական ձեռագրերից:

Մառի մեծագույն ծառայություններից մեկը հայագիտության բնագավառում միջնադարյան հայ առակների հետազոտությունն է: «Ժողովածուք առակաց Վարդանայ» եռահատոր ուսումնասիրությունը հայագետի մագիստրոսական թեզն է եղել: «Տեսական հետազոտության առաջաբանում Ն.Մառը պատմում է, թե ինչպես է փուլզվել իր ատենախոսության համեստ պլանը՝ վերածվելով ընդարձակ պրոբլեմների խմբի: Նա պարզորոշ տեսել է Վարդան Այգեկցու առակագրական ժողովածուի նմանողությանմբ ստեղծված գրական կտորները և կարևորել բուն հեղինակի առակների վրայից հետսմուտ շերտերը հեռացնելը, գտել Վարդանի ձեռքով գրածները, միաժամանակ պարզել նաև այդ շերտերի հեղինակային պատկանելությունն ու ժամանակային ծագումը: Նա խոստովանում է նաև, որ իր հետազոտության մեջ ստիպված է եղել հրնթացս անդրադառնալ հայ հին գրականության և պատմության զանազան հարցերին ընդհանրապես»: [Դուլխանյան, 2005, 24]

Ն.Մառի Վարդանյան առակների ժողովածուի երրորդ գիրքը՝ տեսական ծավալուն մասը, անհնար է կարդալ առանց մասնագիտական կենտրոնացման ու մտային խոր հիացմունքի: Նախ պետք է խոստովանել, թե այն կատարյալ ընթերցելու համար պետք է կարողանալ օգտվել շուրջ տասնհինգ լեզուներից:

Այս բանասիրական պատրաստվածությունն ունի և՛ արդիական, և՛ վերժամանակյա արժեք: Այսօրվա գիտական ասպարեզ մտնող բանասերը, պատմաբանը, հայագետը և ընդհանրապես գիտնականը հնարավորինս շատ լեզուների պետք է տիրապետի և ունենա սկզբնաղբյուրներից բխող տեղեկատվական հիմք: Հենց այդ բազմալեզու տեղեկատվական հիմքի վրա էլ Ն.Մառը անառարկելի ընդգիմախոսում է անգլիացի բանասեր Jacobson-ին, ըստ որի Երեմիա վարդապետը XII դարի վերջին «Աղվեսագիրքը» արաբերենից թարգմանել է հայերենի: [Марр, 1898, 2]

Մինչդեռ Մառն ապացուցում է հակառակը: Նա փաստերով հաստատում է, թե արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համանուն ժողովածուից և այդ եզրահանգումը հաստատող բազում փաստեր է բերում: Նա նշում է, որ հայկական «Աղվեսագրքում» դասական գրաբարի կողքին կան ռամկական լեզվով գրված հատվածներ, որոնք արաբերենի միակերպության համեմատ շատ բազմաբղետ լեզու են ներկայացնում և չեն կարող թարգմանության արդյունք լինել: Բացի այդ, նա բազմաթիվ էջերով և լեզվական հարուստ օրինակներով նկատում է հայերեն բառերի հետքերը արաբական թարգմանության մեջ:

Հայագիտության համար արդիական մեծ արժեք ունի 1898-ին Թիֆլիսում լույս տեսած «Հայ-վրացական հարաբերությունների մասին անցյալում» գիրքը, որը ներկայացնում է Մառի բանակութիւնը իշխան Ակակի Ծերեթելու հետ: Գրքի առաջաբանում ասվում է. «Հայ-վրացական հարաբերությունների մասին գրական բանակութիւն նորագույն շրջանի պատմության մեջ իբր կուլմինացիական կետ պիտի նկատվի վրաց բանաստեղծ իշխան Ակակի Ծերեթելիի հոգւածը, որ նա հրատարակեց յուր խմբագրած և յուր անունով «Ակակի ժողովածու» («Ակակիս Կրեբուլի») կոչված ամսօրյա հրատարակության սույն տարվա հունվարի տետրում»: [Մառ, 1898, 3]

Մի երիտասարդ վրացի հոգւածով, վիրավորական տոնով գրել է. «Այժմյան հայերը չունին ոչ մի ազգային անուն և չեն ունեցել ոչ մի ազգային պատմություն»: [Մառ, 1898, 5] Նա հայ պատմիչների հազորդածը Հայաստանի հնագույն ժամանակների մասին համարում է միայն հեքիաթներ:

Մառը խիստ քննադատում է նման հակագիտական պնդումը և փաստում է, թե Սուրբ գրքերի առաջին թարգմանությունները վրացիները կատարել են հայերենից, ու դա հաստատում են այնպիսի եվրոպական գիտնականներ, որոնք անտարբեր են հայ-վրացական հակաճառություններին: [Մառ, 1898, 6]

Մառը պնդում է, թե եթե հայ պատմիչների գրվածքները չլինեին՝ վրացիների անցյալի «նշանավոր մասը հավիտյանս անթափանցելի խավարով ծածկված կլիներ»: [Մառ, 1898, 7]

Ծերեթելին խստագույնս քննադատում է Քերովբե Պատկանյանին, որն, ըստ Մառի, շատ մեծ գիտնական է և արևելագիտության մեջ անվերապահ հեղինակություն: Նա հիշեցնում է Ծերեթելիին, որ ոչ մի լուրջ հայ մտավորական իրեն թույլ չի տա վրացիների մասին այնքան վայրենի բաներ գրել, որքան Ծերեթելին ասել է հայերի մասին՝ անկասկած լինելով վրաց առաջին մեծության գրող: [Մառ, 1898, 13]

Մառը փաստում է, թե հայերը խնամքով հավաքել են վրաց եկեղեցիների վրա եղած արձանագրությունները և հրատարակել ավելի վաղ, մինչ վրացիները այդ գիտական կարևոր գործի վրա ուշադրություն կդարձնեին: [Մառ, 1898, 13]

Տեղին է նույնությամբ մեջբերել Մառի հետևյալ միտքը, որը խիստ արդիական է, ու կարծես ուղղված է այսօրվա ադրբեջանաթուրքական հայագիտությանը. «Վրաց բանաստեղծը, ակներև է, որ չի հասկանում, թե գիտնականը կդադարեր գիտնական լինել այն բանից, երբ նա կվճռեր ծածկել գիտական ճշմարտությունը այն պատճառով, որ դա

վնասակար կլինեն յուր ցեղակիցներին. բացի այն, որ եթե վնաս հասներ՝ դա չէր գալ ճշմարտությունից, այլ միայն ճշմարտությունը արհամարհելուց»։ [Մառ, 1898, 20]

Մառը հիշեցնում է նաև, թե հայերի ազդեցությունը վրացիների վրա եղել է թե ավելի ուժեղ և թե ավելի արդյունավետ։ [Մառ, 1898, 24]

Նա հայերենից վրացերեն կատարված բազում թարգմանություններից բերում է ընդամենը մի քանիսը։ Առաջինը՝ Նպիփան Կիպրացու Սաղմոսների մեկնությունները, երկրորդ՝ Գրիգոր Տաթևացու Քարոզները, երրորդ՝ Արիստոտելի Ստորոգությունը, չորրորդ՝ Ստորոգություն՝ մեկնությամբ Դավիթ Անհաղթի, հինգերորդ՝ Պատմություն Հայոց, վեցերորդ՝ Մանկություն Քրիստոսի, յոթերորդ՝ Դատաստանագիրք Մխիթար Գոշի, ութերորդ՝ Բժշկարաններ և այլն։ [Մառ, 1898, 44]

Այստեղ տեղին է հիշել Մառի աշակերտ Հովսեփ Օրբելու խոսքը իր պաշտելի ուսուցչի մասին. «Ն.Մառը իր ողջ կյանքի ընթացքում առաջնեկ էր և հաճախ պետք է արահետներ բացեր գիտական ու գիտականության ձև ունեցող դրույթների խիտ մացառուտների միջով»։ [Մառը և հայագիտության հարցերը, 1968, 8]

1736-ին Վիստոն եղբայրները Լոնդոնում լատիներեն թարգմանությամբ հրատարակում են Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»։ Գիրքը ներկայացնում էր Հայաստանի պատմությունը Նոյի տապանից սկսած մինչև հինգերորդ դարասկզբի Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը։ Պատմական այդքան լայն ժամանակահատված ընդգրկող Խորենացու «Հայոց պատմությունը», որի միջազգային արժեքն ու քննական բնույթը վաղուց ապացուցված է, շարունակվում է առ այսօր ունենալ ընդդիմախոսներ։

Մար Աբաս Կատինյայի ժամանակագրության արաբական բնագրի հայտնաբերումից հետո՝ 1903-ին, Ֆրեդերիկ Մակլերը “Journal Asiatique” ամսագրում հրատարակում է Մար Աբաս Կատինյայի ժամանակագրության Խորենացու օգտագործած հատվածը՝ ապացուցելով հայ պատմահոր ճշմարտացիությունը։ [Դոլուխանյան, 2011, 97] Դրանից հետո գիտնական և անկողմնակալ հայագետները հայ պատմահոր V դարում ապրած և գործած լինելը համարում են ապացուցված։ Այդպես է ընդունում նաև Մառը։ Նա V դարից մինչև Անիի անկումը չի համարում հայ գրականության անկման շրջան, այլ ստեղծագործական մի բեղուն շրջան։ [Ն.Մառի անվան կաբինետի աշխատություններ, 1945, 43]

Մառը Խորենացուն կրքոտ ձևով պաշտպանում է “К крестике Истории М.Хоренаци” ուսումնասիրության մեջ: [Ն.Մառի անվան կաբինետի աշխատություններ, 1945, 51]

Զափազանց հետաքրքիր է ակադեմիկոս Արտաշես Կարինյանի հետևյալ եզրահանգումը, որն անպայման արգիական արժեք ունի. «Հայ հին գրականության պատմությունը ուսումնասիրող ոչ մի բանասեր չի կարող անուշադրության մատնել Մառի անգամ թռուցիկ կերպով նետված ակնարկները և հետազոտությունները»: [Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, 1948, 225]

Մառը հայ մշակույթի միջազգային նշանակության մասին խոսել է Փարիզում 1925-ին կարգացած մի ծավալուն գեկուցման մեջ:

Նա Հայաստանի մշակութային անցյալը անթույլատրելի է համարում ուսումնասիրել համաշխարհային մշակույթի կարևոր մասը չհամարելու գիտակցությամբ: Նաև սխալ է համարում եվրոպական քաղաքակրթության արմատները փնտրել դասական աշխարհում (Հունաստան, Հռոմ) և ոչ թե Միջագետքի սահմաններում: [Մարք, 1995, 104] Մառը խոսում է հայ մշակույթի և քաղաքական կյանքի մասին՝ Աղթամարի վանքը, ինքնավարության համակարգ Անիի, Դվինի, Շահապիվանի ժողովներում, Վարդանանց նահատակման փաստը, Ախուրյան գետի վրա հիմնված հոյակապ ու զարմանահրաշ կամուրջները, որոնք ապահովում էին միջազգային առևտուրը և հազարավոր այլ ստեղծագործություններ պատկանում են հայ ժողովրդին: [Մարք, 1995, 105] «Հայերն առաջինն էին, որ դեռ միջնադարում հասկացան համամարդկային հետաքրքրությունների նշանակությունը և գիտակցեցին համաշխարհային պատմության գաղափարը, գործ, անկասկած վիթխարի, և ոչ միայն վիթխարի, բայց և դժվարին»: [Մարք, 1995, 107]

Համաշխարհային գիտությունը պարտական է հայերին հունարենից կատարված թարգմանությունների համար, ոչ միայն քրիստոնեական, բայց նաև դասական Հունաստանի: [Մարք, 1995, 112]

Այդ «փոքր ածու» ժողովուրդը, ինչպես ճշգրիտ բնութագրել է Խորենացին, դարձրել է որդեգիրը հին աշխարհի մշակութային ժառանգության ու այն առատորեն, համբերատար ձևով սփռել է թե Արևելքում և թե Արևմուտքում: [Մարք, 1995, 122]

Ի վերջո, չմոռանանք, որ Մառը դարձավ Անիի մեծագույն հետազոտողը՝ մեկ տասնամյակից ավելի հնագիտական պեղումներ կատարելով այդ տիեզերահռչակ մայրաքաղաքի ավերակներում:

Մառի Անիի հնագիտական պեղումների ընդհանուր եզրահանգումը լույս տեսավ «Անի» գրքում 1939-ին՝ գիտնականի մահից հետո: Միջնադարյան հայ մշակույթի համար մեծ հայտնագործում էր Մառի կողմից 1905-ին Գազիկ արքայի 2,26 մետր բարձրությամբ արձանի գտնելը: [Марр, 1939, 108] Նրա կրկնօրինակը հիմա պահվում է Հայաստանի պատմության թանգարանում: Ամենայն մանրամասն ձևով նկարագրելով Անի մայրաքաղաքի պատմությունը՝ Մառը եզրահանգում է, թե Անին եղել է գտարյուն հայ բնակչության քաղաք, հայերի արքայանիստ քաղաք և ընդհանրապես միայն հայկական քաղաք:

Ն.Մառի գիտական ժառանգությունն այսօր էլ երակետային է, և ապագա հայագետը, բանագետը, գրականագետը շատ հենման կետեր ունի ու նոր ուղիով առաջ գնալու հնարավորություններ:

Ապագա հայագետներին հիշեցնենք, որ Մառը Պետերբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնում աշխատելու համար քննություններ է հանձնել հետևյալ առարկաներից՝ հայոց լեզու, հայ գրականություն, զենդեքեն, պարսկերեն, հայոց պատմություն, սանսկրիտ և արիական ժողովուրդների պատմություն: [Мухранков, 1943, 42]

Զուր չէ, որ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գրիգոր Ղափանցյանը՝ Նիկողայոս Մառին նվիրված իր հոդվածի վերնագիրը դրել է հետևյալը՝ «Ն.Մառի գիտական ժառանգությունը անմահ է»: [Ն.Մառի կաբինետի աշխատություններ, 1947, 5]

Ամփոփում

Նիկողայոս Մառը մեծ ավանդ ունի հայագիտության բնագավառում: Նա հայագետ էր, արևելագետ, կովկասագետ, լեզվաբան, հնագետ, մանկավարժ, թարգմանիչ: Նրա նշանավորագույն աշակերտներից էին միջազգային համբավի տեր այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Նիկողայոս Ադոնցը և Հովսեփ Օրբելին:

Մառը 1892 թվականից սկսում է տպագրել այնպիսի հայագիտական հետազոտություններ, որոնք նորություն էին բերում գիտության մեջ և իրենց բարձրացած խնդիրներով այսօր էլ շարունակում են արդի հայագիտության համար մնալ արդիական:

Մառը մերժում էր ազգային սնապարծությունը և մի ազգի մշակութային արժեքները մեկ այլ ժողովրդի կողմից անարդար ձևով յուրացնելը:

Ազգությունամբ վրացի ու շոտլանդացի լինելով՝ համարձակ ձևով ընդգրմախոսում է Ակակի Ծերեթելիի և մի շարք այլ վրացի մտավորական-

ների, որոնք չէին ընդունում V դարում Մաշտոցի կողմից վրացերեն այբուբենի ստեղծման փաստը:

Նա գիտականորեն հիմնավորում է V դարում վրացերեն Աստվածաշնչի հայերենից թարգմանված լինելու իրողությունը և փաստերով ապացուցում է, թե մինչև VII դարը վրաց գրականությունը կրել է հայ գրականության բարերար ազդեցությունը:

Մառը դեմ էր վարկածային, հնարովի հայագիտությանը և ամեն գիտական հիմնավորման համար պահանջում էր փաստ:

Նա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վիթխարի արժեքի գնահատողներից էր և Մարաբաս Կատինայի արաբերեն բնագիրը գտնվելուց հետո պատմահոր V դարի մատենագիր լինելը համարում էր հաստատված:

Մառը հայ Բագրատունիների Անի մայրաքաղաքի ամենամեծ հետազոտողն էր: Նա ոչ միայն հնագիտական պեղումներով, այլև տարալեզու գրականության ուսումնասիրությամբ ապացուցեց, որ Անին եղել է գտարյուն հայ բնակչության քաղաք, հայերի արքայանիստ քաղաք և ընդհանրապես միայն հայկական քաղաք:

Վարդան Այգեկցուն նվիրված իր եռահատոր աշխատության մեջ Մառն ապագա հայագետին, բանասերին, թարգմանչին տեսանելի ձևով ներկայացնում է, թե ինչպես պետք է աշխատել ձեռագրական նյութերի հետ ու ապացուցում է, որ եվրոպայում այնքան տարածված արաբական “*Письма кнуза*”-ն Վարդան Այգեկցու առակների թարգմանությունն է:

Ապագա բոլոր գիտնականներին Մառը պատվիրում էր հատկապես հենվել ձեռագիր ու վիմագիր աղբյուրների վրա ու հնության նյութերը բացատրել իրենց ստեղծման ժամանակի պատկերացումներով:

Մառին ենք պարտական հայ մշակույթի միջազգային նշանակությունը գնահատելու և տարածելու իրողության համար:

AELITA DOLUKHANYAN

THE CONTEMPORANEITY OF NIKOLAI MARR'S PROVISIONS FOR ARMENIAN STUDIES

Summary

Nikolai Marr has a great contribution in the field of Armenian Studies. He was a specialist in Armenian Studies, Oriental Studies, Caucasian Studies,

linguist, archaeologist, pedagogue and translator. Among his most prominent students were internationally renowned scientists such as Nicholas Adontz and Hovsep Orbeli.

In 1892, Marr launched the publication of such researches in the field of Armenian Studies, which were some kind of an innovation in the world of science and with the problems they raised, continue to be relevant in the modern period of Armenian Studies.

Marr rejected national arrogance and the unfair usurpation of one nation's cultural values by another nation.

Being Georgian and Scottish by nationality, he confidently opposes Akaki Tsereteli and a number of other Georgian intellectuals who did not accept the fact that Mashtots created the Georgian alphabet in the 5th century.

He scientifically substantiates the fact that the Georgian Bible was translated from Armenian in the 5th century and proves with facts that until the 7th century Georgian literature was influenced by Armenian literature.

Marr was against hypothetical, fabricated Armenian Studies and required facts for every scientific justification.

He was one of the appreciators of the great work of Movses Khorenatsi "The Armenian History" and having found the Arabic original of Mar-Abas Katina, he considered the Khorenatsi's 5th century chronicler confirmed.

Marr was the greatest explorer of the Ani capital of the Armenian Bagratuni dynasty. He proved not only through archaeological excavations, but also through the study of foreign language literature, that Ani was a city of a pure Armenian population, a princely city of Armenians and, in general, only an Armenian city.

In his three-volume work dedicated to Vardan Aygektsi, Marr presents future specialists in Armenian Studies, philologist, and translator in a visible way how to work with manuscript materials and proves that the Arabic "Fox Book", so popular in Europe, is the translation of Vardan Aygektsi's fables.

Marr advised all future scientists to rely especially on handwritten and lithographic sources and to explain the sense of the ancient materials according to the ideas of the time of their creation.

We are indebted to Marr for the fact of appreciating and propaganda in the international arena of Armenian culture.

Keywords - *Armenian Studies, contemporaneity, fact, international value, translation, Bible, Movses Khorenatsi, Mesrop Mashtots, scientism, interaction.*

Գրականություն

Աղամյան Ավ., Ն.Յա. Մառի նամականիից, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդես, N 1, Երևան, 1963 (առանձնատիպ), էջ 87-100:

Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Խմբագրությամբ՝ Պ.Մ.Մուրադյանի, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2005:

Դոլուխանյան Ա., Ֆրեզերիկ Մակլերը հայագետ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2011:

«Ժողովածոյք առական Վարդանայ», Նյութեր պատմության հայոց միջնադարեան մատենագրության ըստ հայագետ Ն.Մառի, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1900:

Կարինյան Արտ., Մառը և հայ մատենագրությունը, Աշ.Աբրահամյան, Մառի անվան կաբինետի աշխատություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1948:

Մառ Ն., Ամառնայի ուղեւորութիւնից դէպ ի Հայս, Նկատողություններ եւ քաղուածներ հայկական ձեռագրերից, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1892:

Մառ.Ն., Հայ-վրացական յարաբերութիւնների մասին անցեալում (Պրոֆ. Մառի բանակոթիլը իշխ. Ակակի Ծերեթելու հետ), տպ. Մ.Գ. Ռոստինյանցի, Թիֆլիս, 1898:

Մառը և հայագիտության հարցերը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1968:

«Ն.Մառի անվան կաբինետի աշխատություններ», N1, ԵՊՀ հրատ., 1945:

«Ն.Մառի անվան կաբինետի աշխատություններ», N 2, Խմբագրությամբ Գր.Ղափանցյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 1947:

«Ն.Մառի անվան կաբինետի աշխատություններ», N3, Խմբագրությամբ Գր.Ղափանցյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 1948:

Март Н., О раскопках и работах в Ани летом 1906 года, Тип. Императорской Академии наук, С.Петербург, 1907.

Мар Н.Я., Ани, Изд. “Аргмиз”, Ереван, 1939.

Март Н., Грамматика древнеармянского языка, Этнология, тип. Императорской Академии наук, Санкт-Петербург, 1903.

Март Н.Я., Кавказский культурный мир и Армения, Изд. “Гандзасар”, Ереван, 1955.

Миханкова В.А., Николай Яковлевич Март, Очерк его жизни и научной деятельности, Изд. Академии наук СССР, Москва, 1949.

Сборник притч Вардана: Материалы для истории армянской литературы, Санкт-Петербург, тип. Имп. Академии Наук, ч. 1, 1899, ч. 2, 1894.

ԱՂՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՆՈ

*Վանաձորի պետական համալսարանի պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների դոկտոր*

Սույն հոդվածի **խնդրո առարկան** աղբյուրաբանական աղվանագիտության կեղծիքի տարածման դեմ հայագիտության արածների և անելիքների համակարգումն է: Հոդվածի **նպատակն է** ցույց տալ, որ աղբյուրաբանական աղվանագիտությունը օտար լեզուներով հանրայնացրել է հայ մշակույթի գործիչներին աղվան անվանելու իր սնանկ տեսությունը, որն ստացել է որոշ պատասխաններ, սակայն այդ պատասխանները դեռևս համարժեք չեն, որով պայմանավորված է հոդվածի **արդիականությունը**: Հոդվածում կիրառել ենք **պատմական և արժեքաբանական** մասնագիտական մեթոդները: **Գիտական նորույթը** հայագիտության արձագանքների համակարգումն է և ապագա անելիքների տեսլականի ծրագրումը:

Հիմնաբառեր - աղբյուրաբանական կեղծ աղվանագիտություն, հայագիտության հակափաստարկներ, Ֆ. Մամեդովայի շփաստարկված սնանկ հայտարարություններ

Հայ բանասիրությունը սկսած 1790-ական թվականներից անցել էր մի քանի դարի պատմություն՝ անդրադառնալով նաև Հայոց արևելից կողմանց մատենագիրներին՝ Մովսես Կաղանկատվացուն, Դավթակ Քերթովին, Մովսես Դասխուրանցուն, Եսայի Ապուժուսե Արցախի իշխանին, Համամ Արևելցուն, Դավիթ Ալավկա որդուն, Հովհաննես Սարկավագին, Վարդան Արևելցուն, Կիրակոս Գանձակեցուն,

Մխիթար Գոշին և այլոց, երբ 1965 թ. Զիա Բունիաթովը Բաքվում տպագրեց «Азербайджан в VII-IX вв.» գիրքը (Буниятов, 1965), վերոհիշյալ հեղինակներին հռչակելով աղվան, իսկ աղվաններին՝ ադրբեջանցիների նախնիներ:

Մինչ այդ՝ 1940 թ. Մ. Ռաֆիլին «Ադրբեջանական գրականության ակնարկներ» հոգվածում Դավթակ Քերթոզին անվանել է աղվան բանաստեղծ, ինչին ի պատասխան Մ. Աբեղյանը հեգնանքով գրել է. «Խեղճ Դավթակ, ինչի գնացիր Պարտավ քաղաքն ու այնտեղ մի ողբ գրեցիր, առանց մտածելու, որ այդ քաղաքի հետագա իշխողները քեզ իրենցը պիտի համարեն» (ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, գործ 185):

Զ. Բունիաթովի կեղծ գիտական տեսակետն արժանիորեն հերքել է Ասատուր Մնացականյանը դեռևս 1966 թ. նախ՝ հայերեն, ապա՝ 1969 թ. ռուսերեն տպագրված «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» (О литературе Кавказской Албании) գրքում, ինչպես նաև Պարույր Սևակի համահեղինակությամբ 1967 թ. «Պատմաբանասիրական հանդես»-ում տպագրված ռուսերեն մի հոդվածում (Մնացականյան, 1966, Мнацаканян, 1969, Асатур Мнацаканян, Паруйр Севак, 1967):

Զիա Բունիաթովի կեղծ տեսությանն անդրադարձել է նաև Կ. Մելիք-Օհանջանյանը (Мелик-Оганджаниян, 1968): Վերջինս մի առանձին հոդված էլ նվիրել է Մխիթար Գոշի աղվան լինելու հերքմանը (Мелик-Оганджаниян, 1969):

Սակայն որքան էլ հայագիտությունը հերքել է գիաբունիաթովյան տեսության կեղծ դրույթները, ցավոք, դրանք կանխամտածված շարունակվել են նաև 1980-ական թվականների սկզբին ադրբեջանական քաղաքական քարոզչամեքենային լծված բունիաթովական կեղծ գիտական դպրոցի շառավիղների՝ մասնավորապես Ֆարիդա Մամեդովայի կողմից (Мамедова, 1986, Мамедова 1982):

Վերջինս փոքր-ինչ ուշացումով 1987 թ. ստացել է արժանի պատասխան Ա. Հակոբյանի, Պ. Մուրադյանի, Կ. Յուզբաշյանի համահեղինակությամբ տպագրված ռուսերեն մի հոդվածով (Акопян, Мурадян, Юзбашян, 1987): Հարցին արժանիորեն արձագանքել է նաև Ա. Մուշեղյանը՝ 1989 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում կրկին ռուսերեն լեզվով (Мушегян, 1989), ապա մեկ տարի անց էմ. Պիվազյանը նույն ամսագրում, սակայն հայերեն լեզվով (Պիվազյան, 1990):

Այդ ամենից հետո էլ Ֆ. Մամեդովան 2005 թ. տպագրեց մի նոր ռուսերեն գիրք՝ «Кавказская Албания и албаны» (Мамедова, 2005)՝ այս

անգամ էլ ընդլայնելով իր մշակութային կողոպուտի սահմանները, հասնելով անգամ Կիլիկիա՝ աղվան անվանելով Գրիգոր Ակներցուն, Ներսես Լամբրոնացուն, Հեթում Պատմիչին, Սմբատ Գունդստաբլին, ավելին՝ նույնիսկ ուշ շրջանի պատմիչ Եսայի Հասան Զալալյանին, անգամ 19-րդ դարի Սուրբ Էջմիածնի միաբանության բարձրաստիճան պաշտոնյա, հայ գրող Մակար վարդապետ Բարխուդարյանցին, որ թաղված է հենց Մայր Աթոռի գերեզմանատանը:

Երկար ժամանակ Ֆ. Մամեդովային չի տրվել պատշաճ պատասխան: Մեզանում կամ անտեսել են կամ թերագնահատել աղբբեջանական կեղծիքը:

Այդ առումով հիշարժան է Ա. Շահնազարյանի մի հոդվածը՝ «Հայոց Արևելից կողմերի գիտության և մշակույթի գործիչների ազգային պատկանելության աղբբեջանական նենգափոխման շուրջ» վերնագրով տպագրված 2015 թ., որտեղ պատմաբանն իրավացիորեն գրում է. «Պնդել, որ աղբբեջանագիտության հայոց գիտամշակութային հարուստ ժառանգության կողոպուտին միտված ոտնձգությունները հայագիտության համապատասխան արձագանքին չեն արժանացել, ճիշտ չի լինի: Դրանում իրենց ավանդն են ներդրել Մ. Աբեղյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Պ. Սևակը, Հ. Անասյանը, Գ. Սարգսյանը, Էմ. Պիվազյանը, Լ. Խաչիկյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Ղանալանյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Շ. Սմբատյանը, Պ. Մուրադյանը, Հ. Սվազյանը, Կ. Ղահրամանյանը, Ա. Հակոբյանը և հատապես Բ. Ուլուբաբյանը, Աս. Մնացականյանն ու Բ. Հարությունյանը: Նրանց արժանին մատուցելով հանդերձ հարկ է նկատել, որ աղբբեջանական կողմի մշակութային կողոպուտին հայագիտության հակազդեցությունը մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով պայմանավորված շարունակական ու հետևողական բնույթ չի կրել» (Շահնազարյան, 2015):

Այս ամենից հետո էլ Ֆ. Մամեդովան շարունակում է հանրայնացնել իր կեղծիքը՝ թարգմանելով օտար լեզուներով, տալով հարցազրույցներ և այլն:

Նման մի արձագանք էր նաև «Вестник Кавказа» կայքէջում Ֆ. Մամեդովայի հարցազրույցը, ուր շարունակում է շրջանառել Զիա Բունիաթովի արդեն իսկ հերքված տեսակետները՝ անտեսելով ձեռագրական և այլ փաստեր, ինչպես օրինակ՝ այն, որ Աղվանից աշխարհի պատմության ամենահին գրչագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1531 ձեռագիրն է՝ արտագրված 1288-1289 թթ. Հովհանավանքում: Այս հերթական հակագիտական պնդումը մեր կողմից ստացավ պատասխան, «Գրական թերթ»-ում տպագրվեց «Պատասխան աղբբեջանցի

պրոֆեսորին» հոգվածը, ինչը թարգմանվեց անգլերեն ու ռուսերեն, տեղադրվեց համացանցում (եղիազարյան, 2018): Դրանից անմիջապես հետո «Ազգ» օրաթերթում հանդես եկավ նաև Հ. Բախչինյանը՝ «Բուռիաթովականություն և ալիեականություն» վերնագրված հոգվածով (Բախչինյան, 2018):

Այդուհետև մեր կողմից սկսվեց ազրբեջանական ազվանագիտության կեղծիքները հերքող հոգվածների տպագրությունը՝ «Ազվանից աշխարհի պատմության հեղինակների հարցի շուրջ», «Մխիթար Գոշի ազվան լինելու հարցը և դրա հակափաստարկները հայագիտության մեջ», որոնք տեղ գտան նաև իմ «Հայագիտական ուսումնասիրություններ» գրքի Ա հատորում (եղիազարյան, 2021):

Այնուհետև ձեռնարկեցինք նոր հոգվածների տպագրություն՝ 2022 թ. «Հանդես Ամսօրյա»-ում հրատարակվեց «Համամ Արեւելցին եւ նրա ազգային պատկանելութեան խնդիրը հայագիտութեան մէջ» (եղիազարյան, 2022) հոգվածը, ապա Շիրակում տեղի ունեցող միջազգային գիտաժողովում զեկուցվեց «Դավիթ Այալկա որդին և նրա ազվան լինելը հերքող փաստարկները հայագիտության մեջ» հոգվածը, որը տպագրվեց «Գրականագիտական հանդես»-ում (եղիազարյան, 2022), այնուհետև «Եսայի Ապումուսեն և նրա ազվան լինելը հերքող փաստարկները հայագիտության մեջ» հոգվածը, որը տպագրվեց Արցախում (եղիազարյան, 2022): 2023 թ. իմ ասպիրանտ Սոնա Մուսայելյանի համահեղինակությամբ տպագրեցինք «Մակար վարդապետ Բարխուդարյանց և նրա ազվան լինելու մասին ազրբեջանական կեղծիքի հերքում» հոգվածը (եղիազարյան, 2023), ապա տպագրվեց «Դավթակ Քերթոզը Այունյաց քերթողական դպրոցի ներկայացուցիչ և նրա ազգային պատկանելության հարցը» հոգվածը (եղիազարյան, 2023), որն ընթերցել էի Գորիսի պետական համալսարանի 55-ամյակին նվիրված գիտաժողովում:

2023 թ. առանձին գրքով տպագրվեց «Արցախի հայկականության ակունքները և ազրբեջանական «ազվանագիտության» կեղծիքների հերքում» մենագրությունը (328 էջ), որը փաստորեն այդ հերքման առաջին հատորն է ժամանակագրորեն հասնելով մինչև 12-րդ դար: Այժմ բ. գ. թ. Լեոնիկ Հակոբյանի հետ ձեռնարկել ենք այդ մենագրության երկրորդ հատորը, որն ընթացքի մեջ է:

Այս ամենով հանդերձ՝ հարկ ենք համարում շեշտել, որ այս խնդիրը մեկ կամ մի քանի անձերի գործ չէ. այն պահանջում է պետական մոտեցում, քանի որ հակառակ կողմում ահռելի ֆինանսական միջոցներ

են ներդնում, անգամ ազգային հերոսի կոչում են շնորհում կեղծիքը հորինողին ու տարածողին:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ Ֆ. Մամեդովայի մահով չի ավարտվել այդ կեղծիքի տարածումը: Ազդեցանում գործում է հատուկ աշխատախումբ, որ պարբերաբար տպագրում է գրքեր. դրանք հասանելի են համացանցում, որոնցից մասնավորապես կհիշատակեմ 2004 թ. տպագրված Ու. Հաջիևայի գիրքը «Деэтнизация Кавказских Албан в XIX веке», որում հեղինակը կենտրոնացել է Մակար Բարխուդարյանցի և նրա «Արցախ» գրքի վրա: ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդում դեռևս երջանկահիշատակ Վարդան Դերիկյանի ժամանակ թեկնածուական թեմա ենք հաստատել «Մակար Բարխուդարյանցը և նրա գրական ժառանգությունը» վերնագրով, որով այժմ զբաղվում է իմ ասպիրանտ, արցախցի Սոնա Մուսայելյանը:

Թվարկվածները թեև տեսանելի են, սակայն բավարար չեն: Հարկավոր է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների համատեղ ջանքերով ստեղծել աշխատախումբ, պարբերաբար հերքել տարածվող կեղծիքը, օտար լեզուներով թարգմանել ու տարածել՝ հանրայնացնելով կեղծիքին համարժեք հերքում, ինչը մեզանում թերագնահատվում և անտեսվում է հենց պետական մակարդակով:

Ազդեցանական քարոզամեքենան աշխատում է ամենուր, բերեմ պարզապես մի օրինակ. 2020 թ. ռուս արևելագետ Դ. Տիմոխինը «Сочинение Киракоса Гандзакецу «История» как предмет историкографической дискуссии: происхождение и современное состояние» հոդվածում⁸ երկակի մեկնաբանություն է տալիս հարցին՝ առանց տեղյակ լինելու Կիրակոս Գանձակեցու պատմության հայկականությանը: Ինչ է արվել այս հոդվածին ի պատասխան՝ ոչինչ: Մինչդեռ պետք է արագ արձագանքել նման դեպքերին: Արդի հայագիտությունը իսկապես թերանում է, քանի որ չկա համակարգված աշխատանք այս ուղղությամբ: Պետք է պետական մակարդակով ստեղծել գիտական հատուկ աշխատախումբ՝ հայոց մտքի սահմանը վերահսկելու համար:

Հայ բանասիրությունն անցել է մի քանի դարի պատմություն՝ անդրադառնալով նաև Հայոց արևելից կողմանց մատենագիրներին, սակայն անտեսելով հիշյալ փաստը և կոնկրետ հեղինակների հետ կապված վկայակոչումներ՝ 20-րդ դարի կեսերին ազդեցանական ազդանագիտությունը շրջանառության մեջ է դնում կեղծ գիտական

⁸ Տե՛ս Труды института Востоковедения РАН, 2020, һүр. 28, էջ 215-235:

տեսություն, որի համաձայն աղվաններն ադրբեջանցիների նախնիներն են և ըստ այդմ հայ մշակույթի մի շարք երևելի գործիչների անվանում են աղվան: Հայագիտությունը 20-րդ դարում արժանիորեն հակադարձում է և հերքում այդ տեսությունը՝ ցույց տալով Զիա Բու-նիաթովի կամայական մոտեցումները, սակայն վերջինիս աշակերտ Ֆարիդա Մամեդովան շարունակում է ավելի խորացնել կեղծիքը՝ աղվան անվանելով անգամ Կիլիկյան հայոց թագավորության շրջանի մի շարք մշակույթի գործիչների: Անցյալ դարի վերջերին Ֆ. Մամեդովային որոշ հակադարձումներ եղան, սակայն 21-րդ դարում վերջինս համառորեն շարունակեց իր կեղծիքի տարածումն ու հանրայնացումը նաև օտար լեզուներով: Հայագիտությունն այստեղ թերացել է և դեռևս չի տրվել արժանի պատասխան:

Առաջիկա 5-10 տարիների ընթացքում պետք է արժանիորեն հակադարձել Ֆարիդա Մամեդովայի տեսակետներին, նույն լեզուներով տարածել հերքումը և հանրայնացնել կեղծ աղվանագիտության սնանկ լինելը:

VANO YEGHIAZARYAN

AGHVAN STUDIES FORGERIES AND REACTIONS OF ARMENOLOGY

Summary

A history of several centuries has passed in Armenian philology, referring also to the historians of the Eastern Side of the Armenia, completely ignoring this fact and the testimonies related to specific authors in the middle of the 20th century, Azerbaijanian aghvanology was circulating a pseudo-scientific theory, according to which Aghvans were their ancestors and a number of famous figures of Armenian culture were called Aghvan.

In the 29th century Armenology refuted that theory, showing the arbitrary approaches of Zia Buniatov, but his student Farida Mamedova continued to deepen the falsehood, calling even a number of cultural figures of the period of the Cilician Armenian Kingdom Aghvans.

At the end of the last century there were some oppositions to F.Mamedova, but in 21th century the latter stubbornly continued to spread and popularize her opinion in foreign languages as well. Armenology has failed in this matter and hasn't yet given a worthy answer.

During the next 5-10 years, one should adequately oppose Farida Mamedova's views, spread the denials in the same foreign languages and publicize the emptiness of false Aghvanology.

Keywords - Azerbaijani fake Aghvan studies, Armenology counterarguments, unsubstantiated empty statements.

Գրականություն

Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н. 1987, К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.- VIII в. н. э.)»). *Պատմա-բանասիրական հանդես*, թիվ 3, էջ 166-189:

Асатур Мнацаканян 1969, О литературе Кавказской Албании, Ереван.

Асатур Мнацаканян, Паруйр Севак 1967, По поводу книги З. Бунятова «Азербайджан в VII-IX вв.», *Պատմա-բանասիրական հանդես*, թիվ 1, էջ 177-190:

Бунятов З. 1965, Азербайджан в VII-IX вв., Баку.

Ехизарян В., Контраргументы – против “аргументов” азербайджанского историка Фариды Мамедовой: О Мхитаре Гоше и его “Судебнике”, <http://haydzayn.am/p/60197>:

Мелик-Оганджян К. 1969, Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора «Судебника», Вестник архивов Армении, Ереван, թիվ 1, էջ 183-198:

Мелик-Оганджян К. 1968, Историко-литературная концепция З. Бунятова, Вестник архивов Армении, Ереван, թիվ 2, էջ 169-190:

Мамедова Ф. 1982, Интерпретация новых дополнительных глав парижского списка «Истории албан» Моисея Каланкатуйского в свете эпиграфических данных Гандзасарского храма (Тез. докл. всесоюзной научной сессии «Актуальные проблемы изучения и создания письменных источников», Тбилиси,), [http://vestikavkaza.ru/interview/Farida-Mamedova-Istoriya-kavkazskoy-](http://vestikavkaza.ru/interview/Farida-Mamedova-Istoriya-kavkazskoy-Albanii.html?utm_referrer=https%3A%2F%2Fzen.yandex.com)

[Albanii.html?utm_referrer=https%3A%2F%2Fzen.yandex.com](http://vestikavkaza.ru/interview/Farida-Mamedova-Istoriya-kavkazskoy-Albanii.html?utm_referrer=https%3A%2F%2Fzen.yandex.com)

Мамедова Ф. 2005, Кавказская Албания и албаны, Баку.

Мамедова Ф. 1986, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.- VIII в. н. э., Баку: Элм.-284 с.

Мушегян А. В. 1989, Псевдоалбанская литература и ее апологеты., *Լրաբեր հասարակական գիտություններ*, թիվ 8, էջ 16-33:

Труды института Востоковедения РАН, 2020, հիշр. 28, էջ 215-235:

Բախչինյան Հ. 2018, Բունիաթովականություն և ալիեվականություն, «Ազգ» օրաթերթ, 27.04.2018:

ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, գործ 185:

Նեղիազարյան Վ. 2023, Դավթակ Քերթոզը Սյունյաց քերթողական դպրոցի ներկայացուցիչ և նրա ազգային պատկանելության հարցը, Սյունիքը կրթության և մշակույթի օջախ, Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, 2, Ե., էջ 310-329:

Նեղիազարյան Վ. 2022, Դավիթ Ալավկա որդին և նրա ազգական լինելը հերքող փաստարկները հայագիտության մեջ, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողով նվիրված ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 25-ամյակին, Գյումրի, 23-25-ը սեպտեմբերի:

Նեղիազարյան Վ. 2022, Դավիթ Ալավկա որդին և նրա ազգական լինելը հերքող փաստարկները հայագիտության մեջ, Դրականագիտական հանդես, 2 /ԻԵ/, էջ 52-68:

Նեղիազարյան Վ. 2022, Եսայի Ապոմուսեն և նրա ազգական լինելը հերքող փաստարկները հայագիտության մեջ, Մեսրոպ Մաշտոց համալսարանի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Գիտության և կրթության դերը պետության զարգացման գործում, Գիտական հոգվածների ժողովածու, 29 հոկտեմբերի, Ստեփանակերտ, էջ 163-176:

Նեղիազարյան Վ. 2022, Համամ Արեւելցին եւ նրա ազգային պատկանելութեան խնդիրը հայագիտութեան մէջ , Հանդէս ամսօրեայ, Վիեննա, թիվ 1-12, էջ 489-519:

Նեղիազարյան Վ. 2021, Հայագիտական ուսումնասիրություններ, հտ. Ա, Ե., էջ 370-388, էջ 485-504:

Նեղիազարյան Վ. 2023, Մակար վարդապետ Բարխուդարյանը և նրա ազգական լինելու մասին աղբյուրներից և կեղծիքի հերքում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2023-1 /29/, էջ 6-15:

Նեղիազարյան Վ. 2018, Պատասխան աղբյուրների պրոֆեսորին, «Դրական թերթ», մարտի 23:

Մնացականյան Աս. 1966, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան:

Շահնազարյան Ա. 2015, Հայոց Արևելից կողմերի գիտության և մշակույթի գործիչների ազգային պատկանելության աղբյուրներից և կեղծիքների նկատմամբ շուրջ, Հայոց պատմության հարցեր, հտ. 16, Ե., էջ 119-120:

Պիվազյան Էմ. 1990, Նորից Մխիթար Գոշի մասին, տե՛ս Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 5, էջ 14-22:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՄՈՒՐԱԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ

*Բանաստիարական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ.
Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության և
գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ*

Ներածություն

Հայ գրականության պարբերացման խնդրին առնչվել եմք տասնամյակներ շարունակ. շուրջ 60 տարի՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում ուսանելու ընթացքում, հայագիտական կենտրոնում, ապա և 1972 - 1985 թթ. «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու ֆարտուղար աշխատելու տարիներին ակամավոր գրականագետներ՝ իմ ուսուցիչներ Մ. Մկրյանի, Հր. Թամրազյանի, Էդ. Զրբաշյանի, ապա և՛ Ս. Սարինյանի, Ս. Աղաբաբյանի, Պ. Հակոբյանի, ինչպես և հայոց հին և միջնադարյան գրականության մեծ գիտակ, սայաթնովագետ Պ. Սևակի, մեծ բանաստեղծ Հ. Շիրազի և Հայաստանի ու սփյուռքի գրական մտավորականության հետ անձնական շփումներում ու ֆննարկումներում: Պարբերացման աբեղյանական սկզբունքը համոզմունք դարձավ տասնամյակների՝ մեր գիտամանկավարժական գործունեության և ավելի քան քսան տարի ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնը ղեկավարելու ընթացքում՝ թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում դասավանդելիս, աստիճանաշնորհող տարբեր գիտական խորհուրդների անդամակցելիս: Իսկ երբ հանդգնեցինք ծագել «Հայ նոր գրականության պատմության» բունական դասագրքի երեք հատորները (դրանցից առաջին

գիրքն է լույս տեսել 2021 թվին, մյուսները տարբեր պատճառներով ուշանում են, բայց շարադրման ընթացքում են), պարբերացման խնդիրը նոր հայացքով դիտարկելն անխուսափելի է: Այսօր հայության գոյաբանական հիմքերին անմիջապես առնչվող մի ֆանի սկզբունքային խնդիրներ են միայն դիտարկելու, որոնք հույժ արդիական են հայ գրականության բոլոր դրսևորումները գիտականորեն պարբերացնելու և մեր գրավոր մշակույթի զարգացման ընթացքը հիշատակելու և տեսանկյունից:

Բանալի բառեր - Մանուկ Աբեղյան, հին, նոր, գրականություն, պարբերացում, աստիճանաշնորհում, Սայաթ-Նովա, Աբովյան, հիմնադիր, նորոգում, հիմնադիր, գրական ազգակցություն:

Եթե պարբերացումը գիտականորեն հիմնավորված չլինի և կամ խոցելի կողմեր ունենա, ապա, մեղմ ասած, սխալ կներկայացվեն թե՛ գրականության սկզբնավորման ու զարգացման ընթացքը և թե՛ առանձին հեղինակներ՝ իրենց պատմական դերով ու երկերի գեղարվեստականությամբ՝ իրական կյանքի և գեղարվեստի ճշմարտության համապատասխանության առումով: Ավելին. անխոհեմ ու հապճեպ վճիռների պատճառով կարող են լինել խոշոր սխալներ ու ծանր կորուստներ, ինչպես հայ հին գրականության դուրսմղումն է այսօրվա գիտական աստիճանաշնորհման ընթացակարգից, հայ նոր գրականության սկզբնավորումը 17-րդ դար նոր գրականության առաջին հեղինակ համարելը, հաշատուր Աբովյանին տեղափոխելը, Նաղաշ Հովնաթանին միջնադարի վերջին, իսկ նրա թոռ Սայաթ-Նովային հայ նոր գրականության հիմնադրի պատվաշնորհից զրկելը, գյուղ և գյուղական իրականություն պատկերած բոլոր հայ գրողներին գյուղագիր հորջորջելով՝ Պոռչյան, Մուրացյան, Թումանյան, Բակունց, Հր. Մաթևոսյան⁹ հզոր գեղագետներին գեղարվեստի տեսանկյունից լուրջ քննության չգրկելու և ճշգրտության, Ագեյանի, Ագապյանի, Ն. Մամիկոնյանի, Սանդալի հետ շփոթելը, մեր

⁹ Համաձայնում այսօր էլ Պերճ Պոռչյանը որպես գյուղագիր է ներկայացված, իսկ Հրանտ Մաթևոսյանն ինքն է իրեն սխալմամբ գյուղագիր համարել՝ իր համակրած ռուսական գյուղագրական արձակի նշանավոր վարպետների՝ Աստաֆ-ևի, Շուկշինի, Բելովի հետ իր ընդհանրություններից ելնելով:

ժողովրդի ստեղծած միասնական գրականությունն արհեստականորեն արևելահայ ու արևմտահայ հատվածների բաժանելը, նրանց գրական ազգակցությունն անտեսելը և նեղ - կուսակցական նկրտումներով գեղարվեստի բնական զարգացման արհեստական սահմանազատումներով ճշմարիտ արվեստագետ գրողներին գրականության պատմությունից դուրս թողնելը, իսկ թույլերին զուտ քաղաքական նպատակահարմարությամբ արհեստականորեն մեծարելն ու գերազնահատելը և այլն, և այլն:

Բոլոր այս հարցերն ըստ էության արժանի են լուրջ քննարկման ու ոչ թե կամայական հայտարարություններով, այլ ստույգ չափանիշներով գիտական քննարկման ու գնահատման: Սակայն մի գեկուցման շրջանակներում դրա անհնարինությունը մեզ պարտադրում է սահմանափակվել մի - երկու առավել կարևոր հարցերի քննությամբ՝ իսկ մյուսները ներկայացնելով ընդարձակ ուսումնասիրությամբ:

Սկսենք հետևյալից: Պատկերացնո՞ւմ եք՝ ՀՀ-ում այսօր գործում են հայ գրականություն մասնագիտությամբ երկու աստիճանաշնորհող խորհուրդ. 003-ը՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, 012-ը՝ ԵՊՀ-ում. երկուսն էլ կոչվում են «Հայ միջնադարյան և նոր գրականություն»: Իսկ ո՞ր է հայոց հին, գրականությունը, որ մինչև վերջին տարիներս եղել է այս անվանման մեջ՝ «Հայ հին միջնադարյան և նոր գրականություն» ձևակերպմամբ: Դուրս է գալիս, որ մենք անկախության շրջանում նահանջել, պետականորեն հրաժարվել ենք հայոց հին գրականությունից: Ինքս ԵՊՀ-ում գործող 012 խորհրդի նախագահի տեղակալն եմ և 003 խորհրդում էլ հաճախ եմ մանակցում պաշտպանությունների՝ պաշտոնական ընդդիմախոսի կարգավիճակով: Երկու խորհուրդներում էլ ընդդիմախոսական ելույթներում՝ գրավոր ու բանավոր, դիմել եմ բարձրագույն կրթության կոմիտեին արդի հայ բանասիրության համար անչափ կարևոր այս հարցով և առաջարկել՝ մասնագիտական քննարկումով գործող խորհուրդների անվանումներում վերականգնել հայ հին գրականությունը: Ինչպես սպասելի էր՝ լուծություն է եղել պատասխանը:

Ականավոր հայագետ Մ. Աբեղյանը 1940-ական թթ. երբ գրել է իր «Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն» կոթողային երկհատոր աշխատությունը (սրա 1-ին հատորը լույս է տեսել 1944 թ, իսկ 2-րդը՝ հետմահու՝ 1946 թ), նախ և առաջ կատարել է հայ գրականության՝ գիտականորեն հիմնավորված պարբերացում (պերիոդիզացիա): Նա հստակորեն որոշել է մեր մշակույթի պատմության մի կարևոր

րագույն մասի՝ հայ գրականության սկզբնավորման ու զարգացման շրջափուլերի սահմանները՝ մատնացույց անելով յուրաքանչյուրին բնորոշ ժանրային, բովանդակային ու գեղարվեստական յուրահատկությունները: Նրա տրամաբանական դասակարգումներն ու բնորոշումները այսօր էլ պահպանում են իրենց գիտականությունն ու արդիականությունը, սակայն, ցավոք, անտեսվում են մերօրյա վերափոխիչների կողմից: Չենք պնդում, թե աբեղյանական համակարգն անխոցելի է ու անձեռնմխելի. սակայն աբեղյանական ձեռքբերումների անխոհեմ անտեսումն այժմ կանգնեցրել է բարդ խնդիրների ու ցավալի կորուստների առաջ: Մենք, իհարկե, հին գրականության հետ կապված բոլոր հարցերը դեռևս գիտականորեն չլուծած՝ փաստացի հրաժարվել ենք հայ հին գրականությունից, և այլևս ոչ մի հավակնորդ չի կարող գիտական աստիճան ստանալ հայ հին գրականության վերաբերյալ ուսումնասիրությամբ, նույնիսկ բուհերի հայ գրականության ամբիոնները չեն կարող այդ մասնագիտությամբ ատենախոսության թեմա հանձնարարել, որի հետևանքով ունենալու ենք հին գրականության մասնագետների անհատուցելի կորուստներ:

Կարո՞ղ են հայոց հին գրականությունը թեթև ձեռքով «վերացնողները» պատասխանել, թե ինչո՞ւ, ինչ հանգամանքներում վերացավ հնագույն առասպելաբանություն, անհիշելի ժամանակներից՝ նաև գրավոր ավանդված ժողովրդական բանահյուսություն, Մատենադարան, ոսկեդարյան մատենագիրներ Ագաթանգեղոս, Բուզանդ, Խորենացի, աշխարհի հնագույն էպոսներից մեկն ունեցող Ժողովրդի, փոյուզիական, շումերական, աքքադական, Անտիկ դարաշրջանի հունահռոմեական, հին պարսկական գրականությունների, Աստվածաշնչի առաջին թարգմանությունների և սուրբգրյան հնագույն մեկնությունների, հաճախատում ճառերի ու վկայաբանությունների հետ անմիջական առնչություն ունեցած, գեղարվեստական գրավոր ու բանավոր հսկայական ժառանգություն ունեցող ժողովրդի հին գրականությունը, որ պարունակում է մարդկային հնագույն քաղաքակրթության շատ գաղտնիքներ: Ի՞նչ է այսօր հայոց հին գրականության վերացումը, եթե ոչ հարված մեր ժողովրդի գոյաբանական հիմքերին: Մինչդեռ այսօր իրենց գրականության, մշակույթի և առհասարակ պատմության հնությունը պարծեցող, ՅՈՒՆԵՍԿՕ - ով իրենց արժեքները տոնող հարևան վրացիների բոլոր գրավոր հիմքերը մեր Մատենադարանում են, հին սլավոնական գրականությամբ պարծեցող ռուսներն ու մյուս սլավոնները կերազեին մեր փաստառատությունն ունենալ, անգամ մեր, պարսիկների և տեղաբնիկ

մյուս ժողովուրդների նյութական ու հոգևոր մշակույթը օրը ցերեկով կողոպտող աղբբեջանցիները հին գրականություն ունեն, իսկ մենք, պարզվում է, ոչ:

Սա՛ է հայոց հին գրականությունից հրաժարվելու տխուր հետևանքը: Հիմա սա արդի հայ բանասիրության համար խնդիր է, թե ոչ:

Մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը իսկապես բարձրագույն հեղինակություն է թե՛ լեզվաբանների և թե՛ գրականագետների համար: Նրանցից մեկնումեկը թե մի բան է ուզում հիմնավորել, վկայակոչում է Մ. Աբեղյանին. հայրենների մի զգալի մասի (շուրջ 300) Քուչակին պատկանելը հերքողները պնդում են, թե Աբեղյանը հայրենները համարել է զուտ ժողովրդական ստեղծագործություններ՝ չիմանալով կամ «մոռանալով», որ մինչև իր աշակերտների կողմից իրեն հենց այդ պատճառով «սոցիալ-շովինիստական ճիվաղ» վտանգավոր պիտակավորումով հորջորջելը նույն Աբեղյանը Քուչակին էր համարում հայրենների հեղինակ, իսկ էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդելիս իր սաներին ռեֆերատներ էր հանձնարարում քուչակյան հայրենների թեմաներով: Հինգհոլովական լեզվաբանները 1967 թվականից ի վեր ձևաբանության մակարդակում Մ. Աբեղյանով են հիմնավորում իրենց տեսությունը՝ դարձյալ «մոռանալով», որ նույն Աբեղյանը շարահյուսության մեջ ընդունում էր յոթ հոլով և բերում սեռական և հայցական հոլովների շարահյուսական կիրառությունների բնորոշ օրինակներ: Մեր անցյալի գրականության մասին նա է գրել երկու մեծագիր հատոր և վերնագրել «Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն», իսկ հին գրականության մերժողներն ասում են, թե Մ. Աբեղյանը չի ընդունել 5-րդ դարից առաջ հայ հին գրականության գոյությունը:

Իսկ հիմա, թող մեր հնարավոր ընդդիմախոսները բառացի բերեն Աբեղյանի այն արտահայտությունները, որոնցով, իբր, նա մերժել է հայ հին գրականությունը, իսկ մենք արգո ունկնդիրների ուշադրություն ենք հրավիրում նույն Աբեղյանի հիշյալ աշխատության՝ 1942 թ. ապրիլի 8-ին գրած առաջաբանի վրա, որտեղ մեծանուն հայագետի՝ հայ գրականության շրջանաբաժանումներն են և հատկապես այն բնորոշումները, որոնք զատում - առանձնացնում և հիմնավորում են հայոց հին գրականությունը:¹⁰ Դրանով հասկանալի կդառնա՝ Մ. Աբեղյանը հայոց հին գրականությունն ընդունել է որպես առկա իրողություն, թե ոչ, և

¹⁰ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ.3, Եր., 1968, էջ 11-15:

ապա՝ ի՞նչ ստեղծագործություններ է նա համարել հայոց գեղարվեստական հին գրականության նմուշներ: Ավելին. նա առանձնացրել է հենց հին գրականության երկու տարբեր շրջափուլեր. «Այս աշխատության մեջ,– գրել է Աբեղյանը,– պարունակվում են հայոց հին գրականության առաջին երկու շրջանները: Պերիոդիզացիան արված է ոչ թե ձևակա-նորեն,– ինչպես սովորաբար վարվում են բաժանելով անգիր (բանավոր) գրականություն և գրավոր դպրություն 5-րդ դարից ի վեր,– այլ ըստ բովանդակության, նայելով գրականության մեջ արտացոլված պատմական իրականությունը: Առաջին շրջանը՝ «Նախնական առասպելա – պատմական գրականությունը», սկսվում է հնագույն ժամանակներից և հասնում է մինչև 3-րդ դար (մեր թ.): Դա միայն ավանդական բանահյուսություն է: Շրջանի կոչումը՝ «Առասպելական – պատմական», արդեն ցույց է տալիս այդ բանահյուսության ընդհանուր բնորոշ գիծը: Ուսումնասիրությունը կատարված է նկատի ունենալով հայոց նախ-նական պատմությունն ու կրոնը, օտար ազդեցություններն ու միջազ-գային առասպելաբանությունը, ինչպես նաև արվեստն ու կերպարները:

Երկրորդ շրջանը՝ «Մաքառման գրականությունը», իր մեջ անդրա-պատկերած ունի հայկական պատմական իրականությունը՝ սկսած 3-րդ դարից մինչև 11-րդ դարը: «Այս շրջանի գրականությունը,– շարունակել է Մ. Աբեղյանը,– կազմված է և՛ ավանդական բանահյուսությունից, և՛ գրավոր երկերից» (ընդգծ.՝ Ս. Մ.)¹¹:

Ձենք խորանում մանրամասների մեջ և ուշացած բանավեճի էլ տրա-մադիր չենք, սակայն այն է Մ. Աբեղյանի անվերապահ ու աներկ-միտ կարծիքը հայոց հին գրականության մասին: Ուրեմն՝ միտումնավոր է չքմեղանալով մեղքը Մ. Աբեղյանի վրա բարդելը:

Այսօր պարբերացմանն առնչվող մի լուրջ հարց ևս կա. ինչո՞վ է ավարտվում հայ միջնադարը և որտեղի՞ց է սկսվում հայ նոր գրա-կանությունը: Ձենք ընդունում գրականության ինստիտուտի վերջին այն տեսակետը, ըստ որի՝ Նաղաշ Հովնաթանը միջնադարի վերջին բանաս-տեղծն է, իսկ Սալաթ-Նովան՝ նոր գրականության հիմնադիրն ու առաջին հեղինակը, իսկ Աբովյանն այլևս հայ նոր գրականության հիմնադիրը չէ, և նորի սկզբնավորումը պետք է տեղափոխել 17-րդ դար:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 14-15:

Իսկ սա լուրջ խնդիր է, որը ոչ թե պետք է հերքել հայտարարություններով, այլ բնորոշել գիտականորեն՝ քննելով մեր գեղարվեստական մտքի շարժումն ու զարգացման ընթացքը: Կա՞ ազգային գրականություն, ուրեմն կա և այդ գրականությունը ստեղծած գրողների ազգակցություն՝ ոչ միայն ծագումնաբանական այլև գեղարվեստական ու գաղափարագեղագիտական համանման մտածողության, միասնական նպատակամիտումների գրսևորումով: Խորենացու գլխավոր հարցադրման՝ ովքե՞ր ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և դեպի ու՞ր ենք գնում, առանցքի շուրջ է ձևավորվել հայ գրողների **գրական ազգակցությունը**, որովհետև Խորենացուց սկսած՝ տարբեր **գրական ուղղությունների և հոսանքների պատկանող բոլոր հայ գրողներն իրենց տարածանք**՝ ստեղծագործություններով ջանացել են պատասխան տալ այս եռամաս հիմնահարցին: Եվ բոլոր ժամանակների հայ գրականությունը գրական ազգակցության տեսանկյունից դիտարկելու դեպքում կբացահայտվեն նաև միջնադարականությունից՝ նորին, կլասիցիզմից՝ սենտիմենտալիզմին ու ռոմանտիզմին, ռոմանտիզմից՝ ռեալիզմին անցման ու վերջինիս զարգացման տարբեր փուլերին, ինչպես նաև միջանկյալ օղակներին ու հոսանքներին բնորոշ յուրահատկությունները, տեսանելի կդառնա գեղարվեստական ժառանգորդության իրական պատկերը, և գրական երևույթները կստանան առավել հստակ պարզաբանումներ:

Դարձյալ դիմենք Մ. Աբեղյանին «Մեր հնի և նորի բաժանումը լինում է ոչ թե 18-րդ դարում, այլ 16-րդ դարու վերջերը և 17-րդի սկզբում, երբ համատարած իշխում էր ավերակ և թանձր տգիտություն»¹²: Առանձնացնենք «հնից նորի բաժանում» կապակցությունը: Այսինքն՝ այդ ժամանակներից սկսվել և մինչև XIX դարի կեսերը տևել է հայ գրականության նորոգության շրջանը, բայց ոչ բուն նոր գրականությունը, որովհետև մեծանուն հայագետը հնի մահացումն ու նորի ի հայտ գալը բնորոշել է որպես նոր վերածնության շրջան. «Եվ հնի հենց այս մահվան մեջ է, որ սկսում է ծնվել նորը՝ հնի վերածնությամբ»¹³: Իսկ «վերածնվող հինը» հայրենասիրական ու կրոնասիրական բովանդակությամբ հայոց հին մատենագրության և մանավանդ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բազմաթիվ ընդօրինակություններն ու տպագրություններն էին՝ սկսած 1695 թվականից, որոնց ընթերցումով ու եվրոպական

¹²Աբեղյան Մ., Երկեր, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. Դ, Եր., 1970, էջ 545:

¹³Տե՛ս Հայոց գրականության պատմություն, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., հ. 3, Եր., 2015: «Սայաթ-Նովա» քաժինը:

լուսավորության յուրացումով նոր սերունդները ձեռք էին բերում մեր հայրենիքի ու ժողովրդի պատմության և մշակույթի իմացություն, եկեղեցասիրություն ու ազգային ինքնագիտակցություն»։ Ահա թե ինչ էր նշանակում հնից նորին անցման դարաշրջանում վերածնունդ՝ հնի միջոցով, անցյալի մեր մատենագրության վերընթերցում, ինչպես Մ. Աբեղյանն էր ասում՝ վերածնողների նոր սերնդի կողմից։ Սակայն հետո պիտի տեսնենք, թե ինչո՞ւ էր նոր գրականության իրական հիմնադիր Խ. Աբովյանը հետևողականորեն մարտնչում «եկեղեցու, Աստծու, սրբերի ու հրեշտակների վրա» եղած գրականության դեմ և ինչպես էր հիմնավորում եվրոպական լուսավորությանն ու առաջադիմությանը համապատասխան նոր բովանդակությամբ գրականության ստեղծման պատմական անհրաժեշտությունը։

Իսկ հայ նոր գրականության սկզբնավորումը ֆրանսիականի կամ ռուսականի նման XVII – XVIII դարեր տեղափոխելու փորձերը միայն ցանկալիի շրջանակներում կարելի է դիտարկել։

Տեսե՛ք՝ նաղաշ Հովնաթանի ու Սայաթ-Նովայի «Դավթարեն՛ր», շուրջ հարյուրութսունամյա գրավոր ու տպագիր սայաթնովագիտություն և . . . բանահյուսություն։ Արդյո՞ք համատեղելի են . . .

«Սայաթ-Նովան գրականություն չէ՝ բառիս ակադեմիական իմաստով, նա բանահյուսություն է և իր պոետիկայով կարող է դիտվել գրականության զուգահեռի վրա»¹⁴, - պնդել են՝ առանց բացատրելու, թե ինչ է այս «բառիս ակադեմիական իմաստով գրականությունը»։ Ահա թե ինչերի՞ է հանգեցնում Սայաթ-Նովային միջնադարից հեռացնելն ու նոր դարի չափանիշներով գնահատելու ձախողված փորձը։

Լուրջ մտորումների տեղիք տվող այս հարցադրումները քննարկման ընթացքում են, ուստի դրանց պատասխաններն առայժմ թողնում ենք առկա՝ ակնկալելով, որ դրանք պետք է համակարգվեն ու արժանանան գիտական պատշաճ գնահատման՝ հայ գրականության պատմության գիտական նոր պարբերացման շրջանակներում։

¹⁴ Նույն տեղում, էջ 30։

SAMVEL MURADYAN

ISSUES OF PERIODIZATION OF ARMENIAN LITERATURE

Summary

This article addresses a critical issue in literary studies—the exclusion of ancient Armenian literature from modern literary processes. Such exclusion causes confusion in analyzing the centuries-old heritage of Armenian literature and hinders the recognition and evaluation of ancient Armenian cultural values.

Highlighting the detrimental consequences of this omission, the author proposes a reconsideration of periodization in Armenian literary studies. Drawing upon the work of the eminent Armenologist Manouk Abeghyan and the latest achievements in Armenology, the author advocates for correcting recent distortions in the classification of Armenian literature, the harmful effects of which are already apparent.

The article suggests restoring the inclusion of "Armenian Old" in the title "Armenian Medieval and New Literature" used by professional degree-granting councils (003 and 012) at the Abeghyan Institute of Literature. The councils should be renamed "Armenian Old, Medieval, and New Literature," as was the case previously.

The author emphasizes the importance of classifying writers chronologically and assessing their artistic contributions within the context of their era. This approach values their enduring achievements and contributions to Armenian literary thought, rather than evaluating them based on political or ideological affiliations. Furthermore, the article examines classicism, modernity, and contemporary literary trends and movements. Particular attention is given to writers who portray rural life, arguing against their mislabeling as "village writers," and calls for a more nuanced understanding of their work.

Keywords - M. Abeghyan, old, new, literature, periodization, gradation, Sayat-Nova, Abovyan, renovation, founder, literary kinship.

<https://doi.org/10.52027/801346-php-148>
hayk.hambardzumyan@matenadaran.am

**«ՍԱՍՆԱ ԾՈՒՆԵՐ» ԷՊՈՍԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԲՆԱԳՐԵՐԸ.
ՍՏԵՂԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակչության տնօրեն,
ավագ գիտաշխատող, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ*

Ներածություն

«Սասնա ծռեր» ազգային դյուցազներգությունը, որի բանավոր տարբերակները գրավել են 1873 թվականից սկսյալ, թե՛ մեզանում, և թե՛ աշխարհում առավել հայտնի է այդ տարբերակների հիման վրա 1939 թ. ստեղծված համահավաք բնագրով: Քչերը գիտեն, որ բացի այս համահավաք բնագիրը տարբեր ժամանակներում ստեղծվել են ևս երկու նմանատիպ բնագրեր, իսկ չորրորդ բնագիրը կհրատարակվի 2025 թվականին:

Առաջին համահավաքը հրատարակվել է 1939 թ., երբ Հայաստանում և ընդհանրապես Խորհրդային միությունում նշվում էր Էպոսի ստեղծման 1000-ամյակը: Այս համահավաքի կազմողներն են՝ Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը¹⁵: Երկար դադարից հետո երկրորդ համահավաք բնագիրը կազմել է Գրիգոր Գրիգորյանը՝ աշխատասիրությամբ Ավետիս Շահնուվար-

¹⁵ Սասունցի Դավիթ: Հայկական ժողովրդական էպոս, (կազմ. Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան, խմբ. Հ. Օրբելի), Երևան, 1939 թ.:

յանի ու Արամ Բուդաղյանի և հրատարակել 1993 թ.¹⁶: Երկու համահավաքներն էլ կոչվում են «Սասունցի Դավիթ»: Երրորդ, նախորդներից շատ տարբերվող համահավաքը կազմել է բանահավաք, բանագետ Տիգրան Զիթունին և հրատարակել 1942 թ.¹⁷: Այդ բնագիրը կոչվում է «Սասունական»:

Հիմնաքառեր - հայկական էպոս, Սասունցի կտրիններ, Սասունցի Դավիթ, կազմված տեխտ, Մանուկ Աբեղյան, Գրիգոր Գրիգորյան, Տիգրան Զիթունի, Հայոց էպոսի 1000-ամյակ:

Մեզանում էպոսը գիտեն «Սասնա ծռերի» գրական մշակումներով, որոնք որոշ դեպքերում նույնպես կարելի է ինքնահատուկ համահավաքներ համարել: Հայտնի ու նշանակալի են հատկապես Հովհաննես Թումանյանի՝ «Սասունցի Դավիթ» (1903 թ.), Եղիշե Ջարենցի «Սասունցի Դավիթ» (1933 թ.), Ավետիք Խաչակյանի «Սասնա Մհեր» (1938 թ.) պոեմները, Նաիրի Զարյանի «Սասնա Դավիթ» վիպակը (1966 թ.) և այլն:

Եթե գրական մշակումների դեպքում, անկախ այս կամ այն գրողի բանահյուսական նյութի հետ աշխատանքի որդեգրած սկզբունքներից, նպատակներից ու բնագրի հասցեատերերից, ակնհայտ է, որ հեղինակն ազատ է ստեղծագործական հարցերում, ապա համահավաք կոչվող բնագրերը պետք է համապատասխանեն ձևաբովանդակային որոշակի պայմանների: Տարբեր էպոսների համահավաք բնագրերի ուսումնասիրությամբ կարելի է սահմանել, թե ինչ հատկանիշներ ունի բնագրի այդ տեսակը: Էպոսի համահավաք են համարվում բանահյուսական նյութերի այն մշակումները, որոնք հիմնված են այդ ստեղծագործության մեծաթիվ բանավոր տարբերակների վրա, մեծ հարազատությամբ արտացոլում են բանավոր տարբերակների գեղարվեստական ու բովանդակային առանձնահատկությունները: Բացի այս, կարևոր է այս բնագրի հասցեատերը: Մեծ մասամբ այս բնագրերն ուղղված են ընթերցողական ամենալայն շրջանակներին, ինչով էլ պայմանավորված են դրանց լեզվական ու ոճական առանձնահատկություններն ու որոշ դեպքերում մոտիվների ընտրությունը:

¹⁶ Սասունցի Դավիթ: Համահավաք բնագիր (կազմ. Գ.Գրիգորյան, աշխատ. Ա.Շահումյան, Ա.Բուդաղյան), Երևան, 1993 թ.:

¹⁷ Տ. Զիթունի, Սասունական, Փարիզ, 1942թ.:

էպոսների համահավաք բնագրերի ստեղծման այս սկզբունքները տարբեր կերպ ընկած են հայկական «Սասնա ծռեր» էպոսի համահավաքների ստեղծման հիմքում:

1939 թ. հոբելյանական տարվա համահավաքը

«Սասնա ծռեր» էպոսի առաջին համահավաքի ստեղծումը պայմանավորված էր ԽՍՀՄ-ում 1930-ական թվականներին իշխող գաղափարախոսության ու պետական-կուսակցական քաղաքականության առանձնահատկություններով, դրանց հետ կապված բանահյուսության նկատմամբ հետաքրքրության աճով: Այսպես, 1938թ. սեպտեմբերի 7-ին հրապարակվում է Հայաստանի կենտկոմի որոշումը՝ 1939թ մայիսին «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի հազարամյա հոբելյանն անցկացնելու մասին¹⁸: Սակայն խնդիրն այն էր, որ չկար էպոսի մեկ միասնական, լայն հանրությանը մատչելի բնագիր: Մինչ այդ, չհաշված էպոսի բանավոր տարբերակների հրատարակությունները մամուլում կամ առանձին գրքերով, և դրանց մի մասը ներկայացնող 1936 թ. պատումների ժողովածուն ու գրական մշակումները, չկար ընդգրկուն բնագիր, որը նաև պետք է թարգմանվեր ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով:

Այս բնագրի ստեղծման նպատակով հոբելյանական տոնակատարությունների կազմակերպման հանրապետական կոմիտեի 1938թ. հենց առաջին նիստում որոշում է ընդունվում «Սասունցի Դավիթ» էպոսի ամբողջական, գեղարվեստական խմբագրված բնագիրը կազմելու և այն հրատարակելու վերաբերյալ: Հաստատվում է նաև բնագրի կազմողները: Համահավաքը պետք է հյուսեին Մ.Աբեղյանը, Ա.Ղանալանյանը և Գ.Աբովը: Բրիգադի նախագահ է նշանակվում Գ.Աբովը¹⁹: Սահմանվում են նաև համահավաքի ստեղծման հիմնական ու մասնավոր սկզբունքները: Առաջին հերթին ստեղծվող բնագիրը պետք է հասանելի լիներ հանրության լայն շրջանակներին ու լիներ թարգմանելի, բնականաբար համապատասխաներ երկրում իշխող գաղափարախոսության և ազգային քաղաքականության սկզբունքներին:

¹⁸ ՀԿ(ք)Կ Կենտկոմի 1938 թ. սեպտեմբերի 7-ի որոշումը «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի հազարամյա հոբելյանն անցկացնելու մասին, «Խորհրդային Հայաստան», 1938, թ. 207, 14. 09, էջ 1; «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի 1000-ամյա հոբելյանն անցկացնելու մասին Հայկական ԽՍՀ ժողովուրդի որոշումը, «Խորհրդային Հայաստան», 1938, թ. 212, 14. 09., էջ 1:

¹⁹ «Սասունցի Դավիթ» էպոսի ամբողջական տեքստի կազմումը և հրապարակումը, «Խորհրդային Հայաստան», 1938, թ. 226, 30. 09., էջ 3:

Համահավաքի կազմության սկզբունքներով սահմանավում են նաև բնագրի աղբյուրներն ու աշխատանքի կերպը՝ «Ի մի հավաքել և հաջորդականությամբ խմբագրել գրի առնված 50 տեքստերի մեջ եղած այն բոլոր էպիգրաֆները, որոնք օրգանապես կապված են էպոսի սյուժեի զարգացման հետ», բնագրի հյուսման առանձնահատկությունները՝ «...առանձին տողեր ենթարկել ուղիղական միօրինակության՝ դուրս չգալով էպոսի տողերի իմաստի ու շարահյուսության սահմաններից», լեզվա-տճական նկարագիրը՝ «Տարբեր պատումների բարբառային առանձնահատկություններն ի մի բերելու և անհասկանալիությունները վերացնելու համար՝ տարբեր բարբառների հնչունները մոտեցնել Արարատյան բարբառի հնչուններին, պահպանելով արևմտյան բարբառների մի շարք քերականական ձևեր՝ ինչպես, օրինակ, «տ», «տի», ձևերը և «կ»-ի գործածումը ներկա ժամանակի համար, սակայն հիմնականում էպոսը պատմել անցյալ կատարյալ ժամանակով»²⁰:

էպոսի առաջին ճյուղը մշակում է մեծ հայագետ Մ. Աբեղյանը, երկրորդ և երրորդ ճյուղերը մինչև «Դավիթ և Խանդավ» հատվածը՝ բանաստեղծ, թարգմանիչ Գևորգ Աբովը, իսկ Դավթի ամուսնության հատվածն ու չորրորդ ճյուղը՝ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հետազայում հայտնի բանագետ Արամ Ղանալանյանը:

Նախանշված սկզբունքներին հավատարմությամբ հյուսված բնագիրը, սակայն, հոբելյանական կոմիտեի քննարկումների ժամանակ ենթարկվում է քննադատության՝ ընտրված որոշ մոտիվների, կառուցվածքային ձգձգվածության և այլ առանձնահատկությունների պատճառով:

Պահպանվել են կոմիտեի՝ 1938 թվականին տեղի ունեցած նիստերի սղագրությունները, որտեղ հստակ տեսանելի է նիստերի մասնակիցների միտումը՝ համահավաք բնագրից դուրս թողնել «կրոնական մոտիվներն» ու ընդհանրապես «կրոնական ոգին», ինչին ընդդիմանում է համահավաքի առաջին ճյուղի կազմող ու էպոսի լավագույն գիտակ Մ. Աբեղյանը²¹:

Այսպես, Մ.Աբեղյանից պահանջում են, օրինակ, խմբագրել էպոսի առաջին ճյուղի՝ Սանասարի՝ զենքերը ծովի հատակում գտնվող եկեղեցում գտնելու մոտիվը: Առաջարկվում է էպոսից դուրս թողնել նաև բոլոր հոգևորականներին ու քրիստոնեական ծիսական արարողությունների հետ կապված մոտիվները:

²⁰ Սասունցի Դավիթ: Հայ ժողովրդական վեպ, էջ XXXI:

²¹ Մ.Աբեղյան, Երկեր, հատոր Ը, Երևան, 1985 թ., էջ 637-648:

Այս դիտողություններին մեծ հայագետը հակադարձում է, որ այդ մոտիվների շրջագրվումը կգրկի համահավաքը ժողովրդական ոգուց, հավաստիությունից. «Կրոնականը, ճիշտ է, շեշտված է. ես համաձայն եմ, որ կրոնական <մոտիվների> որոշ մասը հանենք, բայց մենք չենք կարող կրոնական <ոգին> ամբողջովին հանել, որովհետև մենք գիտենք, որ ժողովուրդը պատերազմից առաջ պատարագ է անում: Այդպիսի բաները հանելուց՝ մենք վեպը կգրկենք ժողովրդայնությունից: Կան արտահայտություններ, որոնք չենք կարող հանել, որոնք դարձել են մեր ժողովրդի սովորական արտահայտությունները: Օրինակ՝ գյուղացին ասում է. «Ձին խոսում է աստծու հրամանով»²²:

Այդուհանդերձ, բուռն քննարկումների ու համահավաքի հեղինակային խմբի լարված աշխատանքի արդյունքում, շատ կարճ ժամանակում ստեղծվում է Հպոսի համահավաքը: Առաջին անգամ հենց այս բնագրում է մեզ ծանոթ ամբողջական տեսքով ներկայացվում Սասնա ծռերի դյուցազնական տոհմի չորս սերունդների պատմությունը: Հաշվի առնելով դիպաշարային առանձին հատվածների ու մոտիվային խմբերի առկայությունը, նաև նյութի ընկալումը դյուրացնելու համար, այստեղ առանձին ենթավերնագրերով առանձնացվել են կառուցվածքային այլ միավորներ ևս: Օրինակ՝ առաջին ճյուղում՝ «Կռիվ Բաղդադի խալիֆի դեմ», «Սանասարի և Բաղդասարի ամուսնությունը», երկրորդ ճյուղում՝ «Մհերը խնամում է Սասունը», «Մեծ Մհերի կռիվը Մըսրա Մելիքի դեմ», երրորդ ճյուղում՝ «Դավթի կռիվը Մըսրա Մելիքի դեմ», սա էլ իր հերթին՝ «Մանուկ Դավիթը Մըսրում», «Դավիթը հովիվ», «Որսորդ Դավիթը վերաշինում է հոր վանքը և պատուհասում խոլբաշու զորքերին» մասերի և այլն:

Անկախ քննադատությունից, այստեղ հեղինակներին հաջողվել է պահպանել պատմումների հիմնական մոտիվաշարը, ազգագրական կոլորիտն ու առանձնահատկությունները:

Բնագրի հրատարակությանը նախորդող քննարկումների ժամանակ էլ որոշվում է բանավոր տարբերակներում տարբեր անվանումներով ու ծավալներով փոխանցված Հպոսը անվանել ոչ թե ընդհանուր «Սասնա ծռեր» կամ «Սասնա տուն», այլ երրորդ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սասունցի Դավիթ»: Այս ընտրությունը պայմանավորված էր ինչպես բովանդակային ու գաղափարական, այնպես էլ ավելի գործնական պատկերացումներով. Հպոսը պետք է թարգմանվեր խորհրդային միութ-

²² Նույն տեղում, էջ 643:

յան ժողովուրդների լեզուներով, իսկ «ծուռ» բառը շատ դժվար է միանշանակ թարգմանել:

Համահավաքների ստեղծման հիմնական խնդիրը լեզուն է. էպոսն ավանդվել է Մշո, Մոկաց ու Վանի բարբառներով, շատ պատումներում լեզուն խառն է, ըստ այդմ էլ շատ դժվար է գտնել գրական արևելահայերենի մոտ մի տարբերակ, որպեսզի չկորչի ոճն ու կոլորիտը: Այս առիթով Մ. Աբեղյանը գրում է. «...այժմ մենք չենք կարող ետ գնալ, միջնադարյան արհեստական գրաբարով գրել. մեր նպատակն է տալ ժողովրդի լեզուն. որոշ երանգ, անշուշտ, պետք է պահպանվի»²³: Լեզվական արհեստականությունից խուսափելու համար Մ. Աբեղյանը նույնիսկ պահպանում է որոշ թուրքերեն բառեր, իսկ թարգմանելու դեպքում էլ ձգտում է հավատարիմ մնալ ժողովրդական խոսակցական լեզվին. «Ձինք բառը ես չփոխեցի, որովհետև այդ գույտ ժողովրդական է. դովլաթ բառը պահեցի և հարստություն բառով չփոխանակեցի, որովհետև այստեղ առաջ էր գալիս հնչյունափոխություն. ուրեմն՝ որոշ նկատառումով պահել եմ»²⁴:

Նույն սկզբունքով կազմողը պահպանել է խարջ (հարկ), դավա (ուղտ), ազիզ (սուրբ), խավար, քոշք, սարայ (ապարանք), սալիս, թամամ, սաղլամաթ, ջանմը, լաճ, հանապազ և շատ այլ բառեր: Ուշագրավ է, որ այս բառերի օգտագործումը ճիշտ չի համարում Ավ. Իսահակյանը. «էպոսի լեզուն պետք է միասնություն ունենա, պետք է այն տպավորությունը թողնի, որ ժողովուրդն է խոսում և ոչ թե զանազան բառեր գործածվի»²⁵, -ասում է բանաստեղծը: Իհարկե, այդ միասնությունն ապահովելը շատ դժվար գործ է, թեև ի պատիվ կազմողների պետք է ասել, որ նրանք ընդհանուր առմամբ լուծել են այդ խնդիրը:

Բացի լեզվից, տարբեր է նաև էպոսի առանձին խմբերի պատումների ուղիքն ու տոնայնությունը. Մշո ու Ալաշկերտի պատումները զարգանում են դանդաղ, էպիկական վեհությամբ, իսկ Մոկաց պատումները, որոնք նաև երգային հատվածներ ունեն զարգանում են արագ: Եվ այս տարբերությունները նկատելի են համահավաքում. «Այս գեղարվեստական գործ չի, սա մի տեսակ մեխանիկական գործ է, որովհետև մեզ թույլատրելի են մի-մի բառ, մի-մի տող ավելացնելու: Մեզ մնում էր

²³ Նույն տեղում, էջ 638:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 641:

դասավորել, թե առաջ ո՛ր մասը, ո՛ր տողը դնենք, հետո՞ որը, այսինչ միտքը որի՛ց առաջ դնենք, որպեսզի պատկերը ճիշտ լինի, ինչպե՞ս գրենք, որպեսզի կրկնություն չլինի...», -նշում է Մ. Աբեղյանը²⁶:

Համահավաքի կազմողները ձգտել են հնարավորության դեպքում ընդգրկել պատումներում առկա գեղարվեստական միջոցները, առասպելական կամ պատմական նշանակություն ունեցող մոտիվները, ինչն էլ որոշ դեպքերում կարող է ձգձգվածության տպավորություն թողնել: Այս մասին է նշում, օրինակ, քննարկումներին մասնակցող Ստեփան Զորյանը և առաջարկում որոշ կրճատումներ անել առաջին ճյուղում:

Էլ ավելի բարդ գաղափարական խնդիրներ կային երրորդ ճյուղի հետ կապված. քննարկվում են հատկապես Դավթի՝ Մարութա սուրբ Աստվածածին եկեղեցու հայտնաբերման, վերականգնման ու այնտեղ հոգևորականներ հաստատելու մոտիվները, նաև հոգևորականների հետ խնջույք անելու դրվագը: Հետագայում երրորդ ճյուղը մշակող Գ.Աբովը դուրս է թողել այդ հատվածը:

Անկախ այս փոփոխություններից ու կրճատումներից, 1939 թվականի համահավաքը գրեթե ամբողջությամբ արտահայտում է «Սասնա ծռերի» էությունը, նրա մշակութային, ազգագրական յուրահատկությունները, սակայն ինչպես նշեցինք, գաղափարական նկատառումներով այնտեղ շատ բան է փոխվել. նվազագույնի են հասցվել հոգևոր-կրոնական մոտիվները: Ընդգծվել են ժողովրդական ստորին խավերի համերաշխության ու բարձր դասերին՝ ազնվականներին ու հոգևորականներին հակադրության և մի շարք այլ գաղափարներ, որոնք հնացած են և հակասում են էպոսի ոգուն:

«Սասունական»-ը՝ իբրև համահավաք

Ժամանակագրորեն հաջորդ բնագիրը՝ ծնունդով Վանից բանահավաք ու գրող Տիգրան Զիթունու «Սասունականն» է: Տ. Զիթունին նաև էպոսի պատումներ է գրառել, որոնք էլ դարձել են նրա ստեղծած բնագրի հիմքը: Հասկանալու համար այս տեքստի ստեղծման սկզբունքները, պետք է ծանոթանանք հեղինակի՝ էպոսի մասին պատկերացումներին ու վերաբերմունքին: Հեղինակն անչափ բարձր է գնահատում էպոսը, համարելով այն մեր ժողովրդի «...բազմադարեան ապրումներուն՝ կազմական ու հոգեկան դիմագիծը մարմնաւորող ժողովրդական պատմական

²⁶ Նույն տեղում, էջ 645:

վէպ»²⁷: Այս պատճառով էլ նա ձեռնարկում է բնագրի ստեղծումը, որը հեղինակային բնութագրմամբ, դառնալու է նրա «սեւեռուն ու հարաճուն մտածումի գաւակը»²⁸ և արտացոլում հայ ժողովրդի ամբողջ կյանքն ու ոգին, նրա անցյալը, ներկան ու ապագան:

«Սասունականը» կազմելիս Ջիթունու գլխավոր նպատակն է եղել իր գրառած և մի շարք այլ տարբերակների միահյուսումով տալ մի լիակատար բնագիր, որը պետք է դառնար մեր ազգային բանաստեղծության գլուխգործոցը և նպաստեր ազգային վերածննդին: Հեղինակը «Սասունականի» վրա սկսել է աշխատել է 1907 թվականից, կազմումն ավարտել է 1939 թ., իսկ խմբագրումը՝ 1942թ.: Առաջաբանում աշխատանքի հիմնական սկզբունքները սահմանվում են այսպես. «Մեր սքանչելի Ազգային Դիցազնավէպը՝ իրեն վայել դիցազներգական ոճով ու հիւսուածքով տալու աշխատանքին մէջ՝ իմ ճիգը եղած է դնել ամեն բառ՝ իր՝ ճիշդ տեղը . ամեն շեշտ՝ իր տեղը - ամեն պատկեր՝ իր տեղը. ամեն պատում՝ իր շափական գնացքովը: Եւ ամենքը մէկ՝ միայն եւ միայն իրար լրացնող մեր բազմահարուստ փոփոխականներուն եւ ժողովրդական հուժկու բարբառին՝ հարազատ աղբիւրներուն հետ քալեցնել կարկաշել տալով: Զարդարանքի պէտք չկայ: Վէպն ինքնին՝ «իր ջուրովը»՝ աննման գոհար մըն է»²⁹:

Օգտագործելով իրեն հասանելի մոտ 40 պատում, ի տարբերություն նախորդ համահավաքի, որի համար հիմք են հանդիսացել հիմնականում մոկաց պատումները, Տ. Ջիթունին որպէս նոր բնագրի հիմք ընտրել է Վանից, Սպարակերտից ու Կարկառից գրառված պատումները: Հեղինակը ձեռքի տակ ունեցել է էպոսի պատումների ակադեմիական հրատարակության այդ ժամանակ տպված միայն առաջին հատորը: Ծանոթ է եղել 1939 թ. համահավաք բնագրին, սակայն բացասական կարծիք է ունեցել. «Առանց ծանրանալու այն էական կէտերուն վրայ, որ աններելի կը դարձնեն «Համահաւաք Տեկստ»-ին մեջ կատարուած քմահաճ, անճիշդ եւ հակագիտական անդամահատութիւնները, պարտք կ'զգամ սակայն կրկնելու հոս, որ այդ Տեկստին վրայէն կատարուած թարգմանութիւնը ո՛չ մեր վէպին ամբողջութիւնն է, ո՛չ ալ հարկ եղած յարգը կրնայ ցուցանել օտարներուն: Մեր Դիցազնավէպը, իր լիակատար կեցուածքին մէջ, զմայլելի գլուխ-գործոց մըն է: Համահաւաք Տեկստը՝

²⁷ Տ. Ջիթունի, Սասունական, Փարիզ, 1942թ., էջ 15:

²⁸ Նույն տեղում, էջ 46:

²⁹ Նույն տեղում, էջ 55:

խեղանդամ ստուեր մըն է միայն, եթէ ճշմարտութիւնը պիտի ըսուի»³⁰, - գրում է հոգւածներից մեկում:

Պատումի հյուսման հիմնական սկզբունքը՝ բանավոր տարբերակների լեզվաոճական առանձնահատկությունների պահպանումն էր, սակայն հեղինակը բավական փոփոխությունների է ենթարկել բարբառային բառերը, ինչ-որ չափով գրականացրել դրանք՝ հարմարեցնելով ուրիշին ու հանգին: Ձգտելով հնարավորինս պահպանել պատումների բոլոր առանձնահատկությունները՝ կազմողը իրականում ստեղծել է քննական բնագրի մոտեցող մի խճողված տեքստ, որտեղ չկա գաղափարական ու ոճական միասնություն ու ամբողջականություն: Բավական է նշել, որ Զիթունու բնագիրն ունի յոթ ճյուղ՝

Սանասար եւ Բաղդասար,
Առիւծ-Մըհէր,
Դաւիթ-Մըհէր,
Թըլոլ-Դաւիթ (հանրածանօթ Սասունցի-Դաւիթ, ուրեմն Չորրորդ
ճյուղին հերոսը),
Պզտիկ-Մըհէր,
Պարոն-Տէր-Ներսէս (որուն հետ նաեւ որդիները Աբլաղ ու Իշխան),
Համգա-Պահլաւան (որուն հետ նաեւ որդին Դերենիկ):³¹

Թեեւ էպոսի որոշ ասացողներ նշում են 7 կամ 40 ճյուղի մասին, սակայն դրանց առկայությունը հիմնավոր չէ: Այս դեպքում Տ. Զիթունին ձգտում է ապացուցել, որ այդ ճյուղերը պետք է լինեն: «Սասունականում» առանձնացվել են տարբեր անուններով հանդես եկող միևնույն կերպարները, ստեղծվել են հավելյալ կերպարներ, համադրվել մոտիվները:

Համահավաքի ընթերցումը ցույց է տալիս, որ թեեւ հեղինակը ահռելի աշխատանք է կատարել, նյութին մոտեցել անչափ մեծ պատասխանատվությամբ ու ակնածանքով, սակայն այս բնագիրը մասամբ հեռացել է էպոսի համահավաքների ստեղծման գլխավոր սկզբունքից՝ մատչելիությունը ընթերցողական լայն շրջանակին: Ձգտելով մեր ազգային վեպը ներկայացնել իր ամբողջ հարստությամբ, հավատարիմ մնալ բանավոր տարբերակներին, հեղինակը կողքկողքի է դրել տարբեր

³⁰ **Տ.Զիթունի**, Ինչպես խմբագրեցի ֆրանսերեն «Սասունական»-ը, «Հայաստանի կոչնակ», Նիւ-Յորք, 1950թ., № 31, էջ 727:

³¹ **Տ.Զիթունի**, Սասունական, էջ 3:

միջադեպերն ու հատվածները, բնագիրը ծանրացրել շատ մանրամասներով, որոշ կրկնություններով, որ բարդացրել է մեծ ծավալով այս գրքի ընթերցումը:

1993 թ. համահավաքը

1993 թ. է հրատարակվել էպոսի առաջին վերջին լայն հանրություն հիմնականում անհայտ մնացած՝ «Սասունցի Դավիթ» անվանումով համահավաքը: Այս բնագիրն ի տարբերություն նախորդի, կազմվել է մասնագետ-բանագետների կողմից՝ հիմք ընդունելով այդ շրջանում հայտնի ու հրատարակված շուրջ 100 պատում: Այս համահավաքի կազմողներն են՝ Գ. Գրիգորյանը, Ա. Շահումարյանը և Ա. Բուդաղյանը: Բանագետ Գրիգոր Գրիգորյանը ոչ միայն էպոսի ուսումնասիրող է, այլ նաև գրառող: Երկար դադարից հետո հենց նա է 1968-ին գրառում և 1969-ին տպագրում էպոսի նոր պատում³²: Ավելի ուշ Գրիգոր և Վահագն Գրիգորյանները գրառել են այլ պատումներ ևս, որոնք 1977 թ. տպագրվում են առանձին գրքով³³:

Բացի գրառված նոր պատումներից, այս համահավաքը կազմելիս հեղինակները ձեռքի տակ ունեցել են 1971-73 թթ. Հայաստանի 65 բնակավայրերից Ս. Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի գրառած պատումները, որոնցից 14-ը հրատարակվել են «Սասնա ծռերի» Գ հատորում³⁴: Համահավաքի առաջաբանում կազմողները ներկայացնում են բնագրի ստեղծման հիմնական սկզբունքները: Մասնավորապես նշվում է. «Մեր ձեռքի տակ եղած ավելի քան քառասուն նոր պատումը՝ սյուժեների, միջադեպերի, կերպարների ակնհայտ հարստությամբ հանդերձ, մեզ հնարավորություն չի տվել սյուժետա-չին գծի զարգացման նոր ընթացք ընտրելու կամ՝ որոշ մի-ջադեպեր նորովի կազմելու: Ընդհանրապես մենք ձգտել ենք ոչ թե տարբերվել նախորդից և հանուն դրա քմահաճորեն շեղվել կամ անտեսել ավանդույթի ու վիպական շարունակության ուժով մեզ հասած գեղարվեստական արժեքները, այլ դրանք

³² Հայ ժողովրդական էպոսի նոր պատումը, «Գարուն», 1969 թ., համար 7, էջ 2-14:

³³ Սասունցի Դավիթ, նոր պատումներ, հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գր. և Վ. Գրիգորյանները, Երևան, 1977 թ.:

³⁴ Սասնա ծռեր, հատ. Գ /գրառ. ու հրատ.՝ Ս. Հարությունյանն ու Ա. Սահակյանը/, Երևան, 1979 թ.:

օգտագործելով՝ լրացնել և հնարավորին չափ բնագրին տալ նոր որակ»³⁵:

Գնահատելի է, որ հեղինակները ոչ միայն ձգտել են պահպանել 1939 թ. համահավաքի հիմնական սկզբունքները, այլ նաև հենց այդ բնագրին են համարել հիմք և օգտագործել այն որպես հիմնական պատում. «Համահավաքը ամբողջական ու կատարյալ ներկայացնելու ձգտումով, իբրև լավագույն պատում, օգտագործել ենք նաև նախորդ համահավաքը, վերցնելով այն ամենալավագույնը, ինչ կա նրա մեջ: Ընթերցողը մեր բնագրի որոշ միջադեպերում ու հատվածներում նմանություն կգտնի նախորդ համահավաքի հետ»³⁶:

Սա կարևոր է ոչ միայն նախորդ բնագրի արժեւորման տեսանկյունից, այլև այն առումով, որ անհնար է հաշվի չնստել այն հանգամանքի հետ, որ նախորդ բնագիրը հանրային մեծ ճանաչում ունի Հայաստանում և արտասահմանում, այն ընթերցվել և ուսումնասիրվել է, դասավանդվել դպրոցներում: Այս դեպքում շատ դժվար է մեծ փոփոխություններով նոր բնագիր ներկայացնելը, քանի որ այն կարող է ուղղակի չընդունվել, նույնիսկ այն պարագայում, եթե հարազատորեն արտացոլում է էպոսի բանավոր նյութը:

Նոր համահավաքի հեղինակները ձեռքի տակ ունենալով նոր պատումներ, նաև աշխատանքի համար բավականաչափ ժամանակ, կարողացել են շտկել նախորդ բնագրի բովանդակային որոշ շեղումներ, առանց լուրջ փոփոխությունների կատարել նոր մոտիվների ու միջադեպերի հավելումներ, իրապես հարստացնելով բնագիրը. «Բազմաթիվ նման միջադեպերից և սյուժեներից վերցրել ենք միայն գաղափարական ու գեղարվեստական տեսակետից լավագույնը, լրացնելով ու հարստացնելով այն պատումներում եղած նոր բաղադրամասերով, միջադեպերով, սյուժեներով, ենթասյուժեներով և առանձին բառերով: Տառացիորեն ոչինչ ինքնահնար չի ավելացվել համահավաքին՝ սկսած առանձին բառերից, վերջացրած սյուժեներով ու միջադեպերով»³⁷:

Լեզվական տեսանկյունից նույնպես այս համահավաքի համար հիմք է հանդիսացել նախորդը: Հեղինակները ձգտել են պահպանել բարբառը, սակայն միօրինակացրել են քերականական ձևերի օգտագործումը: Պատումի ժամանակային կազմակերպման համար գործածել են «տ»,

³⁵ Սասունցի Դավիթ: Համահավաք բնագիր (կազմ. Գ.Գրիգորյան, աշխատ.Ա.Շահումյալյան, Ա.Բուդալյան), Երևան, 1993 թ., էջ 4:

³⁶ Նույն տեղում, էջ 3:

³⁷ Նույն տեղում, էջ 4-5:

«տի» ձևերը և «կը»-ն ներկա ժամանակի համար, բայց հիմնական պատումը շարադրել անցյալ ժամանակով:

Լեզուն մոտեցնելով Արարատյան բարբառներին, այդուհանդերձ պահպանել են արևելյան բարբառների շատ ձևեր: Օրինակ՝ «վեր ձիուն», «մեջ երկիր», «վեր երդիս», «քեզի», «էս դին», «էն դին» և այլն:

Բացի այդ հայերեն են թարգմանվել օտարաբանությունները, գտնելով համարժեքներն այնպես, որպեսզի արհեստական չստացվի:

Այս մեծ աշխատանքի արդյունքում ստացվել է կառուցվածքային ու բովանդակային տեսանկյունից ամբողջական, կուռ, էպոսի էությունը փոխանցող մի բնագիր, որը ցավոք լայն հանրությանն անհայտ է մնացել: Գուցե պատճառն այն է, որ այն չի բերել մեծ փոփոխություններ, նաև շատ մեծ է եղել նախորդ բնագրի ազդեցությունը:

Նոր համահավաքը

Ինչպես տեսանք, որքանով էլ տարբեր տարիների ստեղծված համահավաքները պատմական կարևոր նշանակություն են ունեցել մեր ազգային էպոսի տարածման, հանրահռչակման գործում, սակայն յուրաքանչյուր ժամանակ բերում է էպոսի ընկալման իր առանձնահատկությունները և դրանց հետ կապված փոխվում են համահավաքի ստեղծման նպատակները, գաղափարական ուղղվածությունը և բանավոր նյութից օգտվելու սկզբունքները: Ըստ այդմ էլ՝ առաջանում է էպոսի նոր, ընդգրկուն բնագիր ունենալու անհրաժեշտությունը: Հատկապես արդեն անկախության իրականության մեջ վաղուց հասունացել է նոր համահավաք ստեղծելու պահանջը:

Նոր համահավաքի ստեղծման աշխատանքները, որոնք նախաձեռնել է «Անտարես» հրատարակչությունը «Բազալյան եղբայրներ» հիմնադրամի հովանավորությամբ սկսվել են 2021 թվականին: Բուն աշխատանքներին նախորդել են քննարկումներ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողների, էպոսագետների, բանագետների, գրականագետների հետ: Որպես ընդհանուր սկզբունքներ սահմանվել են՝ հարազատությունը բանավոր ավանդված տարբերակներին, լեզվի մատչելիության ապահովումը, խորհրդային գաղափարախոսական կաղապարների հաղթահարումը և պետականության գաղափարների ընդգծումը:

Համահավաքի կազմումը վստահվել է ինձ: Թեև համահավաքի ստեղծման աշխատանքները տևել են 4 տարի, սակայն կարելի է ասել, որ դրանք նախապատրաստվել են շատ ավելի վաղ: Ես գրեթե երկու տասնամյակ զբաղվում եմ «Սասնա ծռեր» էպոսի բանավոր տարբե-

րականների տիպաբանական քննություններ, կազմել եմ պատումների բոլոր խմբերն ընդգրկող մոտիվային ուղեցույցներ: Այդ ուսումնասիրությունների արդյունքում հրատարակվել է «Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ»³⁸ մենագրությունը: Ըստ այդմ էլ՝ նոր համահավաքը հիմնված է բանավոր տարբերակների մոտիվային կազմի իմ ուսումնասիրությունների վրա:

Աշխատանքի առաջին փուլում կատարել եմ էպոսի բանավոր, շուրջ 120 տարբերակների և նախկինում ստեղծված համահավաքների ու գրական մշակումների ընթերցում և անհրաժեշտ հատվածների նշումներ: Ապա առանձնացրել ենք նոր համահավաքի գաղափարական առանցքին համապատասխան մոտիվներն ու դիպաշարերը, ստեղծել համապատասխան ուղեցույցներ:

Հաջորդ փուլերում առանձնացրել ենք բանավոր տարբերակների գեղարվեստական արտահայտչամիջոցները (մակդիր, համեմատություն, չափազանցություն, նկարագրություններ, ներդիր ժանրեր): Ապա հաջորդել է համահավաքի կազմման, խմբագրման բուն ընթացքը, որն արդեն ավարտին է մոտենում: Ինչպես նախորդ համահավաքների դեպքում է, մեզ համար էլ աշխատանքի գլխավոր սկզբունքը եղել է բանավոր տարբերակների լեզվական, գեղարվեստական յուրահատկության պահպանումը: Զգտել ենք բաց չլնողնեղ գեղարվեստական արտահայտության որևէ ինքնատիպ միջոց, ներգրավել այն մոտիվները, որոնք ունեն առապելաբանական խորք, պատմական ու գաղափարական կարևոր նշանակություն:

Իհարկե, այս ամենն իրականացնելը բավական բարդ է, քանի-որ էպոսի պատումները շատ տարբեր են, հնարավոր չէ բոլոր ուշագրավ մոտիվները մեկտեղել: Էլ ավելի բարդ է տիպաբանական տարբեր խմբերի, օրինակ՝ Մոկաց ու Մշո առանձին, անչափ հետաքրքիր սյուժեների համագրումը, քանի որ դրանք հակասում են միմյանց: Օրինակ, Ալաշկերտի տարբերակներում Քեռի Թորոսի՝ Դավթին Մսրից վերադարձնելու դրվագում հերոսը հրաժարվում է անցնել Մելիքի թրի տակով: Մոկաց պատումներում այս դրվագը չկա: Դրա փոխարեն կա մեկ այլ տպավորիչ մոտիվ. Դավիթը Սասուն է վերադառնում փահլեւանների ուղեկցությամբ և Բաթմանա կամրջի վրա պատուհասում նրանց: Ըստ այդմ էլ՝ ստիպված ենք եղել ընտրություն կատարելու կամ փորձել ինչ-որ կերպ համագրել

³⁸ **Հ. Համբարձումյան**, Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, 2018:

մոտիվները, սակայն խուսափելով կամայական հավելումներից ու կրկնություններից: Եվ այսպիսի խնդիրները շատ են եղել:

Մենք գերազանցապես թարգմանել ենք օտար բառերն ու արտահայտությունները, սակայն ընտրել ենք հայերեն այնպիսի համարժեքներ, որոնք ոճի ու հնչերանգի տեսանկյունից մոտ են բնագրին:

Նույն կերպ փոխադրել կամ մեկնաբանելով ենք ներկայացրել բարբառային անհասկանալի բառերը, այնպես որպեսզի բնագիրը չծանրաբեռնենք ծանոթագրություններով:

Պատումի ժամանակային կազմակերպման տեսանկյունից՝ հարազատ մնալով բանավոր տարբերակներին՝ ընտրել ենք անցյալ կատարյալ և «կը» մասնիկով ներկա ժամանակի ժամանակաձևերը:

Բովանդակային առումով մեր համահավաքի հիմնական նորությունը ազնվականության, պետականության հետ առնչվող մոտիվների ընդգրկումն է, ինչը որոշակիորեն փոխում է Սասնա հերոսների, հատկապես Դավթի մասին ավանդական պատկերացումը: Էպոսն իհարկե, գրառման ժամանակ գեղջկականացել է, սակայն պատումների ուշադիր ընթերցանությունը բացահայտում է մեր հերոսների ազնվական ծագումն ու դուցազներգության՝ ազնվական միջավայրում ստեղծված լինելը, միջնադարյան ֆեոդալական վարք ու բարքի հիշողությունները, ինչն էլ հնարավորություն է տալիս այդ մոտիվները քննել հայ միջնադարյան մատենագրության հետ համեմատությամբ:

Բովանդակային մյուս կարևոր հավելումը էպոսի վիպասացների ու ունևորների աշխարհընկալումն ու հավատալիքները ներկայացնող քրիստոնեական-կրոնական մոտիվների ու պատկերների ընդգրկումն է: Դրանք, ինչպես տեսանք, խորհրդային շրջանում իշխող գաղափարախոսության հետ անհամապատասխանության, իսկ հետագայում ավանդույթի ուժով անտեսվել են, սակայն իրապես առանցքային են էպոսի էության ու գաղափարախոսության ներկայացման տեսանկյունից:

Բացի վերոթվարկյալը, կան համահավաքի հետ կապված շատ այլ խնդիրներ, որոնց թերեւս բախվել են նաև նախորդ համահավաքների կազմողները. օրինակ՝ հերոսների ու գործողությունների վայրերի ընտրությունը, արդյո՞ք պետք է ընտրել առասպելական-հեքիաթային անվանումներ, թե՞ իրական ու պատմական: Կամ պե՞տք է ընթերցողական ամենալայն շրջանակի համար պատրաստվող բնագրում լինեն արյունոտ տեսարաններ, ժողովրդական խոսքին բնորոշ գուհկաբանություններ ու հայհոյանքներ: Կամ կարո՞ղ ենք ընդգրկել այնպիսի մոտիվներ, որոնք չեն համապատասխանում էպոսի հերոսների մասին մեր ավանդական

պատկերացումներին, սակայն ներկայացնում են միջնադարյան մշակութ-
թի ու կենցաղի իրողություններ:

Այս հարցերը աստիճանաբար և որոշակիորեն լուծել ենք՝ գլխավոր
սկզբունք ունենալով հավատարմությունը բանավոր բնագրերին ու հաշ-
վի առնելով նաև մեր ընդհանուր կոլեկտիվ հիշողության մեջ էպոսի ու
սիրելի ազգային հերոսների մասին եղած պատկերացումները:

HAYK HAMBARDZUMYAN

THE COMPILED TEXTS OF THE EPIC “DAREDEVILS OF SASSOUN” (“SASNA TSRER”): PRINCIPLES AND OBJECTIVES OF THEIR CREATION”

Summary

The Armenian epic “Daredevils of Sassoun” (“Sasna Tsrer”, “David of Sassoun”) epic, like many other oral epics, is better known and more widely disseminated not through its oral variations, but through what are known as “compiled texts”. The Armenian national epic has three such compiled versions, with a fourth currently in the process of being assembled. The first compilation or “official” text was published in 1939, when Armenia, and the Soviet Union in general, celebrated the 1000th anniversary of the epic's creation. This compilation was prepared by Manuk Abeghyan, Gevorg Abov, and Aram Ghanalanyan. After a long hiatus, the second compilation, edited by Grigor Grigoryan, with the efforts of Avetis Shahsuvaryan and Aram Budaghyan, was published in 1993. Both of these compilations are titled “David of Sassoun”. The third compilation, which differs significantly from the previous ones, was prepared by the folklorist Tigran Chituni and published in 1942. This version is titled “Sasunakan”.

Compiled versions of the epic are considered to be those textual adaptations of folkloric material that are based on numerous oral versions of the work, faithfully reflecting the artistic and thematic characteristics of the oral tradition. Moreover, the intended audience of these texts is of great importance: these compilations are primarily directed at the broadest possible readership, which explains their linguistic and stylistic features, as well as, in some cases, the selection of specific motifs.

The principles guiding the creation of these compiled epic texts are reflected in various ways in compiled texts of “Daredevils of Sassoun”. However, each of the four compilations is shaped by its specific historical context, the prevailing ideology, the compilers' attitudes toward the epic, and their knowledge of the material. These distinctive characteristics of each compilation are discussed in this article.

Keywords - Armenian epic, Daredevils of Sassoun, David of Sassoun, compiled text, Armenian epic, Manuk Abegyan, Grigor Grigoryan, Tigran Chituni, 1000th anniversary of the Armenian epic.

Գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր, հատոր Ը, Երևան, 1985:
2. Հայ ժողովրդական էպոսի նոր պատումը, «Փարուն», 1969 թ., համար 7:
3. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1938 թ. սեմբեմբերի 7-ի որոշումը «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի հազարամյա հոբելյանն անցկացնելու մասին, «Խորհրդային Հայաստան», 1938, թ. 207, 14. 09, էջ 1; «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի 1000-ամյա հոբելյանն անցկացնելու մասին Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի որոշումը, «Խորհրդային Հայաստան», 1938, թ. 212, 14. 09.:
4. Զիթունի Տ., ԻՆչպէս խմբագրեցի Քրանսերէն «Սասունական»-ը, «Հայաստանի կոչնակ», Նիւ-Յորք, 1950թ., № 31:
5. Զիթունի Տ., Սասունական, Փարիզ, 1942:
6. Սասնա ծռեր, հատ. Գ (գրառ. ու հրատ.՝ Ս. Հարությունյանն ու Ա. Սահակյանը), Երևան, 1979:
7. «Սասունցի Դավիթ» էպոսի ամբողջական տեքստի կազմումը և հրապարակումը, «Խորհրդային Հայաստան», 1938, թ. 226, 30. 09.:
8. Սասունցի Դավիթ, նոր պատումներ (հավաք. և հրատ. պատրաստեցին Գր. և Վ. Գրիգորյանները), Երևան, 1977:
9. Սասունցի Դավիթ: Համահավաք բնագիր (կազմ. Գ.Գրիգորյան, աշխատ. Ա.Շահսուվարյան, Ա.Բուդաղյան), Երևան, 1993:
10. Սասունցի Դավիթ: Հայկական ժողովրդական էպոս, (կազմ. Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան, խմբ. Հ. Օրբելի), Երևան, 1939:

<https://doi.org/10.52027/801346-php-164>
mesropyanhaykanush@gmail.com
annakamoevna@gmail.com

**«ՍԱՍՆԱՅ ԾՌԵՐ» ՀԵՐՈՍԱՎԷՊԸ ԵՒ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ
ՏԱՌԱԳԱՐՁՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿԵԼԻՍ**

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ

*ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,
Վ. Բրիլևովի անուան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի
դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր*

ԱՆՆԱ ՊՕՂՈՍԵԱՆ

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող*

Ներածություն

Յօդուածով ներկայացուած են «Սասնայ ծռեր» հերոսավէպին առնչակից լեզուական մի շարք հարցեր: Յայտնի է, որ գրականագէտ-բանագէտների ուսումնասիրութեան խնդրից դուրս է էպոսի պատումների լեզուական առանձնայատկութիւնների, բարբառային տարածքի կամ բարբառագիտական յատկանիշների բացայայտումը, առանց որոնց ժողովրդական վէպի մասին ասելիքը մնում է թերի: Բանահաւաքներին և բանագէտներին հիմնականում հետաfrիրել են վէպի տարածման սահմանները, որոնց վերաբերեալ էլ հարցեր են տրուել ասացողներին: Այդ սահմանները կարևոր գործօն են յատկապէս տուեալ պատումի բարբառային պատկանելութիւնը որոշելու, հնչիւնական, բերականական, բառապաշարային իրողութիւնները տարբերակելու, դասակարգելու և ճշգրտելու համար:

Էպոսի պատումների լեզուական հիմնաւոր փնտրութիւնն անհրաժեշտութիւն է, քանի որ բանահիւսական հարուստ և վստահելի նիւթերի հիման վրայ հնարատրութիւն է ընձեռնում ամբողջականացնելու մեր հայրենիքի կենտրոնական շրջանների բարբառային համապատկերը:

Արժարժուած են նաև պատում - ասացող - բարբառային տարածք եռամիասնութեան խնդրին, էպոսի գրառման առանձնաշատկութիւններին և դժուարութիւններին, գիտական տառադարձութեանը և համահաստի տեքստին վերաբերող հարցեր:

Ներկայումս բարբառային տեքստերը գրառում և ուսումնասիրում են մշակուած բարբառագիտական տառադարձութեամբ: Արևմտահայութեան կորստուած բնօրրանում գրի առնուած պատումները ճշգրտուած տառադարձութեամբ վերահրատարակելու կարիք ունեն:

«Սասնայ ծռեր» էպոսի համապարփակ ուսումնասիրութեան, ուղղագրութեան բարեփոխման, բարբառագիտական տառադարձմամբ տպագրուած պատումները վերահրատարակելու, իսկ անտիպները գիտական ճշգրտութեամբ տպագրելու հսկայական աշխատանք կարելի է իրագործել միայն էպոսագիտութեան կենտրոն ստեղծելու միջոցով:

Հիմնաբառեր - էպոս, Սասուն, Մոկս, բանահաստ, գիտական տառադարձութիւն, բարբառ, հնչիւնական տարբերակ, տարածք:

Իւրաքանչիւր էպոս՝ որպէս համատեղ պատմողական ստեղծագործութիւն, տուեալ հանրութեան գլխաւոր ասքն է, պատմական զարգացման նշանակալից խտադրուագը, որը գիտելիք է հաղորդում ինքնաշատուկ բարքերի, սովորոյթների, տեղագրութեան, բուսական ու կենդանական աշխարհի, լեզուամտածողութեան, տարածքային լեզուատարբերակների և այլնի մասին:

Արձակ կամ չափածոյ էպոս ստեղծում են պատմական հետազիծ և գիմագիծ ունեցող ժողովուրդները (Ջրբաշեան, Մախչանեան, 1980, 121), որոնց լեզուն և խօսքը բնական ճանապարհով, առանց գիտական մշակման ենթարկուելու, արձանագրուում են որպէս տուեալ հանրութեան էութեան, լեզուամտածողութեան և կենսակերպի հաւաստի վկայութիւն-

ներ: Այդ մասին Աւետիք Իսահակեանը գրում է. «Մեր էպոսը գրական մշակումի չի ենթարկուել, գրական միջամտութուն չի ունեցել, որպիսին ունեցել են յունական էպոսը, «Շահնամէն», «Նիբելունգների երգը»: Մեր վէպը բացառապէս ժողովրդական ստեղծագործութեան արդիւնք է: Այս տեսակէտից եզակի նշանակութիւն ունի նաև ուսումնասիրողների համար՝ անշափելի արժէք...» (Իսահակեան, 1951, 73): Մ. Աբեղեանն էլ համոզուած է, որ «վէպը թողել է իւր տեղական բնաւորութիւնը, և հայ ազգն ընդունել ու իւրացրել է այն» (Աբեղեան, 1908, 19):

Օտար բանագէտները նոյնպէս գնահատանքի խօսքեր են նուիրել հայ ժողովրդական ասքին՝ տեսնելով նրանում տիեզերական երանգներ: Ա. Բանկը «Բիւզանդական էպոսի Դիգենիս Ակրիտասը և Սասունցի Դաւիթը» յօդուածում համեմատում է հայերիս էպոսը յոյների, ինչպէս նաև Փոքր Ասիայի ժողովուրդների վէպերի հետ և համոզում է յայտնում, որ որոշ նմանութիւններով հանդերձ, «հայկական էպոսի արմատները հասնում են շատ աւելի հեռաւոր մի ժամանակի, հասարակական զարգացման մի այլ ստադիայի, որի գաղափարախօսութիւնն ունի ցայտուն կերպով արտայայտուած կոսմիքական գծեր» (Բանկ, 1939, 108-109):

Հայ և օտար մասնագէտները տարբեր դիտանկիւններից (չրաժին լինելու յատկանիշ, կերպարներ և տիպաբանութիւն, պատկերաւորման միջոցներ և բնոյթ, դարաշրջան, պատմական և տեսական հարցեր, պատումներ, հետազօտութիւններ, թարգմանութիւններ, պարբերականութիւն և այլն) քննել են հայկական էպոսը («Սասունցի Դաւիթ», 1939), սակայն լեզուականը, յատկապէս տարածքային պատկանելութեան սահմանները և բարբառային առանձնայատկութիւնների հարցերը հիմնովին չեն բացայայտուած (տե՛ս նաև Մեսրոպեան, Պօղոսեան, 2024):

Հերոսավէպի տարածման սահմանները

Յայտնի է, որ էպոսի հայրենիքը Մոկս-Սասուն լեռնաշխարհն է, որտեղից ժողովրդական վէպի տարբերակները տարածուել են ողջ Հայաստանով մէկ: Էպոսի բնօրրանի՝ Սասունի, ու էպոսաստեղծ հայորդեաց մասին առաջին անգամ յիշատակում է Դուկաս Ինճիճեանը. «Բնակիչք, որք քուրդք և հայք, որոց երկոքին ևս զմի և զնոյն ազատութիւն ունին, արք յաղթանդամք և քաջասիրտք, երևելիք ի կորովութիւնս մարմնոյ, ահեղք ի պատերազմի, որոց միայն ստուարութիւն հերաց, մանաւանդ ոմանց ի նոցանէ ահացուցնէ զտեսօղսն, որք ի սկզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով և ոչ ոք ի փաշայից կամ ի պէյից կարող գտաւ զսոսա նուաճել, սակս զօրութեան

ուժոյ սոցա և սակս ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ումեք թողուն մուտս առնել» (Ինճիճեան, 1806, 200):

Ղ. Ինճիճեանի նկարագրած այսպիսի կերպարների էլ հանդիպում ենք մեր էպոսում:

Մ. Աբեղեանը ևս հաստատում է, որ «Մեր այս նոր վէպը ծնունդ է Սասունի: Դրա մէջ «Պարսից պատերազմի» մի երկու հատուածները, զարգանալով իբրև տեղական վէպ, «Տարոնի պատերազմ» և հետագայում կրելով նոր պատմական ազդեցութիւններ, դարձել են Սասնայ վէպ՝ հիմնուած և՛ իրական, և՛ կեղծ պատմութեան վրայ» (Աբեղեան, 1966, 328):

Սարգիս Յարութիւնեանը յաւելում է, որ ««Սասնայ ծոեր» վէպը արեւմտահայ որոշակի հատուածների սեփականութիւնն է, տարածուել է Հայաստանով մէկ և Հայաստանից դուրս միմիայն այդ հատուածների տարբեր բնոյթի տեղաշարժերի միջոցով» («Սասնայ ծոեր», 1977, 624): Սասունի գաւառներից վէպը անցել է Շատախ, Ռշտունիք, Մոկս, Վան, Մուշ, Բաղէշ, Խլաթ, Բուլանըխ, Արճէշ, Կաղզուան, Ալաշկերտ, Աբաղայի դաշտով Պարսկահայք, Խոյ, Սալմաստ, Մակու, ապա և Այրարատ, էջմիածին, Արագածոտն, Ապարան, Գաւառ՝ պատմուելով հայերէնի համապատասխան բարբառներով ու խօսուածքներով: Նշուած տարածքների հայութիւնը հաղորդակցւում էր միմեանց գրեթէ անհասկանալի բարբառներով, որոնք գրառման հմտութիւններ էին պահանջում:

Իւրաքանչիւր բանահաւաք, առնչուելով պատում — ասացող — բարբառ եռամիասնութեան խնդրին, անմեկնելի եռանդով ու սիրով է համակում տուեալ տարածքին բնորոշ պատումի, բարբառային հայերէնի ու բարբառախօս բանասացի նկատմամբ՝ մեծ ջանքեր գործադրելով լսածը հնարաւորինս անխաթար թղթին յանձնելու համար: Այս առումով կարևոր է բանագէտ-բարբառագէտ Գ. Սրուանձտեանցի հետեւեալ մտահոգութիւնը. «Իմ փափագս եղած է, որ բանասէրք ուշադրութիւն դարձնեն Հայաստանի մէջ բնակած Հայոց ժողովրդական լեզուաց և այն լեզուներով հրատարակեն վէպեր, տրամախօսութիւններ և այլն, և այսպէսով սիրելի և ծանօթ կացուցանեն զանոնք գրագիտաց, որպէս զի նոցա ձեռքով հետզհետէ ի կանոնաւոր գործածութիւն վերածին այն լեզուները, և ժամանակին մաշող ժանիքէն զերծանին ազգային դարաւոր բանից և աւանդից յիշատակները, որոց արժէքը կորսուելէն յետոյ կ'զգանք զանոնք աւաղելու համար միայն» (Սրուանձտեանց, 1874, 192):

Ընդհանրապէս էպոսի հետ առնչուելիս ակնառու են դառնում բարբառի իւրօրինակ հարստութիւնն ու պերճութիւնը, ի յայտ են գալիս

դարձուածքների իմաստային խոր շերտերը, ժողովրդական լեզուամտածողութեան պարզութիւնն ու խորը խոհականութիւնը:

Պատումների բնագրագիտական քննութեան մասին

«Սասնայ ծռեր» հերոսավէպի՝ ներկայումս հանրութեանը յայտնի իննսուներեօթ պատումներն ամփոփուած են եօթը գրքերում, որոնք հրատարակուած են անգրանիկ գրառող Գարեգին վարդապետ Սրուանձտեանցի կողմից առաջադրուած բնագրագիտական սկզբունքների համաձայն: Ըստ Կոմիտաս Վարդապետի՝ «Գարեգին վարդապետ Սրուանձտեանցի օրինակին սկսան հետեւել իրար յետեւից Գարեգին վարդապետ Յովսէփեան, Մանուկ Աբեղեան, Հայկունի Սարգիս, Երուանդ Լալայեան, Տիգրան Զիթունի եւ այլն, եւ այլն եւ բոլորն էլ իրանց հրատարակութիւններով սկսան մեր առաջ բանալ հայ գեղջուկի ստեղծագործութիւնները» (Կոմիտաս, 2007, 90):

Ա. Սահակեանը հաւաստում է, որ «արդէն գիտական լայն շրջանակներին հասու են դարձել վէպի աւելի քան հարիւր յիսուն պատումների համեմատական համայնապատկերը, վէպի մօտաւոր պատմական ակունքները, վիպական ինչ-ինչ դրուագների հեռու կամ մօտ պատմական նմանակները, հերոսների պատմական նախատիպերը, աշխարհագրական վայրերը, կենցաղը, վէպի կազմի մէջ մտած առասպելները կամ նրանց բեկորները, նշուել են հերոսների վարքագծի դիցաբանական զուգահեռները, գործող անձանց յարաբերութիւնների առասպելաբանական ու հոգեբանական արմատները, երգիծանքը և հումորը, «ծուռ» մականուան յարաբերական, դինամիկ բնոյթը, ընդհանուր վիպական մոտիւնները և վիպականացման միջոցները, էպոսի ժանրի ստեղծաբանութեան (պոէտիկայի) միջազգային հասկացութիւնների կիրարկելիութիւնը վէպի նկատմամբ, աւելի նուազ չափով անդրադարձ է եղել նաեւ վէպի գլխաւոր դերակատարների անուանաբանական նկարագրին, հերոսների անունների լեզուական ու վիպական իմաստներին» (Սահակեան, 2015, 4): Ըստ այսմ՝ կարող ենք ասել, որ լեզուաբարբառագիտական ուսումնասիրութիւնը դեռեւս ճանապարհ ունի անցնելու, որի հիմքերն ու նախադրեալներն արդէն կան:

Այլ ժողովուրդների բանագիտական փորձին ծանօթանալիս տեղեկանում ենք, որ «համեմատական լեզուաբանութեան հետ գրեթէ միաժամանակ, XIX դարի առաջին կէսին, Գերմանիայում առաջ է եկել համեմատական առասպելաբանութիւնը: Իրար հետ համեմատելով զանազան լեզուակից ազգերի զրոյցներն ու առասպելներն ու առասպելաբանական

լեզուն, բացատրում ու որոշում են դրանց սկզբնական հիմքը, որ լեզուի հետ իբր ժառանգած պիտի լինէին այդ ազգերը», - գրում է Մ. Աբեղեանը (Աբեղեան, 1966, 10), ապա յաւելում, որ մեր վէպի բանասիրական ուսումնասիրութիւնը դեռ պակասում է: Չնայած Մ. Աբեղեանի գիտագործունէութիւնից անցել է բաւականին տեական ժամանակ, սակայն այսօր էլ բանասիրականը, մանաւանդ բարբառագիտական ուսումնասիրութիւնը զիջում է բանագիտականին:

Այսու նպատակ ունենք մասամբ լրացնելու այդ բացը: Մեր ուսումնասիրութեան համար հիմք են ծառայել Մ. Աբեղեանի՝ «Սասունցի Դաւիթ» էպոսին վերաբերող տեսական դրոյթները, բանահաւաք, բանագիտութիւն, համեմատական առասպելաբանութիւն և այլ եզրերի սահմանումը, բանաւոր խօսքի հաւաքման, հնարաւորինս ճիշտ գրառման ու ուսումնասիրութեան եղանակների, համեմատական փոխառական դպրոցին առնչակից հարցերի պարզաբանումը (Աբեղեան, 1966):

Հետագայում գրառուած տարբերակների հրատարակութեան համար հիմք է ծառայում բնագրագիտական մինչ օրս մշակուած եղանակը՝ չորս հիմնական դրոյթներով:

ա) Պատումները համախմբուած են ըստ ազգագրական-բարբառային յատկանիշի և բացայայտում են պատումների տիպաբանական երեք հիմնական խմբերը:

բ) Իւրաքանիւր պատում (տարբերակ) ունի վերնագիր՝ նշուած բանասացի, երբեմն էլ՝ բանահաւաքի կողմից:

գ) Ժողովածուում ընդգրկուած պատումները տառահամարներով են:

դ) Իւրաքանչիւր պատում ունի համառօտ առաջաբան, որում տրուած են տեղեկութիւններ գրառողի, վիպասացի, գրառման և հրատարակման ժամանակի, լեզուական-բարբառային կարեւոր յատկանիշների մասին:

Հիմնական այս սկզբունքներին հետեւում, նաև դրանք հետագայում համալրում և համակարգում է հերոսավէպի երկրորդ պատումի գրառող և հրատարակութեան հեղինակ Մ. Աբեղեանը: Նա գրում է. «Այս վէպը կազմուած է հին ժամանակներում, բայց գիւղացիների մէջ պատմուել և երգուել է մինչև մեր օրերը, մինչև 1930-ական թուականները: Այդ պատճառով դա կոչւում է նաև նոր ժողովրդական վէպ: Մեր հին վէպերից աւելի բախտաւոր է եղել դա. ունենք դրա բազմաթիւ պատումները, որոնք թէպէտ վէպի քայքայման ու ձեւաւորման շրջանում, բայց գրի են առնուած ասացողների բերանից բառացի կամ գրեթէ բառացի» (Աբեղեան, 1966, 325):

Ա. Ղանալանեանը փաստում է, որ «Աբեղեանը եղել է և մնում է «Սասունցի Դաւիթ» ամենահմուտ ուսումնասիրողը: Ճիշտ է, նրա հետ միա-

սին, նրանից առաջ ու յետոյ, հայկական հերոսական էպոսի մասին գրել են և ուրիշները, սակայն ոչ մէկը նրա նման ճշմարտացի, բազմակողմանի, հանգամանօրէն ու խորը չի հետազօտել այն» (Աբեղեան, 1966, ժե):

էպոսի գրառման առանձնայատկութիւնները և դժուարութիւնները

Բանասաց-բանահաւաք-բարբառատարածք փոխյարաբերութեան մի օղակն են կազմում էպոսի գրառման առանձնայատկութիւնները և դժուարութիւնները:

էպոսի գրառման ծաւալների ու իւրայատկութիւնների մասին Ս. Յարութիւնեանը գրում է. «Բանահիւսական յուշարձանների, այդ թւում նաև վէպի նոր տարբերակների կազմակերպուած և կոլեկտիւ եղանակով արդիւնաւէտ գրառումներ են կատարում 1915-1916 թթ. ընթացքում, երբ Ե. Լալայեանի բանահիւսական արշաւախումբը ջարդի ու տեղահանութեան հետեանքով Արևմտահայաստանից գաղթած և Արևելեան Հայաստանում ու Անդրկովկասում ապաստանած հայ զանգուածներից գրառում է բանահիւսական շատ հարուստ ու մեծարժէք նիւթեր» (Սասնայ ծուեր, 1977, 621):

Աւանդական վէպի գրառման կատարելութեան առաջին նախապայմանը բանահաւաքի՝ տուեալ փոփոխակի լեզուական տարածքային տարբերակի հնչիւնական, քերականական և բառապաշարային իրողութիւններին ծանօթ լինելն է: Ինչպէս նկատում է Մ.Աբեղեանը, «վէպը պէտք է գրել հէնց իրեն տեղում, մինչդեռ էջմիածնի մարդիկը մեծ մասամբ էջմիածնում նստած են գրել՝ լսելով պանդուխտներից, իսկ պանդխտութիւնը, ինչքան էլ կարճատե լինի, շատ զօրեղ ազդեցութիւն է անում պանդխտողի հոգեկան վիճակի, հետեաբար և վէպի վրայ» (Աբեղեան, 1908, 15): Մ.Մկրեանը ևս առանձնակի կարևորութիւն է տալիս բանասացների ընտրութեանն ու դերին: Նա գրում է. «էպոսի համաշխարհային պատմութեան մէջ «Սասունցի Դաւիթը» այն բացառիկ նմուշներից է, որ մարդկութեանը հասել է գրի առնուելով անմիջապէս ժողովրդական ասացողների բերանից» (Մկրեան, 1976, 336):

Գրառման դժուարութիւնները յաղթահարելու մասին ուշագրաւ յիշատակումներ ունեն նաև բանահաւաքները: Ինչպէս յայտնի է, պատումների մեծ մասը նախ համառօտ տեղեկութիւններ է հաղորդում բանահաւաքի և բանասացի անձնական տուեալների մասին, նշում է ասացողի որտեղացի լինելը, որը մեծապէս օգնում է բարբառային պատկանելութիւնը որոշելուն, երբեմն ներկայացնում է պատումի խօսուածքային տարածքը՝ որոշակի գիտելիքներ հաղորդելով այդ բարբառի հնչիւ-

նական, բառապաշարային, քերականական և լեզուական կարևոր յատկանիշների մասին:

Գրանցման դժուարություններից էին նաև բանասացների մարդկային յատկանիշները, բնաւորութեան գծերը: Օրինակ, բանասաց Թամո Դաւթեանի մասին կարդում ենք. «Թամոն անգրագէտ, շատ նահապետական և աւանդոյթներին հաւատարիմ մարդ էր, ինքնամփոփ ու մենակեաց:... Կինելով ինքնասածի, ինքնամփոփ, քչախօս մարդ, նա խուսափում էր անծանօթ մարդկանցից: ...Սասունցիների միջավայրում բանասացի մեծ համբաւ է ունեցել: Նրանց կարծիքով «Սասնայ ծռերի» իսկական պատմութիւնն իմացել է միայն Թամոն, իսկ մնացած բոլոր ասացողներն այն խեղաթիւրել են» (Մկրեան, 1976, 557):

Գիտական տառադարձության մասին

Հերոսապատումը գրառելու շրջանին բարբառագիտութիւնը դեռևս զարգացման սկզբնական փուլում էր, և բարբառագիտական տառադարձութիւն մշակուած չէր: Այդպիսի տառադարձման ընդհանուր կանոնների մշակումը կատարուել է XX դարի 70-ական թուականներից Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների ազգային ակադեմիայի Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի բարբառագիտութեան բաժնի երախտաւորների կողմից՝ ղեկավարութեամբ Յովհաննէս Մուրադեանի (Մուրադեան և այլք, 1977, 19-24, Աղաբէկեան և այլք, 2010, 5-22): Այսու կարելի է յստակ պատկերացում կազմել, թէ XIX դարում որքան դժուարին է եղել էպոսի պատումները գրառողների աշխատանքը, մանաւանդ հնչիւնական այնպիսի խրթին համակարգ ունեցող բարբառների պարագայում, ինչպիսիք են Մոկսի, Շատախի, Ոզմի, Վանի, Սասունի և այլ լեզուատարածքային տարբերակներ:

էպոսի պատումների անառարկելի գրառող էր Մշոյ Սուրբ Կարապետ վանքի տնօրէն-ուսուցիչ վանեցի Գ. Սրուանձտեանցը, որը լիովին տիրապետում էր հնչիւնական և քերականական տարբեր համակարգեր ունեցող Վանի և Մուշի բարբառներին, այսուհանդերձ մտաւախութիւն ունէր, որ էպոսի՝ իր գրառած առաջին տարբերակի արժէքը ըստ ամենայնի չի ընկալուի: Այդ մասին նա գրում է. «Այս գործիս հրատարակութիւնը հասկացողին համար արժէք կ'ունենայ...: Քաջայերուած կը համարիմ զիս, եթէ համբանքով քսան հոգի ևեթ լինին հաւանող այս գործոյն» (Սրուանձտեանց, 1874, 131): Ժամանակը արժեւորում է առաջին գրարկողի դարակազմիկ աշխատանքը, գրականագէտներն ու բանագէտները ըստ հարկին վերլուծում են ու բազմակողմանիօրէն ներկայացնում

XIX դարի բացառիկ ձեռքբերումը: Ինչպէս փաստում է Մ. Աբեղեանը, «Միրողները յափշտակուեցան այդ գործով, իսկ թերահաւատները, թէպէտ զարմանալով, բայց հաւատացին, որ մեր ազգի մէջ ևս կարող են լինել ժողովրդական վէպեր: Ժողովրդագրական նիւթով զբաղուողի և բարբառներ ուսումնասիրողի համար պարզ պիտի լինէր այդ հրատարակութեան մեծ արժէքը և պիտի օգտուէին նրանից» (Աբեղեան, 1908, 6):

Արարատ Ղարիբեանը, կատարելով պատումների տեքստերի հնչունաբանական քննութիւն, նկատում է. «Գրի առնողները, չպահպանելով բարբառագիտութեան կանոնները, փոխում են բարբառի պատկերը, և եթէ միայն գրի առնուածով առաջնորդուենք, ոչ մի բարբառի լեզուաբանօրէն ճշգրիտ վիճակը հանդէս բերել չենք կարող,- ապա նշում է իր դիտարկած տարբերակները և յաւելում,- շնայած մեր վէպը գրի առնողների խոշոր վաստակին՝ լեզուական տեսակէտից բոլոր վարիանտները զերծ չեն զգալի թերութիւններից՝ հէնց նոյն գրի առնողների պատճառով: Բարբառագրութեան անյաջող կիրառման պատճառով է, որ յաճախ մի որևէ բարբառ դարձնում են մէկ ուրիշ բարբառի ենթաբարբառ կամ, նոյնիսկ, խօսուածք: Հէնց դրա պատճառով էլ Մոկսի խօսուածքը համարում են Վանի բարբառի ենթաբարբառը» (Ղարիբեան, 1939, 83):

Հերոսավէպի հրատարակիչները հիմնականում անտեսել են գրարկման հնչիւնական անհրաժեշտ պայմանը և հնարաւորինս պարզեցրել են պատումների ուղղագրութիւնը՝ այդ կերպ անհամապատասխանութիւն ստեղծելով բանասացի հաղորդածի, բանահաւաքի ջանքերի և վերջնական գրառութեան միջև:

Բանահաւաքներից շատերը ստեղծել են իրենց պայմանական նշանները, մշակել են նաև գրառման տարբեր սկզբունքներ և օրէնքներ: Այս առումով բաւականին դժուարութիւններ են առաջացել յատկապէս համահաւաք պատում կազմելիս, քանի որ մի քանի պատումների համատեղմամբ խախտուել է բարբառային ատաղձը՝ վերափոխուելով Արարատեան բարբառի: Այդ պատճառով համահաւաք տեքստը կազմողները հիմնականում պահպանել են բնագրի քերականական մի շարք յատկանիշներ, սակայն փոխել են բարբառային հնչահամակարգը՝ այն մոտեցնելով Արարատյան բարբառի հնչյունական օրենքներին: Յովսէփ Օրբելին այդ մասին գրում է. «Բարբառների և ենթաբարբառների, նրանց բառակազմի և քերականութեան մէջ եղած տարբերութիւնները մեծ դժուարութիւններ էին ներկայացնում տեքստի համահաւաք խմբագրութիւնը կազմելիս: Բաւական դժուարին խնդիր էր հանդիսանում լեզուի սահմանումը, որովհետև տարբեր բարբառների հաղորդմամբ մեզ հասած

բազմազան վարիանտները տեքստի մէջ մտցնելիս բարձրանում էր լեզուի նորմերը սահմանելու հարցը» («Սասունցի Դաւիթ», 1939, XI): Այդ պատճառով համահաւաք տեքստը կազմողները հիմնականում պահպանել են բնագրի քերականական առանձնաչատկութիւններն ու նախադասութիւնների կազմութիւնները, սակայն փոխել, պարզեցրել են բարբառային հնչահամակարգը՝ այն ենթարկելով Արարատեան բարբառի հնչիւնական օրէնքներին:

1939 թ. լոյս տեսած «Սասունցի Դաւիթ» էպոսի համահաւաք տեքստում «Կազմողների կողմից» խորագրի տակ (հեղինակներ՝ Մանուկ Աբեղեան, Գևորգ Աբով, Արամ Ղանալանեան) կարդում ենք. «Տարբեր պատումների բարբառային առանձնաչատկութիւններն ի մի բերելու և անհասկանալիութիւնները վերացնելու համար տարբեր բարբառների հնչիւնները մօտեցնել Արարատեան բարբառի հնչիւններին՝ պահպանելով արեւմտեան բարբառների մի շարք քերականական ձևեր, հիմնականում էպոսը պատմել անցեալ կատարյալ ժամանակով» («Սասունցի Դաւիթ», 1939, XXXI): Ընդհանուր յայտարարի բերելով՝ ստանում ենք էպոսի հայրենիքի բաղաձայնական համակարգից բաւականին տարբեր գրաբարատիպ եռաշարք բաղաձայնական համակարգ և արեւմտահայերէնեան քերականական յատկանիշներ, այսինքն՝ արհեստական լեզուաորակ ունեցող, բարբառագիտական տառադարձմամբ շարտայայտուած արհեստական տեքստ:

Պէտք է ասել, որ չնայած մասնագէտների ջանքերին, հնչիւնական որոշակի դրոյթների սահմանմանը, համահաւաքը, այնուամենայնիւ, ցանկալի տարբերակով չի ստացուել, քանի որ այդ մեծածաւալ և աշխատատար գործին մեծապէս խանգարել է նաև ժամանակի ուղղագրութիւնը, որը որոշ մասնագէտներ դիպուկ կերպով անուանում են խեղագրութիւն:

Տառադարձման դժուարութիւններին աւելանում է նաև հնչերանգի և շեշտի նշագրման անհրաժեշտութիւնը, որը ևս անտեսուած է պատումներում:

Խօսքի շարոյթում կարևոր դեր ունեցող քերականական շեշտը նոյնպէս համապատասխան ձևով արտայայտուած չէ տեքստերում: Շեշտադրութեան ընդգծուած առանձնաչատկութիւններ ունեն յատկապէս արեւելեան ճիւղի լեզուատարածքային տարբերակները: Բարբառագէտներն այս առումով ուշագրաւ են համարում Արարատեան, Թիֆլիսի, Ղարաբաղի, Ագուլիսի, Արցախ-Սիւնիքի բարբառների շեշտադրութիւնը (Սարգսեան, 1883, 49):

Անգրագառնալով արևելեան ճիւղի բարբառների շեշտադրութեանը և դրա ուսումնասիրութիւնը կարեւորելով յատկապէս բարբառներով գրողների և կարգացողների համար՝ Մ. Աբեղեանը նշում է. «Խնչպէս հայերէնի ուրիշ տիպի ոտանաւորների մէջ, այստեղ ևս բազմաձևանկ բառերի անշեշտ վանկերն առնուած են իբրև շեշտուած: Այսպէս, օրինակ, տողերի սկզբում քառաձևանկ բառերի 2-րդ վանկը համարուած է իբրև շեշտուած, իսկ եռաձևանկ և հինգձևանկանի բառերի սկզբի երկրորդական շեշտերն ընդունուած են իբրև ուղիմական շեշտեր: Տողը կարող է սկսուել նաև շեշտուած վանկով» (Աբեղեան, 1966, 485):

Ներկայումս բարբառային տեքստերի գրանցումը իրագործուած է լեզուաբանների կողմից ընդունուած տառագարձումներով ու յաւելեալ տառանշաններով, որոնցով հնարաւոր է դառնում գրարկուող նիւթը հնարաւորինս մօտեցնել բանաւոր խօսքին: Բանաւոր ասուածը, բարբառային հնչիւնների ճիշտ վերարտադրութիւնը հնարաւոր է միայն համապատասխան տեխնիկայի, ձայնագրիչ սարքերի և մասնագէտ-բարբառակիրների միջոցով:

Մերօրայեան ուղղագրութեան աղաւաղուած, ամենավատթար տարբերակով հրատարակուած բնագրերն այսօր դժուարընթեռնելի են և ակնահաճոյ չեն ո՛չ Հայաստանի Հանրապետութեան, ո՛չ էլ Սփիւռքի հայութեան համար: Էպոսի բոլոր պատումները նորագոյն տառագարձութեամբ վերահրտարակուելու կարիք ունեն: Բայց և մէկ մասնագէտի հնարաւորութեան սահմաններից անգամ դուրս է էպոսի բոլոր պատումների լեզուական իրողութիւնների համապարփակ քննութիւն կատարելը և հնչունական իրողութիւնները ստոյգ վերարտադրելն ու արձանագրելը:

Եզրակացութիւն

Բանասացների և բանագէտների համատեղ ջանքերի շնորհիւ իրագործուած դժուարին գրառումները՝ հայկական էպոսի բազմաթիւ պատումները, մեր ազգային հարստութիւնն են: Մշակութային այդ գանձարանը բազմակողմանի ու մանրակրկիտ ուսումնասիրութեան կարիք ունի:

«Մեր վէպի բազմաթիւ վարիանտները շատ կարեւոր են ընդհանրապէս ժողովրդական վէպի՝ էպոսի դիալեկտիկական ուսումնասիրութեան տեսակէտից: Վէպի այս դարաւոր շարժումը մի հազուադէպ երևոյթ է աւանդական վիպական բանահիւստութիւնների պատմութեան համար», - գրում է Ա. Լանալանեանը (Աբեղեան, 1966, 551):

«Սասնայ ծռեր» հերոսավէպը մեծ արժէք ունի Հայաստանի պատմաաշխարհագրական, հայ ժողովրդի ազգային հոգեբանութեան ու ոգու բարձրացման, բարքերի ու սովորութիւնների, տեղաշարժերի, լեզուամտածողութեան, բարբառների և այլ հարցերի առումով:

Հայոց հերոսավէպի համապարփակ ուսումնասիրութեան, ուղղագրութեան բարեփոխման, բարբառագիտական տառադարձամբ տպագրուած պատումները վերահրատարակելու, իսկ անտիպները գիտական ճշգրտութեամբ տպագրելու հսկայական աշխատանքը կարելի է իրագործել միայն էպոսագիտութեան կենտրոն ստեղծելու միջոցով:

HAYKANUSH MESROPYAN

ANNA POGHOSYAN

"SASNA TSERER" HEROIC NOVEL AND THE NECESSITY OF APPLYING THE LATEST MEANS OF GRAMMATICAL TRANSLATION IN REPUBLISHING STORIES

Summary

The article presents a number of linguistic questions related to the Epic Sasna Tsrer. It is acknowledged that the identification of linguistic features, dialectal area or dialectological features of epic stories falls beyond the scope of literary folklorists. Consequently, without their input, any discussion of the folk novel remains incomplete. The primary focus of folklorists was on the boundaries of epic distribution, with speakers being queried on these matters.

These boundaries are a significant element, particularly in determining the dialectal affiliation of a given variant, in distinguishing, classifying and correcting phonetic, grammatical and lexical facts.

A fundamental linguistic study of the epic narratives is a necessity, as it makes it possible to complete the dialect landscape of the central regions of our homeland on the basis of rich and reliable historical material.

Additionally, the direction of the problem of the Trinity, the features and difficulties of writing an epic, and scientific transcription have been developed.

Presently, dialectal texts are recorded and studied with developed dialectological transcription. The versions written in the lost cradle of the Western Armenian language require republishing with corrected scientific transcription.

The comprehensive study of the Sasna Tsrer epic, reform of spelling, republishing of stories printed with dialectological transcription, and printing of antitypes with scientific accuracy can only be accomplished through the establishment of a centre of epic studies.

Keywords - Epic, Sasoon, Moks, folklorist, scientific transcription, dialect, phonetic version, area.

Գրականություն

Աբեղեան, Մ. Խ. (1908), Հայ ժողովրդական վէպը, արտատպուած «Ազգա-
գրական հանդէսից», Ն. Աղանեանի տպարան, Թիֆլիս:

Աբեղեան, Մ. Խ. (1966), Երկեր, Ա. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:

Աղաբէկեան, Մ. Ա., Հանէյեան, Ա. Ն., Ուռուտեան Ռ. Լ. (2010), Հայերէնի
հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը, Հայերէնի բարբառա-
գիտական ատլաս, ՀՀԳԱ «Գիտութիւն» հրատ., Երևան, պրակ 3:

Բանկ Ա. Ա. (1939), Բիւզանդական էպոսի Դիգենիս Ակրիտասը և Սասունցի
Դաւիթը, «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու՝ նուիրուած էպոսի
1000-ամեակին, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, Արմֆան հրատ., Երևան:

Կոմիտաս Վարդապետ (2007), Հայը ունի ինքնուրույն երաժշտութիւն,
Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, Գիրք Բ, աշխատասիրութեամբ Գուրգէն
Գասպարեանի և Մարինէ Մուշեղեանի, «Սարգիս Խաչենց-Փրինթ ինֆո» հրատ.,
Երևան:

Ինճիճեան, Ղ. Պ. (1806), Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի,
հատոր Ա, Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու:

Իսահակեան, Ա. Ս. (1951), Երկերի ժողովածու, հ. 4-րդ, Երևան:

Մուրադեան, Յ. Դ., Կոստանդեան, Դ. Մ., Հանէյեան, Ա. Ն., Մուրադեան Մ.
Հ., Գրիգորեան, Ա. Վ. (1977), Հայերէնի բարբառագիտական ատլասի նիւթերի
հաւաքման ծրագիր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:

Ղարիբեան, Ա. Ս (1939), «Սասունցի Դաւիթ», Յոբելեանական ժողովածու՝
նուիրուած էպոսի 1000-ամեակին, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, Արմֆան
հրատ., Երևան:

Մեսրոպեան, Հ. Հ, Պօղոսեան, Ա. Կ. (2024), Հայոց գիւցազնավէպի լեզուի
և գրառման առանձնաշատկութիւնների մասին, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-2,
Վրեննա, էջ 115-132:

Մկրեան Մ. Մ. (1976), Հայ հին գրականության պատմություն, ԵՊՀ, Երևան:

Ջրբաշեան, Է. Մ., Մախչանեան, Հ. Մ. (1980), Գրականագիտական բառարան, «Լոյս» հրատ., Երևան:

Սասնայ ծոեր (1936), հ. Ա, խմբագրեց Մ. Աբեղեան, աշխատակցության հարապետ Մելիք-Ոհանջանեանի, Պետհրատ, Երևան:

Սասնայ ծոեր (1944), հ. Բ, առաջին մաս, խմբագրեց Մ. Աբեղեան, աշխատակցության հարապետ Մելիք-Ոհանջանեանի, Պետհրատ, Երևան:

Սասնայ ծոեր (1951), հ. Բ, մասն երկրորդ, խմբագրեց Մ. Աբեղեան, աշխատակցության հարապետ Մելիք-Ոհանջանեանի, Պետհրատ, Երևան:

Սասնայ ծոեր (1977), Ժողովրդական վեպ, աշխատության հարգիս Յարութիւնեանի, «Սովետական գրող» հրատ., Երևան:

Սասնայ ծոեր (1979), հ. Գ, նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Սարգիս Յարութիւնեանի և Արուսեակ Սահակեանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան,

Սասնայ ծոեր (1999), հ. Դ, նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Սարգիս Յարութիւնեանի և Արուսեակ Սահակեանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան:

Սասնայ ծոեր (2000),⁷ նորայայտ պատումներ (գրառումը, բնագրային պատրաստումը՝ Ռ. Գրիգորեանի, աշխատակցության հարգիս Մելիք Մուրադեանի), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան:

Սասունցի Դաւիթ (1939), Լնդհանուր խմբագրություն և առաջաբան ակադեմիկ Ի. Ա. Որբելու, Հայկական ժողովրդական եպոս, Հայկական ԽՍՀ Պետհրատ, Յերևան:

Սասունցի Դաւիթ (1977), նոր պատումներ, հաւաքեցին և հրատարակության պատրաստեցին Գրիգոր և Վահագն Գրիգորեանները, «Սովետական գրող» հրատ., Երևան:

Հին հայերէն լեզուի շեշտը, «Հանդէս ամսօրեայ», 1904, մայիս 131-133:

Սահակեան Ա. (2015), «Սասնայ ծոեր», Հայ ժողովրդական վեպ, Լնտիր պատումներ, Աշխատասիրության հարապետ Մելիք-Օհանջանեանի, «Էդիթ պրինտ» հրատ., Երևան, 2015

Սարգսեան, Ս. Ս. (1883), Ազուլեցոց բարբառը (Զօկերի լեզուն), Մոսկվա:

Սրուանձտեանց, Գ. Ա. (1874), Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ, Տպագրություն Ե.Մ. Տնտեսեան, Կ. Պօլիս, Օտուն Գաբու ճատտէսի, 465:

**ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐԴԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ. ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ³⁹**

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

*Երևանի պետական համալսարանի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ
գիտաշխատող, բանասիրական գիտ. թեկնածու*

Ներածություն

Հոդվածում քննարկվում են եմբարկվում հայ բանագիտության ավանդական մոտեցումներն ու արդի մարտահրավերները: Հայ բանագիտությունը սկզբնավորումից ի վեր զարգացել է երկու հիմնական ուղղություններով՝ բանահյուսական նյութի գրառում ու հրատարակություն և հետազոտություն: Հետազոտությունն իր հերթին, հիմնվելով նախորդ դարերից պահպանված նմուշների վրա, որոնք հայ բանահյուսության դեպքում բավական հարուստ ժառանգություն են կազմում, միևնույն ժամանակ իրականացվում է յուրաքանչյուր նոր ժամանակաշրջանում նոր գրառումների ձեռքբերման անապահով:

Մեր օրերում բանասացության ավանդական կերպը և ժամանակակից բանահյուսության նոր որակական հատկանիշները հաճախ բանագետներին ստիպում են մտածել, որ ավանդական

³⁹ Հետազոտությունը կատարվել է ՀՕՖ-ի Երվանդ Թերզյանի անվան ԳԿՀԱՀ (ANSEF) # 24AN:HU-lit-3047 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

բանահյուսությունը մահանում է, և մնում է հիմնվել արդեն իսկ գրառված ժառանգության, հին նմուշների հետազոտության վրա: Սակայն բանահյուսությունը չի անհետանում, այլ կարող է փոխել իր ձևերը, դրսևորման կերպը: Ակնհայտ է, որ բանահյուսությունը թևակոխել է մի նոր փուլ, որը կյանքի իրավունք է ստացել և սկսել է հետազոտվել տարբեր երկրների գիտնականների աշխատություններում: Այս նոր բանահյուսությունը ևս գրառման և հետազոտման կարիք ունի: Խոսքը մասնավորապես բանավոր կենցաղավարող ետբանահյուսական դրսևորումների մասին է, որն արդեն որոշակիորեն զբաղյին ազդեցությամբ է ստեղծվում և ունի փառափայլին բանահյուսությանը հատուկ հատկանիշներ, ինչպես նաև՝ համացանցային բանահյուսության, որն այսօր առավել լայն ծավալներ է ընդունում:

Հոդվածում ակնարկաբար ներկայացվում են բանահյուսության այս նոր որակներին նվիրված որոշ հետազոտություններ ուսս և եվրոպական բանագիտական նորագույն ուսումնասիրություններում, մատնանշվում են բանագիտության զարգացման՝ ժամանակի հրամայականները՝ կապված համացանցային բանահյուսության ուսումնասիրման անհրաժեշտությանը:

Հիմնաբառեր - Հայ բանագիտություն, ավանդույթ, բանահավաքություն, արդի մեթոդներ, ետբանահյուսություն, փառափայլին բանահյուսություն, համացանցային բանահյուսություն:

Գիտության ցանկացած բնագավառ զարգացման տարբեր փուլերում զանազան նոր խնդիրների առաջ է կանգնում, հետազոտությունն առարկայի կրած փոփոխություններին զուգահեռ առաջ է գալիս նոր հայացք, նոր մոտեցումներ մշակելու անհրաժեշտություն: Հայ բանագիտությունը, որ ծագման պահից ի վեր ունեցել է զարգացման ոչ շատ երկար, սակայն շատ հարուստ պատմություն, որ թողել է ներկա սերնդին բանահյուսական նյութի և գիտական հետազոտությունների հարուստ ժառանգություն, այսօր թարմ հայացքի, նոր մոտեցումների կարիք ունի: Խնդիրը նախ կարոտ է տեսական քննության և, բանահյուսական նյութի մերօրյա յուրահատկություններով պայմանավորված, նոր գործիքակազմով արդեն գործնականում հետազոտություն իրականացնելու:

Հայ բանագիտությունը սկզբնավորումից ի վեր զարգացել է երկու հիմնական ուղղություններով. առաջինը բանահավաքչությունն ու բանահյուսական նյութի հրատարակությունն է, երկրորդը՝ հետազոտությունը: Առանց առաջինի երկրորդը գործնականում անհնար է: Ահա թե ինչու յուրաքանչյուր ժամանակաշրջանում, մասնավորապես եթե խոսքը ժամանակակից նյութի ուսումնասիրման մասին է, անհրաժեշտ է հետազոտությունը սկսել նախ բանահավաքչությունից՝ դաշտային հետազոտությունից, որից հետո մտածել գրաված և հավաքված դաշտային նյութի հետազոտության մեթոդաբանություն կիրառելու մասին:

Հատկանշական է, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ ոլորտներում մեր օրերում նոր հայացքի կարիք կա: Թեև հայ բանագետները դեռևս համառորեն շարունակում են ավանդական բանագիտության մոտեցումների կիրառումը, որն, անշուշտ, շատ արժեքավոր է և դասական իմաստով հաճելի, սակայն չենք կարող նաև անտեսել, որ ժամանակակից մարդն այսօր շատ է փոխվել, փոխվել են նաև նրա ժամանցի ձևերն ու բանավոր ստեղծագործելու, բանահյուսական նյութը փոխանցելու կերպը: Չենք կարող անտեսել բանահյուսության նոր, ավանդականից տարբերվող որակը, համացանցային այն հսկա դաշտը, ուր արդեն մի քանի տասնամյակ սկսել է կենցաղավարել բանահյուսությունը և օրեցօր ավելի ու ավելի լայն մասշտաբներ է ձեռք բերում: Ի՞նչ է իրենից ներկայացնում ժամանակակից բանահյուսությունը, ինչպե՞ս պետք է մերօրյա բանագետը օգտվի համացանցի նյութից, կա՞րողյոք դրա անհրաժեշտությունը, ի՞նչ է դա մեզ տալու: Եվ, ընդհանրապես, ի՞նչ է իրենից ներկայացնում համացանցային բանահյուսությունը, ի՞նչ ժանրային կազմ ունի, ինչպե՞ս են այստեղ կենցաղավարում ավանդականը և ժամանակակիցը: Սրանք հարցեր են, որոնց շուրջ հայ իրականության մեջ դեռևս չի խոսվել, սակայն վաղուց արդեն սպասում են իրենց պատասխաններին:

Մեր այս ուսումնասիրության մեջ կփորձենք ուրվագծել հայ բանահյուսության անցած ճանապարհը՝ բանահավաքչության և ուսումնասիրության մեթոդաբանությունն ու արդեն իսկ ունեցած ձեռքբերումները՝ կանգ առնելով արդի մարտահրավերների վրա:

Հայ բանագիտության զարգացումը

Հայ բանագիտությունը սկզբնավորումից ի վեր զարգացել է բանահավաքչության և ուսումնասիրման զուգահեռ իրականացմամբ: Բացառությամբ առաջին բանագիտական գործերի՝ Մ. Էմինի «Վեպը հնոյն Հայաստանի» (Մոսկվա, 1850) և Հ. Գաթրճյանի «Պատմություն մատե-

նագրության հայոց» (Վիեննա, 1851) ուսումնասիրությունների, ուր քննվում են միայն հնագույն մատյաններում եղած բանահյուսական նմուշները, հետագա հետազոտողները հիմնականում եղել են նաև բանահավաքներ: Ստ. Պալասանյանը առաջինն էր, որ իր «Պատմություն հայոց գրականության» (Թիֆլիս, 1865) աշխատության մեջ հնագույն մատյանների բանահյուսական նմուշների քննությանը զուգահեռ կատարեց նաև իր ժամանակի բանահյուսության հետազոտություն, իսկ ահա Սրվանձտյանցը բուն իմաստով և՛ բանահավաք էր, և՛ բանագետ: Նրա դիպուկ նկատառումները, որ կատարում էր իր գրառած բանահյուսական նյութերի առնչությամբ, հետագա ուսումնասիրողներին շտեմնված կռահումներ էին տալիս՝ հսկայածավալ ուսումնասիրություններ գրելու: Բանահավաքչական և հետազոտական գործունեությունը տարբեր համամասնություններով հայ բանագետների գիտական աշխատանքի մաս էին կազմում: Ի տարբերություն Սրվանձտյանցի, Մ.Աբեղյանի գործունեության առանցքը հետազոտական աշխատանքն էր, որը զուգակցվում էր բանահավաքչությամբ: Այսպես, «Սասնա ծռերի» երկրորդ գրառված տարբերակը, որն ուշագրավ հետազոտությունների տեղիք տվեց՝ բացահայտելով էպոսի բազմատարբերակ, հարուստ աշխարհ, գրի է առնվել հենց հետազոտողի՝ Մ.Աբեղյանի կողմից:

Հետագա բանագետների համար ևս գիտական աշխատանքը ընթացել է մի քանի ուղղություններով՝ բանահավաքչություն, բանագիտություն, որին հետո ավելացավ նաև բանահյուսության նյութի հրատարակման խնդիրը, որը ևս մի քանի տարբեր ուղղություններով զարգացավ: Ի տարբերություն բանահավաքչության նախնական փուլի, երբ գրառված նյութերն անմիջականորեն հրատարակվում էին առանձին կամ ազգագրական բնույթի պարբերականներում՝ «Ազգագրական ժողովածուում» (1896-1916), «Էմինյան ազգագրական հանդեսում» (1901-1943), հետագա տարիներին կուտակված հսկայածավալ բանահյուսական նյութերը սկսեցին հրատարակվել արդեն ըստ առանձին ժանրերի: Այսպիսի ժողովածուները կամ ակադեմիական, խիստ գիտական էին, կամ հանրամատչելի: Ուշագրավ է, որ այս երկու ուղղություններն էլ առաջ էին տանում բանագետները:

Խորհրդային տարիներին գիտական բարձր մակարդակով իրականացվեցին «Սասնա ծռերի», հայ ժողովրդական հեքիաթների, հանելուկների, առած-ասացվածքների և բազում այլ ժանրերի գիտական հրատարակությունները՝ ծանոթագրումներով, առաջաբան-ուսումնասիրություններով, բարբառային բառարաններով և բառացանկերով: Սակայն այսպիսի հրատարակությունները մեծ մասամբ նախատեսված էին գիտա-

կան ուսումնասիրություններ կատարելու համար, քանի որ բարբառների երբեմն բավական խորթին արտահայտություններով դրանք հիմնականում չէին դառնում հանրամատչելի ընթերցանություն նյութ: Էլ չխոսենք էպոսի մասին, որի տարբերակների բազմազանությունն ու հարստությունը ի մի բերելու և հայ ընթերցողին ներկայացնելու պահանջ էր առաջացել:

Ահա այս հանգամանքներով պայմանավորված՝ հայ բանագետները ձեռնամուխ են լինում նաև բանահյուսական նյութերի հանրամատչելի ժողովածուների կազմմանը: Թեև պետք է նշել, որ այս գործը մասամբ արդեն կատարում էին հայ գրողները՝ բանահյուսական նյութի գեղարվեստական մշակումներ ստեղծելով, սակայն գրական մշակումը միշտ չէ, որ լիովին հարազատ է մնում բանահյուսությունը: Գրողն ազատ է իր ստեղծագործական դաշտում, հետևապես նրա ստեղծած մշակումները կարող են նաև հեռանալ ժողովրդական ակունքներից: Բուն ժողովրդական նյութի հանրամատչելի տարբերակներ ստեղծելու գործն, այնուամենայնիվ, մնում էր դարձյալ բանագետներին: 1937թ. «Սասունցի Դավիթ» համահավաք բնագիրը, 1990թ. Ա.Նազիրյանի կազմած «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն այս անհրաժեշտությունից են ծնվում: Բանահյուսական նյութի հանրամատչելի բնագրերի ստեղծումը բանագետների կողմից շարունակվում է նաև մեր օրերում:

Բանահավաքչությունը երեկ և այսօր

Այսպիսով, եթե գրականագիտության մեջ հետազոտողը մոտենում է պատրաստի նյութին՝ ստեղծված գրական գործին, ապա բանագիտության մեջ հետազոտողը նախ պետք է գտնի այդ նյութը, գրառի, հրատարակի և նոր միայն հետազոտի այն: Նախորդ դարից մեզ ավանդված բանահյուսական գրառումները հայ բանագետ-բանահավաքների շտեմնված ջանքերի արդյունքն են, որոնք նյութ են տալիս ժամանակակից բանագետին՝ որպես մի աննման գանձարան: Ի՞նչ ենք թողնելու մենք՝ գալիք սերնդին, արդյո՞ք մենք այսօր ուսումնասիրում ենք դաշտը, ինչպիսին է այսօր դաշտը, ի՞նչ նոր պահանջներ է առաջադրում:

Յավոք, մեր օրերում թյուր կարծիք կա, թե բանասացությունն այլևս չկա, և որ բանահյուսական ավանդույթը մեռնում է: Եթե նախկինում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողները պարբերաբար մեկնում էին բանահավաքչական արշավների՝ խմբաբաժնիների կամ անհատական գործուղումների, որոնց արդյունքում էլ կուտակվել է այն հսկայածավալ նյութի մի զգալի մասը, որն այսօր մենք ուսումնասիրում ենք, ապա այսօր այդպիսի գործուղումները մնացել են միայն անհատ նվիրյալների նախաձեռնողականությունը, մասնավոր

գրամաշնորհների շրջանակներում իրագործվող հետազոտությունների մաս են կազմում: Այս չափով կատարվող բանահավաքչությունը չի փոխանցում մերօրյա բանասացության ընդհանուր պատկերը, և շատ ժանրեր մնում են լուսանցքում: Մինչդեռ այսօր անհրաժեշտություն կա ոչ միայն հետազոտել դաշտը, բանասացության մերօրյա կերպը, այլև նոր սկզբունքներ մշակել մերօրյա բանահավաքչության համար: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է մերօրյա բանասացության յուրահատկությամբ:

Ի տարբերություն սրա, այսօր բավական բարելավվել են նյութերի գրանցման տեխնիկական միջոցները: Եթե նախկինում օգտագործվել են մեծ և անհարմար ձայնագրիչներ, որոնցով ձայնագրված նյութերը երբեմն բավական դժվար են վերծանվել, չի կատարվել տեսագրություն, որը բանահյուսության դեպքում շատ կարևոր է, քանի որ հատկապես որոշ ժանրերի դեպքում բանասացությունը թատերական արվեստի է վերածվում, ապա այսօր կա ձայնագրող և տեսագրող միջոցների շտեմնված բազմազանություն և, այնուամենայնիվ, բանահավաքչությունը մեր օրերում այլևս այն ծավալը չունի, ինչ նախկինում: Պատճառը պարզ է. ավանդական բանահյուսական նյութ փնտրող բանագետները վերջին տարիներին հետզհետե առավել խորացող հիասթափությամբ էին վերադառնում դաշտից. չկա այլևս նախկին նյութի ճոխությունն ու հարստությունը. չի պատմվում էպոս, բանասացությունից դուրս են եկել երկարաշունչ հրաշապատում հեքիաթները և այլ ծավալուն ժանրերը, չկա բանասացության ավանդական կերպը, ժամանցի տեխնիկական միջոցները նույնիսկ գլուղացու կենցաղից դուրս են մղել բանասացությունն իր ավանդական ընկալմամբ: Արդյո՞ք սա պատճառ է, որ բանագետը հրաժարվի դաշտն ուսումնասիրելուց, ի՞նչ է փնտրում բանագետը դաշտում, այն, ինչ ուզում է, թե՞ այն, ինչ կա: Սա թերևս գլխավոր հարցն է, որ այսօր ծառացած է բանագետի առջև: Առաջին դեպքում բանագետը կհրաժարվի դաշտային աշխատանքներից և կընկղմվի նախորդ դարերից ձեռք բերված ճոխ բանահյուսական նյութերի աշխարհը՝ այստեղ գտնելով ժողովրդական մտածողության, կենսափոխակերպության շտեմնված հարուստ ակունքները: Երկրորդ դեպքում բանագետը կշարունակի ուսումնասիրել դաշտը՝ փորձելով գտնել այստեղ այն, ինչ դեռ պահպանվել է, այն, ինչ փոխակերպվել է և այն, ինչ նոր է գոյացել:

Մարդը պատմող արարած է, որևէ ժամանակ նա չի դադարում պատմել: Փոխվել են ժամանակները, փոխվել է մարդը և իր կենսակերպը, բնականաբար պետք է փոխվեր նաև բանահյուսությունը: Գուցե

մերօրյա բանասացությունը չի բավարարի ավանդական նյութ փնտրող բանագետի քիմքը, սակայն այն ևս կարող է պատմել ժողովրդի հույզերի ու ապրումների, ժողովրդական մտածողության և հոգեբանության մասին, այսինքն՝ այն ամենի, ինչը բանահյուսության հիմքն է կազմում: Ի վերջո մի բան անվիճելի է. առարկան է թելադրում գիտնականին իր հանդեպ մոտեցում, և ոչ թե հակառակը: Բանագետը չի կարող փակել աչքերը նոր իրականության հանդեպ և անվերջ ուսումնասիրել անցյալի արգասիքը, բանագետը պետք է տեսնի և ճանաչի նաև այն, ինչ պատմվում է ներկայում: Ավանդական նյութը չի կորչում, այն անվերջ փոխակերպվում է: Այն այսօր էլ փոխակերպվում է և հարստանում նոր ձևերով:

Պետք է փաստել, որ մերօրյա բանասացությունը երկու դաշտ ունի. մեկը ավանդականն է. հասարակության մեջ բանավոր կենցաղավարող բանահյուսությունը, որը հնի ու նորի մի հետաքրքիր հիբրիդ է, մյուսը համացանցային բանահյուսությունն է, որը վերջին տասնամյակներին ի հայտ գալով՝ հետզհետե ավելի լայն ծավալներ է ստանում: Անհրաժեշտ է նախ հետազոտել այս երկու դաշտերը, խմբային արշավախմբեր կազմակերպել, արձանագրել նյութի արդի վիճակը, պարզել համացանցային բանահյուսության սահմանները և նոր մոտեցումները, դուրս բերել բանահյուսական նորագույն դրսևորումները, որին միայն կարող է հաջորդել հետազոտությունն ու նոր օրինաչափությունների բացահայտումը:

Նորբանահյուսություն և քաղաքային բանահյուսություն

Ինչպես նշեցինք, ժամանակակից բանասացությունը հեռանում է ավանդական կերպից, ձեռք է բերում նոր հատկանիշներ՝ պայմանավորված կյանքի զարգացող ութմով և սոցիալ-կենցաղային նոր պայմաններով: Ժամանակակից մարդն այլևս քիչ ժամանակ է հատկացնում բանասացությանը, սկսում են գերակշռել կարճասույթ ժանրերը, ավանդականից հեռացումը հանգեցնում է և՛ բովանդակային, և՛ ձևային հատկանիշների փոփոխության: Ձխորանալով այս փոփոխությունների բուն պատճառների մեջ (մասսայական գրագիտություն, ժամանցի նորագույն միջոցներ, գլոբալիզացիա և այլն)՝ փորձենք ուրվագծել, թե ինչպիսին է մերօրյա բանահյուսությունը:

Ավանդական բանահյուսական նյութի ամենահարուստ աղբյուրը գյուղն էր և գյուղական միջավայրը՝ իր շքեղ կոլորիտով, հարուստ ավանդույթով, ծիսահավատալիքային աշխարհով, ուր կարելի էր գտնել մաքուր բանահյուսություն: Սակայն այսօր նույնիսկ գյուղական բանա-

հյուսույթյունը ձեռք է բերում քաղաքային բանահյուսությանը հատուկ հատկանիշներ: Բանահյուսության այս նոր որակը ռուս ուսումնասիրողներն անվանում են ետբանահյուսություն: Դեռ 1995թ. մերօրյա ռուս խոշոր բանագետներից Նեկլյուգովը «Живая старина» պարբերականի առաջին համարում գրում է մի փոքրիկ, բայց ուշարժան հոդված բանահյուսության այս նոր որակի մասին, որը վերնագրված էր «**Բանահյուսությունից հետո**» (Неклюдов 1995): Նա խոսում է ժամանակակից քաղաքային բանահյուսության մասին՝ հակադրելով այն գյուղականին: Տարբերության հիմնական առանցքը այս բանահյուսության գրքայնությունն է, որոշ դեպքերում՝ գրավոր լինելը, մի հատկանիշ, որով արդեն այն հակադրվում է ավանդականին: Նա նշում է, որ քաղաքային բանահյուսությանը բնորոշ է հատվածայնությունը և սոցիալական որոշակի խմբերի պատկանելությունը: Որպես այդպիսիք առանձնացվում են չաստուշկաները, քաղաքային ռոմանսները, գրաֆիտին և այլք (Неклюдов 1995, 3): Ետբանահյուսական ցայտուն դրսևորում է հատկապես ալբոմային ավանդույթը՝ գրավոր նոթատետրային մշակույթը՝ բնորոշ սալոնային, դպրոցական, բանտի և այլ սոցիալական խմբերի, ուր տեղ էր գտնում նաև հարուստ բանահյուսություն: Ըստ Նեկլյուգովի, այս բանահյուսությունը գրքային ազդեցությամբ ստեղծվելով քաղաքում, հետագայում անցնում է նաև գյուղեր:

«Живая старина» պարբերականի հիշյալ համարում Նեկլյուգովի բացող այս հոդվածին հաջորդում են քաղաքային բանահյուսության տարբեր դրսևորումներին նվիրված մի շարք ուշագրավ հոդվածներ, որոնցում ուսումնասիրվում էին հիշյալ գրավոր ալբոմները, հեղինակային երգի ազդեցությամբ ստեղծված քաղաքային երգերը, քաղաքային լեգենդները, քաղաքի հուշարձաններին նվիրված բանահյուսությանը, քաղաքային անեկդոտները և այլն: Գիտնականները նոր հայացք և նոր մոտեցում են ցուցաբերում՝ գտնելով բանահյուսական վերապրուկներ և նորագոյացումներ ժամանակակից իրականության մեջ:

Հետագա տարիներին՝ մինչև մեր օրերը, բանահյուսական այս դաշտին նվիրված ուսումնասիրությունները ռուս բանագետների աշխատություններում նորանոր ուշագրավ դրսևորումներ են ունեցել (Տես, օրինակ, Современный городской фольклор 2003):

Բանահյուսական այսպիսի դրսևորումները հայ բանագիտության մեջ առանձին քննության չեն ենթարկվել: Թեմայի առնչությամբ ուշագրավ էր 2022թ. Հայաստանում կազմակերպված «Հեռափոխելով քաղաքը. մարդաբանական դիտանկյուն» գիտաժողովը, ուր հնչեցին զեկույցներ

նաև քաղաքային բանաճյուղության նոր դրսևորումների վերաբերյալ: Ինքս ուսումնասիրել էի 1990-2000-ականներին հայկական դպրոցներում շատ տարածված դպրոցական աղջիկների հուշատետրերը (Vardanyan 2022): Նշյալ ժամանակահատվածում այսպիսի հուշատետրերը շատ տարածված են եղել 13-15 տարեկան աշակերտուհիների միջավայրում և եղել են աշակերտական ժամանցի ամենասիրված միջոցը, ուր տեղ են գտել զանազան խաղեր, հարցարաններ, դպրոցական բանաճյուղությանը բնորոշ բազմաթիվ դրսևորումներ՝ բանաձևեր և այլասացություններ, իսկ ամենահարուստ դրսևորումն ունեն հուշ կոչված չափածոները, որոնք յուրահատուկ ժանրի ստեղծագործություններ են՝ արմատներով կապված խաղիկներին, սակայն ի տարբերություն սրանց տարածվում են գրավոր ճանապարհով:

Բանաճյուղական այս յուրահատուկ՝ ոչ ավանդական դրսևորումներն անշուշտ ևս ուսումնասիրման կարիք ունեն: Սրանք չտեսնված նյութ են փոխանցում և ավանդականի ու արդիականի յուրօրինակ խառնուրդներ են՝ դպրոցական ենթամշակույթին բնորոշ: Անշուշտ հետազոտության պարագայում այսպիսի դրսևորումներ կարելի է գտնել նաև այլուր: Հիշյալ հուշատետրերից տարբեր, սակայն նույնքան արժեքավոր հուշատետրեր այսօր պահում են գյուղերում՝ գրանցելով գյուղական առօրյայի, բանաճյուղության, ազգագրության դրսևորումներ, որոնք սովորաբար ուղեկցվում են նաև սեփական ստեղծագործություններով և օրագրային հուշերով: Ետբանաճյուղական այսպիսի դրսևորումների հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ շուսումնասիրվելու պարագայում դրանք կարող են հետագայում հասանելի չլինել մասնագետներին:

Հետազոտության այս դաշտը գուցե և այնքան գայթակղիչ չէ, որքան ավանդական, անխառն, դարերի խորքից եկող բանաճյուղությունը, սակայն անպայմանորեն ենթակա է հետազոտման՝ որպես բանաճյուղության նորագույն դրսևորում:

Ետբանաճյուղական գրավոր բանաճյուղության կենցաղավարման մի բոլորովին նոր դաշտ է ներկայացնում համացանցային բանաճյուղությունը, որը հայ իրականության մեջ դեռ բացարձակ ուսումնասիրված չէ:

Համացանցային բանաճյուղությունը և դրա ուսումնասիրման անհրաժեշտությունը

Համացանցային բանաճյուղության հետզհետե զարգացող ոլորտի և դրա ուսումնասիրության անհրաժեշտության մասին աշխարհի տարբեր երկրներում սկսել էր խոսվել վաղուց: Ռուս բանագիտության մեջ թեման

քննարկման առարկա է դարձել դեռ 20-րդ դարի 90-ական թվականներին: Թեման քննարկվել է Ռուս բանահյուսության պետական հանրապետական կենտրոնի (ГРЦРФ) կազմակերպած կլոր սեղանների, քննարկումների և գիտաժողովների ընթացքում: Այս քննարկումների և գիտաժողովների արդյունքում ավելի ուշ լույս են տեսնում գիտական հոդվածների ժողովածուներ՝ «**FOLK-ART-NET. ստեղծագործության նոր հորիզոններ. Ավանդույթից վիրտուալություն**» (Folk-art-net. Новые горизонты творчества. От традиции к виртуальности 2007) և «**Համացանցը և բանահյուսությունը**» (Интернет и фольклор 2009), ուր տեղ գտած ուշագրավ հոդվածներում փորձ էր արվում բնութագրել բանահյուսության կենցաղավարման այս նոր ոլորտը, ներկայացնել ավանդական մշակույթի փոխակերպումը այս նոր կենսաձևում, բնութագրել ցանցին բնորոշ ժանրաձևերը և մի շարք այլ խնդիրներ:

2007թ. ժողովածուն փաստորեն ռուս բանագիտության մեջ առաջին փորձն էր՝ ներկայացնելու համացանցային բանահյուսությունը: Հետազոտողների հոդվածների մեծ մասը նվիրված էին այն հարցին, թե ինչպես է բանահյուսական ավանդույթը կենցաղավարում այս նոր՝ վիրտուալ դաշտում, դիտարկվում էին առանձին սոցիալական խմբերի և ենթամշակույթների բանահյուսական դրսևորումները ցանցային տարածքում: Ցանցային բանահյուսության տարբեր դրսևորումները ունեն մի մեծ ընդհանրություն. վիրտուալ այս տարածքում աշխարհի տարբեր ծայրերում ապրող մարդիկ հայտնվում են մի հսկայական դաշտում և հնարավորություն ստանում հաղորդակցվելու: Այս հաղորդակցությունը շատ նման է բանավոր հաղորդակցմանը՝ առանց որևէ հսկողության, լեզվական նորմի կիրառման: Մարդիկ այստեղ ազատ են և այդ ազատությունը հաճախ ապահովում է նաև անանունությունը (վիրտուալ տարածքում մարդիկ հնարավորություն ունեն թաքցնել իրենց անհատականությունը) (Метальникова 2007, 90-98): Որքան էլ տարօրինակ է, այս հատկանիշներով ցանցային «խոսքուղրույցը» պահպանում է բանահյուսության որոշ հատկանիշներ:

2009 թ. նույն կենտրոնի հրատարակած «Համացանցը և բանահյուսությունը» ժողովածուում խնդիրների շրջանակն արդեն ավելի հստակ է դրված: Եթե նախորդ՝ 2007թ. ժողովածուում հոդվածագիրները դեռևս փորձում էին հստակեցնել առարկայի սահմանները, ապա այստեղ արդեն մեծ մասամբ կոնկրետ դրսևորումներ էին քննվում՝ վիրտուալ անհատականության, «վիրտուալ մահվան», ծննդյան շնորհավորանքների, գովազդի, հեքիաթի ծաղրանմանակման, դժբախտության նամակ-

ների, ավանդական անեկդոտի համացանցային դրսևորումների և բազմաթիվ այլ խնդիրների նվիրված ուշագրավ հոգվածներում:

Համացանցային բանահյուսության ուսումնասիրման անհրաժեշտության մասին սկսել են մտածել ոչ միայն ռուս բանագետները: Եվրոպական հայտնի բանագիտական կենտրոնների հրատարակություններում ևս վերջին տասնամյակներին աստիճանաբար սկսել են ուշագրություն դարձնել բանահյուսության կենցաղավարման այս նոր դաշտին: Ֆինլանդիայում լույս տեսնող հայտնի բանագիտական «FF Communications» պարբերական հրատարակչության տեղեկագրում («Folklore Fellows Network») 2010-ականների համարներին կարելի է գտնել բազմաթիվ հոգվածներ, որտեղ հեղինակները ավանդական մոտեցումներին առաջարկում են համատեղել նաև նոր հայացքը, որը կներառի նաև համացանցային դաշտը՝ իր նորագույն դրսևորումներով: Այսպես, օրինակ, 2010թ տեղեկագրի 38-րդ համարում Ուլֆ Պալմենֆիլդը «Լինում է չի լինում մի ժանր» հոգվածում քննելով հեքիաթի ժանրը, նրա դասական ընկալումը՝ մշակված առաջին բանահավաք-բանագետների կողմից և նրա աստիճանական անհետացումը՝ ամփոփում է իր հոգվածը մի այսպիսի ուշագրավ դիտարկումով. «Գուցե կարելի է ասել, թե հորինված, ռճապես մաքուր, լավ հղկված հեքիաթը, որ մենք տեսնում ենք տպագիր ժողովածուներում, այլևս իրականության մեջ գոյություն չունի: Գուցե հեքիաթները, որ Գրիմների կողմից վերականգնվել են, ընդամենը հատվածներ են: Արդյո՞ք մենք այսօր անտարբեր պետք է գտնվենք այդ հատվածների ժառանգորդներին, որոնք արտահայտվում են տեքստային հաղորդագրություններում, երգիծական կամ հեզնական հրապարակային նամակագրություններում Ֆելսբուրգում կամ Ֆոլթուբի տեսահոլովակներում» (Palmenfelt 2010, 16):

Տեղեկագրի 2014թ. հանդեսն սկսվում է խմբագրական հոգվածով, որի վերնագիրն արդեն շատ խոսում է խնդրի առնչությամբ. «**Եկեք դառնանք թվային**» հոգվածով Պեկա Հակամիսը հրավիրում է հետաքրքրված բանագետներին ամառային դպրոց՝ «Եկեք դառնանք թվային. բանագիտությունը թվային դարաշրջանում» խորագրով, ուր պետք է քննարկվեին թվային բանահյուսության խնդիրները (Hakamies 2014, 3): Նա նշում է, որ երկար ժամանակից ի վեր բանահյուսությունը սկսել է արտահայտվել թվային հարթակների միջոցով, որ բանագետները սկսել են բանահյուսական նյութեր գրառել Ֆեյսբուք, Ֆոլթուբ հարթակներից և որ ժամանակն է խոսել այսօրինակ նյութեր հավաքելու էթի-

կական սկզբունքների մասին: Հեղինակը օգտագործում է թվային բանագիտություն հետաքրքիր եզրույթը՝ խոսելով համացանցային բանահյուսության ուսումնասիրման մասին: Նույն համարի հոդվածներից մեկը նվիրված է համացանցային մեմերի ուսումնասիրությանը, ուր փորձ է արվում քննել ցանցային բանահյուսությանը բնորոշ այս նոր ժանրը (Heimo & Koski 2014, 4-12): Թերևս այս բոլոր քննարկումների արդյունքում է, որ 2019թ. արդեն լույս է տեսնում FFC-ի 316-րդ համարը՝ «Բանագիտությունը թվային դարաշրջանում» վերնագրով (Folkloristics in the Digital Age 2019, կազմողներ՝ Պեկկա Հակամիս և Աննա Հեյմո), որն ամփոփում է տարբեր հոդվածներ՝ նվիրված համացանցային բանահյուսությանը:

Միջազգային հայտնի էստոնական «Բանահյուսություն» պարբերականի էջերում ևս վերջին երկու տասնամյակների ընթացքում հետզհետե շատացել են համացանցային բանահյուսությանը նվիրված հոդվածները: Այսպես, 2013թ. պարբերականի 53-րդ համարում միայն տեղ են գտել երկու բավական հետաքրքիր հոդվածներ՝ նվիրված համացանցային տարածքում հումորի և ագրեսիայի, մահվան և կորստի արտահայտումներին (Laineste 2013; Voolaid 2013): Կարելի է ասել, որ այս երկու դաշտերի՝ բանավոր կենցաղավարող բանահյուսության՝ իր վաղ և նոր գրառումներով, և ցանցային բանահյուսության նյութերը բանագետների աշխատություններում հետազոտվում են կողք կողքի, և վերջինս էլ դիտարկվում է որպես կյանքի իրավունք ստացած մի նոր դաշտ:

Հայ իրականության մեջ համացանցային բանահյուսությունը դեռ քննված ոլորտ չի: Եթե ազգագրական առանձին հոդվածներում որոշ այսպիսի քայլեր կատարվել են՝ հետազոտելու ցանցային տարածքի ազգագրական նյութը (Ստեփանյան 2021; 2023, Հակոբյան 2023), ապա բանագետներն այս հարցում մինչ օրս բացարձակ անտարբեր են մնացել: Պետք է մշակել նոր մեթոդաբանություն համացանցային նյութերի գրանցման հետ կապված, քննարկել համացանցի հայ օգտատերերի շրջանում կենցաղավորող բանահյուսության բնույթը, ավանդականի և արդիականի գոյակցումը այս նոր դաշտում:

Եզրակացություն

Այսպիսով, բանագիտության զարգացումը, որ ավանդաբար կատարվել է նյութի գրառման, հրատարակության և հետազոտության ճանապարհով, այսօր մի նոր շրջափուլ է մտել, որն անհրաժեշտաբար առաջ է բերում նոր մոտեցումներ մշակելու անհրաժեշտություն: Ավանդական

բանասացության անհետացումը, որակական փոփոխությունները, որ կրում է բանավոր ավանդույթը՝ ձեռք բերելով ետբանահյուսական, քաղաքային բանահյուսությանը հատուկ հատկանիշներ, ինչպես նաև վերջին տարիներին աստիճանաբար զարգացող համացանցային բանահյուսությունը բանագետներին կամա թե ակամա ստիպում են վերանայել ավանդական մոտեցումը նյութի գրառման վերաբերյալ, հայացքը տեղափոխել նաև ցանցային ոլորտ՝ այստեղից գտնելու և հանելու բանահյուսական նոր զրահորումներ:

Թեև, ինչպես արդեն որոշ ակնարկով ցուցադրեցինք, ռուսական և եվրոպական բանագետների կողմից այսպիսի քայլեր արդեն կատարվել են, սակայն յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն հատուկ առանձնահատկությունները, և հայկական ցանցային տիրույթի բանահյուսության հետազոտությունը կարող է ի հայտ բերել ազգային ուշագրավ առանձնահատկություններ, որոնք չի կարելի անտեսել:

Անշուշտ մերօրյա բանագիտությունը կարիք ունի նաև մեթոդաբանական նոր մոտեցումների՝ ավանդական և արդի բանահյուսությունը ուսումնասիրելու առումով: Ակնհայտ է, սակայն, որ գործը նախ պետք է սկսել նյութի կենցաղավարման նոր օրինաչափությունների բացահայտումից, բանահյուսության կենցաղավարման նոր դաշտերի, որակական նոր հատկանիշների բացահայտումից, ցանցային բանահյուսության դեպքում՝ հայկական բանահյուսական նյութի սահմանների և ժանրերի հստակեցումից:

VARDANYAN NVARD

TRADITIONAL APPROACHES AND MODERN CHALLENGES IN ARMENIAN FOLKLORISTICS: THE NEED FOR STUDYING INTERNET FOLKLORE

Summary

The article examines the traditional approaches and modern challenges of Armenian folcloristics. Since its inception, Armenian philology has developed in two main directions: folklore collection, recording and publication of folklore material, and research. The research, in turn, is based on samples preserved from previous centuries, which in the case of Armenian folklore

constitute quite a rich heritage, at the same time, it is carried out by acquiring new records in each new period.

Nowadays, the traditional way of folklore and the new qualitative features of modern folklore often make scholars think that traditional folklore is dying, and it remains to rely on the research of already written heritage, old samples. However, folklore does not disappear, but can borrow its forms, the way of manifestation. It is obvious that folklore has entered a new phase, which has gained the right to life and has begun to be researched in the works of scientists from different countries. This new folklore also needs to be recorded and researched. In particular, we are talking about post-folkloric manifestations of oral life, which is already created with a certain influence of books and has specific characteristics of urban folklore, as well as of Internet folklore, which today takes on a wider scope.

The article briefly presents some researches dedicated to these new qualities of folklore in the latest Russian and European scientific studies, points out the imperatives of the time for the development of folkloristics, the necessity of studying Internet folklore, are pointed out.

Keywords - Armenian folklore, traditional folklore, modern methods, post-folklore, urban folklore, internet folklore.

Գրականություն

Հակոբյան Ա., Մահը հայկական ֆեյսբուքում. ավանդական, մոդեռն, թե՞ պոստմոդեռն սուզ // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, № 5, էջ 109-122:

Հարությունյան Ս. (2009), Բանագիտական ակնարկներ, Եր., 2009:

Ստեփանյան Գ. (2021), Բացառապես կրճքով կերակրման վեցամսյակը՝ որպես մոր և մանկան կյանքի անցումային փուլ // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, № 4, էջ 131-141:

Ստեփանյան Գ. (2023), Տոնը և կոլեկտիվ տրավման. 2021-ի այլ Ամանորը հայկական միջավայրում // Կրթեր հասարակական գիտությունների, № 1, էջ 247-267:

Интернет и фольклор (2009). Сборник статей. Москва. Государственный республиканский центр русского фольклора, 320 с.

Метальникова В.В. (2007), Жизнь в «Живом журнале» интернета // FOLK-ART-NET: Новые горизонты творчества. От традиции к вирту-

альности. Сборник статей, Москва, Государственный республиканский центр русского фольклора, 2007, с 90-98.

Неклюдов С.Ю. (1995), После фольклора // Живая старина, № 1, с. 2-4.

Современный городской фольклор (2003) Ответственный редактор Неклюдов. Москва, Росиский государственный гуманитарный университет.

FOLK-ART-NET: Новые горизонты творчества. От традиции к виртуальности (2007). Сборник статей, Москва. Государственный республиканский центр русского фольклора. 200 с.

Folkloristics in the Digital Age (2019), Eds. Pekka Hakamies and Anne Heimo, Suomalainen Tiedekatemia // Folklore Fellows' Communications, 316, Tallinn 2019, 181 pp..

Hakamies P. (2015), Let's get Digital. The Folklore Fellows' Summer School // Folklore Fellows' Network, No. 44, July 2014, p. 3.

Heimo A. & Koski K. (2014), Internet Memes as Statements and Entertainment // Folklore Fellows' Network, No. 44, July, p. 4-12.

Laineste L. (2013), Funny or Aggressive? Failed Humour in Internet Comments // «Folklore», № 53

<http://www.folklore.ee/folklore/vol53/laineste.pdf>

Palmenfelt Ulf (2010), Once upon a time there was a genre // Folklore Fellows' Network, no. 38, June, pp. 8-17.

Vardanyan N.V. (2023), Folklore in the handwritten albums of Yerevan schoolgirls as a manifestation of urban youth subculture, Urbis et Orbis. Микрораспространение и семиотика города, 2023, N 1, Vol. 3, 149-161. <https://urbis-et-orbis.rau.am/page/4412564370-celi-i-zadaci>

Voolaid Piret (2013), Click 'Like' and Post It on Your Wall! Chain Posts on Facebook – Identity Construction and Values by // «Folklore», № 53

<https://www.folklore.ee/folklore/vol53/voolaid.pdf>

<https://doi.org/10.52027/801346-php-193>

ayvazyan.a.v@gmail.com

**«ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ**

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

*Երևանի Վ. Բրյուսովի անվ. Պետական համալսարանի
լեզվաբանության ամբիոնի ավագ դասախոս,
բանասիրական գիտ. թեկնածու*

Ներածություն

«Լեզվաբանության ներածություն» կամ «լեզվաբանության հիմունքներ» առարկան տասնամյակներ շարունակ մեր երկրում դասավանդվել է գրեթե բոլոր այն բաժիններում, որտեղ ուսումնասիրության նպատակը եղել է մարդկային բնական որևէ լեզվի համակարգային ուսումնասիրումը: Թեև դեռևս առնվազն 20 տարի առաջ ուսանողներից շատերը բողոքում էին առարկայի բարդությունից, ներկայումս նրանց արձագանքներն արդեն հիշեցնում են հին հունական ողբերգությունները: Բողոքողներից ոմանց մոտ ֆննաշրջանից առաջ սկսում են դրսևորվել ընկճախտի համախտանիշներ, իսկ առավել դիմացկուն և հնարամիտները, նախորդ սերնդի դառը փորձը հաշվի առնելով, տարեսկզբից սկսում են ֆրոնաշան պատրաստել ծածկաթերթիկները ու դրանցից հմտորեն օգտվելու վարպետաց դասեր փաղել ավագներից: Հասկանալի է, որ մի փոքր խտացրել ենք գույները տխուր թեման հումորով համեմելու նպատակով, սակայն նրանք, ովքեր որևէ կերպ առնչվել են այս առարկային՝ կա՛մ որպես ուսանող, և՛/կա՛մ որպես դասախոս, հուսամ՝

կփաստեն, որ լեզվաբանության նկատմամբ ուսանողներից շատերի վերաբերմունքը մեր բունեղում, մեղմ ասած՝ այնքան էլ դրական չէ:

Հիմնաբառեր - լեզվաբանության ներածություն, ընդհանուր լեզվաբանություն, շարահյուսական ծառեր, բաղադրական ծրագիր, մագիստրոսական ծրագիր:

Կարծում ենք, որ համապատասխան բաժիններում այս առարկայի կարևորությունը կասկածից վեր է, քանի որ, ինչպես ասում են՝ այն ամպհովանու դեր է տանում և առաջին կամ երկրորդ կուրսեցիներին աստիճանաբար ծանոթացնում է այն հենքային հասկացություններին և լեզվի ուսումնասիրության ոլորտներին, որոնց հետագայում ուսանողները հնարավորություն են ունենում առավել մանրամասն անդրադառնալ՝ առանձին լեզուներ ուսումնասիրելիս:

Այս պարագայում բնական հարց է առաջանում, թե ինչու նման թերապևտիկ առաքելություն ունեցող գիտակարգը, որը փաստացի կոշված է ապահովելու մարդկային կյանքի գեղեցկագույն առեղծվածներից մեկի՝ լեզվի ոլորապտույտ արահետներով անցնելու սահունությունը, առաջացնում է վախ, իսկ երբեմն ցավոք նաև հակակրանք:

Մեր անձնական փորձի և ուսանողների շրջանում բանավոր հարցումների միջոցով առանձնացրել ենք մի շարք խնդիրներ, որոնք, ըստ մեզ՝ կարիք ունեն բացորոշման և կարող են լույս սփռել վերը հնչած հարցի պատասխանը փնտրելու գործում:

Դրանցից առաջինն առավելապես տեխնիկական բնույթի է և վերաբերում է դասավանդվող նյութի բաշխմանը: Այսինքն՝ կրթական նախկին հնգամյա համակարգով «լեզվաբանության ներածություն» անցնում էին առաջին կուրսում՝ դրանով իսկ ապահովելով անհրաժեշտ հիմք մասնավոր լեզուներն առավել խորությամբ ուսումնասիրելու համար: Մինչդեռ «ընդհանուր լեզվաբանություն» առարկան անցնում էին կամ ամբողջությամբ չորրորդ կուրսում, կամ չորրորդ կուրսի երկրորդ կիսամյակում ու հինգերորդի առաջին կիսամյակում: Ուստի մինչ այդ ուսանողներն արդեն հասցրած էին լինում յուրացնել մասնավոր լեզուների տեսական հնչունաբանություն և տեսական քերականություն առարկաները, որոնք էապես հեշտացնում էին լեզվի ընդհանուր տեսության ուսումնասիրումը: Ներկայումս 4-2 համակարգով այս՝ բարդության եր-

կու մակարդակ ենթադրող գիտակարգը ամբողջությամբ հայտնվել է բակալավրում և տեսական առարկաներով հագեցած երրորդ կուրսը դարձել է լրացուցիչ ծանրաբեռնված ուսանողների համար:

Հասկանալի է, որ մեզ՝ որպես առարկան դասավանդող մասնագետների, ամենևին ձեռնտու չէ լեզվաբանությունը հատկացված ժամաքանակի կրճատումը: Ընդհակառակը, ինչպես վերը ասվեց, մեր կարծիքով՝ այն խիստ կարևոր է և նույնիսկ ցանկալի, որպեսզի հարակից մասնագիտություններով սովորողները նույնպես հնարավորություն ունենան ուսումնասիրել լեզվաբանությունը՝ որպես կամընտրական առարկա, ինչպես դա արվում է արտերկրի մի շարք առաջատար կրթական հաստատություններում: Այդ դեպքում՝ ո՞րն է խնդիրը:

Սա ստիպում է մեզ անդրադառնալ երկրորդ հարցին՝ վերը նշված առարկաների միջև դասընթացի բովանդակության բաշխմանը՝ ըստ բարդության մակարդակի: Մեր կարծիքով՝ հնարավոր է լեզվաբանության ներածությունը տեսական նյութերի առումով թեթևացնել ի հաշիվ ընդհանուր լեզվաբանության: Թերևս ճիշտ կլինի այս հարցը հետագա կառուցողական քննարկման նյութ դարձնել ներբուհական միջավայրում հատկապես դասավանդող մասնագետների ակտիվ ներգրավմամբ, սակայն մինչ այդ կարող ենք փաստել, որ երբեմն «լեզվաբանության ներածություն» և «ընդհանուր լեզվաբանություն» առարկաների թեմաներում լինում են մասնակի համընկնումներ: Համոզված ենք, որ դասախոսներն այս փաստը կհիմնավորեն գրեթե միևնույն նյութին բարդության տարբեր աստիճաններով անդրադառնալու անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, կարծում ենք, որ առնվազն երկու կամ երեք թեմա կարելի է միացնել ընդհանուր լեզվաբանությանը՝ դրանով իսկ լրացուցիչ դասաժամ ապահովելով լեզվաբանության ներածություն դասընթացում մշտապես գոյություն ունեցող որոշ թեմաներին առավել հանգամանորեն անդրադառնալու համար:

Սրանից տրամաբանորեն բխում է երրորդ հարցը՝ դասավանդվող նյութում թեմաների շեշտադրման փոփոխությունը, որին հանգել ենք նախ արտերկրի համալսարաններում դասավանդող, կամ թեկնածուական կոչումը ստացած ու Հայաստան վերադարձած մեր գործընկերների հետ ունեցած հարցուզրույցների միջոցով, և երկրորդ՝ լեզվաբանության մի շարք հայտնի դասագրքեր ուսումնասիրելով: Դրանցից առավել հայտնիներն են Օհայոյի պետական համալսարանի հրատարա-

կաժ Language Files-ը (2011)⁴⁰, Վիկտորյա Ֆրոմկինի An Introduction to Language-ը (2011)⁴¹ և Ուլիամ Օ'Գրեյդիի Contemporary Linguistics-ը (2010)⁴²:

Պարզվում է, որ արևմտյան երկրների շատ բուհերում այս առարկայի առանցքային թեմաները լեզվի մակարդակների հանգամանալի ուսումնասիրումներն են: Բարեբախտաբար մենք նույնպես շոշափում ենք այդ թեմաները մեր դասախոսությունների ընթացքում: Եվ այս պարագայում կարևոր է ուշադրություն դարձնել «հանգամանալի» և «շոշափում» բառերի իմաստային հակադրությանը: Մոտեցումների էական տարբերությունների մասին է վկայում նաև յուրաքանչյուր թեմային տրամադրվող ժամաքանակը: Որպես օրինակ նշենք, որ հաճախ ձևաբանությունը տրամադրվում է մեկ կամ առավելագույնը երկու դասաժամ, որի շրջանակներում բնականաբար թեման ներկայացվում է խիստ ընդհանուր գծերով, և ուսանողները դժվարությամբ հասցնում են ծանոթանալ ընդամենը մի շարք առանցքային հասկացությունների:

Ահա ևս մի խնդիր, որին ստիպված ենք առերեսվել, այն է՝ դասավանդվող նյութը յուրացնելու հնարավորությունը: Երբեմն բավականին կնճռոտ հարցեր ուսումնասիրելու համար ուսանողին անհրաժեշտ է ակտիվորեն փորձառել գիտելիքը: Սակայն հաճախ ստացվում է այնպես, որ մատուցված նյութի յուրացման մակարդակի բարձրակետը լավագույն դեպքում լինում է իրազեկվածությունը, որը այդպես էլ չի փոխարկվում տիրապետման:

Վերջերս, երբ այս թեմայով հերթական հարցումն էինք կատարում, բակալավրի աստիճանը ստանալու շեմին կանգնած լավագույն ուսանողներից մեկը, ի պատասխան այն հարցին, թե՞ ինչ գիտելիք է ստացել «լեզվաբանության ներածություն» և «ընդհանուր լեզվաբանություն» առարկաներից, մոտավորապես հետևյալ կերպ արձագանքեց. «Եթե դասախոսությունները մեկ անգամ աչքի անցկացնեմ, կկարողանամ պատասխանել»: Խնդիրն այն չէ, որ նա չէր հիշում որևէ հստակ բան, այլ այն, որ լավագույն ուսանողներից մեկի մոտ լեզվաբանությունը հարա-

⁴⁰ Mihalicek V., Wilson C., (Eds). Language Files. Ohio State University Press: Columbus 2011.

⁴¹ Fromkin V., Rodman R., Hyams N., An introduction to Language. Wadsworth: Boston 2011.

⁴² O'Grady W., Archibald J., Aronoff M., Rees-Miller J., Contemporary Linguistics. Bedford/St. Martin's: Boston/New York 2010.

բերակցվում էր որոշակի տվյալներ մտապահելու հետ: Մինչդեռ իդեալական կլիներ, որ նա խոսեր այն վերլուծական կարողությունների ու հմտությունների մասին, որոնք ենթադրաբար պետք է ձեռք բերած լիներ համապատասխան դասընթացների շրջանակներում:

Թեև առկա խնդիրները համակարգային մոտեցման կարիք ունեն, այդուհանդերձ, որպես դրանց լուծման մեկնակետ մենք տեսնում ենք դասընթացի համալրումը գործնական առաջադրանքներով: Որոշ գործընկերներ մտավախություն ունեն, որ տեսական առարկայում գործնական տարրերի ներդրումը կփոխարկի նրա էությունը՝ վերածելով այն առավելապես գործնական առարկայի: Սակայն այս պարագայում առաջարկվող վարժությունների գերխնդիրը ուսանողների մոտ կատարողական վարպետության բարձրակետը չէ: Դրանց ներդրման նպատակն է զինել ապագա լեզվաբաններին ապացուցողական այն գործիքակազմով, որով հնարավոր կլինի բացորոշել տեսական գիտելիքների այն խրթին հարցերը, որոնք հակառակ դեպքում շատ ուսանողների համար շարունակում են մնալ ասես էզոթերիկ մի բան՝ հասու միայն ընտրյալներին: Սա զրկում է լեզվաբանությունը այն գործառական կարևոր դերակատարումից, որը վերջինս վաղուց ստանձնել է արևմտյան մշակույթում:

Ոմանք, իհարկե, կառարկեն՝ ասելով, թե արևմտյանը դեռ չի նշանակում, որ լավն է, որի հետ մենք լիովին համաձայն ենք, սակայն, հիշելով հայտնի խոսքը՝ «ծառն իր պտղից է ճանաչվում», կարող ենք փաստել, որ առնվազն մեր հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ հիշյալ դասընթացներն անցած ուսանողների լեզվաբանական վերլուծություններ կատարելու կարողություններն ու հմտություններն էապես զիջում են իրենց արևմտյան բախտակիցների գործառական գիտելիքներին:

Խնդրին առարկայորեն ծանոթանալու համար, բավարար է թերթել լեզվաբանության վերաբերյալ հայալեզու հիմնական դասագրքերը, որից պարզ կդառնա, որ, չնայած դրանցից շատերը պարունակում են բավականին խորքային տեսական գիտելիքներ, սակայն, օրինակ՝ ոչ մի թեմա չկա շարահյուսական ծառեր գծելու հմտություններ զարգացնելու մասին, մի բան որն առկա է վերը հիշատակված անգլալեզու բոլոր դասագրքերում: Լուծումն այն չէ, որ դրանց մասին պարզապես հիշատակենք դասախոսությունների ընթացքում, այլ անհրաժեշտ է հետևողականորեն ձգտել ձևավորել ուսանողների մոտ համապատասխան հմտությունները: Այս մասին բառացիորեն ասում է սերող քերական

նույն ժամանակ տրամաբանությունները գրված շարահյուսության ներկայիս լավագույն դասագրքերից մեկի հեղինակ Էնդրյու Քարնին, ըստ որի՝ ծառեր գծելու համար հարկավոր է տասնյակ անգամներ կատարել նման վարժություններ: Նա նույնիսկ համեմատում է այդ հմտությունը երաժշտական գործիք նվագել սովորելու հետ:⁴³

Դեռևս 1960-ական թվականներին հրատարակված Ռ. Հ. Ռոբինսի լեզվաբանության պատմությանը վերաբերող դասագրքում միանշանակ ասվում է, որ լեզվաբանությունն էմպիրիկ, այսինքն՝ փորձի վրա հիմնված գիտություն է, քանի որ այն տվյալները, որոնց հետ լեզվաբաններն աշխատում են, դիտարկելի և զննելի են [տե՛ս Robins 1967, 5]:⁴⁴

Որպես հիշատակված խնդիրների լուծում՝ առաջարկում ենք դասընթացում կատարել թեմատիկ շեշտադրումների փոփոխություն, բովանդակության արդյունավետ բաշխում՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, այդ թվում՝ տեսական և գործնական գիտելիքների համամասնության տարբերությունն ինչպես լեզվաբանության ներածություն և ընդհանուր լեզվաբանություն առարկաների միջև, այնպես էլ բակալավրական և մագիստրոսական ծրագրերում:

Մեր կարծիքով՝ առավել նպատակահարմար կլինի դասախոսությունների բովանդակությունը կազմելիս հաշվի առնել նաև ուսանողների մասնագիտացումը, քանի որ լեզվաբանություն դասավանդվում է ոչ միայն այդ մասնագիտությամբ սովորողներին, այլև թարգմանիչներին և մանկավարժներին: Օրինակ՝ վերջիններիս մատուցվող դասընթացում կարելի է ներառել մայրենի և օտար լեզուների յուրացմանը վերաբերող թեմաներ:

Խհարկե, ինչպես արդեն ասվեց, խնդիրը համակարգային լուծման կարիք ունի, որի ճանապարհին առկա խոչընդոտները չեն սահմանափակվում մեր հիշատակածներով: Սակայն հույս ունենք, որ անգամ անհատական ջանքերի շնորհիվ կարելի է հասնել շոշափելի հաջողությունների այս ասպարեզում և ուսանողների սարսափահար դեմքերը փոխարկել քննախույզ հայացքների:

⁴³ **Carnie A.**, Syntax: A Generative Introduction. Wiley-Blackwell: West Sussex 2013, p. 90.

⁴⁴ **Robins R. H.**, A Short History of Linguistics. Longmans: London 1967, p. 5.

ANDRANIK AYVAZYAN

**THE NEED FOR A CHANGE IN THE CONTENT EMPHASIS OF THE
SUBJECT "INTRODUCTION TO LINGUISTICS" IN THE ARMENIAN
ACADEMIC ENVIRONMENT**

Summary

The basis for this article was our personal experience of teaching "Introduction to Linguistics" at Brusov State University and inquiries arising from the need for systemic change. The main goal is:

- to present the prerequisites for the need for changes in the content of the "Introduction to Linguistics" subject in the Armenian university environment. As well as

- to outline the possible steps, the implementation of which can make the delivery of lectures more effective, stimulate interest in the subject and make the perspective of the linguist's professional activity more obvious to students.

Keywords - *Introduction to Linguistics, Phonetics, Syntax, Phonology, Morphology, Levels of Language.*

ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՇՈՏ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան*

Ներածություն

Մայրենիի ուսուցման գործընթացը արմատական փոփոխությունների է ենթարկվում՝ կապված համակարգության պետական շափորոշի և առարկայական ծրագրի պահանջների հետ: Դասագրքում ուսումնասիրվող նյութը ներկայացված է համալիր եղանակով՝ ընթերցանության բնագիր, լեզվական գիտելիք, գրականագիտական տեղեկություն, բնագրի շուրջ կատարվող աշխատանք, համապատասխան գործնական վարժություններ, լեզվական նյութն ամփոփող գծակարգեր, QR ծածկագրում զետեղված նյութեր: Մայրենիի դասի հիմնանպատակը աշակերտի բանավոր և գրավոր խոսքի զարգացումն է, ստեղծարարության, հաղորդակցական, համագործակցային կարողությունների ձևավորումը:

Մայրենիի միջոցով են հիմնականում իրականացվում սովորողների կրթադաստիարակչական գործունեությունը և բարոյաարժեքային համակարգի ձևավորումը: Դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից զատ լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական հաշակի, աշխատասիրության, ազնվության, նշտապահության և մի շարք հատկանիշների ձևավորում: Այս ամենն իրականացվում է նաև ինֆորմայն ընթերցանության և լեզվական վարժությունների լուծման ընթացքում: Այսօր միջազգային հանրության շրջանում բարձր է գնահատվում անհատի կարգալու մշակույթը, որը, սակայն, ակնհայտորեն անկում է ապրում: Փոխվել է աշխարհը, փոխվել է վերաբերմունքը զրբի և ընթերցանության նկատմամբ, ուստի ժա-

մանակակից դպրոցի հիմնախնդիրներից մեկը ընթերցասեր մարդու համակողմանի ձևավորումն է:

Մայրենիի դասագործընթացն ամբողջանում է ուսուցման այլընտրանքային մոդելների միջոցով: Դրանցից մեկը նախագծային աշխատանքն է, որն ակտիվ ուսումնառության մոդել է: Այստեղ կարևոր է ուսուցչի ուղղորդումը և թիմային աշխատանքը: Հանրակրթական դպրոցի ծրագրերում ներառվել է նաև էսսե գրելու պահանջը, որը դժվարություն է առաջացնում աշակերտների շրջանում: Էսսեն կառուցվածք է, որ հնարավորություն է տալիս աշակերտին լինել ինֆնուորյուն, ձևավորել սեփական միտք, արտահայտել անձնական դիրքորոշում:

Հիմնաբառեր - մայրենի, ուսուցման գործընթաց, այլընտրանքային մոդելներ, QR ծածկագիր, նախագծային աշխատանք, էսսե:

Վերջին շրջանում ուսուցման գործընթացը արմատական փոփոխությունների է ենթարկվում կապված հանրակրթության պետական չափորոշի և առարկայական ծրագրի պահանջների հետ: Մայրենիի ինտեգրված դասագրքով աշխատելը սովորողների առջև բացում է գիտելիքների և հմտությունների ձեռքբերման և դրանց կիրառման հնարավորություններ: Դասագրքում ուսումնասիրվող նյութը ներկայացված է համալիր եղանակով՝ ընթերցանության բնագիր, լեզվական գիտելիք, գրականագիտական տեղեկություն, բնագրի շուրջ կատարվող աշխատանք, համապատասխան գործնական վարժություններ, լեզվական նյութն ամփոփող գծակարգեր, QR ծածկագրում զետեղված լրացուցիչ նյութեր՝ աղյուսակներ, երաժշտություն և էլեկտրոնային վարժություններ: Մայրենիի դասի հիմնական նպատակադրումը աշակերտի բանավոր և գրավոր խոսքի զարգացումն է, ստեղծարարության, հաղորդակցական, համագործակցային կարողությունների ձևավորումը:

Հանրակրթության մեջ ուսումնասիրվող բոլոր առարկաների մեջ մայրենի լեզուն ունի կենտրոնական դեր. նրա միջոցով են հիմնականում իրականացվում սովորողների կրթադաստիարակչական գործունեությունը և բարոյաարժեքային համակարգի ձևավորումը, հոգեկան գործընթացների զարգացումը: Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից զատ լուծվում են նաև դաստիարակչական

լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության և մի շարք հատկանիշների ձևավորում: Այս ամենն իրականացվում է նաև ինքնուրույն ընթերցանության և լեզվական վարժությունների լուծման ընթացքում: Այսօր միջազգային հանրության շրջանում բարձր է գնահատվում անհատի կարգալու մշակույթը, որը, սակայն, ակնհայտորեն անկում է ապրում: Փոխվել է աշխարհը, փոխվել է վերաբերմունքը գրքի և ընթերցանության նկատմամբ, ուստի ժամանակակից դպրոցի հիմնախնդիրներից մեկը ընթերցասեր մարդու համակողմանի ձևավորումն է:

Մայրենիի դասագործը ընթացում առաջնակարգ տեղ է գրավում ընթերցանությունը, որի նպատակն է՝

միջին դպրոցականի (5-6-րդ դասարանցիներ) ընթերցողական կարողությունների զարգացումը,

մայրենիի գործնական տիրապետումը,

ճանաչողական գիտելիքների ձեռքբերումը,

բառապաշարի հարստացումն ու խոսքի զարգացումը (մենք յուրաքանչյուր դասարանում առաջարկում ենք ստեղծել աշակերտի բառապաշարի նվազագույն բառարան),

սերունդների ստեղծած գրական, գիտական ու մշակութային արժեքներին հաղորդակցումը:

Անհրաժեշտ է աշակերտներին հնարավորություն ընձեռել խոսել միմյանց հետ, ստեղծել մի նոր պատմություն՝ զարգացնելու նրանց ստեղծագործական հմտությունները: Շահեկան է, որ յուրաքանչյուր դասունի իր վերջնարդյունքները, որոնք զետեղված են ուսուցչի ձեռնարկում: Օրինակ՝ «Զրույց» թեմայի վերջնարդյունքը հետևյալն է՝

հասկանալով, վարժ և արտահայտիչ կարգալ տեքստը, ընկալել տեքստի տարբեր մասերի միջև եղած կապերը,

ներկայացնել զրույցի հիմնական գաղափարը,

համառոտ վերարտադրել զրույցի բովանդակությունը,

տեքստը բաժանել առանձին հատվածների և վերնագրել,

թեմայի վերաբերյալ շարադրել կարծիք,

հանգամանորեն բնութագրել հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները,

գնահատել և արժևորել հերոսների արարքները՝ ապահովելով պատճառահետևանքային կապերը,

հորինել պատմություն (որպես ավարտ՝ նոր վերնագիր հյուսելով),

համադրել ազգային արժեքները համամարդկային արժեքներին,
նորածանոթ բառերի բացատրությունը սովորել դասագրքի բառա-
րանից և դրանք գործածել նախադասությունների մեջ:

Դասագրքում և տետրերում լեզվական վարժությունները բխում են
ընթերցանության նյութից: Ամբողջ առաջադրանքները կազմված են
պարզից բարդ սկզբունքով, որպեսզի դրանք բոլոր աշակերտներին
հասանելի լինեն:

Զրույց-բանավեճ

Աշակերտներին տրվում է վարժությունների համակարգ՝ միտված
նրանց բանավոր խոսքի զարգացմանը, երկխոսություններ, մենախոսու-
թյուններ կազմելու միջոցով: Մայրենիի դասագրքում անդրադարձ է
կատարվում բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստող
երկխոսության տեսակներից բանավեճի կարևորությանը, որն էական
տեղ ունի ժամանակակից դիդակտիկայում: Հայտնի է, որ հին աշխարհի
մտածողների շրջանում բանավիճելը ընդունված էր որպես ճշմար-
տության հասնելու ուղի: Էրիստիկան (վիճարկեստը) ձևավորվել և
ծաղկել է մ.թ.ա. հին հունական սոփեստների մոտ (Պրոտագորաս,
Հիպիաս, Պրոդիկոս):

Զրույց-բանավեճի ընթացքում մասնակիցների կողմից նույն
երևույթի վերաբերյալ տարբեր տեսակետներ հայտնելու միջոցով
զարգանում են բանավիճող կողմերի համոզմունքները, գնահատումները,
դատողությունները ներկայացնելու ունակությունը, ձեռք են բերվում
նաև ուրիշների հետ բարեկիրթ հաղորդակցվելու կարողություններ
(Բրուտյան, 1972, 104): Դասի յուրացման մակարդակը ստուգելու
նպատակով անհրաժեշտ են բառային աշխատանքները: Օրինակ՝

Ուշագիշի կարդացեք տեքստը և դո՛ւրս գրեք Բ-Ռ-ի ուղղագրությանը
վերաբերող բառեր:

Տեքստից դո՛ւրս գրեք կենդանիներին բնութագրող բառեր:

Արմատները միացնելով՝ կազմե՛ք նոր բառեր:

Արքա և երկաթ բառերով կազմե՛ք նոր բառեր:

Բնագրում գտե՛ք **թագավոր, մեծ, հավաքել** բառերի հոմանիշները:

Բնագրից դո՛ւրս գրեք հականիշների երկու զույգ և դրանք
գործածե՛ք նախադասությունների մեջ:

Լավ յուրացնելով և արժևորելով մայրենի լեզուն՝ աշակերտները
լայն հնարավորություն են ունենում նաև միջմշակութային արժեքների

Ճանաչման առումով: Մայրենի լեզուն ապահով երաշխիք է նրանց ուսումնական հաջողությունների համար: Մայրենի լավ իմացությունը նպաստում է այլ լեզուների հաջող յուրացմանը, դրանց բառապաշարի և կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների ընկալմանը:

Նախագծային աշխատանք

Մայրենի դասագործը ընթացքում է նախագծահեն ուսումնառությամբ, որն ակտիվ ուսումնառության մոդել է: Այստեղ կարևոր է ուսուցչի ուղղորդումը և թիմային աշխատանքը:

Ժամանակատար գործողությունն պահանջող աշխատանքի այս ձևը՝ որպես պարտադիր բաղադրիչ, ներառված է հանրակրթական պետական չափորոշում: Այս աշխատանքի կարևոր բաղադրիչը հետազոտություն կատարելն է, որի արդյունքում ծնվում է մի վերջնարդյունք, պրոդուկտ, որը տալիս է հիմնախնդրի (պրոբլեմի) լուծման առաջարկ: Նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպվում է մի գաղափարի շուրջ՝ զարգացնելով սովորողի կարողունակությունը: Հետազոտության արդյունքում աշակերտները որևէ խնդիր են լուծում՝ ունենալով իրական արդյունք: Նախագծային աշխատանքը անմիջականորեն կապվում է ծրագրի վերջնարդյունքի հետ: Մեր վերապատրաստման աշխատանքների ընթացքում եկել ենք այն համոզման, որ շատ ուսուցիչներ նախագծային աշխատանքի ուղղորդման լուրջ կարիք ունեն: Ինչպիսի՞ հմտություններ փոխանցել ուսուցչին, որ նա կարողանա կազմակերպել նախագծային աշխատանք՝ դա կիրառելով դասագործընթացում: Ինչպե՞ս կառավարել և գնահատել այդ նախագիծը: Պետք է փաստել, որ վերապատրաստվող ուսուցիչներից ոմանք մի ներքին մտահոգություն են ցուցաբերում, թե արդյոք կկարողանան իրականացնել հանրակրթության այս փոփոխությունները: Սակայն գործընթացի մեջ արագ ներգրավվելուց հետո արդեն նրանք փոխանցում են աշակերտների խանդավառությունը, որով նրանք մասնակցում են դասագործընթացին: Ամեն դեպքում ուսուցիչներն աշխատելուց հետո ողջունում են ուսուցման այս նոր մոդելի առկայությունը, որն ամբողջանում է ստեղծարարությամբ և նորարարությամբ: Այստեղ կարևոր է նաև աշակերտի հետաքրքրության շրջանակը հաշվի առնելը և նախագիծ առաջադրելը: Պետք է հստակ ձևակերպել հետազոտության հարցը, նպատակը, հիմնախնդիրը՝ պլանավորելով և գրառելով կատարելիք քայլաշարը:

Ուսումնական էսսե

Հանրակրթական դպրոցի ծրագրերում ներառվել է էսսե գրելու պահանջը: Դպրոցներում մեր հանդիպումների ընթացքում նկատել ենք, որ այդ պահանջը մեծ դժվարություն է առաջացրել և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների շրջանում: Շատերին թվում է, թե այս պահանջն ուսումնական արգելքներ կարող է առաջացնել:

Էսսեն ֆրանսերեն նշանակում է **փորձ**: էսսեի ժանրն իր անվանումով առաջացել է, երբ ֆրանսիացի գրող-փիլիսոփա Միշել դը Մոնտենը 1580թ. լույս ընծայեց իր երկը և այն կոչեց Essais (Փորձեր), որի վրա աշխատեց շուրջ քսան տարի: Այն յուրահատուկ հիշատակարան-օրագիր է տարաբնույթ բովանդակությամբ (Մոնտեն, 1991, 46):

Էսսեն որևէ բնապատկերի, հանդիպման տպավորությունից ծնված գեղարվեստական արձակ ստեղծագործություն է՝ ուրույն բառապաշարով, խոսքի կառուցման հակիրճությամբ:

Որոշ հեղինակներ էսսեն անվանում են գրական ուրվագիծ, փոքր ծավալի և ազատ կոմպոզիցիայի արձակ ստեղծագործություն, որն արտահայտում է հեղինակի անհատական տպավորություններն ու նկատառումներն ինչ-որ կոնկրետ հարցի մասին և «չի հավակնում քննության առարկայի սպառիչ ու վերջնական մեկնաբանության» (Սանթոյան, 2009, 80): Սա գեղարվեստական էսսեի ամփոփ բնութագիրն է: Իսկ ի՞նչ է ուսումնական էսսեն: Ինչո՞ւ է այն տարբերվում դպրոցական շարադրությունից:

Ուսումնական էսսեն բաղկացած է երեք մասից՝ ներածություն, մարմին և վերջնամաս: Ներածության մեջ արձանագրվում է գլխավոր միտքը: Հենց սկզբում պետք է ներկայացնել գլխավոր ասելիքը: Ասել այն, ինչի մասին ուզում ենք խոսել, այնպես, որ ընթերցողին հասկանալի լինի նյութը: Այստեղ պետք է ընթերցողին գրավող մտքեր գետեղել, բացատրել, թե ինչու է այդ թեման կարևոր՝ բերելով օրինակներ նաև անձնական կյանքից: Էսսեի հաջորդ հատվածում պետք է ներկայացնել հիմնավորումներ: Այստեղ կարելի է նաև այլ աղբյուրներից մտքեր քաղաբերել և հիմնավորել ասելիքը՝ ամփոփելով այդ մտքերը, համագրելով կամ հակադրելով: Եվ վերջում սեփական գիրքորոշմամբ ամփոփել տվյալ նյութը: Նշենք, որ ի տարբերություն էսսեի, շարադրությունը երբեք կառուցվածք չի ունեցել: Մենք աշակերտներին չենք հորդորել, թե ինչպես կառուցել շարադրությունը: Նրանց հորդորել ենք ստեղծել շարադրություն և կառուցվածք չենք առաջարկել: Էսսեն կառուցվածք է,

որ հնարավորություն է տալիս աշակերտին լինել ինքնուրույն, ձևավորել սեփական միտք, արտահայտել անձնական դիրքորոշում: Հասե գրելիս մենք աշակերտին տալիս ենք ճանապարհ ստեղծագործելու համար: Այդպիսի կառուցվածքով են աշխատել շատ էսսեիստներ՝ Վարդգես Պետրոսյանը, Գրիգոր Գուրզադյանը, Կարպիս Սուրենյանը, Գևորգ Հմինը և ուրիշներ:

QR ծածկագրեր

Մայրենիի ուսուցմանը նպաստում են նաև QR ծածկագրերը: Այստեղ աշակերտներն ուսումնասիրում են լրացուցիչ նյութեր, գրողների կենսագրություններ, դիտում են մուլտֆիլմեր, լսում բնագրերի համար գրված մեղեդիներ: Աշակերտները լուծում են էլեկտրոնային վարժություններ, և իրենք էլ ստուգում պատասխանները: Դասագրքում զետեղված են նաև առարկայացանկ և անվանացանկ (Գալստյան, Թովմասյան 2023, 4, 171):

Այսօր մայրենիի դասագործընթացում մենք կարևորում ենք քննադատական մտածողության դերը, աշակերտներին սովորեցնում ինքնուրույն մտածել և ոչ թե կրկնել այն, ինչ ասել է ուսուցիչը կամ բառացի կրկնել այն, ինչ գրված է դասագրքում:

Այսպիսով՝ մայրենիի դասագործընթացում ընթերցելուց զատ, ընթերցածի հիման վրա պետք է նաև գրել և արտահայտել սեփական դիրքորոշում: Գրել և խոսել գրագետ, բոլորի կողմից հասկանալի և ինքնուրույն, այս է ժամանակի հրամայականը:

Մայրենիի դասի ուսումնամեթոդական նոր համալիրը՝ համապատասխան գործիքներով և նոր մոդելներով, միավորված է սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը:

ASHOT GALSTYAN

ALTERNATIVE MODELS OF MOTHER TONGUE TEACHING

Summary

The process of the mother tongue teaching of the 5th-6th grades undergoes radical changes related to the requirements of the state standard of public education and the curriculum. The material studied in textbooks and

manuals is presented in a complex way: reading text, language knowledge, literary information, work on the text, relevant practical exercises, diagrams summarizing the language material, materials included in the QR code. The main goal of the mother tongue class is the development of the student's oral and written speech, the formation of creativity, communicative and cooperative abilities.

It is known that the educational activities of students and the formation of the moral value system are mainly carried out through the mother tongue. In the course of teaching, in addition to educational goals, serious educational problems are also solved: the formation of aesthetics, honesty, diligence, punctuality and a number of characteristics. All this is also carried out during independent reading and solution of language exercises.

Today, the reading culture of the individual is highly valued among the international community, but it is obviously in decline. The world has changed, the attitude towards book and reading has changed, so one of the problems of the modern school is the comprehensive formation of a reading-loving person.

The mother tongue curriculum process is complemented through alternative teaching models. One of them is project work, which is a model of active learning. Teacher's guidance and teamwork are quite important here.

The requirement to write an essay has also been included in the general school curriculum, which at first glance causes difficulty among students. The essay is a structure that gives the student an opportunity to be independent, to form his own thoughts, to express a personal position.

Keywords - mother tongue, teaching, alternative models, QR code, project work, essay.

Գրականություն

- Բրուտյան Գ., Փիլիսոփայություն և լեզու, Ե., 1972:
Գալստյան Ա., Թովմասյան Թ., Մայրենի 5, Ե., 2023:
Մոնտեն Մ., Փորձեր, 1991, Ե., 1991:
Սանթրյան Մ., Գրականագիտական բառարան, Ե., 2009:

ՉԻՆԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿՆՅԱԶՅԱՆ ՄԵՐԻ

*Պեկինի օտար լեզուների համալսարանի դասախոս,
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ*

Ներածություն

Հոդվածում քննարկվում են Պեկինի օտար լեզուների համալսարանում (այսուհետ՝ ՊՕԼՀ) հայոց լեզվի դասավանդման որոշ առանձնահատկություններ: Հատուկ ուշադրություն է դարձվում առկա խնդիրներին և դրանց ազդեցությանը կրթական գործընթացի վրա: Ամենաընդգծված խնդիրներից է չինարեն լեզվով ուսումնամեթոդական գրականության բացակայությունը: Հոդվածում նշվում են նաև ուսումնական գործընթացի այն առանձնահատկությունները, որոնց խորհուրդ է տրվում առաջնահերթ ուշադրություն դարձնել չինացի ուսանողներին հայոց լեզու դասավանդող մասնագետներին:

Հիմնաբառեր - հայոց լեզու, լեզուների համեմատություն, դասավանդման մեթոդներ, դասագրքերի կազմում:

Նոր ժամանակաշրջանից ի վեր՝ Չինաստանի արտաքին աշխարհին բացվելը գնալով կայունացել է: «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնությունը, «Մարդկության համար համընդհանուր ապագա ունեցող համայնքի կառուցում» և «Հումանիստական համայնքի կառուցում» գաղափարները զարգացել են՝ ապահովելով լայն տարածք Չինաստանի համալսարաններում օտար լեզուների կրթության քայլ առ քայլ զարգացման համար: Որակյալ կրթություն ունենալու մարդկանց պահան-

չը, բարձրակարգ միջազգային մասնագետներ ունենալու երկրի հրամայականը և ուսանողներին՝ «երիտասարդական երազանքը» չինական երազանքի մեջ ինտեգրելու հետևողական ջանքերը նոր ժամանակներում հանգեցրել են քոլեջներում ու համալսարաններում օտար լեզուներ ուսուցանելու նոր առաքելությունների և պարտավորությունների (Յան Դան, 2021: 001):

Հայերեն լեզուն Պեկինի օտար լեզուների համալսարանում դասավանդվում է 2014 թ.-ի սեպտեմբեր ամսից: ՊՕԼՀ-ը հանդիսանում է օտար լեզուներ դասավանդող առաջատար բուհ Չինաստանում, և հայերեն լեզվի դասավանդումը շատ կարևոր է հատկապես այս բուհում: 2014-2018 թթ. հայերենն այստեղ ուսուցանվում էր որպես երրորդ օտար լեզու: Այս տարիների ընթացքում այն բուհի ուսանողների մոտ շատ մեծ հետաքրքրություն առաջացրեց և 2018-2019 ուս. տարվա սեպտեմբեր ամսից ՊՕԼՀ-ի Ասիայի և Աֆրիկայի ֆակուլտետում հայերենը դասավանդվում է որպես մասնագիտություն:

Չինաստանում հայոց լեզվի նկատմամբ նման հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Հայաստանն ու Չինաստանը խորացնում են համագործակցությունը բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ կրթության ոլորտում:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է ՊՕԼՖ-ում հայոց լեզու սովորող ուսանողների թվով: Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել ՊՕԼՖ-ում չինացի ուսանողներին հայերենի դասավանդման որոշ առանձնահատկություններ և բացահայտել հնարավոր դժվարությունները՝ դրանց հետագա հաղթահարման նպատակով: Կիրառվել է համեմատական մեթոդ, որի արդյունքում իրականացվել է հայերենի և չինարենի որոշ տիպաբանական բնութագրերի վերլուծություն:

Հայերենի և չինարենի որոշ տիպաբանական համեմատություն

Կասկածից վեր է, որ ցանկացած օտար լեզվի ուսուցման գործընթաց պահանջում է ջանք, ժամանակ և կենտրոնացում, հատկապես, երբ մեծ տարբերություն կա մայրենիի և ուսումնասիրվող օտար լեզվի միջև: Եթե համեմատենք հայերենը և չինարենը, կտեսնենք, որ հայերենի այբուբենը բաղկացած է 39 տառից և ունի բազմաթիվ հնչյուններ, որոնք շատ ալլ լեզուներում չեն հանդիպում, օրինակ՝ ը, խ, ծ և այլն, իսկ հարուստ չինական ձայնային համակարգը թույլ է տալիս չինախոսներին ավելի հեշտ և պարզ արտասանել հայերենի հնչյունները: Այնպիսի հնչյուններ, ինչպիսիք են ծ, ճ, ր հնչյունները շատ ավելի հեշտ է սովորել և արտա-

սանել չինարենի՝ համապատասխանաբար j, Zh, r փինյինի համեմատությամբ: Այս և շատ այլ նմանություններ հեշտացնում են հայերեն հնչյունների արտասանությունը չինացի ուսանողների համար: Օրինակ՝ 鸡 (jī, ծի) - հավ, 张 (Zhāng, ձան) - ազգանուն ,人 (rén, րեն) – մարդ:

Ակնհայտ է, որ հայոց լեզվի ուսուցումը չինացի ուսանողների համար միանգամայն յուրահատուկ գործընթաց է, որը դասավանդող մասնագետների կողմից պահանջում է համապատասխան մոտեցում և մեթոդներ:

Հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին և նրանում առանձնանում է որպես հատուկ ճյուղ: Չինարենը լոգոգրաֆիկ լեզու է՝ հիմնված հիերոգլիֆային գրության վրա, սակայն, հայերեն սովորող չինացի ուսանողների համար, որոնց մայրենի լեզուն հիմնված է հիերոգլիֆային այբուբենի վրա, գրերի համակարգերի միջև առկա մեծ տարբերությունը բնավ զգալարություն չի առաջացնում կարգալ-գրել սովորելիս:

Ժամանակակից հայերենի քերականական առանձնահատկությունները նկատելիորեն տարբերվում են չինարենից: Օրինակ, բառերի մեծ մասը խոսքիմասային հատկանիշներ չունեն: Բառերի փոխկապակցումը կարող է որոշվել միայն նախադասության մեջ բառի օգտագործման համատեքստով: Չինարենում գոյականները չունեն սեռի, թվի և հոլովի ձևաբանական ցուցանիշներ: Գոյականի թիվը միշտ պարզաբանվում է համատեքստում թվերի կամ այլ բառերի միջոցով: Չինացիներն արտահայտում են սեռը բառերի միջոցով՝ ավելացնելով «տղամարդ» կամ «կին» բառը:

Ի տարբերություն հայերեն լեզվի՝ չինարենում բայերը չեն փոխվում ըստ եղանակի, ժամանակի, թվի և դեմքի: Բայի տեսակն ու ժամանակը արտահայտվում է հատուկ ածանցներով: Ներկա և ապառնի ժամանակի բայերը կարելի է առանձնացնել նաև վերջածանցի բացակայությամբ:

Օրինակ՝ «我去图书馆。» (Wǒ qù túshūguǎn) նախադասության մեջ

օգտագործվում է երեք նիշ՝ 我 - ես, 去 - գնալ, 图书馆 - գրադարան: Չինարենում ածականները նույնպես չեն փոխվում: Համեմատական ձևեր չունեն՝ համեմատությունն արտահայտվում է հավելյալ բառերի կիրառմամբ: Չինարենի ժամանակակից շարահյուսությունը բնութագրվում է նախադասության մեջ խիստ բառային դասավորությամբ, որը թույլ չի տալիս որևէ փոփոխություն: Բառերի ճիշտ դասավորությունը շատ

կարևոր է, քանի որ դրանից է կախված բառի քերականական նշանակությունը: Նթե բառի կարգը խախտվում է, ապա նախադասության իմաստը կարող է աղավաղվել: Օրինակ՝ «我给水 °» (Wǒ gěi shuǐ) և

«给我水 °» (Gěi wǒ shuǐ) նախադասություններն օգտագործում են երեք նույնական նիշ, սակայն տարբեր բառերի դասավորության պատճառով նախադասության իմաստը փոխվում է: Առաջին նախադասությունը թարգմանվում է որպես «Ջուր եմ տալիս», իսկ երկրորդը՝ «Ջուր տուր ինձ», մինչդեռ հայերենն ունի ճկուն շարադասություն և ուսանողները հեշտությամբ փոփոխում են բառերի դասավորությունը նախադասության մեջ:

Այսպիսով, համեմատելով երկու լեզուների որոշ ասպեկտներ, կարող ենք վստահորեն ասել, որ թվարկված բոլոր հատկանիշները կարող են նաև բարդացնել հայերենի ուսուցման գործընթացը չինարեն խոսող ուսանողների համար՝ մասնավորապես բարդ է նրանց համար հայերենի քերականության յուրացումը, որտեղ իրենց մայրենի լեզվի համեմատ կա զգալի տարբերություն:

Ուսումնական միջոցների և մեթոդական ձեռնարկների կարևորությունը օտար լեզու դասավանդելիս

Բիշարդս Զ.Ս.-ն (2001: 1) նշում է, որ դասագրքերը լեզվական ծրագրերի մեծ մասի հիմնական բաղադրիչն են: Որոշ իրավիճակներում դրանք հիմք են ապահովում ուսանողների ստացած լեզվական տեղեկատվության մեծ մասի և լսարանում տեղի ունեցող լեզվական պրակտիկայի համար: Դրանք կարող են հիմք հանդիսանալ դասի բովանդակության, ուսուցանվող հմտությունների հավասարակշռության և լեզվական պրակտիկայի տեսակների համար, որոնց մասնակցում են ուսանողները: Այլ իրավիճակներում դասագրքը կարող է հիմնականում ծառայել որպես ուսուցչի հրահանգների լրացում: Ուսանողների համար դասագրքը կարող է դառնալ լեզվի հետ շփման հիմնական աղբյուր, բացի ուսուցչի տրամադրած տեղեկատվությանը: Անփորձ ուսուցիչների համար դասագրքերը կարող են նաև գաղափարներ տալ, թե ինչպես պլանավորել և մատուցել դասերը, ինչպես նաև այն ձևաչափերը, որոնցով ուսուցիչները կարող են դասավանդել: Լեզուների ուսուցման մեծ մասը, որն այսօր տեղի է ունենում ամբողջ աշխարհում, չէր կարող տեղի ունենալ առանց կոմերցիոն դասագրքերի լայնածավալ օգտագործման:

Այսպիսով, դասագրքերից օգտվելու և հարմարեցնելու կարողությունը ուսուցչի մասնագիտական գիտելիքների կարևոր մասն է:

Մայրենի լեզվով դասագրքերի կազմումը նույնպես վառ ապացույց է, որ ուսուցանվող լեզուն կարևոր դեր է խաղում երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում: Որքան շատ ուշադրություն դարձնենք կրթության մակարդակին և պայմաններին, որքան զարգացնենք և դյուրացնենք օտար լեզվի ուսուցման գործընթացը, այնքան ավելի մարդկանց կներգրավենք այլ երկրների մշակույթի և մտածելակերպի վերաբերյալ գիտելիքներ ստանալու և խորացման մեջ: Դասագիրքը համարվում է ոչ միայն լեզու ուսուցանելու համար նյութ, այլ նաև այլ մարդկանց մշակույթի և կյանքի մասին տեղեկատվություն տրամադրելու գործիք:

Ջինարեն լեզվով ուսումնական ձեռնարկների մշակման խնդիրը

ՊՕԼՀ-ում հայերեն սովորողների թվի աճին զուգընթաց, նկատվում է մայրենի լեզվով ուսումնական նյութերի լուրջ պակաս: ՊՕԼՀ-ում հայոց լեզվի ուսուցման զարգացումը երիտասարդ գործընթաց է, հետևաբար, այս ոլորտում կան բազմաթիվ բացեր: Ճան Յ.-ն (Zhang J., 2022: 135) պնդում է, որ երկու ուսանող կարող են բախվել նույն խնդիրների հետ ուսումնական գործընթացի ընթացքում: Այնուամենայնիվ, խնդիրների պատճառները կարող են տարբեր լինել, ուստի ուսուցիչները պետք է հասկանան ուսանողների միջև եղած տարբերությունները, փորձեն բավարարել նրանց սովորելու յուրահատուկ պահանջները և օգնել ուսանողներին բարելավել իրենց հմտությունները:

Այսպիսով, մասնագետներից պահանջվում է ընտրել դասավանդման մեթոդներ, որոնք կհամապատասխանեն չինացի ուսանողների առանձնահատկություններին՝ ելնելով նրանց ճանաչողական մակարդակից և սովորելու կարողությունից: Ինչպես արդեն նշել ենք, հայոց լեզվի ուսուցման ոլորտում կան խնդիրներ, որոնցից ամենասուրբ դասագրքերի տեղայնացման խնդիրն է:

Հարկ է նշել, որ առկա նյութերը (Լ. Մուրադյան (2011) «Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն», Ա. Մարտիրոսյան (2017) «Խոսենք Հայերեն») հիմնականում կազմվել են հայերեն սովորող ուսախոս և անգլիախոս ուսանողների համար, ինչը միշտ չէ, որ համապատասխանում է չինացի ուսանողների պահանջներին:

ՊՕԼՀ-ի հայոց լեզվի դասախոսները, ովքեր չինացի ուսանողներին համալսարանում հայերեն դասավանդելու փորձ ունեն արդեն, ներկայումս կազմում են «Հայերենի քերականության ձեռնարկ» առաջին

չինարեն-հայերեն դասագիրքը հայոց լեզու սովորող ուսանողների համար, որը կարող է օգտագործվել ինչպես քերականության, այնպես էլ հայոց լեզվի հիմնական դասերին: Դասագիրքը բաղկացած է 14 բաժիններից, որոնք հստակ և հեշտությամբ նկարագրում են լեզվի հիմնական քերականական առանձնահատկություններն ու կառուցվածքները՝ համապատասխան օրինակներով:

Օտար լեզվի ուսուցումն անբաժանելի է լեզուների համեմատությունից, քանի որ ուսուցումն ինքնին սովորողի մայրենի լեզվի և նպատակային լեզվի միջև կապ հաստատելու գործընթաց է: Չինարեն լեզվով հայերենի առաջին դասագիրքը ոչ միայն կներկայացնի հայոց լեզուն, այլև տարրական գիտելիքներ կտա մշակույթի և երկրի մասին:

Որպես Չինաստանում օտար լեզվի կրթության կարևոր մաս՝ առավել քիչ դասավանդվող օտար լեզուների մասնագիտությունները կրում են դարաշրջանի ներկայացրած առաքելությունը, այն է՝ ընդլայնել ուսանողների գիտելիքները չինական մշակույթի մասին, զարգացնել նրանց հայրենասիրությունը և բարձրացնել չինական մշակույթը օտար լեզուներով տարածելու կարողությունը:

Առավել քիչ դասավանդվող օտար լեզուների դասավանդման նախկին պրակտիկայում ուսուցիչները հաճախ ավելի շատ ուշադրություն էին դարձնում ուսանողների օտար լեզվին տիրապետելու հմտությանը, արտասահմանյան գրականությանը և օտար մշակույթի գիտելիքներին՝ անտեսելով չինական մշակույթն օտար լեզուներով ներկայացնելու կարողությունը: Վերջին տարիներին Պեկինի օտար լեզուների համալսարանի առավել քիչ դասավանդվող օտար լեզուների մասնագիտություններն աստիճանաբար գիտակցել են այս երևույթի առկայությունն ու հնարավոր հետևանքները, այսինքն այն, որ ուսանողներն ունեն օտար լեզվի ուժեղ հմտություններ և վարժ տիրապետում են օտար երկրի մշակույթին, բայց չինական մշակույթի մասին օտար լեզուներով ներկայացնելու նրանց կարողությունը զգալիորեն անբավարար է: Եվ այսպես, Պեկինի օտար լեզուների համալսարանը սկսեց իրականացնել անհրաժեշտ բարեփոխումները: Որոշ մասնագիտություններ սկսեցին ներառել չինական մշակութային գիտելիքներն այնպիսի առարկաների մեջ, ինչպիսիք են «Ինտենսիվ ընթերցանություն» և «Թարգմանություն» առարկաները, իսկ որոշ մասնագիտություններ սկսեցին առաջարկել «Չինական մշակույթի ներածություն օտար լեզուներով» կամ նմանատիպ առարկաներ, որոնք լավ արդյունքներ գրանցեցին:

«Չինական մշակույթի բազմալեզու ներածություն» դասագրքերի շարքը դասագրքերի առաջին ամբողջությունն է, որը թիրախավորում է

օտար լեզուներ սովորողներին և ներառում է տասնյակ լեզուներ: Ըստ դասագրքերի շարքի կառուցվածքի՝ խմբագիրը նախ և առաջ կազմել է «Զինական մշակույթի բազմալեզու ներածություն» նախագծի շինարեն տարբերակը: Զինարեն տարբերակը կազմվել է հաշվի առնելով առավել քիչ դասավանդվող օտար լեզուների գծով մասնագիտությունների բնութագրերը, ուսանողների օտար լեզուների իմացություն մակարդակը, թիրախային երկրի առանձնահատկությունները և այլ գործոններ՝ միևնույն ժամանակ ձգտելով հնարավորինս պատշաճ բավարարել առավել քիչ դասավանդվող օտար լեզուների ուսումնական ընթացքի պահանջները: Զինարեն տարբերակը գրեցին Վրն Ճենը Եվրոպական ուսումնասիրությունների դպրոցից (ՊՕԼՀ), Դոն Ջենլոնը՝ Պատմության բաժնից և Լուո Մինը Զինարենի և գրականության դպրոցից: Դասագրքի հայերեն տարբերակը մշակել են Ասիայի և Աֆրիկայի ֆակուլտետի դասախոսներ Մերի Կնյազյանը, Յան Խեն և Քրսին Լյուն:

Դասագիրքը բաժանված է 4 գլուխների՝ «Պատմության ակնարկ», «Փիլիսոփայություն և միտք», «Լեզու և գրականություն» և «Արվեստ և մշակույթ»: Յուրաքանչյուր գլուխ բաժանված է տարբեր մասերի՝ մանրամասն բացատրելու չինական մշակույթը:

Միջմշակութային հաղորդակցության կարևորությունը հայերենի ուսուցման գործընթացում

Հայոց լեզվի ուսուցումը որպես մասնագիտություն առաջ է քաշում լեզուն սովորելու պահանջներ, նպատակներ և խնդիրներ: Եթե ուսանողներն իրենք են ցանկություն հայտնում սովորելու հայոց լեզու, ապա ուսուցման գործընթացն ընթանում է ճանաչողական հետաքրքրությունների հիման վրա, որոնք հայերենով հաջող հաղորդակցվելու միջոցով գնալով ավելի են ընդլայնվում և ամրապնդվում, ուստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների և հայոց լեզվի յուրացման մոտիվացիոն մտադրությունների զարգացման համար:

Իհարկե, երկրի և նրա ժողովրդի մասին որոշակի տեղեկատվություն կարելի է ստանալ մայրենի լեզվով: Բայց այս դեպքում լեզվամշակութային կոմպետենտության հարցն ինքնին կվերանա լեզվի իմացության անբավարար մակարդակի բացակայության պատճառով:

Հարկ է նշել, որ միջմշակութային հաղորդակցությունը անպայմանորեն ներառում է հաղորդակցական կոմպետենտություն (որն իր հերթին ներառում է լեզվական կոմպետենտություն), քանի որ բացատրելու համար, թե ինչու է պետք այսպես ասել տվյալ մշակույթի

կրողների տեսանկյունից, և ոչ այլ կերպ, անհրաժեշտ է ունենալ լեզվամշակութային որոշակի գիտելիքներ:

Լեզվակիրների միջև ամենօրյա հաղորդակցության մոդելները չեն կարող ինքնաբերաբար փոխանցվել միջմշակութային հաղորդակցության իրավիճակներում, քանի որ հայերեն լեզուն ուսումնասիրողների չինարեն լեզվով ամենօրյա հաղորդակցության իրավիճակներում տարածաշրջանային տեղեկատվության յուրացումը չի հանգեցնում հայկական մշակույթի մեխանիկական ըմբռնմանը (հետևաբար նաև լեզվի) և հաջող փոխըմբռնմանը հաղորդակցվողների միջև:

Մշակութաբանության ուսուցման գործընթացում ուսանողները, թողնելով սեփական մշակույթի սահմանները, ոչ մի դեպքում ամբողջությամբ չեն «հեռանում» նրանից, այսինքն՝ տեղի չի ունենում ասիմիլացիա կամ սեփական մշակույթի մոռացության գործընթաց: Միջմշակութային ուսուցումը կրթական զարգացման գործընթաց է, որի ընթացքում երկու մշակույթները (մայրենի և օտար լեզուներ) կարևոր դեր են խաղում՝ մերձենալով և նույնիսկ հեռանալով միմյանցից, ինչի արդյունքում առաջանում է որոշակի երրորդ մշակույթ, որը բնութագրվում է սեփական անձի հանդեպ նոր հայացքով և օտար մշակույթի միջանկյալ դիրքով:

Մշակութաբանական գիտելիքների բացակայությունը բացասաբար է անդրադառնում հայոց լեզվի յուրացման որակական կողմի վրա. նախ՝ սահմանափակում է ուսանողների գրական տեքստերի ընկալման ամբողջականությունը լեզվի և գրականության դասերին, և երկրորդ՝ ուսանողների համար բառերի ամբողջ շերտերի իմաստները, որոնք կապված են հայերի պատմության, կենցաղի և ավանդույթների հետ, բավականաչափ թափանցիկ են դառնում:

Պեկինի օտար լեզուների համալսարանի ուսանողները ուսման ընթացքում սովորում են ոչ միայն հայոց լեզու (ութ կիսամյակ), այլ նաև ծանոթանում են հայկական մշակույթին և պատմությանը, ինչը թույլ է տալիս նրանց՝ այլ լեզվի և այլ մշակույթի կրողներին, ավելի լավ հասկանալ հայոց լեզվի և հայ անհատականության ֆենոմենը, ինչը նույնքան կարևոր է:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում պարզեցինք, որ չինարեն լեզվի ձայնային համակարգը դրական դեր է խաղում չինարեն խոսող ուսանողներին հայերենի ուսուցման գործում: Զինախոս ուսանողը հայերենի հնչյունաբանությունն ուսումնասիրելիս հնարավորություն է ունենում

զուգահեռներ անցկացնել հայերենի և չինարենի հնչյունների արտասանության միջև և հեշտացնել հնչյունական նյութի ընդունման և յուրացման գործընթացը: Հայերեն սովորելը չինացի ուսանողի համար միանգամայն յուրահատուկ գործընթաց է, որը պահանջում է համապատասխան մոտեցումներ և մեթոդներ, որոնք կիրառում են մասնագետները:

Տեղայնացված ուսումնական նյութերի օգտագործումը հանգեցնում է աշակերտների բարձր առաջադիմության, քանի որ դասի բովանդակությունը և գործողությունները համահունչ են տեղեկատվության լեզվաճանաչողական ընկալմանը. կատարելագործվում են հմտություններն ու ստեղծագործական ունակությունները, և որպես նորարարություն՝ այն կարող է բավարարել ուսուցման կարիքները:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հայոց լեզվի՝ որպես ժողովրդի մշակույթի անբաժան մասի յուրացմանը: Նշեմ, որ դա նշանակում է ոչ միայն մշակութային տեքստային նյութի դասագրքերում ընդգրկում, այլ, առաջին հերթին, բառի (նրա իմաստաբանության, հնչյունային հատկանիշների, գրաֆիկական և ուղղագրական ձևակերպման), լեզվի բառապաշարի, քերականական կառուցվածքների, տեքստերի տիրապետում՝ որպես հայ ժողովրդի մշակութային ժառանգություն:

MERI KNYAZYAN

ABOUT SOME FEATURES OF TEACHING THE ARMENIAN LANGUAGE TO CHINESE STUDENTS

Summary

The article discusses some features of teaching the Armenian language at Beijing Foreign Studies University (BFSU) in China. Special attention is paid to existing problems and their impact on the educational process. One of the most pronounced problems is the lack of educational and methodological literature in Chinese. The article also explicates those features of the educational process that specialists involved in teaching the Armenian language to Chinese students are recommended to pay priority attention to.

Keywords - the Armenian language, comparison of languages, teaching methods, compilation of textbooks.

Գրականություն

Կնյազյան Մ., «Զինական մշակույթ», Պեկինի օտար լեզուների համալսարան, 2021:

Մարտիրոսյան Ա., «Поговорим по-армянски», ինքնուսույց, էդիթ պրինտ, Երևան, 2017:

Մուրադյան Լ., «Սովորում ենք գրել, կարգալ, խոսել հայերեն», էդիթ պրինտ, Երևան, 2011:

Richards, J. C. *The Role of Textbooks in a Language Program*. Cambridge, UK: Cambridge University Press. 2001 // http://www.cup.org.br/articles/articles_21.html, 20.09.2023.

Wen Xiaohong. *The Acquisition of Chinese as a First and Second Language*. Switzerland, 2020, p. 1-13 // <https://wpb.cycu.edu.tw/tcsl/wp-content/uploads/The Acquisition of Chinese as a First and Second Language.pdf> 19.09.2023.

Zhang Jiaji. *Current Issues in Chinese Language Teaching*. *Advances in Social Science, Education and Humanities Research*, vol. 637, *International Conference on Education, Language and Art (ICELA 2021)*, Atlantis Press SARL, 2022, p. 135-138 // <https://www.atlantispress.com/proceedings/icela-21/125969794>, 20.09.2023.

<https://doi.org/10.52027/801346-php-218>
albeqmez@hotmail.com
narine.vardanyan@isec.am

**ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ
ԽՆԴԻՐՆԵՐ ԱՆԳՎԻԱԽՈՍ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ
(ԱՄԵՐԻԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ՍԵՄԻՐՋՅԱՆ-ԲԵՔՄԵՋՅԱՆ ԱՎԱՐԴ

ԵՊՀ գոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

Ներածություն

Հոգվածում դիտարկվել են արևելահայերենի ուսուցման մեթոդաբանական որոշ խնդիրներ անգլիախոս դիվանագիտական միջավայրում՝ ամերիկյան դիվանագիտության օրինակով: Հետազոտության հիմքում ընկած են ամերիկյան արտաքին գերատեսչության կողմից մշակված օտար լեզուների դասավանդման հիմունքներն ու սկզբունքները, մասնավորապես՝ լեզուների բարդության սանդղակը, լեզվի իմացության մակարդակները և թեստավորման համակարգը: Հիմնվելով լեզվի ուսուցման շրջանակի ժամանակակից տեսության հիմունքների վրա՝ փորձ է արվել ներկայացնել մեթոդաբանական որոշ մոտեցումներ, և տեխնիկաներ, որոնք էլ ավելի արդյունավետ կարող են դարձնել արևելահայերենի ուսուցումը անգլիախոս դիվանագիտական միջավայրերում: Հատկապես նկատի ենք ունեցել այն դրույթները, որոնք առնչվում են լեզվի ուսուցման շրջանակի ժամանակային, տարիքային, կրթական, նպատակային, մասնագիտական տեղային պայմաններին:

Հիմնաբառեր - արևելահայերեն, դիվանագիտություն, օտար լեզու, լեզվի ուսուցման շրջանակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, արտաքին գերատեսչություն, լեզվի ուսուցման մեթոդաբանություն:

Սույն հետազոտությունը հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդաբանական ուսումնասիրությունների քննությունն է ամերիկյան դիվանագիտական միջավայրում:

Հետազոտության առարկան արևելահայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման մեթոդաբանական խնդիրներն են անգլիախոս դիվանագիտական միջավայրում:

Ե՛վ հայ, և՛ համաշխարհային տեսական միտքը բազմիցս անդրադարձել է օտար լեզուների ուսուցման խնդիրներին, մեթոդաբանությունը: Սակայն մեր ուսումնասիրության առարկան յուրահատուկ է նրանով, որ առնչվում է արևելահայերենի ուսուցման խնդիրներին մի այնպիսի մասնագիտական յուրահատուկ միջավայրում, ինչպիսին դիվանագիտությունն է, որը ենթադրում է լեզվի ուսուցման համար տրամադրվող սեղմ ժամանակահատված, աշխատանք բացառապես չափահաս լսարանի հետ, արդյունավետ և հետևողական ուսումնառություն, մոտիվացիա, կարգապահություն, մասնագիտական բառապաշար, քերականական հստակ կառույցներ, պաշտոնական հղկված խոսք և այլն: Խնդիրը թե՛ հայ, թե՛ համաշխարհային տեսական մոտքում գրեթե ուսումնասիրված չէ: Կան որոշ ուսումնասիրություններ՝ նվիրված անգլիախոս միջավայրում հայերենի ուսուցման մեթոդաբանական խնդիրներին առնչվող, սակայն խնդիրն ուսումնասիրված չէ դիվանագիտական միջավայրի համար, ինչը խիստ յուրահատուկ դաշտ է և պահանջում է որոշակի մեթոդաբանական մոտեցում, ինչով էլ պայմանավորված է **թեմայի բացառիկ նորությունը**:

Ուսումնասիրության մեթոդաբանության համար ընտրված են համեմատության, վերլուծության, դիտման մեթոդները:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները. վեր հանել անգլիախոս դիվանագիտական միջավայրում հայերենի ուսուցման մեթոդաբանական արդի խնդիրները, նաև սեփական փորձառության վրա հիմնվելով, ներկայացնել և առաջարկել թե՛ ավանդական և թե՛ ժամանակակից մեթոդաբանական որոշ արդյունավետ մոտեցումներ, եղանակներ և տեխնիկաներ դիվանագիտական միջավայրում արևելահայերենի՝ որպես օտար լեզվի արդյունավետ ուսուցման համար:

Հարցի պատմություն

Ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ տեսական միտքը օտար կամ երկրորդ լեզվի ուսուցման մեթոդաբանական բազմաթիվ հայեցա-

կարգեր են մշակել, որոնք հիմնականում տարանջատվում են ավանդական և ժամանակակից մոտեցումների⁴⁵: Այնուամենայնիվ, տեսաբանների զգալի մասը եզրահանգում է, որ գոյություն չունի մեկ ճշգրիտ մոտեցում, եղանակ օտար լեզվի ուսուցման և դասավանդման վերաբերյալ, ինչպես նաև չկա մեկ համընդհանուր ծրագիր (Jackson, Kaplan, Larsen-Freeman): Մեզ հետաքրքրող թեմայի տեսանկյունից հատկապես ուշագրավ է օտար կամ երկրորդ լեզվի դասավանդման «Լեզվի ուսուցման շրջանակի» (Language Learning Framework (LLF)) ժամանակակից տեսությունը (Brecht, Walton, 1994): Այս շրջանակում տեսաբաններն առանձնացնում են տեղային պայմաններ (Local Conditions), որոնք են.

ա. անհատի տարիքը, որը հիմնականում լեզվահոգեբանությունն ուսումնասիրության առարկան է,

բ. օտար լեզվի ուսումնառության նպատակը,

գ. ժամանակահատվածը, որում անհատը պետք է հասնի օտար լեզվի իմացության որոշակի մակարդակի,

դ. ուսուցման կազմակերպման ձևերը՝ հեռավար, թե առկա,

ե. լսարանը՝ ավագ դպրոց, համալսարան, ամառային դպրոց, լեզվի դպրոց և այլն,

զ. լեզվական գիտելիքների կիրառման ժամանակացույցը՝ ուսուցման ընթացքում, կուրսն ավարտելուց անմիջապես հետո, կուրսն ավարտելուց որոշ ժամանակ անց և այլն:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանները, առանձնացվում են լեզվի ուսուցման շրջանակի մի քանի սկզբունքներ.

- լեզվի ուսուցման գործընթացը որպես երկարաժամկետ գործունեություն (ինչը նշանակում է, որ անկախ ժամանակահատվածից, որը տրվում է կոնկրետ օտար լեզվի ուսումնառության համար, ուսանողը լե-

⁴⁵ Այս մասին մանրամասն տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում. - (կոլեկտիվ մենագրություն)– եր., Տիր, 2021:

<https://shorturl.at/befhW>; Ա.Բաբայանի և Ա.Բարայեյանի հեղինակած «Օտար լեզվով քանավոր խոսքի ընկալման հնտությունների ուսուցման մեթոդական ուղեցույց»; **Bernhardt Elizabeth B.**, A psycholinguistic perspective on second language literacy, 1991; **Ehrman Madeline**, The learning alliance: Conscious and unconscious aspects of the second language teacher's role, 1998; **McLaughtin Barry**, Theories of second language learning, 1987; **Bolster Arthur**, Toward a more effective model of research on teaching, 1983, և այլն:

զուն հետագայում լավ տիրապետելու համար պետք է տվյալ լեզուն գործածելու և սովորելու հնարավորություններ ստեղծի),

-կողնիտիվ ուսուցման մեխանիզմների նախապատվություն, ինչպես օրինակ՝ անալիզ, մոտիվացիա, հետադարձ կապ, ուշադրություն, կենտրոնացում և այլն,

-ուսանողամետ ուսուցում՝ հաշվի առնելով ուսանողի տարիքային, կրթական, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը: Դասարանին դասավանդելու սկզբունքը փոխարինվում է աշակերտին դասավանդելու սկզբունքով՝ «օգնել յուրաքանչյուր սովորողի գտնելու սովորելու իրեն հոգեհարազատ եղանակները» կարգախոսով (Jackson, Kaplan, 1999, p.4),

-լեզվի ուսուցումը որպես ներկայացում, և ոչ որպես հիշողություն, և այս ներկայացումը պետք է հասկացվի մշակութային գիտելիքի համատեքստում, ինչը նշանակում է լեզվի գործնական կիրառության նախապատվությունը տեսական ըմբռնումների նկատմամբ: (Brecht, Walton, 1994):

Որոշ վերապահումներով, այնուամենայնիվ, մենք հիմք ենք ընդունում լեզվի ուսուցման շրջանակի տեսության սկզբունքները՝ նկատի ունենալով հետևյալը.

ա. նախ, այն մշակվել է ԱՄՆ-ում հատկապես համեմատաբար հազվագեպ ուսուցանվող լեզուների ազգային խորհրդի կողմից (NCOLCTL): Ըստ այդմ, հայերենը կորեերենի, թուրքերենի, ռուսերենի պես համարվում է ԱՄՆ-ում քիչ ուսուցանվող լեզու: Այս լեզուներն այն լեզուներն են, որոնց հիմքում ընկած է մասնագիտական պահանջը, այսինքն՝ ուսուցանվում են մասնագիտական նպատակների համար: Եվ հենց այս լեզուների համար, որպես կանոն, չկան միասնական մեթոդաբանություն, ուսումնական ծրագրեր, դասագրքեր, ուսումնական նյութեր: Այստեղ մի կողմից շատ կարևոր է դասավանդողի դերը, որը պատասխանատու է ուսումնական ծրագրերի, նյութերի, մեթոդաբանության և դասավանդման տեխնիկայի ընտրության հարցում, մյուս կողմից՝ նույնքան կարևորվում է ուսանողի մոտիվացիան, շահագրգռվածությունը և պատրաստակամությունը ներգրավվելու ուսումնական գործընթացի մեջ՝ զգալի ժամանակ տրամադրելով ինքնակրթությանը:

բ. Ապա, մեզ համար ընդունելի է լեզվի ուսուցման շրջանակի տեսությունը հատկապես այն առումով, որ այն համահունչ է ԱՄՆ-ում Արտաքին ծառայության ինստիտուտի (Foreign Language Institute-FSI) կողմից մշակված օտար երկրներ գործուղվող պետական ծառայողներին օտար լեզու ուսուցանելու մոտեցումներին և սկզբունքներին (Semirjyan-Bekmezian, Vardanyan, p. 87-103):

Ամերիկյան դիվանագիտական դպրոցի մոտեցումները

Խոսելով ամերիկյան դիվանագիտական դպրոցի մոտեցումների ու սկզբունքների մասին՝ տեսաբաններն առանձնացնում են տասը հիմնական «դաս», որոնք ապահովում են FSI-ծրագրերի հաջողությունը: Դրանք են.

1. արդյունավետ և հետևողական ուսումնառությունը,
 2. շահագրգռվածությունը, կարգապահությունը և կենտրոնացման մեծ ուժը,
 3. մեկ ընդհանրական և միասնական ծրագրի և մոտեցման բացակայությունը (անհատական մոտեցումը խիստ կարևորվում է),
 4. առաջադրանքի կատարման ժամանակը և ուսուցման փորձի ինտենսիվությունը,
 5. նախկինում լեզու սովորելու փորձառությունը,
 6. ուսանողի գիտելիքների ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա,
 7. ավտոմատացումը, որը հատկապես կարևոր է կարդալու և լսելու հմտությունները զարգացնելու համար,
 8. դասավանդողների և լավ կառուցված կուրսերի դերը,
 9. դասավանդողի կողմից կազմված հավելյալ նյութերի և թիրախային դասընթացների պատրաստումը,
- Երկխոսությունը, որը ի հայտ է գալիս որպես շփման ամենահիմնարար ձևերից մեկը, և որը, ըստ փորձի, ամենից բարդն է (Jackson, Kaplan, 1999):

Անգլիալեզու դիվանագիտական դպրոցներում արևելահայերենի՝ որպես օտար լեզվի, ուսուցման մեթոդաբանական ճիշտ մոտեցումներ որդեգրելու համար հարկ է հիմնվել հենց այս սկզբունքների վրա, որոնք տարիների ընթացքում մշակվել են FSI-ի մասնագետների կողմից: Այդ սկզբունքները հիմնված են երեք առանցքային դրույթների վրա.

Լեզուների բարդությունն սանդղակը. այս սանդղակը սահմանում է այն օտար լեզուները, որոնք անգլիախոս հասարակությունների համար ուսուցման տեսանկյունից համարվում են բարդ լեզուներ: Սահմանված են նաև հստակ չափորոշիչներ, թե ինչի հիման վրա են լեզուները համարվում բարդ. հնչյունաբանական համակարգերով, շարահյուսական նորմերով, բառապաշարով, գրություն, մշակութային և սոցիալական հանգամանքներով պայմանավորված: Լեզուների բարդության չափորոշիչին սանդղակը սահմանում է նաև լեզվի ուսուցման շրջանակի տեղային պայմաններից՝ ժամանակահատվածի ցուցիչը, ըստ որի, կախված այն հանգամանքից, թե տվյալ օտար լեզուն սանդղակի բարդության որ աստիճանում է գտնվում, այդ լեզվին FSI-ի լեզվական դպրոցներում տրամադրվում են համապատասխան քանակությամբ դասաժամեր: Հայերենին հիմնականում տրամադրվում է 1100 ժամ, կամ 44 շաբաթ, նվազագույնը՝ օրական 4 դասարանային ժամ և 2 ժամ ինքնուրույն աշխատանքի համար: Հարկ է նշել նաև, որ ինքնուրույն աշխատանքի համար տրամադրվող ժամանակը շատ կարևոր է ժամանակակից կրթական մեթոդաբանության մեջ:

Հաջորդը լեզվի իմացության մակարդակի գնահատման չափորոշիչն է: Հայերենի դասավանդման մեթոդաբանական ճիշտ ռազմավարություն որդեգրելու համար հարկ է նաև հաշվի առնել այս հանգամանքը: Ուսուցանվող լեզուների իմացության մակարդակը որպես կանոն գնահատվում է ILR սանդղակի միջոցով (Interagency Language Roundtable), որը բառացիորեն թարգմանաբար նշանակում է լեզուների միջգերատեսչական կլոր սեղան: (Սեմիրջյան-Բեքմեզյան, Վարդանյան, 2024): Կարևոր ենք համարում շեշտադրել, որ լեզվի իմացության մակարդակի գնահատման այս կարգը ստեղծվել է արտաքին գերատեսչությունների, հատուկ ծառայությունների պաշտոնյաների, ռազմական կցորդների համար: Հիմնական նպատակն է եղել ունենալ մի համակարգ, որը կլինի օբյեկտիվ, կիրառելի բոլոր լեզուների և քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների համար և կապ չունենա որևէ լեզվական ուսումնական ծրագրի հետ: Եվ հենց այս ինքնատիպ պահանջներին համապատասխան են FSI-ի կողմից ընտրվում օտար լեզվի ուսումնառության և դասավանդման մեթոդաբանական հայեցակարգերը, համապատասխան տեխնիկական լուծումներով, ստեղծվում դասագրքեր, ուսումնական նյութեր:

ILR սանդղակը բաղկացած է վեց հիմնական մակարդակներից՝ տատանվելով 0-ից (որն համարվում է ոչ ֆունկցիոնալ կարողություն) մինչև 5 (որն համարվում է լեզվի կրթված մայրենիին համարժեք իմացություն), ինչպես նաև պլուս (+) մակարդակների ամբողջական նկարագրեր, ինչպես 0 և 0+, 1և 1+և այլն: (Սեմիրջյան-Բեքմեզյան, Վարդանյան, 2024; IRL ստանդարտ): Հայերենի պարագայում ակնկալվում է, որ ուսանողը 11 ամսվա ընթացքում պետք է կարողանա տիրապետել լեզվին բնիկ լեզվակրի իմացության պես, իսկ իմացության այդ մակարդակը համապատասխանում է լեզվի իմացության սանդղակի 3+ 4 մակարդակներին, ինչը ենթադրում է, օրինակ, հայերենով հայ-ամերիկյան հարաբերությունների մասին տեքստի ընթերցում և խորը ընկալում, ինչպես նաև հայախոս անհատի հետ անկաշկանդ քաղաքական որևէ հարցի քննարկում:

3. Օտար լեզուների ուսուցման հիմքում ընկած է նաև թեստավորման ընթացակարգը: Թեստավորումն իրականացվում է վերոնշյալ լեզվի իմացության մակարդակները գնահատող հատուկ կառուցվածք ունեցող հարցազրույցի միջոցով, որի ընթացքում ստուգվում և գնահատվում են ուսանողի լսելու և ընկալելու, խոսելու և ընթերցելու հմտությունները: Թեմաները, որոնց պետք է պատրաստ լինի ուսանողը, ներառում են ամենակենցաղային տարրական թեմաներից մինչև խորը մասնագիտական, կրթական, սոցիալական, մշակութային, գիտատեխնիկական և այլ ոլորտներ, օրինակ՝ արհեստական բանականություն, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, սոցիալական հավասարություն, ներդրումային ծրագրեր և այլն: Իսկ քննությունն ընթանում է մի քանի մասերից բաղկացած ընթացակարգով, ինչի արդյունքում դրսևորվում են ուսանողի՝ լեզվի իմացության աստիճանները: Ըստ այդմ, թեստավորման ընթացքը, որը ընդունված է անվանել «ներկայացում», բաղկացած է երեք հիմնական մասերից, որոնք բարդանում են ըստ փուլերի: Առաջին փուլը կոչվում է սոցիալական երկխոսության փուլ, երկրորդ փուլը՝ հարց և պատասխանի, երրորդը՝ երկխոսության, որը հիմնված է նախապես ընտրված թեմայի վրա: Ընթեցանության կարողությունները գնահատվում են առանձին թեստով:

Նշելով վերոնշյալ երեք դրույթներից՝ FSI-կողմից սահմանված լեզուների բարդության սանդղակը, լեզվի իմացության մակարդակները և քննական թեստավորումը, հարկ է ներկայացնել մի քանի մեթոդաբանական մոտեցում, որոնք հնարավորություն են ստեղծում անգլիա-

խոս դիվանագիտական միջավայրում հայոց լեզվի՝ բարդություն հարուցող այս կամ այն խնդիրը մեթոդաբանորեն արդյունավետ լուծելու:

Նկատի ունենալով լեզվի բարդության սանդղակը և տվյալ լեզվին տրամադրվող դասաժամերի քանակը՝ ուսուցման մեթոդաբանության տեսանկյունից շատ կարևոր է ընտրել մեթոդաբանական այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան կարճ ժամանակում հասնել ակնկալվող արդյունքին: Իսկ այս պարագայում մենք չենք կարող անտեսել ոչ դասական, ոչ ժամանակակից մեթոդները՝ նախապատվություն տալով մեկին կամ մյուսին, քանի որ երբեմն արագ արդյունքի հասնելու համար հատկապես նախնական մակարդակների գիտելիք ձեռք բերելու համար հարկ է դիմել դասական այնպիսի մեթոդների, ինչպիսիք են մեխանիկական հիշողության ավանդական մեթոդները, իրենց համապատասխան գործիքակազմերով՝ աուդեոլեզվական վարժություններ, քերականական թարգմանության տեխնիկա, մեխանիկական հիշողության պրակտիկա, գիտելիքի ավտոմատացման պրակտիկա և այլն: Այս մեթոդները հատկապես արդյունավետ են ֆոնոլոգիական խնդիրներ լուծելու, բառապաշարի հարստացման և նախնական և հիմքային քերականական գիտելիքներ ամրապնդելու համար:

Արևելահայերենի ուսուցման հիմնական խնդիրներն՝ ամփոփ

Մեթոդաբանական մոտեցումներ և առաջարկություններ: Արևելահայերենի ուսուցման հիմնական խնդիրներից մեկն առնչվում է **հնչյունաբանական համակարգին:** Անգլիախոս ուսանողի համար հայոց լեզվի հիմնական բարդություններից են հատկապես այն հնչյունները, որոնք բացակայում են անգլերենում, դրանք հիմնականում պայթաշփական հնչյուններն են՝ բ-պ-փ, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ, գ-կ-ք: Այս հնչյուններն անգլիախոս անհատը ոչ միայն ճիշտ չի արտաբերում, այլև չի լսում: Խնդիրը հնարավորինս կարճ ժամանակում լուծելու համար հարկ է դիմել ավանդական կրկնողական մեթոդներին և տեխնիկաներին: Արդյունավետ են նաև զանազան լոգոպեդական վարժությունները, ինչպես օրինակ՝ միավանկ համակցությունները կրկնելով՝ հասնել բազմավանկ բառերի կրկնությանը, օրինակ՝ **ձա-ձու-ձի-ձո-ձագ-ձուկ-ձիգ-ձավար-ձկնորս** և այլն, կրկնողական վարժությունները նպաստում են լսողական և արտասանական ապարատների զարգացմանը: Մեկ այլ մեթոդ, որ արդյունավետ է, միավանկ և երկվանկ բառերի ինքնաթելադրությունն է՝ տրվում է տվյալ հնչյուններով բառաշարք և ձայնագրության միջոցով,

ուսանողը լսում է բառերը և փորձում գրի առնել: Հետո ինքն իրեն ուղղում է, սխալ գրված բառերի դեպքում մի քանի անգամ լսում ձայնագրությունը և ապա քննարկում ուսուցչի հետ: Մյուս եղանակը լեզվի դիրքի ուղղորդմամբ ցույց տալ ուսանողին, թե բաղաձայն հնչյունը լեզվա-կոկորդային ինչ դիրքում է գտնվում և ուղղորդել արտասանության ժամանակ: Բայց որ ամենակարևորն է, երբեք չպետք է ընդհատել ուսանողին խոսելու ընթացքում և ուղղել արտասանական սխալը, այլ պետք է գրառումներ կատարել և խոսքի վերջում՝ կրկին զանազան վարժությունների միջոցով, փորձել սխալն ուղղել: Հնչյունական բարդությունն ամենից դժվար հաղթահարելի բարդությունն է, և նույնիսկ 2, 2+ իմացության մակարդակներում, երբ անհատը կարողանում է հաղորդակցվել համեմատաբար ազատ, ընկալել կարգացածը և լսածը, այնուամենայնիվ հիմնական դժվարությունը շարունակում է մնալ հնչյունականը: Այս պարագայում շատ օգտակար կարող են լինել նաև տվյալ հնչյուններով համակցված զանազան լսողական վարժություններ-խաղերը, բառախաղերը, դասավանդողի կողմից ստեղծված թիրախային նյութերը, ինչպես նաև հատուկ ձայնագրությունները, սակայն, ցավոք, հայերեն նյութերը, այս առումով, բավականին աղքատիկ են:

Հաջորդ խնդիրը ուսանողի բառապաշարի հարստացումն է: Նախ՝ արձանագրենք, որ անգլիախոս անհատի համար հայերենի բառաբարդումները մեծ բարդություն են ներկայացնում թե՛ արտասանական, թե՛ վերհիշման, թե՛ ընկալման, թե՛ բացատրության տեսանկյունից: Բառապաշարի հարստացման համար շատ կարևոր է նկատի ունենալ ինչպես լեզվի իմացության մակարդակների, այնպես էլ վերջնական թեստավորման պահանջները: Ինչպես տեսանք վերը, քննական թեստը, ըստ բարդության աստիճանների, կարող է ամենապարզ մակարդակում պահանջել պարզ կենցաղային առօրյա խոսակցություն, իսկ ավելի բարդ մակարդակներում պահանջում է մասնագիտական և ընդհանուր զարգացվածության բառապաշար: Ըստ այդմ, առաջին մակարդակի համար հարկ է դասավանդվող նյութերը կառուցել այն տրամաբանությամբ, որ դրանք հարուստ լինեն առօրյա, կենցաղային բառապաշարով՝ շեշտը դնելով ընտանիքի, եղանակի, ուղղությունների, ճանապարհների, սննդի և նմանատիպ թեմաների վրա: Իսկ ավելի բարդ թեմաների համար անհրաժեշտ է ուսանողին զինել մասնագիտական բառապաշարով և ստեղծել իրավիճակներ՝ «դիպաշարեր», որտեղ նա կկարողանա հանդես գալ այդ իմացությամբ: Այս պարագայում շատ արդյունավետ կարող է լինել հատկապես դերային խաղերի տեխնիկան: Նախապես ընտրել մի

թեմա, օրինակ՝ «Կաշառքը հասարակության տարբեր շերտերում»։ Տալ ուսանողին թեմային համապատասխան բառապաշար։ Ապա խաղալ փոքր «դիպաշարեր» կոռուծպացված իրավիճակների և ոչ կոռուծպացված իրավիճակի դեպքում՝ շեշտը դնելով մարդկային վարքագծի վրա։

Զուգահեռ զարգացնելով ընթերցանության հմտությունները, ուսանողին հանձնարարել տվյալ թեմայի վերաբերյալ ընթերցել անգլերեն մի նյութ, դուրս գրել անգլերեն այն բառերի շրջանակը, որը, ըստ ուսանողի, շատ կարևոր է թեմայի շրջանակներում հաղորդակցվելու համար, թարգմանել այդ բառապաշարը հայերեն, և դնել այն զանազան կենսական իրավիճակների մեջ։ Հանձնարարել ուսանողին նաև ընթերցել հայերեն նյութ միևնույն խնդրի վերաբերյալ՝ նկատի ունենալով հատկապես հայաստանյան իրականությունը։ Օգտագործել խորացված ընթերցանության տեխնիկան և քննարկել ուսանողի հետ ընթերցած նյութերը հայերեն լեզվով։

Հաջորդ բարդությունը **քերականական համակարգերին** է վերաբերվում։ Այս կապակցությամբ նախնական մակարդակներում կարող է արդյունավետ լինել քերականական համակարգի մասին ակնարկը, օրինակ՝ ընդհանուր հատկանիշներով համեմատական կարգով ամենից պարզ և մատչելի ձևով ներկայացնել հայերենի քերականական համակարգը, ապա ժամանակ տալ ուսանողին վերադառնալու դրան, երբ նա ավելի պատրաստ կլինի, ընթացքում ուսանողի համար գրեթե աննկատ ձևով ուղղելով և ավտոմատ ձևով ամրացնելով քերականական ճիշտ կառույցները։ Շատ արդյունավետ մեթոդ է՝ քերականական սխալը ուղղելու գրառման մեթոդը, երբ ուսանողին հաղորդակցության ժամանակ ընդհատելու փոխարեն, ուսուցիչը կատարված սխալների գրառումներ է կատարում իր տետրում, ապա վերջում քննարկում դրանք ուսանողի հետ։ Որպես կանոն, մեծ մասամբ ուսանողները իրենք են կարողանում գտնել իրենց սխալը և ուղղել։ Իսկ այն պարագայում, երբ ուսանողը ինքնուրույն չի կարողանում շտկել այն, ուսուցիչը ևս մեկ անգամ բացատրում է, քննարկում, ստեղծում համապատասխան լեզվական իրավիճակներ, որպեսզի ուսանողի մոտ ամրագրվի ճիշտ տարբերակը։ Եթե ուսանողն ունի օտար լեզուների հետ աշխատելու փորձառություն և լեզվաբանական կրթություն, ապա նման ուսանողին շատ ավելի դյուրին է բացատրել քերականական կանոնը, տանել համեմատություն հայերենի և անգլերենի նմանատիպ քերականական իրավիճակների միջև և բացատրել տարբերություններն ու ընդհան-

րությունները: Սակայն այդ նախնական պատրաստվածության և գիտելիքի բացակայության պարագայում շատ ավելի արդյունավետ է հստակ կադապարների մեխանիկական հիշողությունը և կրկնողական, շարակցական, փոխարինման, տեղադրման և նմանատիպ տեխնիկաների միջոցով գիտելիքի ամրապնդումը:

Ընթերցանության հմտությունները զարգացնելու համար անհրաժեշտ է ինքնուրույն աշխատանքի շրջանակներում հանձնարարել զանազան բովանդակության տեքստերի ընթերցում: Հիմնական տեխնիկան ենթադրում է, որ ընթերցման ընթացքում ուսանողը պետք է ընդգծի բոլոր անծանոթ բառերը, քերականական կառույցները և ինքնուրույն կարողանա կատարել բառային աշխատանք՝ թարգմանություն, բառակազմություն և այլն, ապա անծանոթ, կասկածելի քերականական կառույցները քննարկի ուսուցչի հետ: Կան ընթերցման մի քանի տեխնիկաներ՝ **թռուցիկ**, որը ենթադրում է արագություն և ընդհանուր իմաստի դուրսբերում, և **խորացված** կամ **հանգամանալից**, որը ենթադրում է ավելի երկար ժամանակահատված և նյութի մանրամասն ընկալում: Հատկապես իմացության բարձր մակարդակներում շատ արդյունավետ է մշակութային կոնտեքստի մեթոդը, որի շրջանակներում դասավանդողը առկա ենթիկ նյութերի միջոցով տալիս է նաև գիտելիքներ տվյալ ժողովրդի մշակութի, սովորությունների, պատմության վերաբերյալ՝ կախված կոնկրետ դասի բովանդակային տրամաբանությունից: Այս մեթոդը հատկապես արդյունավետ է այն առումով, որ որոշակի էմոցիոնալ կապ է ստեղծում ուսանողի և տվյալ երկրի միջև՝ է՛լ ավելի խորացնելով հետաքրքրությունը տվյալ երկրի նկատմամբ և մոտիվացնելով ուսանողին:

Լսողական ապարատը զարգացնելու համար կարևոր են լսողական վարժությունները՝ ամենապարզագույն մակարդակներում հնչյունական, բառային, բառակապակցությունների սահմաններում, բարձր մակարդակներում՝ զանազան փոդքասթների, հարցազրույցների, ռեպորտաժների ունկնդրում: Այս դեպքում նույնպես գործում է **թռուցիկ ընկալման տեխնիկան**՝ հասկանալ բովանդակությունը և ընդհանուր հատկանիշներով ներկայացնել այն, ապա **խորը**՝ գրեթե ճշտությամբ բառացի կարողանալ թարգմանել լրած նյութը:

Դիվանագիտական դպրոցներում ուսանողներն առաջին երկու ամսվա ընթացքում, այսինքն՝ 8 շաբաթվա ընթացքում արդեն իսկ պետք

է կարողանան տիրապետել ամենանախնական գիտելիքներին՝ իմանան այբուբենը, կարողանան կարգալ միավանկ, երկվանկ բառեր, բառակապակցություններ, պարզ նախադասություններ, կարողանան խոսել տարրական մակարդակներում, հասկանան տարրական կենցաղային իրավիճակներ, այսինքն՝ տիրապետեն 0+, 1 նախնական մակարդակի գիտելիքներին: Այնուհետև մնացած ամիսների ընթացքում պետք է կարողանալ համապատասխան մոտեցումների միջոցով խորացնել, ամրապնդել իմացությունը, ընդ որում՝ գերադասելի է, որ 1++ և 2 մակարդակների տիրապետումից հետո կրթական ծրագրերը և նյութերը հիմնված լինեն կատարողական՝ գործնական հնարավորությունները զարգացնելու վրա, կաղապարային կոդերի և տեսական մոտեցումների փոխարեն: Սա ենթադրում է, որ ծրագրերը և ուսումնական նյութերը պետք է հագեցած լինեն գործնական հաղորդակցման, լեզվի ֆունկցիոնալ օգտագործման հմտություններով և հնարավորություններով: Պետք է առավելություն տալ սահունությունը՝ ճշտության փոխարեն, ստեղծել մշակութային համատեքստ, իրականացնել ինտերակտիվ, առաջադրանքահեն ուսուցում: Հարկ է կազմակերպել ներկայացումներ, ցուցադրություններ, նախագծեր և այլն, մշակել մոտեցումներ կատարողականի գնահատման համար: Պետք է կարողանալ մոտիվացնել ուսանողին՝ հիմնականում զարգացնելով կարգալու, խոսելու և լսելու կարողությունները՝ շեշտը դնելով իրական կյանքի տարբեր իրավիճակների վրա, ինչին մեծապես նպաստում են դերային խաղերի տեխնիկաները, լեզվակիր միջավայրում հնարավորինս շատ գտնվելու հնարավորությունները:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ չնայած թե՛ միջազգային, թե՛ հայ տեսական միտքն անդրադարձել են օտար լեզվի ուսուցման խնդիրներին, այս ուսումնասիրությունն առանձնանում է նրանով, որ այն վերաբերվում է կոնկրետ և շատ յուրահատուկ՝ դիվանագիտական միջավայրում օտար լեզվի, մասնավորապես՝ հայերենի ուսուցման մեթոդաբանական որոշ խնդիրների: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ մեր առջև դրված խնդիրը ինքնատիպ է ոչ միայն թիրախային լսարանի տեսանկյունից, այլև նրանով, որ FSI-ն է մշակում և թեւադրում որոշակի սահմանված դրույթներ և չափանիշներ, որոնք անհնար է անտեսել մեթոդաբանական մոտեցումներ մշակելիս, կրթական ծրագրեր ստեղծելիս, ուսումնական նյութեր պատրաստելիս՝ նկատի

ունենալով անպայմանորեն օտար լեզվի ուսուցման շրջանակի ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները:

**SEMIRJYAN-BEKMEZYAN ALVARD
VARDANYAN NARINE**

**METHODOLOGICAL SOME PROBLEMS OF TEACHING
EASTERN ARMENIAN IN THE ENGLISH-LANGUAGE DIPLOMATIC
ENVIRONMENT (ON THE EXAMPLE OF AMERICAN DIPLOMACY)**

Summary

The article examines the methodological issues of teaching Eastern Armenian within an English-speaking diplomatic environment, using American diplomacy as a case study. The research draws on the foundational principles of foreign language instruction developed by the U.S. Foreign Service Institute, including the language difficulty ranking, language proficiency scale and testing systems. Additionally, it applies concepts from the modern theory of the Language Learning Framework to propose methodological approaches and techniques that could enhance the effectiveness of teaching Eastern Armenian in English-speaking diplomatic contexts. Particular attention is given to factors such as study duration, age, educational objectives, and the professional and local conditions outlined in the Language Learning Framework.

Keywords - Eastern Armenian, Diplomacy, Foreign language, LLF, USA, FSI, language learning methodology

Գրականություն

Ա.Բաբայան և Ա.Խարայեցյան, «Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ուսուցման մեթոդական ուղեցույց», Եր, ԵՊՀ հրատ., 2014 թ., http://lib.yysu.am/open_books/306563.pdf

Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում (կոլեկտիվ մենագրություն)– ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., Տիր հրատ., 2021, <https://shorturl.at/befhW>.

Alvard Semirjyan-Bekmezyan, Narine Vardanyan, *Issues of Teaching Armenian in a Diplomatic Setting (on the Case of American Diplomacy)*, KATCHAR SCIENTIFIC PERIODICAL, pp.87-103, https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/Katchar__web.pdf).

Bernhardt Elizabeth B., *A psycholinguistic perspective on second language literacy*, 1991, Ehrman Madeline, *The learning alliance: Conscious and unconscious aspects of the second language teacher's role*, 1998.

Bolster Arthur, *Toward a more effective model of research on teaching*, 1983.

Frederick H. Jackson, Marsha A. Kaplan, *Lessons learned from fifty years of theory and practice in government language teaching*, Georgetown University Round Table On Languages And Linguistics, 1999.

McLaughtin Barry, *Theories of second language learning*, 1987.

Richard D. Brecht, A. Ronald Walton, *Toward a language learning framework for Southeast Asian languages*, *Journal of Southeast Asian language teaching*, No 3, 1994.

IRL ստանդարտ <https://www.state.gov/foreign-language-training/>
<https://www.state.gov/foreign-language-training/>

ԱՐԵՎԻՍԱՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՐՊԻ /ՄԵԹՈՏԻ/ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՖԻՇԵՆԿՅԱՆ ԱՆԻ

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփիւռքի եւ
Հայկական գաղթօճախներու պատմության բաժին,
պատմական գիտությունների թեկնածու*

Ներածություն

Յետեղեռնեան տարիներուն տարագիր վերապրող հայրերեան վիճակուած էր հանգրուանել տարբեր ցամաքամասերուն վրայ: Նոր ձեւատրուած համայնքները համախմբուած եկեղեցոյ շուրջ պիտի կառուցէին բարակերտ շէնքեր, որոնք պիտի անուանուէին՝ դպրոցներ, վարժարաններ, կամ ծխական դպրոցներ: Քարակերտ կառոյցներու, համայնքային կամ մասնաւոր միութեանկան, նպատակը հոգեմտաւոր եւ ազգային ինքնագիտակցութեան բարձր ոգին սերմանելն էր եւ գիտութեան լոյսը յարատեւ պահելու գրաւականը:

Սակայն կրթական հաստատութեան մը գոյատեւումը էական գործօն չէր կրնար հանդիսանալ սոսկ գեղակերտ կառոյցի առկայութեամբ, այլ նախակրթական եւ միջնակարգ կրթութեան առանցքը համարուող ուսուցչի մանկավարժական հիմնական պատրաստութեամբ պայմանաւորուած՝ կրթական պատշաճ, համակարգեալ ու միացեալ ծրագիրով, բարձրորակ դասագիրքերու պատրաստութեամբ, եւ ամէնէն կարեւորը արդիւնաւէտ ուսուցում կազմակերպելով:

Յօդուածը պատմական համառօտ ակնարկով անդրադարձ կը կատարէ Սփիւռքի գրական արեւմտահայերէնի անցած ուղիի, դասագիրքերու կառուցումի մեթոտաբանութեան, ուսուցչներու մանկավարժական պատրաստութեան եւ անոնց որակաւորման խնդիրներուն: Կ'ընդգծէ համընդհանուր հայերէն լեզուի ուսուցման կերպերը եւ անոնց արդիւնաւէտութիւնը տուեալ համայնքի կրթական ոլորտէն ներս եւ այլն:

Հիմնաքառեր - Ուսուցում, Սփիւտ, համայնք, դասագիրք,
ծրագիր ուսուցիչներու վերապատրաստում:

Յօդուածին նպատակն է հետազօտութեան ճանապարհով ի մի բերել Սփիւռքի հայկական կրթարաններէն ներս հայագիտական առարկաներու ուսուցման գործընթացը, տուեալ երկրի պետական կրթական համակարգէն ներս հայագիտական առարկաներու սահմանափակման, ուսուցման մեթոտաբանութիւնը, առկայ ծրագիրներուն եւ ամէնէն կարեւորը հայագիտական առարկաներ դասաւանդող մասնագէտ մանկավարժ անձ-նակազմեր պատրաստելու առնչութեամբ տարուած աշխատանքներն ու անոնց գնահատումը:

Յօդուածը նպատակ չունի իւրաքանչիւր համայնքի կրթական հիմնահարցերուն անդրադառնալ առանձին առանձին, այլ ներկայացնել գլխաւոր հիմնահարցերը արեւմտահայերէնի ուսուցման կերպի /մեթոտի/ եւ նշել անոնց յաղթահարման հեռանկարները:

Թեման արդիական է, որովհետեւ 21-րդ դարուն տեղի ունեցած տարածաշրջանային եւ միջպետական հակամարտութիւնները պատճառ հանդիսացած են աւանդական համայնքներու նօսրացման, իսկ արեւմուտքի երկիրներու համայնքներու ստուարացման: Ուստի Արեւմուտքի թեւադրած պայմանները նկատի առնելով եւ արեւմտահայերէնի երկրորդ կամ երրորդ լեզու դասաւանդումը կը պահանջէ վերանայիլ մեր աւանդական դարձած դասամատուցման եղանակներուն եւ նոր կերպեր որդեգրել պահպանելու գրական հայերէնի երկու գանձերը:

Թեմայի վերաբերեալ աղբիւրները սակաւ են եւ չեն արտացոլար ամբողջական պատկերը մեր հետազօտման: Թէեւ Արեւմտահայերէնի քերականական կարգերու ուսումնասիրութեամբ զբաղած են հայրենի գիտնականներու եւ Սփիւռքի մտաւորականութեան որոշ հատուածը: Բայց հետազօտողներու մեծ մասը առաւել ուշադրութիւն դարձուցած է դասագիրքերու մանկավարժական, մեթոտաբանական եւ բովանդակային ուղղուածութեան: Ի տարբերութիւն արեւելահայերէնի դասագիրքերուն, արեւմտահայերէնի դասագիրքը միանձնեայ պատրաստութեան արգասիք են:

**Յետադարձ ակնարկ. արեւմտահայերէնը 20-րդ դարու
առաջին կիսուն**

Յետեղեռնեան տարիներուն օտար հողի վրայ հանգրուանած հայու գերխնդիրներէն էր եկեղեցւոյ կողքին հայ դպրոցի բացումը, գլխաւո-

րաբար մայրենի լեզուի՝ արեւմտահայերէնի, հայեցի դաստիարակութեան, հայերէնի լեզուամտածողութեան յղկման ու զարգացման, որովհետեւ հայ գաղթականութեան միայն չնչին մասը կը տիրապետէր հայերէնին. մեծ մասամբ՝ թրքախօս, արաբախօս ու քրտախօս էին:

1920-1946թթ. մինչեւ մեծ հայրենազարձութիւն Սփիւռքի համայնքներու կազմաւորման տարիներուն արեւմտահայերէնը շարունակեց նախաեղեռնեան զարգացման ընթացքը: Կարելի է ըսել՝ դարձաւ համընդհանուր գրական լեզու Սփիւռքի բոլոր համայնքներուն համար: Սակայն արեւմտահայերէնի ուսուցումը համակարգուած չէր ընթանար, որովհետեւ

ա) չկար ուսուցման միասնական ծրագիր,

բ) դասամատուցումը կը կատարուէր տարատեսակ դասագիրքով եւ իրարմէ տարբեր մատուցման եղանակով/կերպով-մեթոտով/.

գ) կարգ մը դպրոցներէն ներս քերականութիւնը կ'աւանդուէր ամփոփ մէկ դասագիրքով, [Ֆիշենկճեան, 2018, 123-125]

դ) լեզուական համակարգուած ուսուցումը կ'աւանդուէր մինչեւ տարրականի 4-6 դասարան եւ կամ կը հասնէր մինչեւ միջին տարիքի աւարտը՝ 8-րդ դասարան [Չոլաքեան, 2017, 3]:

ե) Արեւմտահայերէնը աւագ դպրոցէն ներս, ուր պիտի խորացնէր աշակերտի լեզուական գիտելիքները, համակարգուած չէր մատուցուէր, շեշտը կը դրուէր առաւել հայ գրականութեան վրայ: Հայ գրականութեան ուսուցումը թէեւ լեզուին օժանդակող ազդակ էր, սակայն անոր ուսուցումը կը կատարուէր անգիր վերարտադրութեան պահանջով [այսինքն՝ գոց սորվելով]: Նոյն ուսուցման կերպը կ'որդեգրուէր նաեւ տարրական եւ միջին տարիքի աշակերտներուն:

զ) Սփիւռքի տարբեր համայնքներու հայագիտական առարկաներու դասաւանդման ժամերը տարուէ տարի կը նուազէր պետական հրամանագիրերով, յատկապէս յիսունական թուականներէն ետք: Սփիւռքի բոլոր դպրոցները տուեալ պետութիւններու կրթական համակարգի ենթարկուելով պարտադիր կ'իրականացնէին պետական կրթական ծրագիրը:

է) Բարձրագոյն հայագիտական կեդրոններու չգոյութիւնը՝ անհատը կը ստիպէր արտագաղթի,

ը) Այս բոլորով հանդերձ Արեւմտահայերէնի գերխնդիրը կար ու կը մնայ արեւմտախօս լեզուին տիրապետող մանկավարժի պատրաստութիւնը: Յարութիւն Քիրքճեան անդրադառնալով այս կարեւոր հարցին կ'ըսէ, թէ յաճախ ուսուցիչին մէջ կը տեսնենք «ԲՈՒՀԷ մը ճարուած

գիտելիքներ փոխադրող մասնագետ, եւ ո՛չ առաջնահերթաբար, հոգեբան-մանկավարժ, որ գիտէ մթնոլորտ ստեղծել, սորվեցնել՝ սիրցնելով նիւթը [Քիւրքճեան, 2010, 17]

Արմենակ Եղիայեան «Եղեռնը եւ արեւմտահայերէնը» յօդուածին մէջ խօսելով վերջի 25-30 տարիներու արեւմտահայերէնի հանդէպ յառաջացած անտարբերութեան եւ նահանջի դրդապատճառներու մասին, կը նշէ, որ այս բոլորը արդիւնք էր «թերի ուսուցում և իւրացում, շարահիւսական ու ոճաբանական տարրական գիտելիքները անգիտացող, այլև անտեսում» ըլլալուն [Եղիայեան, keghart.org]:

1960-ական թուականներու կիսուն ծնունդ առած էր Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն [Ֆիշենկճեան, 2018, 5], որուն գործունէութեան ծիրին մէջ էր սփիւռքի համայնքներուն դասագիրքերու պատրաստութիւնն ու առաքումը: Հայրենի բանասէրները ծանօթ էին համայնքներու մէջ արեւմտահայերէնի դասագիրքերու բովանդակութեան, քերականական ու ոճաբանական բացթողումներուն, որովհետեւ Այտընեանէն ետք մինչեւ 50-60-ական թուականներ, փոփոխութիւն չէր կրած գրական /գրաւոր/ արեւմտահայերէնը, ի տարբերութիւն խօսակցական /բանաւոր/ արեւմտահայերէնին, որ ապրելով Մերձաւոր Արեւելքի եւ նաեւ ԱՄՆ-ի ու Արեւմուտքի այլ երկիրներու մէջ, տուեալ երկրի պետական լեզուի ազդեցութեան ներքոյ, լեզուամտածողութեան մէջ որոշակի փոփոխութիւն կրած էր եւ այդ ակնյայտօրէն սկսած էինք նկատել սփիւռքահայ մամուլի եւ հայութեան որոշ հատուածի բանաւոր խօսքի արտայայտութեանց մէջ:

Հայրենիքէն ուղարկուած «Հայերէն լեզու դասագիրքը»-ի վերտարութեամբ արեւմտահայերէնի [Աբրահամեան, Վերդեան, Քոսեան, 1968] դասագիրքերը այդպէս ալ չկիրառուեցան սփիւռքի բոլոր դպրոցներէն ներս: «մնացին անգործածելի, որովհետեւ մեր դպրոցներուն մէջ դասուանող ուսուցիչները մեծաւ մասամբ տեղեակ չէին անոնց բովանդակութենէն» [Պերթիզլեան aztagdaily.com/archives/30284]: Այս կը խօսի այն մասին, որ հայերէն /արեւմտահայերէն/ լեզուի «ուսուցման մեր պատկերացումը պատահական ուսուցում մըն է-մեթոտի բացակայութիւն» [Քիւրքճեան, 2010, 17]:

Եօթնասունական թուականներուն Բարձրագոյն կրթութիւն ստանալու միտումով մեծ թիւով երիտասարդներ մեկնեցան Հայաստան. անոնցմէ շատ քիչեր բանասիրական բաժամունքի ուսանողներ էին. ուսումնառութեան տարիներուն շփում ունեցան յայտնի լեզուաբաններու հետ, ուսումնասիրեցին հայոց լեզուի պատմութիւնն ու անոր անցած

ճանապարհը եւ հարուստ գիտելիքներով վերադարձան ծննդավայր՝ նպաստելու Սփիւռքի դպրոցներուն: Այդպէս ալ եղաւ: Այդ փաղանգին միացան օտար համալսարաններու մէջ ուսում ստացած երիտասարդներ, որոնք հայոց լեզու եւ գրականութիւն դասաւանդեցին, սերունդներ պատրաստեցին. անոնցմէ ոմանք դարձան լրագրողներ, խմբագիրներ, ուսուցիչներ, տնօրէններ եւ այլն, սակայն չհամախմբուեցան, չունեցան հիմնական հետազօտական կեդրոն, ուր մշակուէր, վերամշակուէր ու գիտական հարթակի վրայ փորձել դնել արեւմտահայերէնը [Ֆիշենկ-ճեան, 2018, 5]:

1960-ական թուականներէն ետք թէեւ վանած էր թրքախօսութիւնը, բայց արեւմտախօս համայնքները ստիպուած պիտի դիմագրաւէին լեզուական նոր մարտահրաւէրներ արեւմտահայերէնը պատշտպանելու համար: Արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն, սպաներէն եւ այլ լեզուներու պետական պարտադրանքը, խոր հիմքեր պիտի ձգէր, ոչ միայն արեւմտահայերէնի լեզուամտածողութեան վրայ, այլեւ՝ ուսուցման մեթոտաբանութեան: Այլ հարց էր Հայրենիքէն ներս Բարձրագոյն ուսում ստացող երիտասարդութեան պարագան, որոնց ամէնօրեայ շփումը արեւելահայերէնի հետ՝ իր աճող ազդեցութիւնը պիտի ունենար:

Անցեալ դարու վերջաւորութեան եւ յատկապէս 21-րդ առաջին երկու տասնամեակին Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններու եւ համագործակցութեան ճանապարհին, Հայրենի լեզուաբանութեան մէջ մեծ հետաքրքրութիւն մը ծնունդ առաւ արեւմտահայերէնի նկատմամբ: Համալսարաններու մէջ արեւելահայերէնի զուգադրութեամբ արեւմտահայերէնի ներկայացումը արդէն կայուն դասընթացք մըն էր: Արտեմ Սարգսեանի], Ռուբէն Սագապետոյեանի [Սագապետոյեան, 2000; 2006], Եուրի Աւետիսեանի [Աւետիսեան, 2007; 2011] եւ այլոց աշխատութիւնները թէեւ գլխաւորաբար ունէին զուգադրական մօտեցում, բայց միեւնոյն ատեն փորձեցին հետազօտել արեւմտահայերէնի բոլոր ծալքերը՝ հնչիւնաբանութիւն, բառագիտութիւն, քերականութիւն: Բազմակողմանի ուշադրութեան առարկայ դարձաւ արեւմտահայերէնի բառապաշարի, հոլովումի եւ խոնարհումի օրինաչափութիւնները:

Ասոնք գլխաւորաբար արեւմտահայերէնի պատմական զարգացման եւ օրինաչափութիւններուն համապարփակ պատկերը տալով՝ հեռու էին լեզուի արդի վիճակին տիրող բոլոր զարտուղութիւնները կանոնակարգելու վիճակէն, ինչ որ հիմնական նպատակն է սփիւռքահայ քերականներուն:

Սփիւռքի տարբեր համայնքներու մէջ անհատ հեղինակներու դասագիրքեր պատրաստուեցան, մշակուեցան եւ հրամցուեցան ուսուցիչներու

դասաւանդելու հայկական վարժարաններէն ներս: Դասագիրքերու նորարարութեան չէին այդ ուսուցիչները, շունէին հայագիտական որոշակի գիտելիքներ եւ մանկավարժական մօտեցում եւ ուսուցման եղանակ: Անոնք կ'ուսուցանէին իրենց գիտցած աւանդական մեթոտներով, ինչ որ արդէն ժամանակավրէպ դարձած էր երկրորդ կամ երրորդ սերունդի համար: Դեռ աւելին, այդ դասագիրքերը ուղարկուեցան այլ համայնքներ մատուցուելու համար, ուր կը գործէին մէկօրեայ, կիրակնօրեայ, շաբաթօրեայ եւ ամէնօրեայ վարժարաններ, ուր սիրողական էր դասաւանդումը:

Սակայն պէտք խոստովանիլ, որ մեր թեման ոչ թէ արեւմտահայերէնի դասագիրքերու քննական տեսութիւնն է, այլ արեւմտահայերէնի ուսուցման համար դպրոցներէն ներս կիրառուած կերպերը, դասամատուցման եղանակը:

Արեւմտահայերէնի ուսուցման գերխնդիրը Սփիւռքի վարժարաններէն ներս

Սփիւռքի հայկական վարժարաններէն ներս որեւէ առարկայի ուսուցման հիմնահարցերը առնչութիւն ունէին տուեալ առարկայի ուսուցիչի դասամատուցման եղանակին, ուսուցիչի պատրաստուածութեան, աշակերտի աշխարհընկալման, երկուստէք փոխհամագործակցութեան, տուն-ուսուցիչ-աշակերտ վստահութեան, դիւրըմբռնելի դասագիրքի գործածութեան եւ այլ ազդակներու, որոնք անհնարը հնարաւոր կրնային դարձնել:

Սփիւռքի կազմաւորման օրերուն դժուար թէ վերեւ նշուած բոլոր գործօնները իրագործելի դարձած ըլլային, որովհետեւ նախաեղեռնեան շրջանի արեւմտահայերէնը կը գոյատեւէր: Ուստի վերապրողներուն մտահոգութիւն էր արեւմտահայերէնը կենդանի լեզու պահելը, որովհետեւ անոր շարունակականութիւնը պիտի նպաստէր արեւմտահայ մշակոյթի գոյատեւման:

Արեւմտահայերէնի ուսուցման հարցերը բազմաթիւ են եւ կը տարբերին համայնքէ համայնք, վարժարանէ վարժարան, ընտանիքէ ընտանիք:

Ուսումնասիրելով 1920-1940-ական թուականներու ուսումնականական խնդիրները, տարբեր համայնքներու կրթահաստատութիւններէ եւ ընտանիքներէն ներս կար այն մտայնութիւնը, որ ուսման առաջին նախապայմանն է հայերէն լեզուի ուսուցումը, որպէս գոյատեւութեան, հաղորդակցութեան լեզու, որովհետեւ գաղթական հայը ապրելով փակ միջավայրի մէջ կարիքը չէր զգացած արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուները իւրացնելու: Օտարալեզուներուն կը տիրապետէին

պետական պաշտոնեաներ, բանակին ծառայողները եւ օտար հաստատութիւններու մէջ պաշտօններ ստանձնողները:

Իրավիճակը պիտի փոխուէր 1940-ական թուականներէն ետք, երբ աշխարհաքաղաքական նոր իրադարձութիւններու լոյսին տակ կը ձեւաւորուէին նոր պետութիւններ: Որպէս անկախ պետութիւններ պիտի կիրառէին օրէնքներ, որոնք կրնային ազդել իրենց երկիրներուն մէջ ապրող փոքրամասնութիւններու ապրելակերպի, աշխատանքային պայմաններուն, աշխարհայեացքին, կրթական համակարգին, մշակութային կեանքին եւ այլն:

Յարափոփոխ այս կացութեան մէջ սկիզբ պիտի առնէին ներքին տեղաշարժ, ներգաղթ եւ աւելի ուշ արտագաղթը:

Սակայն տեղաշարժերը իրենց ներգործութիւնը պիտի ունենային հայ դպրոցի առաքելութեան վրայ: Պիտի փոխուէր ուսանողներու հետաքրքրութիւնը, ուսման նպատակով սկիզբ պիտի առնէր արտագաղթը դէպի արեւմուտքի երկիրներ, միջավայրի փոփոխութիւն եւ այլն:

Դեռ 1980-ական թուականներու Յարութիւն Քիւրքճեան կանխատեսելով այս վտանգը նախաձեռնած էր ինքնուսույց-ձեռնարկներու: Առաջին կը կոչուի «Ձեռնարկ հայերէն լեզուի»՝ նախատեսուած ֆրանսախօս հայութեան համար [Քիւրքճեան Յ., Փարիզ, 1982]: Տարիներ ետք՝ 2007-ին, Քիւրքճեան կը կազմէ ու կը հրատարակէ նոյնպիսի ինքնուսույց-ձեռնարկ անգլիախօս հայութեան համար: Երկրէզու դասագրքերու մասին խօսելով պէտք է նշել Դորա Սաքեանի աշխատասիրութիւնը անգլիախօս հայութեան համար: 2010-ին լոյս տեսած:

[<https://www.armenianlanguage-am.armin.am/am/news/4>].

Նոյնանման ինքնուսույց ձեռնարկ մը այսօր 2024թ.ին սրբագրման-խմբագրման ընթացքի մէջ է. սպանախօս հայութեան համար գլխաւորաբար երկու հայուհիներու կողմէ Տիանա Տէր Կարապետեանի եւ Սօսէ Հաճեանի նախաձեռնութեամբ՝ Արմինէ Մարտիրոսեանի ռուսերէն-արեւելահայերէն ինքնուսույց ձեռնարկի մեթոտաբանութեամբ: Յուսագրող երեւոյթներ, որոնք կը ստիպեն նախաձեռնելու, արաբախօս, գերմանախօս, իտալախօս եւ այլն հասարակութեան համար եւս:

1980-ական թուականներէն ետք առաւել ակնյայտ կը դառնային լեզուի ուսուցման գերխնդիրները.

ա) կը փոխուի հայ ծնողքի մօտեցումը ուսման եւ հայերէնի ուսուցման հանդէպ. հայ ծնողքի համար հայերէնի ուսուցումը միայն ու միայն վստահուած էր եւ է դպրոցին եւ ուսուցիչին: Ծնողներու որոշ տոկոսը

բացի հայերէն լեզուի դասաւանդումէն աւելորդ կը համարէր հայերէնով դասաւանդութիւնը գիտութեան կամ այլ առարկաներու,

բ) Դանդաղ քայլերով որոշակիօրէն կը փոխուի ուսուցիչի մանկավարժական հիմնական պատրաստութիւնը, աւանդուող նիւթի հայերէնի տիրապետումը,

գ) Ուսուցիչներէն ոմանք ստանալով բարձրագոյն հայագիտական կրթութիւն, կը տիրապետէին լեզուի խնդիրներու, բայց միաժամանակ դեռ չէին հրաժարած դասի աւանդական բացատրութենէ: Սփիւռքի շարք մը համայնքներու վարժարաններէն ներս Հայերէնը /լեզու-գրականութիւն/ կ'ուսուցանէին անոնք, որոնք շուրջ քանի մը տասնամեակ առաջ նոյն մատուցման եղանակով կը կատարէին դասաբացատրութիւնը:

գ) Ուսուցիչներու վերաորակաւորման կամ վերապատրաստման պակասը Սփիւռքի համայնքէն ներս խիստ հրամայական դարձած էր, որովհետեւ Արեւելքի եւ Արեւմուտքի պետական համակարգէն ներս ներգրաւուած էր վերապատրաստման ծրագիրը, իսկ հայկական իրակա-նութեան մէջ գոյութիւն չունէր:

Հայաստանի անկախութենէն ետք զոյգ նախարարութեանց կողմէ՝ կրթութեան եւ սփիւռքի, կազմակերպուած ուսուցիչներու վերապատրաստման կրնային մասնակցիլ ոչ միայն հայագիտական առարկաներ դասաւանդող, այլ նաեւ այլ առարկաներ դասաւանդողները:

Արեւմտահայերէնի ուսուցումը Հայաստանի կրթահամակարգէն ներս

20-րդ դարու վերջի քառորդին Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիր-ներու մէջ ստեղծուած պատերազմական իրավիճակը պատճառ դարձաւ դասական Սփիւռքի հայահոծ համայնքներէն հայերու դէպի այլ երկիր-ներ պարտադրուած արտագաղթի, որու հետեւանքով արեւմտահայերէն կրող հանրութեան հիմնական հատուածները նորէն յայտնուեցան ալլա-խօս լեզուական միջավայրերու մէջ: 21-րդ դարասկիզբին շարունակուեցաւ Մերձաւոր Արեւելքի կարգ մը երկիրներու դէմ սանձազերծուած պատերազմներն ու ահաբեկչական սադրանքները, որու հետեւանքով տեղի հայկական համայնքները դէմ յանդիման գտնուեցան աշխարհա-քաղաքական նոր մարտահրաւերներու առջեւ: Ներքին եւ արտաքին տեղաշարժի ենթարկեցին տեղի հայկական համայնքները: Համայնքի զաւակներէն պատկառելի թիւ մըն ալ գաղթեց Լիբանան, Հայաստան եւ Արեւմտեան երկիրներ:

Հայրենիք ապաստանողները թէեւ տարբեր երկիրներէ եկողներ էին, բայց չմոռնանք, որ ցեղասպանուած ժողովուրդի մը ժառանգորդներն էի

եւ արեւմտահայերէն լեզուն կրողները: Անոնց մտաւորական խաւը, որ նաեւ ուսուցչական պաշտօն վարած էր եւ արեւմտահայերէնի ատանդապահն էր, գիտական եւ պետական կառույցներէն ներս առաջարկութիւններով իրենց ձայնը լսելի դարձուցին արեւմտահայերէնի պահպանման խնդիրի առնչութեամբ:

2013թ.էն Հրաշեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտէն ներս կը գործէ արեւմտահայերէնի բաժին մը, ուր կ'ուսումնասիրուի արեւմտահայերէնի քերականական կարգի ձեւաբանական եւ շարահիւսական ու յատկապէս խնդրառութեան պատմաբանասիրական քննութիւն ըստ արեւմտահայերէնի դասագիրքերու:

Այս առնչութեամբ 21-րդ դարու մարտահրաւէրներու դէմ ինչ միջոցներ որդեգրեց հայրենիքը, ինչ միջոցներ՝ Սփիւռքը: Խօսքը ո՞ր Սփիւռքի մասին է:

Հայրենիք-Սփիւռք փոխհամագործակցութեան ծիրէն ներս՝ մշակութեցաւ Սփիւռքի նախարարութեան կողմէ Արեւմտահայերէնի ռազմավարութիւն [<https://www.e-draft.am/projects/678/justification>], հայրենի տարբեր/կրթութեան-գիտութեան/ եւ սփիւռքի նախարարութիւններու կողմէ իրագործուեցան սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման ծրագիրներ, ուր արեւմտահայերէնի դասընթացքը հարիւրէ 10 տոկոս կը կազմէր: Ուսուցիչը մանկավարժական-մեթոտաբանական, հոգեբանական, գիտական տեսութեամբ զինուած վերադարձաւ իր ծննդավայր, բայց չլիկեց իր հայերէնը, այլ ընդհակառակը նոր հայերէն մը ժառանգեց որ խառնուրդ էր արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ յառաջացաւ Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնաժողով եւ կարելի է շատ երկար խօսիլ, քննարկել ու հաւանաբար եզրակացութեանց չյանգիլ:

Այս առնչութեամբ 21-րդ դարու մարտահրաւէրներու դէմ ինչ միջոցներ որդեգրեց հայրենիքը, ինչ միջոցներ՝ Սփիւռքը: Խօսքը ո՞ր Սփիւռքի մասին է:

Արեւելահայերէնը վայելելով պետութեան հովանաւորութիւնը համաշխարհայինացման դարաշրջանին, 21-րդ դարուն, նախաձեռնեց կրթութեան պատշաճ ուսուցման մեթոտներ, դասագիրք պատրաստելու չափանիշներ սահմանեց միջազգային չափորոշիչներու համապատասխան, կազմակերպեց գործող ուսուցիչներու յատուկ վերաորակաւորման դասընթացքներ, մասնագէտներ հրաւիրեց, ուր տեղի ունեցաւ փորձառութեանց փոխանակում եւ այլն: Արեւելահայերէնի առցանց համակարգուած ու մշակուած ծրագիրները մատուցուեցան Արտերկրի հայկական

համայնքներու ներկայացուցիչներուն եւ այլն: Արեւմտահայերէնը հովանաւորող շունենալով առաջընթաց քայլեր չձեռնարկուեցան: Եղան Արեւմտահայերէնի ուսուցիչներու կողմէ առջանց ծրագիրներ, որոնք որոշ չափով հեռու էին լեզուի միջազգային ուսուցման եղանակներէն: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ յառաջացաւ Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնաժողովը, որուն արգասիքը եղաւ Գործնական արեւմտահայերէնի դասական դման նուիրուած աշխատութեան հրապարակումը: Եւ կարելի է շատ երկար խօսիլ, քննարկել ու հաւանաբար եզրակացութեանց չլանգիլ:

Ի հարկէ, Հայաստանի տարբեր կեդրոններէ ներս արեւմտահայերէնի գոյատեւման աշխատանքներ կատարուեցան, բայց շունեցանք համակարգող մարմին:

Եզրակացութիւն

Այսօր Արեւելքի երկիրներու համայնքները ի վիճակի չեն նոր դասագիրքեր պատրաստելու, ժամանակի փոփոխութեան հետ փոխուած է անհատներու շահագրգռուածութիւնը, եղած դասագիրքերու պահանջքը օրէ օր կը նուազի եւ հաւանաբար դառնայ սոսկ ուսուցիչի ուղեցոյց.

Սփիւռքի(ներու) մէջ հայերէն կարելի չէ ուսուցանել ինչպէս կէս դար առաջ, այնպէս, ինչպէս սորված էին այսօրուան երէցները կամ անոնց յաջորդող սերունդը: Այս խնդիրը կը կարօտի բազմակողմանի եւ բազմաձայն քննութեան:

Ինչ մարտահրաւէրներու կը դիմագրաւենք.

Դասագիրք, ծրագիր, ուսուցման արդի մեթոտներ

1. Որո՞ւ համար կը նախատեսուի այս դասագիրքը, հայախօսներո՞ւ, թէ՞ ոչ հայախօսներու:

2. Ո՞ր մակարդակի համար: Ինչպէս գիտէք, Սփիւռքի տարածքին կան շաբաթօրեայ, կիրակնօրեայ, ամէնօրեայ, երկրորդական— միջնակարգ դպրոցներ եւ համալսարանական դասընթացքներ:

3. Ինքնուսու՞ց, թէ՞ կրթական հիմնարկներու դասագիրք:

Բայց եւ այնպէս մեր գերխնդիրը կայ ու կը մնայ մանկավարժներու որակաւորման գերխնդիրը նաեւ Արեւմտահայերէնը համակարգող մարմինի մը անյապաղ նախաձեռնումը:

FISHENKJIAN ANI

FUNDAMENTAL QUESTIONS OF WESTERN ARMENIAN TEACHING CLIMATE/METHOD AND PROSPECTS FOR SUCCESS

Summary

Western Armenian is one of the two branches of modern Armenian and was the spoken and written language of the majority of Diaspora Armenians until the 1980s and 1990s.

The political and interstate struggles in the Middle East at the end of the 20th century resulted in the dilution of the classical diaspora.

This piece emphasizes the learning methods adopted by Western Armenians, the problems stemming from them, and the prospects for overcoming these issues.

Choosing appropriate teaching methods is crucial for delivering educational content and achieving educational goals. These methods are interconnected with many problems and goals that can only be addressed through a specially programmed and organized learning process.

In order to address issues arising in the region and create necessary textbooks for diaspora schools, it's important to review existing textbooks and consolidate scientific and pedagogical resources to resolve printing problems.

Additionally, applying the latest technical knowledge for the dissemination and teaching of Western Armenian is crucial. This involves preparing and distributing electronic textbooks, CDs, and video clips, and developing and implementing remote, long-distance, and mobile phone training programs for Western Armenian.

Keywords - Teaching, Diaspora, community, textbook, teacher training program.

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Վերդեան Բ., Քոսեան Վ., Հայերէն լեզու դասագիրքը, Երևան, 1968:

Աւետիսեան Ե., Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւն, Երեւան, 2007:

2. Աւետիսեանի Ե., Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի հնչիւնաբանութիւն, Երեւան, 2011:

3. Չոլաքեան Յ., Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ), Ա. գիրք, Երեւան, 2017, էջ 3:

4. Պերթիզեան Յ., Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու այլազանութիւնն ու անկէ յառաջացած շփոթը, «Ազգակ» օրաթերթ, <http://www.aztagdaily.com/archives/30284>

5. Սաքապետոյեան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն ուղղախոսական-բացատրական բառարան, Երեւան, 2000:

6. Սաքապետոյեան Ռ., Արեւմտահայերէնի դասագիրք, Երեւան, 2006:

7. Քիրքճեան Յ., Հայերէնի-հայ գրականութեան ուսուցման բարդ մարտահրաւէրը. ուսուցիչներու մանկավարժական հիմնական պատրաստութիւնը եւ ասպարէզային ապահովումը առաջնահերթութիւններ, Արեւմտահայերէնի ուսուցման վիճակը սփյուռքում, Երեւան, 2010, էջ 17:

8. Ֆիշենկճեան Ա., Արեւմտահայերէնի քերականութեան պատմութիւն, յետալորնական շրջան, Երեւան, 2018:

9. www.e-draft.am/projects/678/justification

<https://doi.org/10.52027/801346-php-244>
hratch.tchilingirian@inalco.fr

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ՝ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ «ԳԻՏԱԿԱՆ»Ը

ՀՐԱՋ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Օքսֆորդի համալսարան եւ INALCO,
Արեւելեան լեզուներու եւ քաղաքարթութեանց հիմնարկ,
Փարիզ

Ընդհանրապէս՝ գիտական շափանիշներու եւ ուսումնասիրութեան մեթոտաբանութեան հարցերը մնայուն խնդիր եղած են ու կը մնան գրեթէ բոլոր գիտակարգերուն մէջ, ներառեալ՝ մեր օրերու հայագիտութեան աշխարհը:

Որպէս հասարակական գիտութիւններու բնագաւառի մարդ եւ որպէս բանասիրութեան աշակերտ, նախ նշեմ, որ «գիտութիւն» եւ «գիտական» եզրերը կ'օգտագործեմ որպէս հոմանիշ անգլերէնով *scientific* (գիտական), *academic* (ակադեմական) կամ *scholarly* (ուսումնական) հասկացութիւններուն, որոնք սերտօրէն փոխկապակցուած են այդ լեզուին մէջ: Նմանապէս, Արդի հայերէնի բացատրական բառարանին (1976) մէջ «գիտութիւն» բառը ներկայացուած է որպէս «բնութեան եւ հասարակութեան զարգացման օրէնքները եւ շրջապատող աշխարհի վրայ ներգործելու միջոցները բացայայտող գիտելիքների ամբողջութիւնը»:

Այսօր, Հայաստանի մէջ մարդկային (հումանիտար) եւ հասարակական գիտութիւններու, ներառեալ՝ բանասիրութիւնը, ինչպէս նաեւ այլ գիտակարգերու մէջ մասնագիտական շափանիշներու հետեւելու խնդիրը գիտական տարբեր համայնքներու օրակարգին վրայ է: Հայրենի գործընկերներու հետ իմ ունեցած բազմաթիւ քննարկումներուս ու զրոյցներուս ժամանակ, այս հարցը մնայուն մտահոգութեան առարկայ է: Այսինքն՝ ինչպէ՞ս տարբերել կամ զանազանել գիտական տեսակէտները կամ լուրջ ուսումնասիրութիւններու արդիւնքները՝ անձնական, երբեմն

նոյնիսկ՝ չփաստարկուած կարծիքներէ կամ ենթագիտակցական կողմնակալութենէ: Կոշտ ասած՝ ինչպիսի՞ չափանիշներով կամ սկզբունքներով կարելի է հանրամատչելի թերթի կամ պարբերականի մը մէջ հրատարակուած խմբագրական մը կամ անձնական կարծիք մը զանազանել գիտահետազոտական միջազգային չափանիշները յարգած աշխատանքի վրայ հիմնուած վերլուծութիւններէ:

Ընդհանուր առմամբ, ինչպէս ծանօթ է բոլորիս, գիտական չափանիշները ստեղծուած, օգտագործուած եւ ընդունուած են տուեալ գիտակարգի մասնագէտներու եւ գիտաշխատողներու համայնքին կողմէ, եւ իբրեւ այդ համաշխարհային կամ համընդգրկուն («կլոպալ») ընդունելութիւն ունին ժամանակի ընթացքին փորձարկուած ու հաստատուած օրինաչափութիւններու վերածուած ըլլալով: Անշուշտ, ժամանակի ընթացքին նոյնպէս գիտական ուսումնասիրութիւններու այդ չափանիշները եւ մեթոտները, մօտեցումներն ու գործիքակազմը աստիճանական մշակումներու եւ կատարելագործութեան գործընթացներէ անցած են, գիտական համայնքներուն կողմէ անընդհատ զարգացուած ու բարելաւուած:

Այսօր եւս, միջազգային գիտական չափանիշներու կիրարկումը եւ օգտագործումը անհրաժեշտութիւն է Հայաստանի մէջ բոլոր՝ եւ պատմական երկար աւանդոյթներ ունեցող, եւ նորայայտ կամ նորամուտ գիտակարգերուն համար, ներառեալ՝ անպայմանօրէն հումանտար եւ հասարակական գիտութիւնները:

Եթէ կ'ուզենք, որ միջազգային գիտական աշխարհը Հայաստանի գիտահետազոտական արտագրանքը, մասնաւորաբար՝ հայագիտութեանն առնչուող բազմատեսակ ուսումնասիրութիւնները, ընդունի որպէս մրցունակ, գիտական ներդրում, պէտք է անպայմանօրէն կիրարկենք իւրաքանչիւր գիտակարգի համար վերջինովս զբաղող միջազգային գիտական համայնքին որդեգրած չափանիշներն ու մեթոտաբանական գործիքները: Այստեղ պէտք է արձանագրեմ, որ Հայաստանի մէջ կան հրաշալի բանասէրներ եւ այլ գիտակարգերու մէջ եւս բազմաթիւ մասնագէտներ ու գիտաշխատողներ, որոնց աշխատանքները միջազգային հանդէսներու եւ մասնագիտական հատորներու մէջ արդէն իսկ հրատարակուած են ու լայն ընդունելութիւն գտած: Պէտք է ձգտիլ անընդհատ լայնցնել անոնց շրջանակը:

Եւ վերջապէս, պէտք չէ գիտականը հակադրել «ազգային»ին կամ «հայրենասիրութեան»: Որպէս գիտաշխատողներ, գիտնականներ եւ մասնագէտներ, իւրաքանչիւրս կոչուած ենք ծառայելու ճշմարտութեան,

փաստացի իրողություններու վերհանման ու վերլուծման, եւ սերունդներու գիտական լուսաւորութեան, այս բոլորը՝ մեր մասնագիտացած գիտակարգին պահանջած միջազգային սկզբունքներուն, չափանիշներուն եւ մեթոտներուն հիման վրայ: Այսօր եւ ապագային՝ Հայաստանի մէջ բարձրորակ, միջազգային չափանիշներուն համապատասխան, գիտահետազոտական արտադրանք տալը ամենահայրենասիրական աշխատանքն է:

Մեր գիտական համայնքին մէջ թերեւս պէտք է շեշտադրումը տեղափոխել. այսինքն՝ խօսիլ ո՛չ միայն ուսումնասիրութեան թեմաներու մասին, այլ նաեւ անոր մասին թէ այդ թեմաները ինչպէ՞ս կ'ուսումնասիրուին, ինչպիսի՞ գիտական մեթոտաբանութեամբ ու գործիքակազմով:

Հայագիտութիւնը պէտք չէ էթնիկանացել (ethnitize) եւ առ այդ անզգալաբար լուսանցքայնացնել հայութեան նպաստը համամարդկային մշակութային արժէքներուն: Պէտք չէ նեղ «տուփի» մէջ դնել զայն, այլ աւելի լայն բացուիլ համաշխարհային գիտական աշխարհին: Հաւանաբար Հայերը միակ ազգն են, որ սրբացուցած են Սուրբ Գրոց, Ոսկեդարի Թարգմանիչները: Այսօր, մենք ալ կոչուած ենք գիտական աշխարհի հարուստ աւանդին թարգմանիչները դառնալու. հայագիտութիւնը աւելի լայնածաւալ հրամցնելու միջազգային հանրութեան եւ միաժամանակ միջազգային գիտելիքներն ու փորձը օգտագործելու ի սպաս Հայաստանի մէջ գիտական միտքի եւ հնարաւորութիւններու շարունակական զարգացման:

Գիտական բարձր չափանիշներն ու մրցունակ մեթոտաբանութիւնն են, որ պիտի երաշխաւորեն հայագիտութեան, հայ բանասիրութեան, պատմագիտութեան, գրականագիտութեան, արուեստաբանութեան - ի դէպ՝ հայագիտական որեւէ ոլորտի - դերն ու նպաստը միջազգային մակարդակներու վրայ:

TCHILINGIRIAN HRATCH

EPILOGUE: THE "SCIENTIFIC" IN ARMENIAN STUDIES

Summary

This article addresses the enduring issue of scientific standards and methodological approaches in various fields of study, with a particular focus

on contemporary Armenian studies. It examines the necessity of adopting internationally recognized scientific standards and methodologies in the humanities and social sciences in Armenia to ensure the global competitiveness of Armenian research. The discussion emphasizes the distinction between personal opinions and rigorous scientific analysis, advocating for the consistent application of scholarly principles. The article also highlights the importance of integrating Armenian studies into the global scientific community. It concludes by urging Armenian researchers to adopt high-quality research methodologies and international standards to enhance the global recognition and impact of Armenian scholarship.

Keywords - *Armenian studies, scientific standards, humanities, research methodology, social sciences, international competitiveness, scholarly principles, academic quality.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՈՎԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ	
ԽՕՍՔ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ.....	3
ԱՌԱՋԱԲԱՆ.....	4

Լ Ե Զ Վ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ	
ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	6
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱԶԳԵՆ	
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ	
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....	21
ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԱՇԽԵՆ	
ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ	
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	32
ՊՕՂՈՍԵԱՆ ՆՈՐԱՅՐ	
ԳՐԱԲԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԱՐԳԻ	
ՄՕՏԵՅՈՒՄՆԵՐ.....	44
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ	
ՄԻՆԱՍՅԱՆ ՇՈՂԵՐ	
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ. ԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ	
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.....	57
ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐԻ	
ԹՎԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ.	
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ.....	72

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԲԵՔՄԵԶՅԱՆ ԱՍՏՂԻԿ	
ԲԱՌԻՄԱՍՏԻ ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ	
ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅ	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԿԵՐՏՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ)	85

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ	
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	100
ԳՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ	
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.....	114
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՆՈ	
ԱՂՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՂԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ.....	125
ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ	
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՅԵՐ.....	133

Բ Ա Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՀԱՅԿ	
«ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԲՆԱԳՐԵՐԸ. ՍՏԵՂԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ.....	142
ՄԵՍՐՈՊԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ,	
ՊԾՂՈՍԵԱՆ ԱՆՆԱ	
«ՍԱՄՆԱՅ ԾՈՒԵՐ» ՀԵՐՈՍԱՎԷՊԸ ԵՒ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿԵԼԻՍ.....	158
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ	
ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ. ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ.....	172

ՈՒ Ս ՈՒ Յ Մ Ա Ն Ա Ր Դ Ի Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	
«ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ.....	187
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՇՈՏ	
ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐ.....	194
ԿՆՅԱԶՅԱՆ ՄԵՐԻ	
ԶԻՆԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	202

ՍԵՄԻՐՋՅԱՆ-ՔԵՔՄԵՋՅԱՆ ԱԼՎԱՐԴ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ
ԽՆԴԻՐՆԵՐ ԱՆԳԼԻԱԽՈՍ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ
(ԱՄԵՐԻԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)..... 212
ՖԻՇԵՆԿՃԵԱՆ ԱՆԻ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՐՊԻ /ՄԵԹՈՏԻ/
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՅ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ..... 226

Ո Ր Պ Ե Մ Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ ՀՐԱԶ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ «ԳԻՏԱԿԱՆԸ» 238

CONTENT

ARCH. HOVNAN DERDERIAN	
MESSAGE OF BLESSING.....	3
INTRODUCTION.....	4

L I N G U I S T I C S

GYURJINYAN DAVIT	
REGULARIZATION ISSUES OF MODERN... ARMENIAN	
LINGUONYMS.....	6
HAMBARDZUMYAN VAZGEN	
THE PROBLEMS OF ETYMOLOGICAL AND	
ETYMOLOGICAL STUDIES OF ARMENIAN IN THE	
CONTEXT OF THE HISTORY OF THE LANGUAGE.....	21
YUZBASHYAN ASHKHEN	
THE TRENDS IN THE DEVELOPMENT OF THE	
DISCIPLINE OF ARMENIAN LANGUAGE HISTORY DURING	
THE INDEPENDENCE PERIOD.....	32
POGHOSYAN NORAYR	
CONTEMPORARY APPROACHES TO THE STUDY AND	
TEACHING OF GRABAR.....	44
SARGSYAN ARMEN	
MINASYAN SHOGHER	
DIALECT OF KARABAKH. CURRENT STATE AND	
DEVELOPMENT PROSPECTS.....	57
SARGSYAN MERI	
DIGITAL ARMENOLOGY AS A NEW DIRECTION.	
PROBLEMS AND CHALLENGES.....	72

L I T E R A R Y S T U D I E S

BEKMEZYAN ASTGHIK	
VARIANT READING AS AN OPPORTUNITY FOR	
CONSTRUCTING AN ARTISTIC TEXT (ON TRENDS IN	
IMAGE FORMATION IN CONTEMPORARY ARMENIAN	
LITERATURE)	85
GRIGORYAN VACHAGAN	
TENDENCIES IN THE EVOLUTION OF ARMENIAN	
LITERATURE AT THE BEGINNING OF THE 21ST	
CENTURY. ISSUES IN ARMENIAN STUDIES.....	100
DOLUKHANYAN AELITA	
THE CONTEMPORANEITY OF NIKOLAI MARR'S	
PROVISIONS FOR ARMENIAN STUDIES.....	114

YEGHIAZARYAN VANO	
AGHVAN STUDIES FORGERIES AND REACTIONS OF	
ARMENOLOGY.....	125
MOURADYAN SAMVEL	
ISSUES OF PERIODIZATION OF ARMENIAN LITERATURE..	133

F O L K L O R E

HAMBARDZUMYAN HAYK	
THE COMPILED TEXTS OF THE EPIC “DAREDEVILS OF	
SASSOUN” (“SASNA TSRER”): PRINCIPLES AND	
OBJECTIVES OF THEIR CREATION".....	142
MESROPYAN HAYKANUSH	
POGHOSYAN ANNA	
“SASNA TSERER" HEROIC NOVEL AND THE NECESSITY	
OF APPLYING THE LATEST MEANS OF GRAMMATICAL	
TRANSLATION IN REPUBLISHING STORIES.....	158
VARDANYAN NVARD	
TRADITIONAL APPROACHES AND MODERN	
CHALLENGES IN ARMENIAN FOLKLORISTICS: THE NEED	
FOR STUDYING INTERNET FOLKLORE.....	172

C U R R E N T I S S U E S O F I N S T R U C T I O N

AYVAZYAN ANDRANIK	
THE NEED FOR A CHANGE IN THE CONTENT EMPHASIS	
OF THE SUBJECT "INTRODUCTION TO LINGUISTICS" IN	
THE ARMENIAN ACADEMIC ENVIRONMENT.....	187
GALSTYAN ASHOT	
ALTERNATIVE MODELS OF MOTHER TONGUE TEACHING	194
KNYAZYAN MERI	
ABOUT SOME FEATURES OF TEACHING THE ARMENIAN	
LANGUAGE TO CHINESE STUDENTS.....	202
SEMIRJYAN-BEKMEZYAN ALVARD, VARDANYAN NARINE	
SOME METHODOLOGICAL ISSUES TEACHING THE	
EASTERN ARMENIAN LANGUAGE IN AN ENGLISH-	
SPEAKING DIPLOMATIC ENVIRONMENT (USING THE	
EXAMPLE OF AMERICAN DIPLOMACY)	212
FISHENKJIAN ANI	
FUNDAMENTAL QUESTIONS OF WESTERN ARMENIAN	
TEACHING CLIMATE/METHOD AND PROSPECTS FOR	
SUCCESS.....	226

E P I L O G U E

TCHILINGIRIAN HRATCH	
THE "SCIENTIFIC" IN ARMENIAN STUDIES.....	238

PERSPECTIVES OF ARMENIAN PHILOLOGY
Current Issues of Research and Instruction

Western Diocese of the
Armenian Church of America



ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
ՈՒՍՈՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՈՒՍՈՑՄԱՆ ԱՐԴԻ ԽԱՆԴԻՐՆԵՐ

Հրատարակույթին ԱՄՆ Արեւմտեան թեմի
Լուս Անշէլէս - Երեւան – 2025